

ԱՐԴ ԿՐԵԱԿԱՆ ՀՐԱՄԱ

ՀԽ ՀԱՅԱՍՏԱՆ  
ԻՆ ՓՈԽ ԱՌԱՅ  
Ք Ա Պ Ա Ք Ն Ե Ր Ի  
Պ Ա Տ Ա Խ Ի Թ Յ Ա Ա Ն  
Ե Ր Վ Ա Գ Ն Ե Ր

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ИНСТИТУТ ИСТОРИИ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈԼ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԽԱՆՏԻՏՈՒՏ

С. М. ԿՐԿՅԱՐՅԱՆ

ОЧЕРКИ ИСТОРИИ  
ГОРОДОВ ДРЕВНЕЙ АРМЕНИИ  
И МАЛОЙ АЗИИ

Ա. Մ. ԿՐԿՅԱՐՅԱՆ

9(47.925)

4-85

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԵՎ ՓՈՔԻ ԱՄԻԱՅԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴՐՎԱԳՆԵՐԻ

1352

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН 1970

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈԼ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԽԱՆՏԻՏՈՒՏ 1970

Մենագրությունը նպիրված է Հին Հայաստանի և նրա հարևան հելլենիստական կրկների քաղաքների սոցիալ-տնտեսական և քաղաքական կառուցվածքի ուսումնասիրմանը:

Հունա-հոնդեական և Հայկական մատնագրության, ինչպես նաև անտիկ արձանագրությունների ընձեռած տվյալների մանրազնին ուսումնասիրությունը, հեղինակին հնարավորություն է տվել բացահայտելու քաղաքների զարգացման հետ կապված մի շարք կարևոր և էական երեւույթներ:



25105

### Գ Լ Ո Ւ Խ Ա Ռ Ա Զ Ի Խ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆԱԳՈՒՅՑՆ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ  
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դ այլական լեռնաշխարհում քաղաքների առաջացումը թաղված է հեռավոր անցյալի մշուշի մեջ: Դեռևս մ.թ.ա. առաջին հազարամյակի սկզբներին այստեղ գոյություն ունեին Արգաշկո քաղաքը, Ուրարտական պետության մայրաքաղաք Տուշպան (այժմ՝ Վան) և մի քանի այլ քաղաքներ: Հետագա դարերում այստեղ առաջացան բազմաթիվ նոր քաղաքներ, որոնց աճը սերտորեն կապված էր երկրի սոցիալ-տնտեսական զարգացման և Ուրարտական պետության հզորացման ու ընդլայնման հետ: Քաղաքասահացման ու զարգացման երկրորդ ալիքը Հայկական լեռնաշխարհում վերաբերում է հելլենիստական դարաշրջանին: Աքեմենյան տերության անկրթան հետևանքով և երկրի անկախություն ձեռք բերելու, հայ ժողովրդի և Այրարատյան դաշտում ու Ծոփքում հայկական թագավորությունների կազմվորման կապակցությամբ, Առաջակոյ Ասիայի հելլենիստական քաղաքների առաջացման զոգընթաց, Հայաստանում ևս առաջանում էն մի շարք նոր քաղաքներ: Քաղաքների առաջացումը և քաղաքային կանքի զարգացումը Հայաստանում կապված էր հայ ժողովրդի կազմավորման ընդհանուր պրոցեսի, երկրի ընդհանուր վերելքի, օտարերկրյա լծի թուժափման հետ: Այդ իսկ պատճառով հայկական քաղաքների առաջացման և հին Հայաստանի սոցիալ-տնտեսական կամքուն նրանց ունեցած դերի հարցը մեծ հետաքրքրություն է ներկա-

յացնում, քանի որ առանց դրան հնարավոր չէ Հայաստանի պատմական գարգացման մասին ճիշտ և լրիվ պատկերացում ստանալ:

Մինչև վերջերս համարյա ոչ մի հետազոտող չէր գրալ-վել հայկական քաղաքների առաջացման պատմոթյամբ, քանի որ մեր պատմական աղբյուրները Հայաստանի հեղե-նիստական շրջանի մասին, ընդհանրապես, և հին Հայաս-տանի քաղաքների մասին, մասնավորապես, շատ են սա-կավ: Հին Հայաստանի պատմոթյան վերաբերող աղբյուրնե-րը կցկսուր են և դրա հետ միասին գանձանատիա և ըստ իրենց բնույթի և ըստ գրվելու ժամանակի:

Հին Հայաստանի և նրան հարևան երկրների պատմու-թյանը վերաբերող մեզ հասած աղբյուրները կարելի է բա-ժանել հիմնականում երկու խմբի՝ գրավոր աղբյուրներ և հյու-թական հնագիտական: Դրանցից առաջինը քաղկացած է երեք ենթախմբից: 1) հունա-հոռոմեական հեղինակների եր-կեր, 2) հայ մատենագիրների առեղծագործություններ և 3) վիհական արձանագրություններ: Այս ենթախմբերից յո-րոքանչորսն իր առավելություններով հանդերձ ունի հան-դուոչակի թերությունները: Հունա-հոռոմեական հեղինակները առավել կամ պակաս չափով ժամանակակից են եղել իրենց նկարագրած դեպքերին: Քանի որ նրանց ուշադրության կենտրոնում գտնվել է հունա-հոռոմեական աշխարհը, ապս քնական է, որ նրանք խիստ պատահականորեն էին գրուն Հայաստանի մասին, որը այդ աշխարհի ծայրամասերից մեկն էր, ուստի և չէր կարող նրանց լուրջ ուշադրության առարկան դառնալ: Հայաստանի մասին նրանք մեծ մասամբ գրուն են քաղաքական որևէ իրադարձության կամ հունա-հոռոմեական աշխարհի արքաների և գորակրամանատարների նվաճողա-կան արշավանքների կապակցությամբ: Դրա հետևանքով այս խմբին պատկանող սկզբանադրյուրները շոշափում են գյու-խավորապես Հայաստանի արտաքին քաղաքական պատմու-թյան հարցերը, ուշադրություն չդարձնելով երկրի ներքին կյանքի վրա: Հասկանալի է, որ նրանցում պահպանված կը ց-

կը տուր տեղեկությունները բավական չեն Հայաստանի քա-ղաքների առաջացման կապակցված պատմությունը և նրանց սոցիալ-տնտեսական կառուցվածքը վերջավորված կերպով շարադրելու համար:

Հայ մատենագիրների գործերը հակառակ պատկերուն են ներկայացնում: Հայկական առաջին քաղաքների առաջա-ցման ժամանակից բաժանված են ամբողջ դարերով: Հայ մատենագիրների երկերից վաղագունները չեն գտնվում: թ. 5-րդ դարի կեսերից այն կողմն, երբ արդեն հարց երկիրը կորցրել էր իր անկախությունը, երբ Հայաստանի հա-մարյա բոլոր հնագույն քաղաքները ավերվել էին թշնամու կողմից կամ գտնվում էին անկման շրջանում, իսկ նոր քա-ղաքներ, բացի Դվինից, դեռևս չին հանդես ենել, այնպես, որ մեր մատենագիրները չին կարող հայկական քաղաքների և նրանց առաջացման մասին ունենալ ճշգրիտ և լրիվ պատ-կերացում: Հենց դա էլ գիշավոր պատճառն է այն բանի, որ նրանք չեն տվել հանգամանավից տեղեկությունները հին Հա-յաստանի քաղաքների և քաղաքային կյանքի մասին<sup>1</sup>: Այսու-հանդերձ, նրանց տվյալ սույու տեղեկություններն ել էական նպաստ են հին Հայաստանի քաղաքների պատմությունը վե-րականգնելու գործում:

Հին Հայաստանի քաղաքների պատմության վրա որոշ շափով լույս է ափուու գրավոր աղբյուրների երրորդ ենթա-խումբը՝ վիհանգրական կյութը: Ինչպես հայտնի է, Փոքր Սսիակի և Սիրիայի տերիտորիայում գտնվել են մեծ թվով վիհանգրական հուշարձաններ հունարեն<sup>2</sup>, որոնք վերաբերում են Առաջավոր Սսիակի հեղեղմիստական քաղաքների պատ-մությանը: Դժբախտաբար հին հայկական քաղաքները դեռևս անբավարար են պեղված, որի հետևանքով պատմական Հա-

<sup>1</sup> Այս մասին աե՛ս նաև Գ. Խ. Տարկուսյան, Տիգրանակերտ, Մ., 1960 ստր. 18.

<sup>2</sup> Դրանք հիմնականում ամփոփված են W. Dittenberger, Orientis Graeci Inscriptiones Selectae, Lipsiae, 1903 կապիտալ աշխատության մեջ (այսուհետեւ OGIS):

յաստանի տերիտորիայի վրա տարբեր ժամանակներում, բոլորվին պատահական կերպով, հայտնաբերվել են, հեղեղիստական Արևելքի մյուս երկրների հետ համատառ, ոչ մեծաթիվ, շուրջ երկու տասնյակ արձանագրություններ մեզ հետաքրքրող հարցի վերաբերյալ, արամետերնեւ, հունարեն և լատիներեն<sup>3</sup>: Այդ արձանագրությունները թանկարժեք և անփոխարինելի աղբյուր են: Դրանք ժամանակակից ու հարագատ վկայագրեր են այն դեպքերի և իրավիճակի, որոնց վերաբերում են: Դժբախտաբար, դրանք ունեն երկու լուրջ թերություն. հասել են մեզ մեծ մասամբ թերատ վիճակում և, բացի այդ, միշտ չեն, որ հնարավոր է դրանց ճիշտ թվագրում:

Մատենագրական աղբյուրներից և վիմագրական հյուրից բացի, հին Հայաստանի պատմությունն ուսումնասիրելուն կարող էր նպաստել անպայման հնագիտական հյութը ևս, բայց, ցանքով սրտի, Հայաստանի հնագոյն քաղաքների դեռ վերջերս սկսած պեղումները առաջմ քիչ չափով են լրացնում գրավոր աղբյուրների բացերը:

Սղբյուրագիտական այս ոչ շատ միջթարական վիճակը հրավիրում է հետազոտողի ուշադրությունը նաև Հայաստա-

<sup>3</sup> Այդ արձանագրությունները տարբեր ժամանակներում հրապարակել են առանձին հետազոտողների կողմից, իսկ հետագայում ամփոփած և հրատարակված են Կ. Բ. Տրեզեր, Օчерки по истории культуры древней Армении, М.-Л., 1953 (այսուհետև՝ «Очерки...») աշխատության մեջ: Արամեկերն մի արձանագրություն վերջերս հրապարակել է Գ. Ֆ. Ցիրացյանը: Տե՛ս Գ. Ա. Տիրազյան, Новонайденная арамейская надпись Артасеса I, ՀՍԽՀ ԳԱ «Տեղեկագիր», 1957, № 10: Արամեկերն երկու արձանագրություն հրատարակել է Ա. Գ. Փերիսանյանը (տե՛ս Ա. Գ. Պերիսանյան, Арамейская надпись из Гарни, «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 3, էջ 123—138; Ա. Գ. Պերիսանյան, Арамейская надпись из Зангезура, «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 4, էջ 107—128): Վերջին տարիների ընթացքում հայտնաբերված վերոհիշյալ արձանագրությունները լավագույն երաշխիքն են այն բանի, որ Սովորական Հայաստանում հնագալքերի պեղումները մեզ կոտան Հայաստանի հին շրջանի պատմությունը վերաբերող վիմագրական նոր տվյալներ:

Եին սահմանամերձ ու նրան պատմական իմաստով բախտակից և ողեկից երկրների քաղաքների զարգացման պատկերի վրա: Այդ երկրների մեջ առանձնապես կարևոր տեղ է գրավում Հայաստանի հետ տնտեսական, քաղաքական ու մշակութային թեկերով կապված Փոքր Ասիան: Պարզվում է, որ հեղեղիստական դարաշրջանի փոքրասիրական քաղաքների ու Հայաստանի քաղաքների համատեղ ուսումնասիրությունը խիստ շահեկան է վերջիններին համար մի շարք այնպիսի երևույթների քացահայտման առումով, որոնք, հատուկ լինելով երկրների քաղաքներին, առավել լավ են բարանված աղբյուրներով Փոքր Ասիայի քաղաքների համար: Այստեղ հարկ չկա մանրամասն կանգ առնել այդ խնդրի վրա, քանի որ գրքի առաջիկա շարադրանքը պարզաբնույթ է: Այդ թեզը՝ կոնկրետ օրինակների հետազոտությամբ:

Սուավել կարևոր է մեր աշխատությունը ներածել հունաբնումնական աղբյուրների տեսադրյամբ, որի նպատակն է ոչ միայն բնութագրել այն կոնկրետ կցկոտոր տեղեկությունները, որոնք անմիջականորեն վերաբերում են Հայաստանի քաղաքների պատմությանը (այդ արված է գոյություն ունեցող գրականության մեջ), այլև ցուց տալ դրանց ծագման ուրուտը, ներկայացնել դրանք պարունակող երկերը իրենց հետինակներով համուերձ, որով այդ տեղեկությունները կարող են ալելի լավ և ճիշտ իմաստավորվել:

Սնտիկ հետինակներից առաջինը, որ գրել է Հայաստանի և հայերի մասին, Հերոդոտոս Հայիկանասեցին է: Թեսկուն հեղեղն պատմահոր հիմնական նպատակն է եղել գրել հոյնի պարսկական պատերազմների պատմությունը (մ.թ.ա. 5-րդ դարի առաջին կեսը), որին, պարսկական բանակի կազմում մասնակցել են նաև հայերը, սակայն նրա «Իտորիշ չոճեչ» (Պատմության շարադրանք) երկը իր ժամանակի համաշխարհային պատմության և մշակույթի լուրատեակ մի ակնարկ է: Իր երկը Հերոդոտոսը գրել է՝ Եղիպտոս, Առաջավոր Ասիա և Աև ծովի ափերը կատարած ճանապարհորդությունից հետո, որի ժամանակ նա բազմաթիվ և բազմապիսի հյու-

թեր էր հավաքում: Ակադ. Հ. Հ. Մանանդյանը ենթադրում է, որ նա ևս, Քսենոփոնի նման, անձամբ եղած պետք է լինի Հայաստանում և գրել է հայերի և հրաց երկրի մասին գլխավորապես այն, ինչ ինքը տեսել է կամ տեղում լսել<sup>4</sup>: Սակայն մենք չենք կարող այդ ենթադրությունը հաստատել կոնկրետ փաստերով: Դեռ ավելին: Մենք ուզում ենք վիճարկել Հ. Մանանդյանի այս ենթադրությունը: Կարծում ենք, որ Հերոդոտուր անձամբ չի եղել Հայաստանում: Այս կարծիքի օգտին ցանկանում ենք վկայակրոշել իրեն իսկ Հերոդոտուսին: Ծիշու է, տվյալ դեպքում հրա վկայությունը ուղղակի չի վերաբերում Հայաստանին, սակայն անողջակիրեն կասկածի տակ է դնում հոյն պատմահոր անձամբ Հայաստան ացելած լինելու ենթադրությունը: Այսպես, նկարագրելով եգիպտացիների կենցաղը, Հերոդոտոսը գրում է. «Երանք միակ ժողովորոց են, որոնք իրենց անասունների հետ ապրում են միևնույն հարկի տակ»<sup>5</sup>: Նթե նա իրոք այցելած լիներ Հայաստան, ապա Քսենոփոնի նման նա ևս կտևներ, որ հայկական գյուղերում ևս մարդիկ իրենց ընտանի կենդանիների հետ ապրում են նոյն տանը<sup>6</sup>: Հերոդոտոսը մի անգամ չէ, որ խոսում է Հայաստանի մասին իրեն Աքեմենյան Պարսկաստանի գերիշխանության տակ գտնվող երկրի: Հետաքրքիր են նաև հրա վկայությունները Հայաստանի և Բարելոնի միջև եղած առևտուրական կապերի, հայերի գեն ու զրահի մասին, և այլն<sup>7</sup>:

Անտիկ ժամանակաշրջանի ամենաբեղուն և ամենաճանաչված հեղինակներից էր Քսենոփոն Աթենացին (430—354 մ. թ. ա.): Նախահելլենիստական ժամանակաշրջանի Հայաստանի պատմությունն ուստմնասիրելու համար մեծ արժեք են Աերկայացնում հրա հանրածանոթ երկու երկերը— Կύրոս ու Աքեմեն (Կյուրոսի դաստիարակությունը) և 'Անձաւ'.

<sup>4</sup> Հ. Հ. Մանանդյան, Քննական տեսություն Հայ ժողովրդի պատմության, 4, 1, Երևան, 1944, էջ 362:

<sup>5</sup> Herod., II, 36.

<sup>6</sup> Xenoph., Anab., IV, 5, 26.

<sup>7</sup> Herod., I, 72, 180, 194; III, 93, 94; V, 49, 52; VII, 73, 79.

(Անարափիս): Սրանցից առաջինը ավելի շուրջ բարդաբարձրական վեպ է, քան իսկական պատմական երկ, որում հանդես է գալիս որպես գլխավոր հերոս իդեալական միապետի կերպարը, դաստիարակված փիլիսոփիա Սոկրատեսի սկզբունքներով այնպէս, ինչպես դրամբ հասկանում էր ինքը՝ Քսենոփոնը: Բայց և այնպէս այդ ստեղծագործության մեջ կամ շատ արժեքավոր տեղեկություններ Աքեմենյան Հայաստանի քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքի մասին, ինչպես նաև հետաքրքիր գրուցներ Հայկական լեռնաշխարհում ապրող ցեղերի մասին<sup>8</sup>: Քսենոփոնի պատմական երկերի մեջ նշանակալի տեղ է գրավում Անարափիս, Արտաբուրքսես Մննենոնի դեմ սրա եղբոր՝ Կյուրոս Կրտսերի ձեռնարկած արշավանքի պատմությունը և, հիմնականում, արշավանքին ակտիվորեն մասնակցած իր իսկ Քսենոփոնի անմիջական դեկավարությամբ 10000 հովս վարձկանների վերադարձը Հունաստան, որոնք եղել էին կովելու Կյուրոսի բանակի կազմում: Հայրենիք վերադարձող հովերի ճանապարհի մեծ մասը անցնում էր Հայաստանի միջով: 10000-ի արկածները նկարագրելիս Քսենոփոնը արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Հայաստանի մասին, բայց, դժբախտաբար, նա չի տեսել և ոչ մի քաղաք: Ավելի հավասարական է, որ հովեր գիտակցաբար խոսափում էին քաղաքներից, ոիմադրության չհանդիպելու համար և, հետևաբար, Քսենոփոնը տեսել ու նկարագրել է Հայաստանի գյուղական կյանքը միայն<sup>9</sup>:

Հունա-մակեդոնական էրասմանիան, որն ավարտվեց Ակերասնոյ Մակեդոնացու նվաճողական արշավանքով և հոյների կողմից օչկոմենի գրավումով, բաց արեց նեղենական աշխարհի առաջ արևելյան ժողովորդների հետ մեր-

<sup>8</sup> Xenoph., Cyropaedia, II, 1, 6; 4, 9—32, III, 1, 1—43; 2, 1—31; 3, 1—5; V, 3, 38; VIII, 4, 24.

<sup>9</sup> Xenoph., Anabasis, III, 5, 15—18; IV, 1, 1—28; 2, 1—28; 3, 1—34; 4, 1—22; 5, 1—36; 6, 1—27; 7, 1—27; V, 5, 1; 5, 16—17; 6, 36; VII, 8, 25.

ձեցման լայն հնարավորությունները: Բնական է, որ այդպիսի համգամանեցներում երևան գալիքն երկեր, որոնք վերաբերվեին այդ արշավանքին և այն երկրներին, որոնք հուսա-մակերնացիների հվանան օբյեկտ հանդիսացան: Ցավոք սրտի պիտի հաստատել այն փաստը, որ մեզ հասել են սույն անունները այն մարդկանց, որոնք անձամբ այդ դեպքերի մասնակիցը լինելով, գրել են Արևելքի երկրների վրայով միջն Միջն Ասիայի խորքերը Ալեքսանդրի կատարած արշավանքների պատմությունը, իսկ նրանց երկերը կորել են:

Նրանց մեջ սպասնակառությ տեղ է պատկանուի Արխա-  
տուտելի ազգական և աշակերտ Կալվայթենես Օլիբրացոն (370—328 մ. թ. ա.): Եթի մեծանուն փիլիսոփան հրավիրվեց  
Փիլիպպոս 2-րդի արքունիքը որպես Ալեքսանդրի դաստիւ-  
րակ, Կալվիաթենեսը հետևեց Արխատուտելին և դարձավ ապա-  
գա զորավարի աշակերտակիցը և ընկերը: Մակեոնացու  
արշավանքների ընթացքում Կալվիաթենեսը ուղեկցում էր  
նրան: Ըստ երևոյթին սրան էլ հանձնարարված է եղել գրե-  
լու մեծ զորահրամանառարի արշավանքների պատմությու-  
նը: Կալվիաթենեսը այդ պատվերը կատարել էր հրանալի  
կերպով, շողոքքրթությամբ, շմոռանալով խոսել նոյնին իր  
հերոսի աստվածային ծագման մասին<sup>10</sup>: Սակայն հետագա-  
յում նա իբր գտնվելիս է եղել Ալեքսանդրի դեմ դավ հյու-  
թողների խմբում և հետվել է բանտ, որտեղ էլ, հավանաբար,  
սպասվել:

Կալիստենսի երկերից պետք է հիշատակել „Առջևունության մասին օրու պատճենագիրը“ (Գործը Սլեքսանովի), որում շարադրվել են արշավանքի սկզբից մինչև Գավգամելայի ճակատամարտն ընկած դեպքերը: Այս երկերից պահպանվել են առև ոչ մեծ հատվածներ հետագա հեղինակների (Պոլիբիոս, Ստրաբոն, Պլոտինոս) գործերում: Ամենայն հավանականությամբ Կալիստենսի շարադրանուքը հեռու էր օրինակություն և արժանահավատ լինելուց: Այսպիսին է համեմապնդեապ, Պոլիբիոսի գնահա-

<sup>30</sup> *Idem.* Polyb. XII, 2, 3, 4.

տականը, որը Կալիխթենեսի նկարագրած մի ճակատամարտի վերլուծության հիման վրա ցույց է տալիս, որ նրա պատմությունը չի կարող իրականության համապատասխան լինել և կասկածում է նրա հավաստիությանը: Կալիխթենեսի պատմածները Պոլիբիոսը համարում է վրիպում, սիազ (άλογόπεπ-է): Իր երկի մեջ Կալիխթենեսը դրսնորում է հակում դեպի պատմական վեպը: Նրա մահից հետո շուտով ստեղծվում է Ալեքսանդրի մասին սուս-Կալիխթենեսան վեպը, որի հայերեն թարգմանությունը երևան է գալիս շատ վաղ, դեռևս հայ գրականության առաջացման արշալույսին:

Ալեքսանդրին ժամանակակից հեղինակներից է նաև Արիստոլիսի որդի Անարքիմենեսը, որը գրել է պատմական երկ Մակեդոնացու արշավանքների մասին („Τὰ περὶ Ἀλέξανδρου“): Պահպանված անհշան հատվածները հնարավորթյուն չեն տալիս դատելու այդ երկի հշանակության մասին:

Ալեքսանդր Մակեդոնացու մերձավորագույն զինակիցներից և ընկերներից, Պտղոմեոսների Եգիպտական թագավորության հիմնադիր Պտղոմեոս Լազոսը, գերազացապես իր սեփական հիշողությունների հիման վրա, կազմել է հաշվետվություններ դեպքերի ընթացքի մասին Ալեքսանդրի արքունիքում հրատարակվող լուգրերում: Արշավանքների այդ տառելապես ուազմական պատմության ճշգրիտ անվանումը մեզ հայտնի չէ: Այդ երկը կազմում է Արքիանոսի „Առաջաւ: Առաջանձու:“ աշխատության հիմքը<sup>12</sup>:

Մակեղոնացու ովելիցիցներից մեկ ուրիշը, Արիստոբուլոս Կաստանորեցին<sup>13</sup>, շարադրել է մեծ զրաւալարի պատմությու-

<sup>11</sup> *Σύντομον.* Polyb., XII, 17—22.

<sup>12</sup> Հմայութեակադմություն F. Jacoby, FGH, № 138

Աը, որում նաև հաղորդում է Սրբների երկրների մասին աշխարհագրական և ազգագրական կարևորագույն տեղեկություններ: Նրա երկը մի լորատեսակ լրացումն է Պտղոմեոս Լագոսի պատմությանը:

Ալեքսանդրի ուղեկիցներից, որոնք գրել են նրա արշավանքների պատմությունը, անհրաժեշտ է հիշատակել Կյուրիսիոս Փարսպացուն և Մեդիոս Լարիացուն. սրանք Ստրաբոնի վկայությամբ, իրենց գործերի մեջ հետաքրքիր տվյալներ են հաղորդել նաև Հայաստանի մասին<sup>14</sup>: Դժբախտաբար, այս երկու հեղինակների երկերից և ոչ մեկը չի հասել մեզ: Սակայն հետագայում ուրիշ հեղինակներ (Դիոդորոս Սիկիլիացի, Ստրաբոն, Արրիանոս) Մակեդոնացու արշավանքների և նրա դիացուների, հետնորդների, միջև մղված պատմությունը շարադրելիս, օգտվել են այդ երկերից:

Այստեղ չի կարելի շիշատակել Արրիանոս Փլավիոսին նիկոմեդիայից, թեկուզ և նաև ավելի ուշ շրջանի (2-րդ դ. մ. թ.) հեղինակ է: Մեզ հասել է նրա „Առաջաւություններում“ երկը, որում շարադրված է Մակեդոնացու ամբողջ կյանքի պատմությունը, ծննդից մինչև մահը: Արրիանոսը լազն կերպով օգտվել է Պտղոմեոս Լագոսի երկից:

Ալեքսանդրի հետնորդների պատմության վերաբերող հիմնական աշխատություններից է եղել Հիերոնիմոս Կարդիացու (350—260 մ. թ. ա.) երկը: Նա գերազանց տեղյակ էր դեպքերին, քանի որ հանդիսանում էր Եվմենեսի մերձավորագույն ընկերը և զինակիցը, իսկ նրա մահից հետո մտերիմն էր Անտիգոնոսի և սրա որդի Դեմետրիոսի: Հիերոնիմոսի, այդ մեծ պատմագրի, աշխատությունը<sup>15</sup> ընդգրկել է Մակեդոնացու մահից մինչև Պտղոմեոս մահն ընկած ժամանակա-

<sup>14</sup> Strab., XI, 14, 12 (C 530).

<sup>15</sup> Ժամանակակից հետազոտողները բարձր են գնահատում նրա աշխատությունը: Հմատ. T. S. Brown, AHR, 52 (1946—47), էջ 684 և հետո, M. I. Rostovtzeff, ScHHW, էջ 2, 15, 141, 1008, 1151—1156, 1626:

թշանը (272 թ.) և ընկած է Դիոդորոսի աշխատության համապատասխան գրքերի (18—20), ինչպես նաև անհշան քաղվածքներում պահպանված Արրիանոսի «Հետալերան-դրյան» երկի հիմքում<sup>16</sup>: Հիերոնիմոսը հանդիսացել է միաժամանակ Պյոտրաբրոսի գրած մի շարք կենսագրությունների սկզբնաղբյուրը:

Այն բանից հետո, եթե Արևմտյան Միջերկրականում գերիշխանություն հաստատելու շուրջ Կարթագենի և Հռոմի միջև մղված դաժան ու երկարատև պայքարը ավարտվեց հոումայցիների փայլուն հաղթանակով, Հռոմեական հանրապետությունը իր հայացքը դարձեց դեռ Արևելք, նպատակ ունենալով Միջերկրական ծովի արևելյան ավազանում և իր տիրապետությունը հաստատելու և ամրող Միջերկրականը սեփական ծով դարձելու: Այս ժամանակաշրջանում է, իրապես, երևան են եկել այնպիսի երկեր, որոնք այս կամ այն կերպ ընդգրկել են Հռոմի նվաճողական քաղաքականության նախապարհին կանգնած երկրների պատմությունը: Դրանցից ամենաարժեքավորը՝ Պոլիբիոսի՝ 40 գրքից բաղկացած աշխատությունն է: Պոլիբիոսը ծնվել է 210 թ. մ. թ. ա. Պեղոպնեսի Մեգալոպոլիս քաղաքում: Նրա հայրը՝ Լիկորոտան, մոտիկ ընկերն էր Աքայական միության առաջնորդ Ֆիլոպետենեսի և հանդիսանում էր քաղաքական և զինվորական ականավոր գործիչ, այնպես, որ, Ֆիլոպետենեսի մահից հետո (183 թ.) ընտրվեց նրա փոխարեն Աքայական միության գորավար: Մանկությունից պապա պատմագիրը աճեց այնպիսի մի շրջապատում, որտեղ նա կարող էր սովորել դիվանագիտություն և ուզմական արվեստը: 169 թ. նա ընտրվեց նոյն այդ միության հիպագարքուի պաշտոնում և փաստորեն դարձավ Աքայական դաշնակցային ղեկավարի անմիշական քաղաքական ու ուսմական տեղակալը: Այսպիսի բարձր պաշտոն գրավելով, Պոլիբիոսն արդեն ոչ միայն նեարավորություն ուներ, այլ մինչև իսկ պարտավոր էր այդ

<sup>16</sup> Հմատ. A. G. Roos (Արրիանոսի հրատ.) հ. II, 1928, էջ 253 և հետո.

Ժամանակի միշագային բարդ հարաբերությունների ամբողջության հետ ծանոթանալու: Եթե նա ձեռնամոխ եղավ իր պատմական երկը գրելուն, արդեն հարուստ էր իր ձեռք բերած տեղեկություններով, գիտելիքների պաշարով և փորձով: Հանդիսանալով Արայական դաշնակցության դեկալարներից մեկը, Պոլիբիոսը Մակեդոնիայի վերջին թագավոր Պերսևի դեմ Հռոմի մղած պատերազմի ժամանակ խիստ չեզոքության կողմնակից էր (168 թ.): Նա դեռևս չէր համարում Հռոմին: Պերսևի շախազատություն հետո, Արայական դաշնակցության ներսում հաղթանակեց հոոմեասեր հոսանքը: Հռոմեացիներն անբարյացակամ էին Պոլիբիոսի նկատմամբ և կասկածու: Հազար ականավոր արայացիների թվում նա ևս 167 թ. որպես պատահ ուղարկվեց Հռոմ, որտեղ մնաց 17 տարի: Այսուղե, Հռոմում, արմատապես փոխվեցին նրա կյանքի պայմանները: Պոլիբիոսը մտերմացավ հոոմեական ականավոր քաղաքական գործիչների հետ, դարձավ Պերսև թագավորին հաւաքող Լուկիոս Էմիլիոս Պավլոսի տանը դաստիարակ: Հենց այս տանն էլ նա մտերմացավ Կարրագենի ապագա նվաճող Ալիստրոս Էմիլիանոսի հետ<sup>17</sup>: Ըստ Էության Պոլիբիոսը միապետության և ամեն տեսակի բոնապետության թշնամի էր, քաղաքային ազատության և ինքնավարության կողմնակից, քայլ միևնույն ժամանակ նա սաստիկ աստում էր նեշված մասաների նեղափոխական շարժումները. փաստ՝ նրա քացանական վերաբերմունքը Սպարտայի թագավոր Նարիսի նկատմամբ<sup>18</sup>: Պոլիբիոսի քաղաքական հայացքների էվոլյուցիան քացատրվում է նրանով, որ երբ նա աշխատափրում էր իր «Պատմությունը», Մերձավոր Արևելքում տեղի էին ունենում պատմական կարևորագույն իրադրություններ, հոոմայեցիների կողմից Հռոմատանի նվաճումը, Սելևկան տերության քայլապումը, Արիստոնիկոսի դեկավարությամբ ստրուկների ապատմությունը. Պերգամում:

<sup>17</sup> Հմտ. Polyb., XXXI, 23 և հետո:

<sup>18</sup> Հմտ. Polyb., XIII, 6.

Իր շարադրանքի հենց սկզբում Պոլիբիոսը պարզաբանում է, որ 140-րդ օլիմպիադայից սկսած (219—216 մ. թ. ա.) պատմությունը դառնում է միասնական: «Նախկինում,—գրում է նա,—դեպքերը երկրի վրա տեղի էին ունենում կարծես անշատ իրարից, քանի որ նրանցից ամեն մեկն ուներ իր առանձին տեղը, առանձին նպատակները և վախճանը: Մինչդեռ, սկսած այս ժամանակից, պատմությունն ասես դառնում է մի ամբողջություն, հուալիայի և կիրիայի իրադրությունները միահյուսվում են ասիական և հելլենական դեպքերին, և բոլորը հանգում են մի վախճանի: Ահա թե ինչու հենց այդ ժամանակից էլ մենք կակսենք մեր շարադրությունները»<sup>19</sup>: Սիսակ կիմեեր, սակայն, Պոլիբիոսի երկը համարել իր ժամանակի համաշխարհային պատմությունը, քանի որ այն ընդգրկում է միայն Հռոմեական ուսապորիկայի և հելլենիստական աշխարհի պատմությունը, մ. թ. ա. 220—145/4 թթ. միջին ընկած ժամանակաշրջանում<sup>20</sup>: Պոլիբիոսը հանգամանուրեն և թիշ թե շատ օրիենտիվ կերպով շարադրում է դեպքերի ընթացքը Կարթագենում, հոոմեական աշխարհում և հելլենիստական առաջատար երկրներում: Դժբախտաբար, հելլենիստական աշխարհի արևելյան ծայրամասերում տեղի ունեցած դեպքերի մասին նրա հաղորդումները թերատ են և սակալաթիվ: Այսպես, նա Հայաստանի մասին գրում է սուկ Անտիոքոս 3-րդի արևելյան արշավանքի<sup>21</sup> և կամ Փոքր Ասիայի հելլենիստական միապետների միջև կերպած հաշոտության պայմանագրի կապակցությամբ<sup>22</sup>:


Պոլիբիոսից հետո հելլենիստական ժամանակաշրջանի հաջորդ ականավոր պատմագիրը հանդիսանում է սոտիկյան փիլիսոփա Պոսիդոնոսը Միրիայի Ապամեա քաղաքից (130—50 մ. թ. ա.): Պատահենկության տարիները նա անց է կացրել Աթենքում, որտեղ և լույն է անվանի սոտիկյան փի-

<sup>19</sup> Polyb., I, 3, 3—5.

<sup>20</sup> 17-րդ դիրքը ամբողջությամբ կորել է:

<sup>21</sup> Նույն տեղում, VIII, 25, 1—6:

<sup>22</sup> Նույն տեղում, XXVI, 6, 1—2:



լիտոփա Պահետիոսին: Հետագայում նա ճանապարհորդեց Խոստիա և Խապանիա, որից հետո քևակվեց Հռոդոս կղզում, որտեղ և հիմնեց փիլիտիպական դպրոց: Նրա աշակերտներն են եղել, ի թիվս ուրիշների, նաև Կիլերոնը և Պոմպեուս: Հռոդոսում նա եռամբում կերպով մասնակցել է քաղաքական կյանքին: Պոմպեուսը եղել է թերմեավոր հեղինակ: Երկարատև ճանապարհորդություններից հետո, հարուստ գիտելիքներով զինված, նա գրել է 52 գրքից բաղկացած պատմական խոչըն երկ՝ „Իտարիչ“ (Պատմություններ), որի մեջ շարադրել է Միջերկրածովյան աշխարհի և ճախմինում Ալեքսանդր Մակեդոնացու լայնարձակ տերության մեջ մրտնող Առաջավոր Ասկայի երկրների դեպքերը, իր պատմությունն սկսելով 145/4 թվից և այն հասցենով մինչև մ. թ. ա. 70-ական թվականները: Այսպիսով նա փաստորեն շարունակել է Պոլիբիոսի պատմությունը, որի համար էլ նրա գործը մի ժամանակ կրօպելիս է եղել՝ ‘Իտարիչ բառ’ ու Ալեքսանդր Հետ-Պոլիբիոսի պատմությունները: Կարելի է միայն ափսոսալ, որ նեղենիստական երկրների պատմության ուսումնափրման համար բացադրել կարևորություն ունեցող Պոմպեուսի այդ երկից մեզ հասել են սույ առանձին բեկորներ, գլխավորապես հետագա դարերի անտիկ հեղինակների գործերի մեջ կատարված մեջքերումների ձևով: Պոմպեուսի աշխատությունից հշանակալից շափով օգտվել են Դիոնորոս Սիկիլիացին, Ստրաբոնը, Աթենեյոսը, Տիտոս Լիվիոսը: Նրա պատմությունը իր գիտական մակարդակով զիշում է Պոլիբիոսի երկին, բայց միաժամանակ հագեցված է զանազան երկրներին Վերաբերող աշխարհագրական և ազգագրական տեղեկություններով:

Հեղենիստական ժամանակաշրջանի ականավոր պատմագիրներից է նաև նեղեն Դիոնորոսը Սիկիլիայից (շուրջ 90—20 մ. թ. ա.), նեղինակը 40 գրքից բաղկացած քաղաքական համաշխարհային պատմության, որը ինքն իսկ կոչել է „Բնակչության իտարչի“ — Պատմական գրադարան: Առաջարանում Դիոնորոսը պատմում է, թե այդ գործի վրա

ինքը աշխատել է 30 տարի, կատարել է երկար ու դժվարին ճանապարհորդություններ Ասիայի ու Եվրոպայի զանազան երկրներում: Նա եղել է նաև Եգիպտոսում:

Հեղինակել համաշխարհային պատմություն այդ ժամանակ արտակարգ ծանր գործ էր, կապված այնպիսի մեծ դժվարությունների հետ, ինչպես, օրինակ, ճանապարհորդելը, տեսնելը, նյութեր հավաքելը, և այլն: Իր ճանապարհորդությունների ընթացքում Դիոնորոսը ուսումնասիրել է ամեն տեսակի արխիվներ և իր հախորդների բազմաթիվ պատմական դեպքերի կատարված վայրերին: Նա հավաքել է առաստ և բազմապիսի նյութ, որը վերաբերում է ոչ միայն պատմական դեպքերին և իրադարձություններին, այլ նաև տարբեր ժողովորդների կենցաղին ու բարբերին: Վերջնականացել է այդպիսի մեծ քանակությամբ տարբեր բնույթի նյութեր և դրանց հիմնա վրա ստեղծել ամբողջական միաձույլ մի աշխատություն՝ Դիոնորոսի ուժերից վեր էր: Նրա աշխատությունը դրու չեկավ կոմպիլացիայի շրջանակներից: Պատմիարակված լինելով նուտորական դպրոցներում, նա չուներ բաղադրական գործչի վորձ և գրելիք այլ քաղաքական սրանքներից ու դիտողականությունից, որպեսզի նիշտ կերպով գնահատեր այս կամ այն անձնավորության գործունեությունն ու քաղաքական պայքարը: Դիոնորոսը լայն կերպով օգտագործել է իրեն հախորդած նեղինակների գործերը, դրանով իսկ պահպանելով թանկարժեք հատկանիւն մեզ շնասած երկերից: Նրա գլխավոր աղբյուրներն են եղել Եփորոսը և Ապոլլոնորոսը, Ագաթարքիդեար և Արտեմիդորոսը, Հեկատեյոս Աքերացին և Կտեսիասը, Հերոդոտոսը և Թեոպումպոսը: Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների պատմությունը շարադրելիս նա օգտագործել է նրա ուղեկիցներից մեկի, Կիլյուտաքոսի աշխատությունը, իսկ նրա նետնորդների պատմությունը գրելիս նա հիմնվել է Հիերոնիմոսի և Դորիս Սամոսացու վրա:

«Պատմական գրադարանը» բովանդակում է Միջերկածովյան աշխարհի և Մերձավոր Արևելքի ժողովորդների ամբողջ պատմությունը, սկսած հնագոյն, առասպելական ժամանակներից մինչև Կեսարի Գալլական պատերազմները (շորջ 60 թ. մ. թ. ա.): Դիբախտաբար, այդ հետաքրքիր երկից միայն մասեր են պահպանվել: Ամբողջությամբ մեզ են հասել առաջին հիմք գրքերը (Հունատանի առասպելական շրջանի պատմությունը) և 11—15-րդ գրքերը (Հունատանի և Հին Արևելքի երկրների պատմությունը 5—4-րդ դարի վերջերը): Մնացած գրքերի մեզ հասած հատվածներուն հանդիպում են հուզ հետաքրքիր տվյալներ Մակեդոնցու հետնորդների, դիարդիսների միջև մոլոված պատերազմների, այդ ժամանակա Հայատանի մասին, դիարդիսների պատերազմներին Հայատանի սատրապի ունեցած մասնակցության մասին, ինչպես նաև արծեքավոր տեղեկություններ Սելևկան պետության պատմության, հատկապես նրա գոյության ուշ շրջանի պատմության մասին:

Ոչ միայն Հին Հայատանի պատմության ուսումնասիրության, այլև Փոքր Ասիայի և Առաջավոր Արևելքի քաղաքների պատմության հետ կապված մի շարք հարցերի պարզաբանման համար կարևորագույն աղբյուրներից է Ստրաբոնի պատմա-աշխարհագրական համբանաւ „*Γεωγραφικά*“ երկը, առանց որի հնարավոր չէ բավարար չափով կղզմնորոշվել հելլենիստական ժամանակաշրջանի Արևելյան հասարակություններին վերաբերող զանազան հարցեր մշակելին: Ստրաբոնը (շորջ 64 մ. թ. ա.—20 մ. թ.) ծննդել է Հայատանին սահմանակից պոնտական Ամասիա քաղաքում, արհասուլրատական ընտանիքում: Իր աշխատության մեջ նա մի անգամ չէ, որ խոսում է իր ծագման մասին, իր հայսմիների թվում հիշատակելով Պոնտական թագավորության ամենահայտնի մարդկանց, որոնք Միհրդատ Եվգատորի ժամանակ գրադեցրել են քարձագոյն պետական պաշտոններ, եղան են զորահրամանատարներ, սատրապներ

և կամ քրիստոնեաց<sup>23</sup>: Այս հանգամանքն էլ ապահովեց նրան այդ ժամանակի համար քարձ կրթություն ձեռք բերելու բոլոր պայմանները: Իր լայն կրթությանը ևս ավելացրեց նաև իր ճանապարհորդություններից ստացած տպավորությունները: Իր կատարած ճանապարհորդությունների մասին ևս պարծենալով գրում է: «Մենք շրջել ենք դեպի արևմտոք՝ Հայատանից մինչև Տյունենիայի այն վայրերը, որոնք գրտնվում են Սարդինիայի դիմաց. իսկ դեպի հարավ՝ Եվրոպին յան ծովից մինչև Եթովպիայի սահմանները: Ենչ վերաբերում է որիշներին, որոնք ևս Ակարագրել են երկիրը, ապա չի գտնվի և ոչ մեկը, որը շրջապայած լինի մեր հիշատակած վայրերը առավել քան մենք»<sup>24</sup>: Ստրաբոնի լայն էրուժիցիան, Հոռմի քաղաքական գործիչների հետ ունեցած կապերը (ևս ուղեկցում էր Օգոստոս կայսրի փոխանորդին Եգիպտոսում Ելիոս Գալլոսին) և ճանապարհորդություններն արտացոլվեցին նրա երկերում: Ստրաբոնն ստանձնապես հայտնի է իր աշխարհագրական երկու („*Γεωγραφικά*“), որում օգտագործված են լայնորեն ոչ միայն հետինակի անձնական դիտողությունները իր ճանապարհորդությունների ընթացքում, այլև մեզ հայտնի գործերը այնպիսի հետինակների, ինչպիսիք՝ Հերոդոտոսը<sup>25</sup>, Պոլիբոսը<sup>26</sup> և այլն, ինչպես նաև այլ հետինակների (Երասոսութենև<sup>27</sup>, Հիպատրոս<sup>28</sup>, Արտեմիդորոս Եփեսացի<sup>29</sup>, Թեոֆանես Սինիլենացի<sup>30</sup> և որիշներ) մեզ չհասած գործերը: Ստրաբոնն համար քննորոշ է քննադատական վերաբերմունքը իր օգտագործած աղբյուրների Ականանամբ: Զի կարելի շհամաձայնվել Բ. Ա. Տուրանի ընդհանուր

<sup>23</sup> Strabo, XI, 2, 18 (C. 499); XII, 3, 33 (C. 557—558) և այլն:

<sup>24</sup> Strabo, II, 5, 11 (C. 117):

<sup>25</sup> Strabo, XI, 14, 13 (C. 531); XI, 14, 16 (C. 533):

<sup>26</sup> Strabo, XIV, 2, 29 (C. 663):

<sup>27</sup> Strabo, I, 3, 1 (C. 47); II 1, 11 (C. 71); II 1, 29 (C. 82):

<sup>28</sup> Strabo, XI, 14, 8 (C. 529):

<sup>29</sup> Strabo, XIV, 2, 29 (C. 663):

<sup>30</sup> Strabo, XI, 14, 4 (C. 528); XI 14, 11 (C. 530):

գմանատականի հետ, թե Սորաբոնի երկը «արդեն ոչ թե կոմպիլլացիա է, այլ քննադատական, գիտական երկ, որը համարվում է դասական»<sup>31</sup>: Սորաբոնի աշխարհագրական երկը իր ժամանակի մասին յորատևակ մի հանրագիտարան է: Այս կամ այն երկի աշխարհագրական տվյալները Ալքարագրելիս Սորաբոնը պատմական հեռավոր էքսկուրսներ է կատարում դեպի դարերի խորքը, և պատմում այդ երկրամասերի բնակչության հեռավոր անցյալի մասին, միաժամանակ նկարագրում նրանց վարքն ու բարքը, կենցաղը և այլն: Այս երկը բաժանված է 17 գրքի, որոնցից 11—16-րդը ծայր աստիճանի արժեքավոր աղբյուր են հանդիսանում Փոքր Ասիայի և Կովկասի ժողովուրդների պատմության ուսումնափրաման համար: Մեզ համար առանձին հետաքրքրություն են ներկայացնում նրա հայորդած տեղեկությունները Հայաստանի և Փոքր Ասիայի մասին, որտեղ, անկանած, ինքը եղել է և արձանագրել իր դիտումների արդյունքները: «Աշխարհագրությունը» Սորաբոնի միակ երկը չէ: Մինչ այդ նա գրել է պատմական կարևորագույն աշխատություն «Իտօռչա նորությառ» (Պատմական հիշատակարաններ), որում շարադրել է մ.թ.ա. 145—27 թթ. դեպքերը: Այդ աշխատությունից մեզ հասել են սուկ աննշան բնելորներ, որոնք հնարավորություն չեն ընձեռում դատելու նրա մասին<sup>32</sup>: Այնուամենապեսիվ, Սորաբոնի պատմական այս երկի կորուսը անփոխարինելի է, քանի որ նա իր «Աշխարհագրությունում» հաճախ ընդհատելով իր շարադրանքը, վկայակություն է «Պատմական հիշատակարանները»:

Մ.թ.ա. 1-ին դարի Հայաստանի համար արժեքավոր տեղեկություններ կան մ.թ. 1-ին դարի հրեա մատենագիր, Ենովայի տաճարի քրիստոնեական Հովհաննեսու Փլավիոսի (Հովհան-

<sup>31</sup> Б. А. Тураев, История древнего Востока, т. I, Л., 1936, стр. 18.

<sup>32</sup> Հմտա. F. Jacoby, FGH № 91; E. Honigmann, RE, IV A (1931), էջ 85 և հետո, Strabo բառի տակ: Հովհաննեսու Փլավիոսի «Հրեական հնագույնության» մեջ պահպանվել են բնեկորներ՝ Սորաբոնի «Պատմական հիշատակարաններից»:

րեն Մաթաֆիա) աշխատությունում, որը գրել է հումարեն «Προὶ τοῦ Ἰουδαῖκου πολέμου» (Հրեական պատերազմի մասին) և «Ἰουδαῖκὴ ἀρχαιολογία» (Հրեական հնախություն) երկերը: Այս երկերը գրելիս Փլավիոսը նպատակ է ունեցել ծանոթացնել հումայնեցիներին հրեաների պատմական անցյալի հետ: «Հրեական հնախությունը» երկու հնագույն ժամանակներից մերած հրեական պատմության շարադրանք միասին Հովհաննեսու Փլավիոսը նկարգում է նաև Սելևկյան թագավորների քաղաքականությունը Հրեաստանի ներկայամարտ և հաղորդում է ոչ քիչ տեղեկություններ Սելևկյան տեղության պատմության վերաբերյալ: Մեզ համար հնատկապես հետաքրքրություն են ներկայացնում այս հատվածները, որտեղ Փլավիոսը խոսում է Տիգրան 2-րդի Պահեստինի կատարած արշավանքի մասին<sup>33</sup> և պարթևների արքայազնու Պակորությամբ Հրեաստան կատարված արշավանքի մասին<sup>34</sup>:

Հեղենիստական ժամանակի առանձին շրջանների պատմություններում, ինչպես նաև Հայաստանում Տիգրան 2-րդի և նրա հաջորդ Սելևկյան թագավորության փոթորկալից տարիների պատմությունը լուսաբերում համար որոշակի արժեք են ներկայացնում Պլոտարքուի (46—123 թթ.) գրած հին աշխարհի հայտնի գործիչների կենսագրությունների առանձին մասեր: Ծնվել է Պլոտարքուը Բենվիայի Քերոնելյա ոչ մեծ քաղաքում, արհաստկրատական ընտանիքում, իսկ կրթությունն ստացել է Աթենքում, որից հետո նա տեղափոխվում է Հռոմ: Այսուղ Պլոտարքուը դառնում է Տրայանոս կայսրի արքունիքին մոտիկ անձնավորություն և Ադրիանոսի, ապագա կայսրի, դաստիարակը: Այնուհետև իր ամրող կյանքի ընթացքում գրավել է բարձր պաշտոններ—Աքայացու կայսերական կալվածների արոկուրատոր, իր ծննդավայր Քերոնելյա քաղաքի արքունու,

<sup>33</sup> Jos. Flav., 'Ιουδ. ἡργ., XIII, 419—421.

<sup>34</sup> Նույն տեղում, XIV, 330—335:

Դեղֆյան տաճարի քում: Այս հաճախակիրով էլ բացատրվում է հրա հոռմեասեր կողմնորոշումը և բացասական վերաբերմունքը Սրբելքի ժողովորդների, հատկապես Հոռի թշնամիների, մանավանդ Միհրդատ Պոնտացու և Տիգրան 2-րդի նկատմամբ: Պլոտարքոսի ատեղծագործությունները զուտ պատմական երկեր չեն: Իրենց բնույթով և բովանդակությամբ բազմապիսի երկերից բացի, որոնք հայտնի են մի ընդհանուր հիմքով (Բարդաշտություններ) վերևագրով, Պլոտարքոսը պատվեապես հայտնի է իր գրած կենսագրություններով (Յօւ ոչընկալու), որոնք հունական և հոումեական ու քաղաքական գործիչների յուրատեսակ գրական դիմանկարներ են: Այս կենսագրությունները բոլորին էլ այդ գործիչների պատմությունը չեն: Դրանք ավելի շուտ հրանց նկարագրի բնույթագրումն են: Չափ հաճախ իր հերոսների կյանքից վեցրած երկրորդական, բայց հետաքրքրիր մանրութերով Պլոտարքոսը աշխատում է, և ոչ առանց հաշողության, իր պատմությունը դարձնել հետաքրքրաշարժ: Այսուամենայնիվ, մի քանիսը հրա գրած կենսագրություններից (Սոլլա, Լուկուլլո, Պոմպեո, Կրասսո, Անտոնիո) անհրաժեշտ աղբյուր են Հայաստանի և հրա հարևան երկրների պատմության ուսումնասիրման համար: Բայց դրանցից օգտվելիս երբեք չպետք է աշքաթող անել հեղինակի արհաստուրատական ծագումը, հրա հոռմեասեր դիրքորոշումը, ինչպես նաև հրա թշնամական վերաբերմունքը ժողովորդական մասաւների շարժումների և Հոռին հակադրվողների նկատմամբ:

Πιο ρεβελέσιμη ψωτινή θρησκεία που παραπέμπεται σε αυτόν είναι η Καθολική Εκκλησία της Ιρλανδίας, με την οποία ο Πάπας Βατούλος έχει διατάξει την απορρίψη της από την Εκκλησία της Ιρλανδίας. Η Καθολική Εκκλησία της Ιρλανδίας, με την οποία ο Πάπας Βατούλος έχει διατάξει την απορρίψη της από την Εκκλησία της Ιρλανδίας.

<sup>35</sup> *Ապահանոսի կենսագրական տվյալների մասին տե՛ս С. А. Жебелев, Аппиан и его „Гражданские войны“. Приложение к изданию:*

մեական պատմության շարադրման սկզբունքը արևատապես տարրերվում է Հռոմի պատմությունը գրած որիշ հեղինակ-ներից: Եթե, օրինակ, Տիտոս Լիլիոսը շարադրում է Հռոմի պատմությունը ըստ տարիների կամ Պոլիբոսը դեպքերի մասին պատմում է ըստ օլիմպիադաների, ապա Ապահանուը Հռոմի պատմությունը գրել է առանձին մենագրությունների ձևով, որոնց հիմքում նա դրել է տերիտորիալ կամ էթնիկական սկզբունքը, բայց յորաքանչյուր մենագրության ներսում դեպքերը նկարագրելին նա պահպանում է ժամանակագրական սկզբունքը<sup>36</sup>: Ապահանոսի երկը բաժանված է 24 գորի, որոնցից յորաքանչյուրը առանձին վերնագրի տակ ընդգրկում է այն երկրների ու ժողովորդների պատմությունը, որոնք պատմական հարաբերություններ են ունեցել հոդայցիների հետ: Այդ գրքերի վերնագրերը իրենք են խոսում իրենց բովանդակության մասին: Այսպես, Գալլականը (4-րդ դիրք) շարադրում է Գալլիայի պատմությունը, 7-րդը, Հան- Սիրակականը, պատմում է Պուերիկան երկրորդ պատերազմի մասին, 11-րդը, Սիրիականը, ընդգրկում է Սելևկյանների պատմությունը, 12-րդը, Միհրդատականը, պատմում է հոռմայեցիների Միհրդատ Պունացու դեմ մղած պատերազմների մասին և այլն: Հենց այս տարրերից գծով էլ որոշվում է Ապահանոսի Հռոմեական պատմության 11-րդ (Ծրբագ) և 12-րդ (Մ: Թօնաւուածուածու) գրքերի մեծ հշանակությունը: Այս կապակցությամբ իրավացի է Օ. Ի. Սեվաստյանվան, եթե գրում է, որ Ապահանոսը Սիրիական պետության մասին իր գրքում «ուղիս է, թեկուց և կարճ, բայց ամբողջական և հետևողական ակնարկ Սելվկյան միավետության պատմության»<sup>37</sup>: Հռոմայցիների դեմ Միհրդատի մղած պատերազմ-

Аппиан, Гражданские войны, Л., 1935; *О. И. Севастьянова*, Введение к переводу: Аппиан, Митридатовы войны, ВДИ, 1946, № 4 стр. 231—238.

<sup>36</sup> С. А. Жебелев, *Что же такое?*

<sup>32</sup> О. И. Севастянова, *Изм. шифр.*, № 232.

Աերին նվիրված 12-րդ գրքում Ասպահիանոսը ոչ միայն պատմում է պատերազմական դեպքերի մասին, այլ նաև հաղորդում է «մի շարք կարևոր տեղեկություններ Փոքր Ասիայի հունական քաղաքների պատմությունից և նկարագրում է հականոնների պատմությունից»<sup>38</sup>: Ասպահիանոսի, որպես պատմագրի, մի որիշ տարրերից գիծն էլ նրա ուսակցմն է: Ի տարրերություն անտիկ շրջանի մյուս հեղինակներից, որոնք աշխատում են դեպքերը բացատրել աստվածների կամքով կամ ճակատագրի կամքությունների մեջ: Կ. Մարքսը բարձր է գնահատել պատմագրի Ասպահիանոսի այս հատկությունը: Էնգելսին գրած 27-2-1861 թվակիր նամակում Մարքսը գրում է, որ Ասպահիանոսը «ձըգտում է թափանցել մինչև հյութական աստարը այդ քաղաքական կողմէների»<sup>39</sup>: Ասպահիանոսի Հռոմեական պատմության «Միհրատական» գիրքը հին Հայաստանի պատմության ուսումնափրման անհրաժեշտ սկզբնաղբյուր է: Այդ գրքի 67, 83—90, 104—105 գլուխները բովանդակում են Տիգրան 2-րդի Հռոմի դեմ մղած կողմէների պատմությունը, տեղեկություններ Տիգրանակերտի կառուցման մասին, ինչպես նաև արծեքավոր տվյալներ Տիգրանի որդիների բանսարկությունների մասին:

Ուշ անտիկ շրջանի վերջին ականավոր պատմագրի՝ Դիոն Կաստորը (155—235 թթ.), ծնվել է փոքրասիական Նիկիա քաղաքում: Նրա հայրը եղել է սենատոր, հյուպատոս Կիլիկիայում և Դալմատիայում: Ժամանակի ընթացքում ինքը Դիոն Կաստորը ևս, մտնելով քաղաքական ասպարեզ, դառնում է սենատոր և վարում մի շարք բարձր պաշտոններ Հռոմում: 229 թ. ապագա՝ պատմագրիը երկրորդ անգամ

<sup>38</sup> Նույն տեղում:

<sup>39</sup> Կ. Մարքս և Փ. Թուգալը, Հոդված, համար 1963, թ. 30, մ., 1963, էջ 124—125:

նշանակվում է Հռոմի հյուպատոս: Բայց շուտով նա նեռանում է Հռոմի և վերջնականապես բնակություն հաստատում իր նայրենի քաղաքում, որտեղ էլ իր ամբողջ ժամանակը տրամադրում է «Հռոմեական պատմությունը» (Պորացնչ է օչորից) նոչակալոր աշխատությունը շարադրելուն: Այդ երկի բովանդակությունը հոունեական տերության ամբողջ պատմությունն է, հնագույն ժամանակներից ի վեր, սկսած հնեասի մասին եղած գրուցեներից մինչև 229 մ. թ., այն է՝ մինչև Դիոնի երկրորդ հյուպատոսության տարին: «Հռոմեական պատմությունը» բաժանված է եղել 80 գրքի, որոնցից լրիվ պահպանվել են 24-ը (36—60): Դրամբ ընդգրկում են Հռոմի պատմության 68—47 թթ. մ. թ. ա.: Մնացած գրքերի բովանդակությունը մեզ հայտնի է քաղվաճներից, որ կատարել են բյուզանդական տարեգիրներ Քսիֆիլինոսը (11-րդ դար) և Զոնարասը (12-րդ դար)<sup>40</sup>: Իր պատմական բովանդակության տեսակետից Դիոն Կաստորի երկը մեծ արժեք է ներկայացնում, քանի որ հեղինակը, իրուն գորահրամանատար և քաղաքական գործիչ, որը բարձր պաշտոններ է վարել և՛ բուն Հռոմում և՛ զանազան համագներում, լավատեղյակ է իր ժամանակի իրադարձություններին և հնարավորություն է ունեցել օգտվելու պաշտոնական փատարդերից: Մյուս կողմից նրա արհատոկրատական ծագումը և զբաղեցրած բարձր պաշտոնները պայմանավորել են նրա պատմության միտունավոր շարադրանքը հոունեականի ոգով: Այսուհետեւ, մ. թ. ա. 1-ին—մ. թ. 2-րդ դարերի Հայաստանի պատմության ուսումնափրման համար Դիոնի «Հռոմեական պատմությունը» կարևոր տվյալներ է բովանդակում, իսկ առանձին դեպքերում, ինչպես օրինակ հոունեական կայսորթների դեմ, մայրադաք Արտաշատի բնակչության 163 թ. ապատամբության մասին, Դիոն Կաստորի երկը համեմանում է մեր միակ սկզբանարկութը<sup>41</sup>:

<sup>40</sup> Տե՛ս RE, III, (1849) M. Wellmann, s. v. Cassius, № 40.

<sup>41</sup> Cassil Dionis Cocceiani, Historiarum Romanorum quae super sunt, ed. Boisservain, Berolini, 1895, XXXVI, 1—2, 16—17, 48—50; L VIII, 26; LIX, 12; LXI, 3; LXII, 19; LXXI, 14.

Վերոհիշյալ հեղինակներով դեռևս չի պատվում հունական այն պատմագիրների թիվը, որոնց երկերը այս կամ այն չափով կարող են նպաստել հին հայկական հասարակության պատմության ուսումնասիրնանը։ Սակայն մեր քննարկած հեղինակների համար հատկանշական է մի ընդհանուր գիծ։ Նրանք սերելով հունա-մակեդոնական, իսկ հետագայում հոոմեական միջավարից, պատմական դեպքերը շարադրել են հունասիրական և հոոմեասիրական ոգով, արհամարհանքով Արևելքի երկրների ժողովորդների նկատմամբ։ Այս իմաստով, որոշ չափով բացառություն է Ստրաբոնի «Աշխարհագրություն», որում հեղինակը ձգտում է առավել կամ պակաս չափով օբյեկտիվորեն մոտենալ ուսումնագրիվ հարցերին։ Այնուամենապես, ինչպես ցոյց է տալիս է. Հոգիմանը<sup>42</sup>, Ստրաբոնը ևս զերծ չէ արհամարհական վերաբերմնքից «քարքարություն» նկատմամբ, որոնց անունները ևս խոսափում է տալու<sup>43</sup>։

Հունասեր և հոոմեասեր հեղինակներից բացի հեղինաստական Արևելքում հանդես են եկել նաև տեղական, չեզոք հեղինակներ, որոնք գրել են նոյնպես հունարեն։ Բայց, դժբախտաբար, նրանց երկերը փոքրաթիվ են եղել և մեզ հասել են շատ քեկորային վիճակում։ Դրանցից ամենակարեւորը Մեմնոնի Հերակլեացու (2-րդ դար) երկն է, որը գրել է իր հայրենի քաղաքի պատմությունը<sup>44</sup>։ Այս երկում կան Լոկուլու Հայատան կատարած արշավանքի մասին աշխափի տեղեկություններ, որոնք շատ քանով տարբերվում են Պլուտարքի և Ապպիանոսի հաղորդումներից։ Ակադ. Հ. Հ. Մանանցանը Մեմնոնի հաղորդած տեղեկությունները ավելի վստահելի է համարում, «որովհետև սա, պատկանելով փոքրախական հուն հեղինակների խմբին՝ Հոոմի հակառակորդների նկատմամբ չունի այն միտունավորությունը և

<sup>42</sup> E. Honigmann, Strabo, RE, s. 103.

<sup>43</sup> „Οὐ λέγω δὲ τῶν ἐμῶν τὰ ὑπάρχα τὰ πολλὰ“. Strabo, XVI, 4, 18 (C. 777).

<sup>44</sup> Memnonis Historiarum Heracleae Ponti, ed. C. Orellius, Lipsiae, 1896.

աշառու վերաբերմունքը, որ հասուն են հոոմեական պատմագիրներին»<sup>45</sup>։ Ստրաբոնի հաղորդման համաձայն, իրենից սուած եղել են նաև որիշ փոքրախական հեղինակներ, որոնք ևս գրել են Միհրդատի մասին (Տե՛ Մ: Խթէծաւուշ օսչշաշչուտէ)։ ասկայն նրանց մասին մենք ոչինչ չգիտենք։

Հին Հայատանի պատմության վերաբերյալ անտիկ աղբյուրները չեն սահմանափակվում հուն հեղինակների գործերով։ Գոյություն ունի դեռևս մի ամբողջ հուն լատինական հեղինակների, որոնք իրենց գլխավոր նպատակի—Հոոմի պատմությունը գրելու և հոոմեական հասարակությունը փառանելու հետ միասին, կարևոր տեղեկություններ են հունորդում նաև Փոքր Ասիայի և Կովկասի մասին, որոնց մեջ Հոոմն արդեմ եկել էր քաղաքական մոտիկ շիման։ Ինչպես արդեն նշել ենք, նրանցից և ոչ մեկը չի շարադրում արևելյան երկրների միաւունատիկ պատմություն։ Նրանք, որպես կանոն, միայն պատահականորեն են գրում այդ երկրների մասին այն դեպքում, եթե այնտեղ կատարված դեպքերը անմիջական կապ ունեն Հոոմի և հոոմեական գործիչների մեջ։ Բացի այդ, նրանք ծայր աստիճան միտունավոր են և թշնամարար տրամադրված Արևելքի ժողովորդների նկատմամբ։ Նրանց միտունավորությունը պայմանավորված է երկու պատճառով։ 1) Նրանք ստվրաբար արհասուլրատական ծագում ունեին և սերտորեն կապված են հոոմեական պետության կատավարող շրջանների և քաղաքական գործիչների մեջ։ 2) Արևելքի իրադարձությունները նկարագրելիս, նրանք գե-

Հ. Հ. Մանանցան, Տիգրան Երկրորդը և Հոոմը, Երևան, 1940, էջ 87։ Նույնի, Թենական տեսություն հայ ժողովրդի պատմության, Հ. 1, Երևան, 1944, էջ 135։ Հ. Հ. Մանանցանը իր վերոհիշյալ աշխատություններում համեմատելով Մեմնոնի վկայությունները Պլուտարքոսի և Հոոմեասիր այլ հեղինակների տվյալների հետ, հաճախ զալիս է բոլորովին այլ եղանակության, քան արևմտակավորպական հնտապառղները, որոնք Տիգրան 2-րդի ժամանակ Հայաստանում տեղի ունեցած դեպքերը լուսաբանում են հիմնականում Պլուտարքոսի հաղորդումների հիման վրա։

<sup>45</sup> Strabo, XI, 12, 14.

րազանցապես օգտվել են այն զեկուցագրերից ու մեմորաբիլերից, որ գրել են հենց իրենք, հոռմեական զորամբանատարները և հյուպատոսները, որոնց գիշավորությանը տեղի էին ունենում արշավանքները Արևելքի երկրների դեմ: Ուստի այդ զեկուցագրերի և մեմորաբիլերի սուբյեկտիվությունը ապացուման կարիքը չունի<sup>47</sup>: Այսուամենազեիվ, մ. թ. առաջին դարերի Հայատանի պատմությունն ուսումնասիրող համակա սովորված է լինում դիմելու լատինական պատմագիրների հաղորդումներին, քանի որ այդ շրջանի իրադարձությունների մասին որիշ տվյալներ կամ ի պատրագայում են, կամ խիստ սակայ են: Մենք կրամնանափակվենք հոռմեական մեծագույն պատմագիր Կոռնելիոս Տակրոսի (Չորր 55—120 թթ.) հիշատակությամբ, որը հատկապես հայտնի է պատմական երկու խոշոր երկերով—«*Appiales*» (Ab excessu divi Augusti) և «*Historia*»: Նրանցից առաջինը ընդգրկում է Հոռմեական կայսրության պատմությունը միասմաս 14 թ., այն է՝ Օգոստոսի մահից, մինչև 69 թ., իսկ երկրորդը՝ 69—96 թթ. պատմությունը: Մեզ համար առանձնապես արժեքավոր է օրս «*Appiales*» երկը, որում առ մասնաւությամբ շարադրում է նաև Հոռու—պարթևական հարաբերությունը:

<sup>47</sup> «Զեկուցագրերի հեղինակները,—գրում է Բ. Ռեյնաքը,—վատաշ լինելով, որ իրենց կեղծիքը չի մերկացվի՝ ուղղնելով իրենց հաջողությունները, թաքնում էին իրենց ձախորդությունները, իսկ երեքն իրենց պարտությունները հայտաբանակները: Մորենան, օրինակ, որը պարտություն էր կրել, արժանացել էր արիումֆի: Նրանք ծայր աստիճան չափազանցեր են թշնամիների զորաթվերն ու կորուսները, իսկ իրենցը համապատասխան շափերով պակասեցրել: Օրինակ, Տիգրանակերտի կավի մասին իր զեկուցագրում, Լուկուլլոսը Տիգրանի զորքերի թիվը ցուց է ավել մոտ 250000 մարդ, մինչդեռ ուրիշ ազգություններ նույն զորքի թիվը հաշվում են միայն 80000: Նույն այս կռվում իր կորուսը նա համարում է 5 սպանված և 100 վիրավոր, մինչդեռ թշնամու կորուսը՝ ոչ պահան 30000 մարդոց: Եվ Լուկուլլոն այդ արել է, հետեւնով Սուլլային, ու կարելի է վատաշ լինել, որ Պոմպեոսը՝ մինույն ուսուցչի աշակերտը, առավել ևս գերազանցել է իր համբորգին» *Th. Reinach, Mithridate Eupator, Paris, 1890, p. 418—419:*

թյունների պատմությունը: Դեպքերի նկարագրության ընթացքում ևս գրում է Հայատանում քաղաքական գերիշխանություն հաստատելու շորջ Հոռու և պարթևների պայքարի մասին, հայ-պարթևական միացյալ ուժերի Հոռու դեմ մղած կոփմերի, հոռմեական գորքերի հրամանատար Կորրուպտի կողմից Արտաշատի ավերման, հաշտության բանակցությունների և, վերջապես, պարթևական թագավոր Վաղարշի եղբոր՝ Տրդատի Հոռու կատարած ճանապարհորդության մասին, որպեսզի Ներոնի ձեռքից ստանար Հայատանի թագը: Տակ կատարության մասին, որպեսզի Ներոնի դարի Տիգրանակերտի մասին<sup>48</sup>:

Հոռմեական հեղինակների գուտ պատմական երկերից բացի կաև նաև այլ բնույթի գործեր, որոնցում համելիքում են մի շարք կարևոր հաղորդումներ Հայատանի մասին: Մենք առաջին հերթին նկատի ունենք Գայոս Պինդոս Սվագի քաղաքական, քայց և այնպես թանկարժեք աշխատությունը, որը նիս աշխարհի գիտելիքների յուրատեսակ համրագիտարան է: Հայատանի մասին Պինդոսի հաղորդած տեղեկությունները տարբեր բնույթի են: Այսպէս, ևս գրում է հայկական քաղաքների տեղագրության մասին, Տիգրան 2-րդի կողմից հարավային Միջազգային վաշկառումներին Երևանի շրջանում բնակեցնելու, Հայատանի վարչական բաժնաման, Տրդատի Հոռու ճամբորդելու, Տիգրան 2-րդի պատմագիր Մետրոդորոս Սկեպացու, Հայատանի բնական հարրատությունների մասին և այլը<sup>49</sup>:

Խոսելով հայ մատենագիրների մասին, մենք նրանց համար նշեցինք մի ընդհանոր երկույթ: Հայկական պատմական երկերը չեն կարող հանդես գալ նախ քան հայ գրերի գյուտը, այն է, հայկական հետագույն քաղաքների առաջացումից հարյուրամյակներ հետո: Նրանք գրվել են այն քանից

<sup>48</sup> Tacit., Annales, IV, 31—37; XII, 10—14, 44—51; XIII, 6—9, 34—41; XIV, 23—26; XV, 1—17, 24—31; XVI, 23—24.

<sup>49</sup> C. Plinti Secundi, Naturalis Historiae, VI. 9—10, 28; XXX, 16; XXXIII, 54; XXXIV, 16; XIX, 15; XXIV, 102; XXXV, 28.

հետո, երբ հեթանոսական Հայաստանի գրավոր բոլոր հուշարձանները (Եթե այդպիսիները գոյություն ունեցել են), քրիստոնեության ընդունումից հետո, ոչնչացվել էին, այն բանից հետո, երբ Հայաստանի կարևորագույն քաղաքներն արդեն ավելվել էին Ծապուհ 2-րդի (309—379 թթ.) արշավամբներից հետո և, վերջապես, այն բանից հետո, երբ երկիրը կորցրել էր իր քաղաքական անկախությունը:

Հայ ամերանիկ պատմիչների ամենախոցելի կողմը, որպես պատմագիրների, ժամանակագրությունն է: Ազգանգեղոսի և Փալստոս Բուզանդի մոտ այն խապատ քացակալուն է: Սրանցից բոլորովին տարբերվում է Մովսես Խորենացու «Հայոց Պատմությունը», որում ամեն ինչ տեղադրված է որոշակի ժամանակագրական շրջանակների մեջ: Խորենացին առաջինն էր, որ հայ մատենագրության մեջ մտցրեց հետեւլողական ժամանակագրություն: «Ոչ է պատմոթիւն ստոյգ, առանց ժամանակագրութեան», ասում է նա<sup>50</sup>: Բայց Մովսես Խորենացու ժամանակագրական տվյալները արտաքին, հունա-հռոմեական աղբյուրների հետ համեմատվելիս ցուցաբերում են էական շեղումներ: Այսուհետեւ, հայ պատմագրության մեջ Խորենացու ժամանակագրություն մտցնելը կարևորագույն հշանակություն ունեցավ, և Օրանցից հետո հայ պատմագիրները «աշխատում են ժամանակագրական թվեր տալ իրենց պատմած անցքերի ու գահակալությունների համար»<sup>51</sup>:

Ազգաթանգեղոսի «Պատմոթիւն Հայոց» մատյանը<sup>52</sup> պատմում է Հայաստանում քրիստոնեության, որպես պաշտօնական կրոնի, հաստատման մասին: Չնայած իր վկայարանական բնույթին, Ազգաթանգեղոսի երկը պատմական մեծ արժեք է ներկայացնում հին Հայաստանի տեղագրության, նա-

<sup>50</sup> Մովսես Խորենացի, Բ, 2Բ:

<sup>51</sup> Ստ. Մալխասյանց, Ներածություն Մովսես Խորենացու «Հայոց պատմության» աշխարհաբար թարգմանության, Երևան, 1940, էջ 1:

<sup>52</sup> Ազգաթանգեղոսի մասին եղած ամբողջ բիբլիոգրաֆիան տե՛ս Հ. Անասյան, Հայկական Մատենագիտություն, հ. 1, Երևան, 1959, էջ 151—213:

խարարական կարգի, հայկական դիցաբանության ու պաշտամունքային կենտրոնների, ինչպես նաև երկրի ներքին կյանքի ուսումնասիրնան համար:

Հեղինակի անձնավորությունը պարզելու ողղությամբ հայագետների թափած բոլոր ջանքերը դեռևս մնամ են ապարդյուն: Մինչև 19-րդ դարը որպես հավաստի ընտրուսմ էին «Յառաջարան Ազգաթանգեղոյաց Պատմոթեան», որտեղ հեղինակն իր մասին ասում է, թե Հոռո՞մ քաղաքից էր, զիտեր լատինական և հունական դպրություն, եղել է Տրդատ թագավորի դպիրը և հրա հրամանով գրել է Խոսրովի և Տրդատի պատմությունը: Հետազոտողների մեծ մասն այժմ գտնում է, որ Ազգաթանգեղոյով կեղծանուն է և հեղինակը 5-րդ դարի մատենագիր է, գրած հայերեն: Այդ երկը հետագայում թարգմանվել է նաև հունարեն: Բացի հայերենից կան նաև վերսիաներ և թարգմանություններ արաբերեն, եթովպերեն և այլ լեզուներով<sup>53</sup>:

Հին Հայաստանի պատմության գլխավոր սկզբնաղբյուրներից է նաև Փալստոս Բուզանդի «Հայոց Պատմոթիւնը»<sup>54</sup>: Փալստոս Բուզանդի, ինչպես և Ազգաթանգեղոսի անձնավորությունը ծածկված է խորհրդագրությամբ: Մինչև Վերջերս Բուզանդի երկը ըստ արժանավոյն չեր գնահատվում: Միայն 19-րդ դարի վերջում հայագետները հասուն ուշադրություն դարձրին այս հեղինակի վրա: Այդ կապակցությամբ պատմաբանների առաջ ծառացան մի շարք խնդիրներ, որոնց լուծույթ տեղիք է տվել բուռն վեճերի: Ոմանք (Մ. Զամշյան, Ա. Գուտչյին, Ն. Աղոստ) ենթադրում էին, որ երկի հեղինակը Փալստոս եպիսկոպոսն է, որը 380-ական թվականներին գրել է հունարեն: Որիշները (Գ. Ինճիճյան, Հ. Գաթրճյան) գտնում էին, որ հեղինակը հայ է, Սահառութիւնների նախարարական տոհմից, որն ատացել է հունական կրթություն և գրել է հունարեն:

<sup>53</sup> Դույն տեղում, էջ 151—152:

<sup>54</sup> Փալստոս Բուզանդի հրատարակությունների բիբլիոգրաֆիան տե՛ս „Իстория Армении Фавстоса Бузанда“, Ереван, 1953, стр. 233—237.

Սակայն վերջին ժամանակներու հայագետները (Առ. Մալիսայանց, Մ. Աբեղյան, Լ. Խաչիկյան) ցույց են տվել, որ այդ երկը գրվել է 470-ական թթ. հայերեն, հայ հեղինակի ձեռքով։ Փակստուի «Հայոց Պատմութիւնը» շարադրում է 55 տարվա դեպքերը, սկսած Խորով Կոտակի (332—338) թագավորությունից մինչև Հռոմի և Պարսկաստանի միջև Հայաստանի առաջին բաժանումը (387 թ.): Մեզ համար առանձին հետաքրքրություն են ներկայացնում Տիգրան 2-րդի Պահեատինից քերած հրեաներին Հայաստանի զանազան քաղաքներում բնակեցնելու մասին Բուգանդի հաղորդած տեղեկությունները<sup>55</sup>։

Հին հայկական պատմագրության գագաթն է հանդիսանում Մովսես Խորենացին, որի «Հայոց Պատմութիւնը» դարեր շարունակ հսկայական ազդեցություն է ունեցել հայ պատմագիրների վրա։ Առաջինը նաև է գրել Հայաստանի կապակցված պատմությունը, հնագոյն ժամանակներից մինչև 5-րդ դարի կեսերը։ 18-րդ դարից սկսած հայագետների մոտ երևան է գալիս քննադատական, նոյնիսկ գերբնայատական վերաբերմունք պատմահոր Ակատոմամբ։ Հայոց հին գրականությունն ու պատմությունն ուսումնասիրող բոլոր բանասերները և պատմաբանները չեն կարող չզբաղվել Խորենացու հարցով<sup>56</sup>։ Մեծագոյն հայ պատմագրի մասին մերունեցած կենսագրական տվյալները ավելի քան աղոտ են։ Այդ իսկ պատճառով հայագետները մեծ դժվարությունների առաջ կանգնեցին Խորենացու երկը թվագրելու գործուն։ Ումանք այն վերագրել են 5-րդ դարի վերջերին, որիշներ՝ 6-րդ, 7-րդ և 8—9-րդ դարերին<sup>57</sup>։ Վերջին ժամանակներու իրավացիորեն գերիշխում է այն կարծիքը, որ Մովսես Խորենացին համերիսացել է 5-րդ դարի վերջին քառորդի հետի-

<sup>55</sup> Փակստու Բուգանդի, Դ, հետ.

<sup>56</sup> Խորենացու պատմության բիբլիոգրաֆիան տե՛ս «Մովսեսի Խորենաց-

ուոյ Պատմութիւն Հայոց», Տիգրան, 1913, էջ LIII—LXII.

<sup>57</sup> Առ. Մալիսայանց, նշվ. աշխա., էջ LXIV—LXXII.

նավ<sup>58</sup>։ Դեռևս վերջնականապես չի պարզված նաև Մովսես Խորենացու օգտագործած աղբյուրների հարցը։ Եթեկով այն բավիր, որ Հայաստանի արտաքին պատմության վերաբերյալ Խորենացու հաղորդածները հաճախ չեն համընկնում անտիկ հնալինակների վկացությունների հետ, մի շարք հայագետներ փորձեցին միատեղ պատմահոր մատյանի արժանահավատությունը։ Սակայն գիտությունը աստիճանաբար պարզում է երա երկի արժանահավատ լինելը, հատկապես այն մասերում, որտեղ խոսքը վերաբերում է Հայաստանի ներքին պատմությանը։

«Հայոց Պատմության» վրա աշխատելիս Խորենացին օգտագործել է ոչ միայն բազմաթիվ և բազմաբնույթ գրավոր աղբյուրներ, այլ նաև գուանների բերանից լած գրուցներն ու պատումները։ Խորենացու երկը հայ ժողովրդի պատմության ամենագլուխակոր երկը չէ միայն։ Այն միաժամանակ կարևորագույն աղբյուր է Անդրկովկասի և Հայաստանի հարևանական երկրների ժողովուրդների պատմությունն ուսումնասիրելու։

Հելենիստական Առաջավոր Ասիայի և Հայաստանի պատմությունն ուսումնասիրել սովոր պատմողական գրավոր աղբյուրների հիմնա վրա, արդեն բավական չէ։ Հետազոտողի տրամադրության տակ կամ մեծ քանակությամբ վիմագրական բազմապիսի հյույթ, որը թույլ է տալիս ոչ միայն ճշտել և ստուգել պատմողական աղբյուրների տվյալները, այլ նաև լրացնել դրանք։ Ներկայումս արձանագրությունների գերակշռող մասը, որոնք հայունաբերվել են հելենիստական պետությունների տերիտորիալում և վերաբերում են տվյալ երկրների պատմության սուսանին հարցերին, հավաքել և բրատարակել է Վ. Դիտտենբերգի պատմության պատմություն տեղուն, Հատ. 1, Երևան, 1944, էջ 254—258։

<sup>58</sup> Նույն տեղուն: Վ. Աբեղյան, Հայոց Հին գրականության պատմություն, Հատ. 1, Երևան, 1944, էջ 254—258։

<sup>59</sup> Orientis Graeci Inscriptiones Selectae (OGIS) ed. W. Dittenberger, I—II, Leipzig, 1903—1905. Նորագյոււղ Նամակների տեսականությունը՝ Revue des Études grecques\*-ի համարներում։

Թագավորների և հելլենիստական քաղաքների փոխհարաբերությունների հարցն ուսումնասիրելու գործում հասուն կարևորություն ունի հելլենիստական միավետների համակագործությունը հպատակ քաղաքների հետ։ Հպատակի անմիջական դիմումը թագավորին և հակառակը, աստիճանաբար ճանապարհ հարթեցին հատուկ, ավելի հստակ, ճշգրիտ տերմինարանության և գրավոր դիմումի հատուկ ձևի—նամակի համար։ Թագավորի կողմից զանազան անձերին և քաղաքներին ուղղված նամակները աստիճանաբար դառնում են թագավորական կարգադրությունների և հրահանգների միջնական ձևերից մեկը։ Քաղաքներին նամակների միջոցով կարգադրություններ անելու եղանակը լայնորեն տարածված էր հին աշխարհում, հստակեց հելլենիստական ժամանակաշրջանում։ Ինչպես ճիշտ կերպով նկատել է Գ. Խ. Սարգսյանը, «նամակագործությունը թագավորների և քաղաքների միջև պայմանավորված էր որոշ գործուների առկայությամբ։ Հիմնական պայմաններից մեկը քաղաքների հարաբերական ինքնավարությունն էր, ինչպես նաև հրաեց անմիջական կախումը թագավորից և ոչ թե տեղական կառավարիչներից...։ Մյուս պայմանը՝ քաղաքային համայնքի ներսում ինքնավարության որոշ օրգանների գոյությունն էր, որոնք կառավարում էին տեղական գործերը և հանդիսանում էին թագավորական ուղերձների հասցեատերերը»<sup>60</sup>։

Սյու նամակագրությունը թագավորներին պատճառու էր այնքան մեծ հոգսեր, որ մինչև խակ գրուց հյուսվեց այն մասին, որ իբր Մելքոն 1-ինը հաճախ ասել է, որ եղեն շատերն իմանային, թե ինչքան ծանր է գրել ու կարդալ այսքան շատ նամակներ, ապա երանք չէին վերցնի դեմ շպրտված թագավորական դիախեման: Ասկայն դժվար թե թագավորներըն իրենք անմիջականորեն զբաղվելիս լինեին նամակագրությամբ: Այսպես, Մելքոնյաների արքունիքում կազմվում է հաստոկ գուստենյակ, դիվան, որը գլխավորում է նամակագրու

<sup>60</sup> Г. Х. Саркисян, Тигранакерт, М., 1960, стр. 86.

( ἐπιτελοῦσσας ) — Դիմակիոսը՝ Անտիոքու 4-րդի օրոք, Մեծոքարեան՝ Դեմետրիոսի օրոք և այլն։ Նամակագիրը բարձրաստիճան պաշտոնյա էր, որը նշանակվում էր թագավորի ընկերներից ( τύπος )<sup>61</sup>։ Այդպիսի բարձրաստիճան պաշտոնյա ինկավարած գրասենյակն, անպայման, կառավարման կարևոր օրգան էր։ Համապատասխան կերպով նույնափիսին էր դրույթունը նաև հեղեղնիստական միուս թագավորություններում։

Հայ առաջին թագավորները, Արտաշես ու Հրա հաջորդները, ունեին արդյոք իրենց համակագիրը, դժվար է որոշակի ասել, քանի որ այդ մասին աղբյուրները մեզ ոչինչ չեն հաղորդում: Այնուամենայնիվ, հետագա շրջաններում, հայ Արշակոնների արքունիքում կար դպիրի պաշտոնը: Այսպես, Ագաթանգեղոսը իրեն անվանում է Տրդատ թագավորի դպիրը<sup>62</sup>, իսկ Կորյունը և Մովսես Խորենացին վկայում են, որ հայ գրերի առեղծողն Ակգրենական շրջանում հշանակված է եղել դպիր արքունի դիվանում<sup>63</sup>: Բացազիած չէ, որ Արշակոնների հման, Արտաշեսյանները ևս ունեցել են իրենց արքունի դպիրները:

Թագավորների համակերը, ուղղված քաղաքներին, արտագրվում էին վեմերի վրա քաղաքներում և հույնիսկ, ինչպես պարզվում է քորմ Աստիսի հետ Աստոլյան թագավորների ունեցած համակարությունից, տաճարներում։ Քաղաքներին հասցեագրված թագավորների հայտնաբերված համակերի մեծ մասը հրատարակված և մեկնաբանված են Ք. Բ. Ուելսի կողմից<sup>64</sup>։

<sup>61</sup> *Polyb.*, XXX, 25, 16.

62 Ազարանգեղոս, ԺԲ (էջ 9)

<sup>63</sup> Կորին, Պատմոթիւն վարոց և մահուան Մեսրոպայ վարդապետի, Վեհականի, 1894, էջ 13—14. Սովոր Խորենացի, գ, Խէ:

<sup>64</sup> C. B. Welles, Royal Correspondence in the Hellenistic Period, New Haven, 1934 (*այսուհետև RC*): Հմայ. նախ A. Wilhelm, Griechische Königsbriefe, Klio, Beiheft 48, 1943: Երպ հայտնաբերված նամակների մեջությունը ակ'ս Revue des Études gréco-β ή "Journal of Hellenic Studies"-ի համարներում:

Այդ նամակները անգնահատելի սկզբնալրյուրներ են, որոնք մեծապես լուսաբանում են հեղենիստական պետությունների վարչական և դիվանագիտական հարաբերությունները իրենց հապատակների, պաշտոնական և հարևանների հետ: Դրանք հորինված չեն պատմիչների կողմից, որոնք գրել են հետագա սերունդների համար և շահագրգուված են եղել հարցերը ներկայացնել իրենց նախասիրություններին համապատասխան, այլ առաջին ձեռքից բխող ամենաճշմարիտ վավերագրեր են:

Պաշտոնական նամակների ձևը լայնորեն տարածված է եղել նաև Հայաստանում: Այդպիսի նամակների՝ «Թղթերի» մենք հանդիպում ենք և մեր մատենագիրների գործերում (միայն Խորենացու «Հայոց Պատմության» մեջ հիշատակված «Թղթերի» թիվը հասնում է երեք տասնյակի), և՝ Հայաստանում հայտնաբերված վիմական արձանագրություններում (Արմավիրի հունարեն արձանագրություններից մեկը և Տիգրանակերտի հունարեն արձանագրությունը), որոնք առաջնակարգ հշանակություն ունեն հին Հայաստանի քաղաքների պատմությանը վերաբերող հարցերը ուսումնասիրելու գործում:

\* \* \*

Համառոտ տեսության շրջանակները հնարավորություն չեն տալիս հանգամանորեն կանգ առնելու այն հսկայական գրականության վրա, որն առեղծվել է բորժուական և առլետական պատմագրության կողմից ինչպես հեղենիզմի ընդհանուր պատմության, այնպես էլ այդ ժամանակաշրջանի առանձին հարցերի ուսումնասիրման ուղղությամբ: Ազստիաները չի կարելի չնկատել, որ բորժուական հետազոտողների մեծամասնությունը դեռևս գտնվում է անտիկ այն հեղենակների քացարձակ ազդեցության տակ, որոնք Արեւելքի ժողովուրդների վրա նայում էին որպես քարքարությունների, իսկ հունա-մակեդոնացիներին և հունական համարություններին համարում էին մշակույթի կրողներ, լուսավորիչներ: Այդ իսկ

պատճառով հեղենիզմի հարցերով գրադելիս, Արևելյան ժողովուրդների պատմությունը բորժուական գիտնականների մոտ մնում է երկրորդ պլանի վրա: Բացառություն չի կազմում նաև անգիտացի պատմաբան Վ. Վ. Տառնը, որը համեմատած արևմտությի մուս պատմաբանների հետ, կանգնած է ավելի ճիշտ և առաջավոր դիրքերում: Վերջին հաշվով նաև նիտումնավոր կերպով Արևելքի երկրների հեղենիստական շրջանի պատմությունը պատկերում է որպես հունա-մակեդոնացիների պատմություն: Նա գրում է, որ սկզբանները «ձգում էին հեղենականացնել Ասիան: հունա-մակեդոնացիները իրենց առավել բարձր քաղաքակրթությամբ նախասահմանված էին տիրապետող ուսասի դեր խաղալու»<sup>65</sup>: Նաև մոտեցման պատճառով արտասահմանյան հեղենիստներից և ոչ մեկը հատկապես չի զրադել հին Հայաստանի, առավել ևս Հայաստանի հնագույն քաղաքների պատմությամբ: Այնպիսի խոշոր պատմաբաններ, ինչպիսիք Թ. Մուգենը, Թ. Ռեյնաքը, Ս. Ի. Ռոստովցևը իրենց կապիտալ աշխատություններում հարևանցի հիշատակելով Հայաստանի մասին, անհրաժեշտ են համարել փոքր ինչ խոտել միայն Տիգրանի քաղաքի մասին<sup>66</sup>: Վերջին տասնամյակներին հայրենական պատմագրության աչքի ընկնող մի շաք ներկայացրիչներ հշանակալից աշխատանք են կատարել ինչպես հին Հայաստանի, ամբողջությամբ վերցրած, պետք էլ նրա քաղաքների պատմությունն ուսումնասիրելու ուղղությամբ:

Այս տեսակետից առաջնորդյունը պատկանում է ակադ. Հ. Հ. Մանանյանին: Հայաստանի քաղաքներին և առևտուրին նվիրված նրա արժեքավոր մեծագրության առաջին գլուխները վերաբերում են հայկական հնագույն քաղաքներին և մեծ ավանդ են Հայաստանի քաղաքների պատմության ուսում-

<sup>65</sup> В. В. Тарн. Эзгиистическая цивилизация, М., 1949, стр. 143.

<sup>66</sup> Т. Момчел, История Рима, т. III, М., № 44. Th. Reinach, Mithridate Eupator, Paris, 1890, p. 345; M. I. Rostovzeff, The Social and Economic History of the Hellenistic World (այսուհետև SEHHW), Oxford, 1941, V. II, p. 856.

հասիրնան գործում<sup>67</sup>: Սակայն Հայաստանում քաղաքների առաջացումն ու քաղաքային կյանքի զարգացումը ևս դիտում է երկրի ներքին զարգացումից կորված: Նա գտնում է, որ հայկական քաղաքները եղել են սույ տարանցիկ առևտորի կենտրոններ, որի շնորհիվ էլ նրանք առաջացել են: Հայաստանի հնագույն քաղաքների պատմությունն ուսումնասիրելիս չի կարելի նաև Տիգրան 2-րդի մասին Հ. Հ. Մանանդյանի մենագրության կողմով անցնել<sup>68</sup>: Այս աշխատության մեջ ի միջի այլոց քննարկվում են նաև Արտաշատ և Տիգրանակերտ քաղաքների առաջացման, նրանց տեղագրության ու բնակեցման հարցերը:

Այս ողղությամբ մեծ երախտիք ունի արադ. Ս. Երեմյանը: Հին Հայաստանի սորելատիրական հասարակության հարցերն ուսումնասիրելիս նա չէր կարող ուշադրություն չդարձնել նաև հայկական հնագույն քաղաքների առաջացման հարցին<sup>69</sup>: Հին Հայաստանի քաղաքների առաջացումը Ս. Երեմյանը դիտում է հայկական հասարակության զարգացման ընդհանուր ֆոնի վրա, ցույց տալով, որ Հայաստանում քաղաքների երևան գալը պատմական երկարատև պրոցեսի արդյունք էր: Այդ բանին դրականորեն նպաստել է Առաջավոր Ասիայում հելլենիստական պետությունների առաջացումը, որի հետևանքով ստեղծվեցին նպաստվոր պայմաններ միջազգային առևտուրական փոխանակության համար, և հայկական քաղաքները դառնում են տարանցիկ առևտորի կենտրոններ: Հիմնվելով գրավոր աղյուրների ոչ մեծաթիվ տվյալների վրա, Ս. Ս. Երեմյանը փորձել է ուսում-

<sup>67</sup> յ. Ա. Մանանդյան, Օ торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Эривань, 1930. 2-е изд.—Ереван, 1954.

<sup>68</sup> Հ. Հ. Մանանդյան, Տիգրան երկրորդ և Հռոմը, Երևան, 1940:

<sup>69</sup> Ս. Դ. Երեմյան, Основные черты общественного строя Армении в эллинистический период, ՀՊՀ ԳԱ «Տեղեկագիր», 1948, № 11. Նույնի Օ рабстве и рабовладении в древней Армении, ВДИ, 1950, № 1. Նույնի Развитие городов и городской жизни в древней Армении, ВДИ, 1953, № 3. Նույնի Рабовладельческое общество в древней Армении, Автореферат, М., 1953.

նասիրել հին Հայաստանի քաղաքների սոցիալ-տնտեսական կառուցվածքը: Նա հանգում է այն եզրակացության, որ այդ ժամանակաշրջանի հայկական քաղաքի սոցիալ-տնտեսական կառուցվածքը վերարտադրում էր հելլենիստական քաղաքի ընդհանուր պատկերը:

Հին հայկական քաղաքների պատմությամբ գրաղիլ է նաև Գ. Խ. Սարգսյանը<sup>70</sup>: Նա իր ուշադրությունը բնեղու է Հայաստանի քաղաքային համայնքի ուսումնասիրման վրա: Գ. Սարգսյանի բերած նորությունն այն է, որ նա առաջին մերժին ուսումնասիրելով Արևելքի, հատկապես Միջագետքի հայսանելլենիստական շրջանի քաղաքների պատմությունը, նաևնել է մի շարք հետաքրքիր եզրակացությունների այն մասին, թե այդ քաղաքները դեռևս հոնա-մակեդոնացիների հայտնվելոց առաջ ունեցել են իրենց ինքնակարության օրգանները և վայելել են որոշակի առանձնաշնորհումներ՝ տրված արևելյան տերությունների արքաների կողմից: Այնունեւու Տիգրանակերտ քաղաքին վերաբերող հոյութերի հիման վրա Գ. Սարգսյանը ցույց է տալիս, որ հայկական քաղաքներում ևս կազմակերպված էին իրական և պոտենցիալ սորելատերերի համայնքներ, որոնք հայոց քաջավորի սոցիալական կարևոր հենարաններից էին: Մինչև վերջինս աշբեյրների սակագության պատճառով բաց էին մնում այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են՝ հին հայկական քաղաքի սոցիալական կազմը, հայոց քաջավորի և բնակչության տարբեր խավերի փոխարարերությունը, ինչպես նաև սինովիկամոսի հարցերը: Այս հարցերը արձարծել է Գ. Սարգսյանն իր աշխատություններում:

Վերջին հարցերին է նվիրված նաև սույն աշխատությունը: Հայաստանի քաղաքների մասին եղած տվյալների անքա-

<sup>70</sup> Գ. Խ. Սարգսյան, Градостроительство в Армении при Тигране II и вопрос о переселении чужестранцев, ՀՊՀ ԳԱ «Տեղեկագիր», 1955, № 2; Նույնի Из истории городской общины в Армении, ВДИ, 1955, № 3: Նույնի Тигранакерт, М., 1960; Գ. Խ. Սարգսյան, Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական քարտոցման ուղիների մասին, Երևան, 1962, էջ 55—62:

վարար լինելը, ինչպես նշվեց վերը, ստիպել է մեզ դիմելու հարևան երկրների քաղաքներին վերաբերող նյութերի հատուկ ուսումնափրմանը: Այդ նյութերի և նրանց ուսումնափրման արդյունքների համապրումը հիմ Հայաստանի քաղաքներին վերաբերող տվյալների մետ մեզ հնարախրություն է տվել հաճգելու մի շարք դրական եզրակացությունների, որոնց մասին էլ խոր կլինի սոորեւ:

#### Գ. ԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՓՈՔՐ ԱՍԻԱՅԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ  
ԺՈԽՎԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ  
ՄԻԱՊԵՏՆԵՐԻ ՀԵՏ

Անտիկ աշխարհում ամեն մի բնակավայր չէ, որ քաղաք էր հանարվում: Հոյմերի պատկերացմանը որևէ բնակավայր քաղաք էր համարվում միայն այն դեպքում, եթե ուներ քաղաքին ինքնավարության և կորպորատիվ կյանքի մի շարք օրգաններ: Քաղաքը պետք է ունենար իր քաղաքացիական համայնքը, իր ղեկավար խորհուրդը (Յուն. և Հռոմ. լուստրված ֆիլաների քածանված քաղաքացիների կողմից, վիճակահանուրյանը ընտրված իր պատասխանատու պաշտոնյաները՝ մագիստրատները, լիիրավ քաղաքացիներից կազմված իր սեփական քանակը, իր քաղաքային մշակելի հողերը (և ուժությունը). իր հասուկ օրենքները և ֆինանսները: Արանցից բացի՝ քաղաքների մեծ մասի համար հատկանշական էին պաշտպանական քաղաքային պարիսպները, քաղաքացիների ընդհանուր ժողովը, քաղաքային տերիստրիալի տեղական ստորաբաժանումները (դեմեր): Այս հասկանիշներից գույկ բնակավայրը հոյմերի հասկացողությանը սուկ գյուղ էր (չոքոյ):

Վերոհիշխալ պայմանների ստեղծումով որևէ բնակավայր հեշտությամբ դառնում էր պոլիս, քաղաք: Հենց դրանով էլ մասամբ քացատրվում է քաղաքների մեծ թիվը, որոնց հիմնադրումը վերաբրվում է Ալեքսանդր Մակեդոնացուն և նրա հետնորդներին: Այսու կողմից հունա-մակեդոնացիների՝

Արևելքում նոր քաղաքներ հիմնելու գործը հեշտանում էր մի հանգամանքով ևս: Ինչպես պարզվել է տվյալներու պատմաբանների վերջին հետազոտություններից, դեռ հունա-մակեդոնական հվաճումներից առաջ էլ Արևելքին անձանոր չեր պոլիսային կազմակերպության ձևը: Արևելքում արդեն գոյություն ունեին քաղաքներ, որոնց կառուցվածքը մոտիկ էր պոլիսային: Դրանք տաճարական քաղաքներ էին, որոնց քաղաքացիական կազմակերպությունը համբեկնում էր տաճարային հետ, կազմելով տաճարա-քաղաքացիական համայնք<sup>1</sup>: Ուստի դժվար չեր լինի Ալեքսանդրին և նրա հաջորդներին, այդ քաղաքների առանձնաշնորհումներն ընդունելով, դրանք վերածել պոլիսի: Հունա-մակեդոնացիները չեն կարող չօգտագործել այս հանգամանքը, քանի որ Մակեդոնացու առանց այն էլ ոչ մեծաթիվ գործը չեր քավականացնի թեկուզ մի մեծ քաղաք հիմնադրելուն և բնակեցնելուն, իսկ արշավանքների սկզբանական շրջանում Հունատանից եկող վերաբնակիչները այնքան էլ մեծ թիվ չեն կազմում, որպեսզի հնարավորություն տային շատ քաղաքներ հիմնելու և բնակեցնելու: Ինչպես նշում է Մ. Ս. Դյալոնովը, «Ալեքսանդրի և նրա հաջորդների Ասիայում կիրառած ընդարձակ քաղաքաշինությունը չի կարող քացարվել սույն հունական գաղութացմամբ: Այդ բոլոր քաղաքները բնակեցնելուն չեր քավականացնի ամրող Հունատանի բնակչությունը<sup>2</sup>: Այսու կողմից, ինքը՝ Ալեքսանդրը գրաված լինելով հետալոր տարածությունների վրա պատերազմական գործողություններով, քավականաշափ ժամանակ չեր ունենանոր քաղաքների հիմնադրմամբ գրադիւնությունը: Բայց ինչպես սացատրել այն փաստը, որ Արևելքում առաջացան Ալեքսանդրի անոնք կրող քազմային քաղաքներ: Բոլորից հավատականն այն է, որ Ալեքսանդր Մակեդոնացին տեղական

<sup>1</sup> Г. Х. Саркисян, Самоуправляющий город Селевкийской Вавилонии, ВДИ, 1952, № 2.

<sup>2</sup> М. М. Дьяконов, Очерк истории древнего Ирана, М., 1961.

բնակչության եթե ոչ օժանդակությունը, գոնե բարյացակամուխունն ապահովելու համար քաղաքական և ուսումնական հշանակություն ներկայացնող խոշոր բնակչավայրերին քաղաքի իրավիճակ էր շնորհում, մեծ մասամբ վերանվանելով դրանք իր իսկ անոնվ, Ալեքսանդրիայի: Ալեքսանդրի անոնվ կրող ալդասի քաղաքներ աղբյուրներում հիշատակված են տասից ավելի: Պլոտարքոսը հաղորդում է, որ ինքը, Ալեքսանդրը հիմնել է ավելի քան 70 քաղաք: Այս թիվը, սակայն, թվում է չափազանցված<sup>3</sup>: Մակեդոնացու հետնորդները այս գործում ետ չմնացին մեծ գորավարից: Նրա դիադրություններից և էպիգրաֆներից բոլորից շատ Սելևկյաններն են հոգ տարել քաղաքների ամբողջ մի ցանց ստեղծելու ուղղությամբ:

Հունա-մակեդոնական քաղաքները, բնակչավայրերը և ուսումնական գաղութները, որոնց հիմնադրումը վերագրվում է Սելևկյան թագավորության հիմնադրին և նրա ստացին հաջորդներին, ձգվում էին Միջերկրական ծովի փոքրասիական ալիքից մինչև Բակտրիան<sup>4</sup>: Դրանք ցրված են եղել Հյուսիսային Սիրիայում և Եփրատի միջին հոսանքի վրա, որտեղ Սելևկու 1-ինը ստեղծել էր քաղաքների և այլ բնակչավայրերի մի ամբողջ խումբ, սնվածելով դրանք մակեդոնական հիմնադրություններով, ինչպես՝ Եղեսաա, Բերրեյա, Պելլա, Պերինթոս, Խալկիս և այլն: Անտիոքու 1-ինը Իրանական սարաւարթի շուրջը ստեղծել էր քաղաքների կիսարողորակ մի ցանց: Անտիոքու 2-րդը քաղաքաշինության ասպարեզուն իր ուշադրությունը կենտրոնացրեց Փոքր Ասիայի միջով անցնող առևտրական և քարավանային ճանապարհների, հնական մերձեփրատայան հանգույցի (Փոքր Ասիայից, Սիրիայից և Հյուսիսային Միջագետից դեպի Պարսկաստան) սպանվման վրա, այդ ճանապարհի երկարությամբ

<sup>3</sup> Հմմատ. Մ. М. Дьяконов, Կց. աշխ., էջ 158:  
M. I. Rostovtzeff, SEHHW, p. 477.

հիմնելով հունա-մակեդոնական նոր քնակավայրեր ու գաղութներ<sup>5</sup>:

Սպաֆիանոսը<sup>6</sup> Սելևկոս 1-ինի կողմից հիմնված 59 քաղաք է հիշատակում: Դրանցից 34-ը կրում են թագավորի ընտանիքի անդամները: 16 Անտիոքիա, 9 Սելևկիա, 5 Կատիկեա, 3 Ասպատա և մեկ Սորատօնիկեա: Բայց այդ քաղաքներից շատերի մասին մենք համարյա ոչինչ գիտենք: Այս առնչությամբ պրոֆ. Ա. Բ. Ռամովիչը իրավացիորեն նշում է, «որ հիմնադիր (չու չու): Կարող էր համարվել նաև նա, ով սովորական կամ թեկուզ վերանվանում էր արդեն հայկինում գոյություն ունեցող քաղաքը»<sup>7</sup>: Հայանական է, որ հին քաղաքը «հիմնադիր» անոնք վերանվանվելով, հրանից ստանում էր նոր՝ պոլիսային կառուցվածք, այլ խուրով առած, վերածվում էր ինքնավար քաղաքի:

Այս ափթառվ կարեր է նշել, որ համանանա երկույթ նկատվում է նաև հին Հայաստանում: Բազմից հրատահամելված և տարբեր մեկնաբանությունների ենթարկված Գաունիի հունարեն արձանագրության մեջ խուլում է այն մասին, որ Մեծ Հայքի թագավոր Տրդատը պայծառ թագուհու համար կառուցեց (Այշտի ՏՐԵՆ — պետք է լինի ԷԿՏԻ ՏՐԵՆ) անստիկ ամրոց<sup>8</sup>: Հայագիտական պեղումները<sup>9</sup>, ինչպես նաև Տակիտոսի հաղորդումները մ. թ. 40—50-ական թվականներին Գաունիի բերդապարհապնդերի տակ տեղի ունեցած պատմական իրադարձությունների մասին<sup>10</sup>, ցուց են տալիս, որ Տրդատ Արշակունին ոչ թե հիմնադիր կամ կառուցել է Գաունիի ամ-

5 M. Cary, A History of the greek world from 323 to 146 B. C., London, 1932, p. 258.

6 Appian., Syr., 97.

7 А. Б. Рамовиҷ, Ելլինիզմ..., стр. 98, прям. I.

8 Ս. Մ. Խելյաշվարեն, Եզր մի անդամ Գաունիի Հունարեն արձանագրության մասին: «Պատմա-քանակական հանդես», 1965, № 3, էջ 235—239:

9 Բ. Ի. Արակելյան, Գառնի, I, Երևան, 1951.

10 Tacit., Annal., XII, 45, որտեղ նշված է, թե զեսիս 51 թ. Հայաստանում թագավորուց Միհրդատ Իրերացին ամրացել էր Գաունիի բերդում (in castellum Gorneas), որի գրա հարձակվել էր նրա եղբորորդի Հուպամիդու:

րոցը, այլ վերակառուցել է հինը: Այս վերջին հանգամանքը անքան ակնհայտ իրողություն է, որ Հ. Մանանդյանը անդրադառնարդ Գաունիի հունարեն արձանագրությանը, անհմատ է համարում այսուղև հստու կարդացվող «կառուցեց» արտահպտությունը և առաջարկում է այն ուղղել «վերատին կառուցեց»<sup>11</sup>:

Քաղաքների հիմնադրումով և քաղաքային կյանքի զարգացման խախտումով դեռևս սկզբունք էր միայն ենթական միապետների գործունեությունը քաղաքաշինության բնագավառում: Թագավորների համար դեռևս անհրաժեշտ էր այդ քաղաքները տրացնել քաղաքականապես և տնտեսապես, ու միավորել դրանք իրենց տերության կազմում: Սակայն նրանց այդպես ել չհաջողվեց վերջնականապես հարթել նարարերությունները քաղաքների հետ և նրանց դնել լրիվ սոորադրյալ վիճակում: Խոզ հակամարտությունը թագավորական իշխանության և քաղաքային սորկատիրական համայնքի միջև չեր դադարում, բայց քանի որ երկու կողմերը կապված էին ընդհանոր շահերով, ապա բանը չեր հանգում պառակտում: Քաղաքը հանդիսանում էր նրան կցագործած հողային տարածության վարչական և տնտեսական կենտրոնը: Այդ շրջանի բնակչությունը քաղաքային գանձարաններում էր ամենամյա կանոնավոր հողահարկ, որի առունի բաժինը մտնում էր թագավորական գանձարանը: Հետևաբար, հելենիստական միապետությունների տերիտորիայի վրա գտնվող քաղաքները պետք է որ երկակի դեր խաղային պետության համար ապահովել պայտական եկամտու և կենսագործել տվյալ տերիտորիայի քաղաքական և տնտեսական վերահսկողությունը: Քաղաքային համայնքի (տեղական իշխանություն) և թագավորի (կենտրոնական իշխանություն) սոցիալական շահերը ևս համընկնում էին: Երկու կողմերն էլ

11 Հ. Զ. Մանանդյան, Գաունիի Հունարեն արձանագրությունը և Գաունիի Հերթական տաճարի կառուցման ժամանակը, Երևան, 1946, էջ 6: Ակադ. Հ. Մանանդյանը հետադարձ ևս պաշտպանում էր նույն տեսակերպ (Խօնաց զարդարական անդամություն) պատմության մասին: Երկու կողմերն էլ

ձգտում էին հնագանդ պահել անմիջական արտադրողների ճնշված զանգվաճներին, ստրուկներին և կիսակախալ, ոչ լիբրավ հողագործներին: Քաղաքային համայնքը, լինելով սորկատերերի շահագործող դասակարգի լայն կազմակերպություն, հանդիսանում էր սորկատիրական պետության սոցիալական կարևոր հենարանը: Մյուս կողմից քաղաքների համար միանգամայն ձեռնուու էր ընդգրկվել միասնական խոշոր տերության կազմում, որը կարող էր ավելի լավ ապահովել սորկատեր քաղաքացիների առևտուի շահերը: Փոխադարձ շահերի այս համընկնումը քաղաքների աճի և քաղաքին կամքի զարգացման ուղղությամբ թագավորների ցուցաբերած հոգատարության պատճառներից մեկն էր:

Սուաշին Սելլկաների ինտենսիվ քաղաքաշինությունը մեկն էր այն միջոցառումներից, որոնք պիտի հեշտացնեին իրենց լայնածավալ և քազմաքետ տերության համամիացման քաղաքականությունը: Քաղաքաշինությունը և արևելյան քաղաքներին պոլիսային իրավիճակ շնորհելը, մյուս կողմից, հապատակ ուներ դեսպի Արևելք հրապորել միշտ նորանոյ հունա-մակեդոնական գաղութարարների: Արևելյան քաղաքների պոլիսային իրավիճակի ճանաչումով Սելլկան սուաշին թագավորները ձգտում էին, և այդ նրանց հաջողվում էր, ապահովել այդ քաղաքների չեզոքությունը և, հետագայում, հնագանդությունը: Դրան զուգընթաց «Արևելքի առևտուական քաղաքները և առաջին հերթին բնակչության հարուստ խավերը արագորեն հելլենականանում էին, դառնալով հենարան հվանդների համար»<sup>12</sup>: Ալեքսանդր Մակեդոնացու և նրա հաջորդների, հատկանակ Սելլկաների, քաղաքաշինության բնագավառում ծավալած գործունեությամբ հշագծվում է նոր երևույթ քաղաքների առաջացման պատմության մեջ: Եթե մինչ այդ քաղաքները, ինչպես բուն Հունաստանում, այնպես էլ Արևելքում, առաջանում էին տարերային կերպով, հասակության աստիճանական ներքին զարգացման հետևան-

բով, ապա Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումներով և նրա հաջորդների տիրապեսությամբ սկսվում է քաղաքավորների անմիջական միջամտությունը, որոնք իրենց ցանկությամբ, նոյնիսկ բունի կերպով, պատեղ և այնուղե հիմնում էին նոր քաղաքներ և բնակավայրեր: Նոր քաղաքներ հիմնելու ժամանակ նրանք միշտ չեն, որ նկատի էին առնում տվյալ վայրում հասարակության ներքին զարգացումը և այդ զարգացման հեռանկարները: Դրանով էլ, գլխավորապես, կարելի է քացարել այն փաստը, որ բացի անումից ոչ մի հետք չի մնացել այդ քաղաքների մի մեծ մասից: Կենսունակ դրու եկան այն քաղաքները, որոնց հիմնադրումը համապատասխանում էր տվյալ շրջանի հասարակության առաջընթացին և նպաստում էր տնտեսության հետագա զարգացման: Այդպիսի քաղաքներ հանդիսացան Եգիպտոսի Ալեքսանդրիան, Սելլկաների մայրաքաղաքը Ալատիոքը Օրոնտ գետի վրա, Սելլկաների ուղղական կենտրոն Ապամեան, նրանց հավահանգստային քաղաքներ Լատիկեան և Սելլկան Պիերիայում, Սոտալյաների մայրաքաղաքը Պերգամոնը, ավելի ոչ Արևմայիրը և Արտաշատը Հայաստանում և մի շարք որից քաղաքներ:

Նոր քաղաքների, նոր բնակավայրերի, գինվորական նոր գաղութների հիմնադրումով հելլենիստական միապետները շարունակում էին զբաղվել նաև հետագայում, եթե արդեն նրանք հիմնավոր կերպով հաստատվել էին Արևելքում: Այսպես, Պերգամոնի թագավորներից մեկը մ. թ. ա. 2-րդ դարում զինվորական նոր զարդութ է հիմնում ուղղմիկներին հողային տիրույթներ պարզելու միջոցով<sup>13</sup>:

Ինչպիսի՝ նկատառումներով էին առաջնորդվում Ալեքսանդրը և նրա հաջորդները Արևելքում: Ինչո՞ւ նրանք այդպիսի ձեռներեցություն էին ցուցաբերում քաղաքներ հիմնադրելու գործում: Քաղաքները հարկավոր էին նրանց ոչ միայն որպես քաղաքական և ուղղական, այլև տնտեսական, սո-

<sup>12</sup> C. B. Welles, RC, 51.

<sup>13</sup> A. B. Рановиц, Эллинизм..., էջ 24:

ցիալական և մշակութային հենարան։ Արևելքի հունական քաղաքների օճախակությունն ապահովելու հանապարհին Ալեքսանդրի և նրա հաջորդների կատարած առաջին քայլ եղավ այդ քաղաքների «ազատության» (Հ. Յ. Յ. 2) հանաշումը։ Փոքր Ասիայում Ալեքսանդրը հանդես էր գալիս որպես դեմոկրատիայի կողմնակից և օլիգարխիայի թշնամի, օլիգարխիա, որին պաշտպանում էր Պարսից թագավորը։ «Իրանով ևս իր կողմը գրավեց հունական քաղաքների բնակչության լայն խավերը և պարսկական թագավորի համար լրացուցիչ դժվարություններ ստեղծեց, առավել ևս, որ Էգեյան ծովի հայամատույցները պաշարած պարսկական հավասորմի անձնակազմը հշանակալից չափով կազմված էր փոքրասիական քաղաքների բնակիչներից»<sup>14</sup>։ Հնդկանապես քաղաքներին արտօնություններ շնորհելու միջոցով դրանցում հենարան ապահովելու ձգտումը, սակայն, օբյեկտիվորեն բախվում էր այն փաստի հետ, որ քաղաքների ինքնավարությունը (աշուուրիչ) և պողիսային կազմակերպությունը խախտում էին այս կամ այն հեղլենիստական պետության վարչական միասնությունը։ Է. Բիկերմանը<sup>15</sup> և նրան հետևելով Վ. Էհրենբերգը<sup>16</sup> փորձել են ժառել անեղերայելի այն փաստը, որ Ալեքսանդրը վերաբարձրեց փոքրասիական հունական քաղաքների ազատությունը։ Ա. Բ. Ռանովիչը խիստ քննադատության ենթարկելով այդ տեսակետը, գրում է, որ «Բիկերմանի դատողությունները վկայում են առևկ այն մասին, թե ինչպիսի ոչ ճիշտ եղանակացությունների կարող է հանգեցնել պատմական դեպքերի նկատմամբ ձևական-իրավաբանական մոտեցումը»<sup>17</sup>։ Անհմատ է կասկածել սկզբնաւրբառների հավաստիությանը, որոնք վկայում են Ալեքսանդրի կողմից Փոքր Ասիայի հունական քաղաքներին

<sup>14</sup> M. M. Дьяконов, Ազգած աշխ., էջ 140։

<sup>15</sup> E. Bickerman, Alexandre le grand et les villes d'Asie, REG, 47, 1934.

<sup>16</sup> V. Ehrenberg, Alexander and the Greeks, Oxford, 1938.

<sup>17</sup> A. B. Ранович, Ազգած աշխ., էջ 51։

շնորհված ազատության մասին, քանի որ այդ քաղաքների նկատմամբ Կիրառած լիբերալ քաղաքականությունը միայն կապահովեր երիտասարդ միապետի թիկունքը։

Բայց ի՞նչ էր հշանակում իրականում Ալեքսանդրի՝ հունական քաղաքներին շնորհված «ազատությունը»։ Այդ արդնադասական ժամանակաշրջանի անկախ և սովորեն քաղաքի նախակին ազատությունը չէր։ Դեռևս Ալեքսանդր Մակեդոնացու հոր՝ Փիլիպոս 2-րդի ժամանակակից Հունաստանի ազատ քաղաքների Քերոնիսայի մոտ կրած պարտության հետևանը (338 թ.), Վերջիններս, մտնելով Փիլիպոս 2-րդի գլխավորությամբ կազմակերպված Կորինթական միության մեջ, դադարեցին ըստ էության անկախ և սովորեն պետական միավորումներ լինելոց։ Ալեքսանդրի օրու հունական քաղաքների ազատությունը պետք էր ավելի ևս սահմանափակվելու։ Այդ քաղաքները պայքարում էին, նույնիսկ զենքով, հանուն իրենց ազատության։ Ազատության համար քաղաքների մղած պայքարի լավագույն օրինակ կարող է ծառայել այսպես կոչված լամիական պատերազմը։ Միապետության իշխանության ուժեղացմամբ քաղաքները գնալով ավելի էին զրկվում իրենց ազատությունից։ «Բայց համաշխարհային միասնական միապետության ստեղծման ուղղությամբ կիրառուած քաղաքականությունը հենց,—գրում է Ա. Բ. Ռանովիչը,—փոխելու էր «ազատություն» (Հ. Յ. Յ. 2) բարի բուլանդակությունը, որը իր նախակին իմաստով անհմատելելի էր միապետի գերիշխանության հետ, նկանակ ամրող տերիտորիան Հունաստանի հետ միասին մի միասնական պետության մեջ ներգրավելու հետո»<sup>18</sup>։

Փոքր Ասիայի հունական քաղաքների (πολεῖς էլληνίδες) ազատության կարգախուը Ալեքսանդրի համար հայս և առաջ ունեն քաղաքական հշանակություն։ Այդ ազատությունը հշանակում էր ոչ ավելի քան քաղաքական ազատագրում պարսկական լծից։ Ելևմերից բարի ձևական լինելը քաղաքի համար Ալեքսանդրի նկատմամբ գգացվում է 334 թ.

<sup>18</sup> A. B. Ранович, Ազգած աշխ., էջ 58։

պրիենյան արձանագրության տեքստից, որում Պրիեններ քաղաքի բնակիչներին Ալեքսանդրը հոչակում է ինքնավար և ազատ (այտանքուս չեն ոչ չեւսնեաւս), բայց տեղի ու տեղը այնպիսի վերապահություն է արվում, որը համարյա ոչնչի է հավասարեցնում հայտարարված ինքնավարությունն ու ազատությունը: Մակեդոնացի երիտասարդ միապետը հայտարարում է, որ Պրիեններ քաղաքի շրջակաբում գտնվող հողը (չափ) պատկանում է իրեն, Ալեքսանդրին, իսկ որա գույքերի (չափ) բնակչությունը պարտավոր է իրեն տուրք (չափ): Վճարել<sup>19</sup>:

Պոլիբոսի մոտ կա մի հետաքրքիր վկայություն այն մասին, որ Մակեդոնիայի թագավոր Փիլիպոս 5-րդը, երբ նրան շնաջողվեց պաշարումնվ կոտրել էլեյցիների դիմադրությունը և վերցնել քաղաքը, առանց փրկագնի ազատ արձակեց գերլած Ամֆիդամոսին, էլեյցիների պարագլուխներից մեկին, միաժամանակ խոստանալով ազատ արձակել իր կողմից գերլած բոլոր էլեյցիներին, ազատ ճանաչել քաղաքի քաղաքացիներին, ազատել նրանց քաղաքը կայազրո պահելուց, տուրքերից և թույլատրել օգտվելու սեփական քաղաքական կարգերից (...այսու չեւմներս. ծքրույթուս, ծքրութուս շաղունուս; ուս ինու ուլւենաս նաւորիս): Բայց այս դեպքում նրա շանթերը հաշողություն չտնեցան: Էլեայի քաղաքացիները, ի հեճուկ թագավորի գայթակրեցոցից խոտումներին, շնամաձայնեցին այդ պայմաններին<sup>20</sup>: Դժվար չէ էլեյցիների այդ արարքի մեջ տեսնել նրանց անվտանգությունը թագավորի խոտումների նկատմամբ:

Քաղաքները, սակայն, միշտ չեն, որ հեռատես էին գտնվում: Նրանք հաճախ հրապուրվում էին թագավորի խոստումներից: Այսպես, Թեսլի հովանուի պատմելով, Թաւոս քաղաքի բնակիչները, Փիլիպոս Հ-րդի հետ բանակու-

<sup>19</sup> OGIS, 1, 11—14: *Սա*, հայունաբար, առաջին ակտն է, որով սրբակի տերթառիքա հայտաբարվում է ցըշք Եզրակ (արքանի երկիր):

<sup>20</sup> *Polyb.*, IV, 84, 3-6.

թյունների ժամանակ հայտարարեցին, որ կհանձնեն քաղաքը, եթե թագավորը խոստանա ազատել իրենց կալազոր պահելուց, տուրքերից, ուզմական օքևանի պահանջից և թույլ տա իրենց ապրելու սեփական օրենքներով։ Փիլիպոս Ե-րքը, ինարկե, խոստանում է այս բոլոր արտոնությունները և տիրում քաղաքին։ Թատոսի բնակիչները, հավանաբար, շուտով հիապափվեցին, քանի որ նոյն ատիքով Պոլիբիոսը ցալով գրում է, որ «...թվում է, թե թագավորները իրենց գահակառության հենց սկզբում սիրում են ճանի մեջ օգտագործել «ազատություն» բառը, ...բայց շուտով, իրենց հայտակին հասնելուց հետո, նրանք իրենց վատահած մարդկանց հետ վերաբերվում են ոչ որպես բարեկամներ, այլ տիրակալներ»<sup>21</sup>։

Ինքնին հասկանալի է, որ չէ չնշօք «ազատություն» հասկացությունը, որպես հոգնական պղիսների քաղաքական ազատություն, անհամատելիի էր հեղեղնիստական միավետի բացարձակ իշխանության հետ: Հոգնական քաղաքի նմանօրինակ ազատության ճանաչումը կիշանակեր իշխանության թուլություն այն թագավորի, որի տերիտորիայի վրա էր գտնվում տվյալ քաղաքը: Պղիսի նույնիսկ սահմանափակ ազատության ճանաչումը թագավորը դիտում է որպես մեծ զիշում, որպես կորուս: Այս տեսակետից հատկանշական է Հոնիստական կիզայի (ո՞ւ Շառայ շառայ) անդամ հոգնական քաղաքներին Անտիգոնոս Միականու ողղած մանիֆեստ:

Այդ մանհիքեասի օրինակի մի մեծ մաս, ուղղված Սկեպ-սիս քաղաքին, հասկ է մեզ: Դրանու Անտիգոնոսը ուղղակի հայտարարում է. «Մենք նոց տարանք հելլենների ազատության մասին, որի համար ոչ քիչ զիջումներ ենք արել, և դրա հետ միասին փող հատկացրել...»<sup>22</sup>:

Հանդիպում են գիտնականներ, որոնք չեն կազմածուն  
Փոքր Ասիայի հունական քաղաքներին ազատություն շնոր-

<sup>22</sup> Polyb., XV, 24, 2-4; *Sifflm. numh* Liv., XXI, 31 & XXXIII, 30;

<sup>22</sup> OGIS, 5; C. B. Welles, RC, 1, 1-4.

հեղու մասին Անտիգոնոսի վերոհիշյալ հայտարարությունների անկեղծությանը<sup>23</sup>: Բայց Ք. Բ. Ուելսը Անտիգոնոսի այդ նամակի առթիվ գրած իր մեկնություններում իրավացի է, երբ կատկածում է միապետի անկեղծությանը և այդ փաստարությունը է որպես պրոպագանժայի փայլում օրինակ<sup>24</sup>: Եվ իսկապես, տվյալ մահիթեատում Սկեպսիս քաղաքի ազատության և ինքնավարության հոչակումը հակասում է այն փաստին, որ քառագիրնեն մի քանի տարի հետո նոյն այդ Սկեպսիսի բնակչությունը բռնադատվեց լրելու իր քաղաքը և վերաբռնակելու Տրովադայում Անտիգոնոսի հիմնած նոր քաղաքը, Անտիգոնեյան<sup>25</sup>:

Այսպիսով, հունական քաղաքների ազատությունը հեղեղափակի շրջանում այլևս նման չէր նախկինում սովորեն քաղաքի ազատությանը: Ազատությունն արդեն, որպես կանոն, ձեռք էր բերվում և պահպանվում ոչ թե զինված պայքարի միջոցով, այլ առավել կամ պակաս խոշոր գումարի վճարումով թագավորին, որի տերիտորիայի վրա գտնվում էր տվյալ քաղաքը: Այս երևոյթը քավականին պարզ կերպով կարելի է հետազոտել վիմագրական նյութերի տվյալներով: Զանազան քաղաքների որոշումների մեջ («փշչումա») քաղաքային խորհուրդն ու դեմոքը (Դ Յուլի և առ օ նյուու) թագավորին պատկանում էին քանի ու ուղարկում նարուատ նվերներ այն քանի համար, որ թագավորը ճանաչել է քաղաքի ազատությունը (մենք արդեն խոսել ենք այն մասին, որ քաղաքները թագավորին վճարում էին ամենամյա կանոնա-

<sup>23</sup> Անգլիացի պատմաբան Մ. Կարգ-ն գրում է, որ Անտիգոնոսի այդ հայտարարությունները «չէին հանգիստանում սոսկ զատարի ֆրագ, որովհետեւ Անտիգոնոսը բաժականաշափ հեռաւեն էր հասկանալու համար, որ հույնները ավելի լավ գաշնակիցներ էին քան հպատակներ և զգուշանում էր կայազգորներով ապահովելուց այն քաղաքները, որոնցից նա գուրս էր գանում կասանգրոսի ուժերը» (M. Cargy, Կարգած աշխարհ, էջ 29):

<sup>24</sup> C. B. Welles, RC, p. 21.

<sup>25</sup> Strabo, XIII, 1, 52 (c. 607).

վոր տուրք): Ծիշու նոյնապիսի փաստի մասին վկայում են հեղեղափառական միապետների մի քանի նամակներ<sup>26</sup>:

Հեղեղափառի դարաշրջանում չեւաներից քանի բովանդակությունը լավագույն դեպքում կազմում էր քաղաքի ներքին ինքնավարությունը (աշուուրիչ) և պատահական չէ, որ այդ ժամանակին վերաբերող գրախոր աղբյուրներում, ինչպես նաև թագավորների՝ քաղաքներին ուղած նամակներում չեւաներից և աշուուրիչ քանի բառերը հաճախ համարվում են, իսկ երբեմն այդ հասկացությունները նոյնիսկ միահյուսվում են իրար:

Հայտնի է, որ լիկիացիները մ.թ. ա. 3-րդ դարում գտնըլում էին Հոլոդոսի գերիշանաւության տակ, որը հեղեղափառական ժամանակաշրջանում ամեղով հասավ առաջնական տերության աստիճանի: Պոլիբիոսը հաղորդում է, որ լիկիացիները օգտվեցին հոոմակեցիների դժգոհությունից հոոդրոցիների նկատմամբ և դարձյալ ապատամբեցին, պատրաստ լինելով ամեն ինչի, համուն ինքնավարության և ազատության (ութէ աշուուրիչ ու ուշէ չեւաներիչ):<sup>27</sup> Այս երկու տերմինների վաղ հեղեղափառական շրջանում ունեցած նշանակությունը բացահայտելու տեսակետից հետաքրքրական է Սուրաբոնի մի վկայությունը, որի մեջ աշուուրիչ և չեւաների միևնույն նշանակությունն ունենալուն ունեն: «Երբ թագավորական գերդաստանը Կապաղովիշայում ընդհատվեց, գրում է: Սուրաբոնը, — հոոմայեցիները, ժողովրդի նկատմամբ բարեկամության և դաշնակցության հիման վրա, նրանց ինքնավարություն շնորհեցին (աշուուրիչ) Բայց դեսպանները հրաժարվեցին ազատությունից (չեւաներիչ):»<sup>28</sup>: «Եւաներիչ և ուշուրիչ քանի բառերը համարվում են և հանդիսանում նոյնիմաստ նաև քաղաքներին հասցեագրված թագավորների մի

<sup>26</sup> OGIS, 6 և 11; C. B. Welles, RC, 15 և 22; Հմատ. Polyb., XVIII, 9, 5:

<sup>27</sup> Polyb. XXV, 5, 3.

<sup>28</sup> Strabo, XII, 2, 11 (c. 540).

շարք համակներում, ինչպես նաև քաղաքային խորհուրդների որոշումներում<sup>29</sup>: Այլ դեպքերում հանդիպում է ՀՀ ՀԱՆԴԻՇՈՒՅՑ ուժը չունենալու շահը (ազատ ինել և օգտվել սեփական օրենքներից) արտահայտությունը<sup>30</sup>: Պարզ է, որ անոնքուս չեն: և նկատ չունենալու շահը (արտահայտությունների ներքին բովանդակությունը միևնույն է):

Հետագայում ՀՀ ՀԱՆԴԻՇՈՒՅՑ բառը արձանագրություններից աստիճանաբար անհետանում է և նրա փոխարեն օգտագործվում են նոր տերմիններ (աշունուս, չպրօքտուս, չպրօքտուշուս, իբր և աշունուս), որոնք հատկանշական են հելլենիստական միապետների և քաղաքների փոխարարելությունների մեջ առաջացող նոր երևոյթների համար:

ՀՀ ՀԱՆԴԻՇՈՒՅՑ և աշունուս տերմինների բովանդակությունը, անկանած, ժամանակի ընթացքում փոփոխվում է: Այս տերմինների զարգացմանը զգայի շափով կարելի է հետևել հելլենիստական միապետների՝ քաղաքներին ուղած համակների բովանդակության մեջ: Մեզ հասել է Անտիգոնոսի համակ-հրահանգը Լեբերոսի և Տեսոսի սինոլիսիամոսի մասին: Այդ համակին մենք դեռ կանոքադանանք: Բայց այն հետաքրքիր է դրանով, որ հրանում երկու անգան խոսիում է ազատության (ՀՀ ՀԱՆԴԻՇՈՒՅՑ) և մի անգան ինքնավարության (աշունուս) մասին: Առաջին դեպքում, ինչպես ենթադրում են Ուելը և Ա. Բ. Ռանոսովը, խոսքն այն մասին է, թե քաղաքները պետք է ազատ լինեն պարտքերից (նույն նույն համակարգությունը չի պահպանվում է աշունուս համար): Երկրորդ դեպքում ՀՀ ՀԱՆԴԻՇՈՒՅՑ աշունուսը չի պահպանվում է ազատ լինեն պարտքերից (նույն նույն համակարգությունը չի պահպանվում է աշունուս համար): Բայց հրահանգի ամրող բովանդակությունը, որտեղ նկատելի է

<sup>29</sup> C. B. Welles, RC, 1, 55—56; 2, 89: SIG<sup>3</sup>, 330, 25.

<sup>30</sup> Polyb., XVIII, 44, 2:

<sup>31</sup> C. B. Welles, RC, 3, 87—88: A. B. Раносов, Կալանք աշխ., էջ 52:

<sup>32</sup> C. B. Welles, RC, 3, 89:

Անտիգոնոսի միջամտությունը քաղաքի ներքին կրանքի բոլոր բնագավառներում, վկայում է խոսացված ազատության և ինքնավարության ձևական լինելու մասին: Խոսացված ինքնավարության ձևական լինելը աչքի է զարկում համ նրանով, որ Անտիգոնոսը ստիպում է այդ երկու քաղաքների բնակչությունը միավանդել և կազմել մի համայնք, մի քաղաք. ապա այն բանից, որ Անտիգոնոսը իր կամքը պարտադրում է թեև ոչ ուղղակի հրամանների, բայց, համեմապնդեալու, անգրած ոչ հետո — «կարծում ենք, որ անհրաժեշտ է» ֆորմուլայով<sup>33</sup>:

Ինչպես մատենագրական աղբյուրներում, այսպես էլ արձանագրություններում քաղաքների ազատության սահմանափակման հետ կապված ՀՀ ՀԱՆԴԻՇՈՒՅՑ փոխարեն ստիճանաբար երևան է գալիս աշունուս: Տիոդրուսի մոտ աշունուս բառը հանդիպում է իմաստի երկու տարրեր նրբերանգով: Այսպես, օրինակ, խուելով Փոքր Ասիայի Կենտրոնական մարզերի լեռնային ցեղերի մասին, ևս վկայում է, որ նրանք դեռ ինն ժամանակներից ինքնավար են եղել (աշունուսը շար նույն է նույն աշունուսության և առջևության): Այս դեպքում ինքնավարությունը նոյնանիշ է ազատության, անկախության: Ստրաբոնը նոյնպես աշունուս բառով հաճախ հասկանում է ինկանան ազատություն: Այսպես, հայտնի է, որ Էտոլիացիները և նրանց դաշնակիցները մինչև հոոմայեցիների կողմից նվաճվելը քացարձակասկես անկան էին և ազատ: Խոսելով այդ մասին, Ստրաբոնը գրում է. «ասկան շատ երկար ժամանակ է խողիացիները ականանեցիների հետ միասին ուժգին դիմադրեցին մակեդոնացիներին և մյուս հովաներին, իսկ ավելի ուշ հոոմայեցիներին, պայքարելով ինքնավարության համար» (ոչո՞ւ ո՞յս աշունուսը չշահութափում): Իսկ երբ Դիոդորոսի մոտ խոսքը վերաբերում է հելլենիստական քաղաքներին,

<sup>33</sup> C. B. Welles, RC, 3, տողեր 4, 15, 17, 36 և հաջ.:

<sup>34</sup> Diodor., XIX, 19, 3:

<sup>35</sup> Strabo, X, 2, 23 (c. 460):

սպա դա արդեն նշանակում է ոչ ավելի, քան իմբռավարություն քաղաքաբին համայնքի ներքին գործերին վերաբերյալ: Ինչ վերաբերում է թագավորական համակներին, ապա ձևանորմ բառը հետզինեւն չբանում է հրանցից, իսկ ձևանորմ բառը մի անգամ ևս է հանդիպում: Այսպէս, Էրիքըն քաղաքին Անտիոքու 2-րդի ուղղած համակում (261 թ. հետո) ասվում է այն մասին, որ քաղաքին շնորհվում է իմբռավարություն և հարկերից ազատություն (ձարձուցիոն):<sup>36</sup>

Վերոհիշյալ համակը շատ բանով լուսաբանում է Էրիքի քաղաքական և իրավական դրույթունը մինչև Անտիոքու 2-րդի (261—246 թթ.) գամակալությունը: Նամակի մեջ հիշատակվում է այն մասին, թե քաղաքի դեսպանները հաղորդել են Անտիոքուին, որ Էրիքըն Ալեքսանդրի և Անտիգոնոսի ժամանակ իմբռավարություն էր վայելում և հայտարարված էր տուրքերից ազատ: Նամակում չի հիշվում քաղաքին Անտիգոնոսից հնատ տիրացած Լիսիմաքոսի անունը, այդ իսկ պատճառով մեզ հայտնի չէ, քաղաքը վերջինիս տիրապետության տակ վայելո՞ւմ էր արդյոք այդ արտոնությունները թե ոչ: Ինչքանով որ քաղաքը հավատարիմ էր մնացել Լիսիմաքոսի թշնամի Անտիգոնոսին, նետագայում, սրա որդի Դեմետրիոսին, պիտի նեթադրել, որ Լիսիմաքոսը զրկեց Էրիքըն իր համակին արտոնություններից: Այն բանից հետո, եթե Էրիքըն անցավ Սելևկյանների տիրապետության տակ, ըստ երկույթին քաղաքի դրույթունը շարունակում էր մնալ նոյնը—այն է, առանց իմբռավարության իրավունքի և, հավանաբար, այդ էր պատճառը, որ Էրիքըն գեցիների դեսպանները անհրաժեշտ են համարում հիշեցնել Անտիոքու 2-րդին այն մասին, թե իրենց քաղաքը Ալեքսանդրի և Անտիգոնոսի ժամանակ եղել էր իմբռավար (չունուու՞չ չ): և ապահարկ (ձարձուցիոն): Անտիոքու 2-րդը իր պատասխան համակով ի գիտություն է ընդունում այդ և խոստանում է վերա-

<sup>36</sup> C. B. Welles, RC, 15, 22—26:

կանգնել իրերի նախկին դրույթունը, այն է՝ քաղաքը համաշխի իմբռավար և տուրքերից ազատ:

Սելևկյանների տիրապետության վերջին շրջանում, եթք կենտրոնական իշխանությունը ժամանակի ընթացքում հետզինեւն թույանում էր, թագավորն ստիպված էր լայնորեն հանաշել քաղաքների ազատությունը, ոչ միայն վերադարձնել նրանց նախկին արտոնությունները, այլև նորերը շնորհել: Արաբեն, Անտիոքու վերջիններից մեկը (հավանաբար 8-րդը կամ 9-րդը) Պաղոմեոս 9-րդ Սելևկյաններին և Պիերիայում գտնվող Սելևկիա քաղաքին իր ուղղած համակներում հասդորում է, որ Սելևկիայի բնակիչներին հոչակում է առհանգույթը (չունակությունը)՝ պատճենագործությունը:<sup>37</sup>

H. Seyrig-ը ուսումնափրեկով սելևկյան թագավորության մեջ հատված դրամները, պարզել է, որ Սելևկյանների տիրապետության տակ գտնված մի շարք քաղաքներ (Լատոպիկեա, Բերիտ և այլն.) գրկված են եղել ձևանորմ «ազատություն» կոչված արտոնությունից: Այդ քաղաքները ձևանորմ են միայն Տիգրան 2-րդի կողմից 81 թ. այն քանից հետո, եթք հայոց թագավորը նվաճել է Սելևկյանների երկիրը և գամակալել Անտիոքում: Այդ արտոնության հետ պայմանավորված էր այն համագամանքը, որ հիշյալ քաղաքները իրավունք են ստանում հատել մեխական դրամ: Նույնական իրավունք 76 թ. ստանում է հաև Ասորիքի հայտնի քաղաքներից Ապամեյան:<sup>38</sup>

Հելլենիստական քաղաքների իրավագրկությունը գգալի էր հատկապես արտաքին հարաբերությունների բնագավառում: Չունենալով արդեն իրենց իմբռարույն քանակը, այստեղ հրանք ատիպված էին լիովին ենթարկվել միասնակի կամքին: Իրենց ներքին իմբռավարության վերաբերյալ հայ-

<sup>37</sup> C. B. Welles, RC, 71, 13, 72:

<sup>38</sup> H. Seyrig, Antiquités syriennes, 42. Sur les éres der quelques villes de Syrie, «Syria», 1940, էջ 26 և հաջ. Տե՛ս նաև Գ. Խ. Ալբարան, Հելլենիստական դարաշրջանի հայտառանը և Մովսես Խորենացի, Երևան, 1966, էջ 50:

ցերը և լուծելիս քաղաքային համայնքն ու խորհուրդը (ինչպես նաև մյուս օրգանները) առաջին հերթին պարուսավոր էին հաշվի հատկ միապետի կամքի, նրա «խորհրդի» հետ։ Բերենք մի օրինակ։ Առաջին քաղաքը, որին Մակեդոնացի հաջորդներից միապետ Ալատիգոնու Միականին դիմում է «քաղաքային խորհրդին և դեմոսին» (τὴ βαλῆ καὶ τὴ δῆμον) ֆորմով, դա Էրեսու քաղաքն է, որը գտնվում էր Հագեան ծովի կղզիներից մեկում։ Աթենական Ծովային 2-րդ միտրան անկուսից հետո (355 թ.) Էրեսու քաղաքը հայաստար գտնվում էր տեղական բռնականների տիրապետության տակ, որոնց հովանավորում էր Պարսից արքայից արքան։ Նրանցից հայտնի են Ապոլլոնորոսի, Հերմոնի և Հերակոսի անոնները<sup>39</sup>։ Անտիգոնոսի վերոհիշյալ համակում հիշատակված Ագոնիապուին տապալել ու վտարել էր ինքը՝ Ալեքսանդր Մակեդոնացին։ Բոլոր վտարանդիների վերադառնալ մասին Ալեքսանդրի հայտնի հրովարտակից հետո (324 թ.) Ագոնիապոսը ևս դիմում է Ալեքսանդրին, թոյլ տալ իրեն վերադառնալու Էրեսու։ Մակեդոնացին, սակայն, հարցի լուծումը թողնում է քաղաքային համայնքի հայեցողությանը, որը և մերժում է ընդառաջել բռնակային։ Հետագայում Ագոնիապոսի որդիները ևս փորձում են վերադառնալ։ Նրանք ըստ երևույթին դիմում են Անտիգոնոսին, որը և միջնորդում է քաղաքային համայնքի և խորհրդի առաջ Ագոնիապոսի որդիների օգտին, թույլատրելու նրանց վերադարձը քաղաք։ Ակնուամենապեսիվ մենք չգիտենք, թե քանի ինչո՞վ վերջացավ։

Մի շարք նամակներ ևս վկայում են այլ նասին, որ նեղեցիստական միապետները զանազան առիթներով միջամտում էին իրենց տիրության սահմաններում գտնվող քաղաքների և երթին գործերին, պարտադրելով նրանց իրենց կանոքը: Մի շարք նամակներում միապետներն իրենց հայեցղողությամբ լուծում են քաղաքային նորերին վերաբերող ապա ևամ ամս

<sup>39</sup> OGIS, 8:

- 09 -

Հելլենիական միապետությունների կազմում ընդգրկված ինքնավար քաղաքների ունենի ինքնավարության իրենց տարրեր օրգանները: Այդ օրգաններից մեկի կամ մյուսի առկայությունը, կամ քացակարությունը ցուցանիշն էր տվյալ քաղաքի ունեցած այս կամ այն չափի ինքնավարությանը: Ք. Բ. Ունիսի հրատարակած միապետների նամակներում իրենց արտահայտությունը գտնել են թե՝ այդ քաղաքների ինքնավարությունը կենագործող օրգանները և թե՝ այդ ինքնավարության աստիճանը: Հիշյալ նամակներից 46-ը ուղղված նն տարրեր քաղաքների: Այդ նամակների առաջին սողերում միապետի քաղաքին դիմելու եղանակն էլ քացահայտում է այս կամ այն քաղաքի ինքնավարության բնույթը և տվյալ քաղաքի՝ միապետից ունեցած քաղաքական և տնտեսական կախվածության աստիճանը: Բոլորից հաճախ համեմունյացին խորհրդին և համայնքին» շն Յանէ չափությունում դիմելու եղանակի կողքին երկու անգամ համեմունյացին է դիմում «իշխանավորներին և խորհրդին և համայնքին» շն չափությունում դիմում «իշխանավորներին և քաղաքին» (շն չափությունում դիմում «համայնքին») և մնական անգամ դիմում «համայնքին» (դիմում «Հոնիական լիգային» ('Դաշտ շն չափությունում) և «քաղաքին ու ծերերի խորհրդին» (դիմում «Հոնիական լիգային»):

<sup>49</sup> C. B. Welles, RC, 10-13 b 18-20.

\*1 Առաջն տեղում, 45:

42 *Lemjšu mēģināj.,* 46:

<sup>43</sup> *Yerush mbequt*, 66 to 67.

Հելլենիստական այս կամ այն միապետության կազմում ներգրավված քաղաքների ինքնավարության հիշյալ օրգանները—ընդհանուր ժողով, քաղաքային խորհուրդ, իշխանավորներ, ծերերի խորհուրդ—անցյալի անկախ քաղաք-պետության նույնանուն օրգանների արձագանքներն էին լոկ: Ծառ քաղաքներում ինքնավարության նշված օրգանների կողքին կային նաև էպիստատեսներ, վերակացուներ (էպիստատչեր)՝ որոնք թագավորական իշխանության ներկայացուցիչներն էին տեղերում և առարկելություն ունեին նետելու թագավորական շահերի պաշտպանությանը տվյալ քաղաքում:

Խոռնելով հելլենիստական թագավորների կողմից քաղաքներում նշանակված վերակացուների մասին, Գ. Խ. Սարգսյանը նշում է, որ Արանց «Փունկցիաները մեզ ոչ լիիւ են հայտնի և, հավանաբար, տարբեր երկրներում միանան չեն եղել: Բայց, ըստ Երևույթին, հարկ եղած պահին վերակացուն կարող էր քաղաքային խորհրդին ու ժողովրդական ժողովին թելադրել թագավորի կամքը»<sup>44</sup>: Ի դեպ նշենք, որ նին Հայաստանի քաղաքներում ևս եղել են հայոց թագավորի կողմից նշանակված վերակացուներ, ոյոնք, ինչպես ճիշտ նկատում է Գ. Սարգսյանը, քայլի քաղաքականից, ունեին նաև գիւղուրական իշխանություններում: Այդ երևույթը վկայող առևտազն երկու փաստ կամ սկզբանադրյուրներում: առաջինը՝ Պլոտոսի հաղորդումն է այն մասին, որ Մծրին (հուն. Νίσιβις) քաղաքի վրա նշանակված էր Տիգրանի եղբայր Գորասը<sup>45</sup>: Երկրորդ փաստը հանդիպում է Խորենացու մատյանի այն հատվածում, որտեղ Ակարագրվում է Տիգրանակերտի բնակիչների դիմադրությունն պարսից Ծապուի արքային: Պատմահայրը գրում է: «Կան ընդդեմ նորա արք քաղաքին հանդերձ գումարտակ գնդա: քանզի Անտիոք համապետ Սիր-

<sup>44</sup> Polyb., V, 48, 12: V, 60, 1:

<sup>45</sup> Г. X. Саркисян, Тигранакерт, էջ 11:

<sup>46</sup> Նույն տեղում, էջ 98—100:

<sup>47</sup> Plut., Lucull., XXXII.

Շեաց, որ էր աներ Արշակայ և վերակացու քաղաքին, հրամայեաց աղյուս ընդդեմ Ծապինյ»<sup>48</sup>: Այս հատվածի «վերակացու» բառը լիիվ համապատասխանում է հունարեն էպիստատչերուն և վերջինիս ճշգրիտ պատճենավորումն է հայերեն թարգմանությամբ (էպիստատչեր =վերակացու, իսկ տառիչ -ի արմատը տերը: «կանգնել» բայն է):

Այս հարցին անդրադարձել է նաև U. S. Երեմյանը, որի կարծիքով Հայաստանի քաղաքներում թագավորի նշանակած աստիճանավորը կոչվել է «շահապ», որը պարտավոր էր հարկեր հավաքել քաղաքի առևտություն և արհեստներից<sup>49</sup>: Գ. Սարգսյանը հավանական է համարում, որ քաղաքի հառավարչին տրված «շահապ» տիտղոսը միաժամանակ գոյրթյուն է ունեցել «վերակացու» տիտղոսի կողքին<sup>50</sup>:

Մյուս կողմից քաղաքներն իրավունք ունեին անմիջական շիման մեջ մտնել թագավորի նետ, նրա մոտ ուղարկելով իրենց դեսպաններին<sup>51</sup>: Թագավորի պատասխանը սովորաբ շարադրվում էր քաղաքային ինքնավարության օրգաններին ուղղված նամակի ձևով, որն ունենում էր հրամանի ուժ:

Հելլենիստական աշխարհում քաղաքների և միապետների փոխհարաբերության ձևերից մեկն էր հարկումն էր: Այդ մասին ավելի քան պարզ կերպով վկայում է Պոլիբիոսը: Նա հաղորդում է, որ Մագնեսիայի ճակատամարտից հետո (190 թ.) Հռոմի և Անտիոքոս Յ-րդի միջև Ապամեյա քաղաքում կնքված պայմանագրի համաձայն «ինքնավար քաղաքներից նրանք, որոնք նախապետ հարկատու էին Անտիոքոսին (նույնական պատճենը՝ ‘Առտօնջա քօնու’), իսկ այն ժամանակ (այսինքն, Հռոմի և Անտիոքոսի պատերազմի ժամանակ—Ս. Ա.) հավատարիմ մնացին հոռմալեցիներին, ազատվում էին հարկերից: Խոկ այն քաղաքները, որոնք նարկատու էին Անտապոսին՝ (‘Առտօնջա քօնու’ էտէնու), պարտադրեցին նոյն

<sup>48</sup> Մովսես Խորենացի, Գ, իջ,

<sup>49</sup> C. T. Еремян, Развитие городов и городской жизни..., էջ 25:

<sup>50</sup> Г. X. Саркисян, Тигранакерт, էջ 98, ժամ. 45:

<sup>51</sup> C. B. Welles, RC, 2, տողեր 6, 7, 9, 15, 22, 25, 26, 31—35 և հաջ.

հարկերը վճարել Եվմենեսին: Եթե այլ քաղաքներ խափառել են բարեկամությունը հոդայակեցիների հետ և կովել են Անտիոքոսի հետ դաշնակցած, նրանց հրամայեցին վճարել Եվմենեսին այն հարկը, ինչ վճարում էին Անտիոքոսին»<sup>52</sup>: Այս վկայությունից հնուր չի կարելի կասկածել այն մասին, թե ինքնավար բոլոր քաղաքները հարկատու էին կամ Սելևկյաններին, կամ Պերգամոնի քագավորներին:

Հարկման և հարկերի ու տուրքերի գանձման եղանակից ու շափից կարելի է որոշել քագավորական իշխանությունից տվյալ քաղաքի ունեցած կախման աստիճանը: Քաղաքական և սոցիալական տեսակետից հունական պոլիսի քաղաքցին ազատ անձնավորությունն էր և նրա ազատությունը պայմանավորված էր ամբողջ քաղաքային համայնքի ազատությամբ: Հելլենիստական ժամանակաշրջանում պոլիսներն արդեն գտնվում էին կենտրոնական իշխանության քաղաքական տիրապետության տակ: Հունական պոլիսի քագավորից ունեցած սկզբանական քաղաքական կախվածությունը աստիճանաբար վերածվում է տնտեսականի: Սելևկյանների գերիշխանության տակ գտնվող նոյնինչ առանձին մարզերի ու երկրների կախվածությունը, ինչպիսիք էին Կապպատովիան, Ծոփքը, հարավային Հայաստանը, Աստրաստականը, արտահայտվում էր հարկերի գանձման մեջ: Տուրքերով հարկվել էին նաև հելլենիստական միապետությունների սահմաններում գտնվող քաղաքները: Քաղաքների վրա դրված հարկը, ըստ երևույթին, քավական ծանր է եղել: Մյուս կողմից, տուրքերից ազատ լինելը համարվում էր ազատության հատկանիշներից մեկը. քաղաքները ամեն կերպ փորձում էին ազատ դրանալ հարկերից (չչ.թ.ն.՝ չ.թ.ն.): Քաղաքները հարկումից կարող էր ազատել միայն ինքը՝ քագավորը, որը հասուն հրամանով քաղաքը ազատ էր հոչակում հարկերից: Այդպիսի առաջին փաստը արձանագրված է Ալեքսանդր Մակեդոնցու նավորուսի և Պրիենեի բնակիչներին ուղած

<sup>52</sup> Polyb., XXI, 48, 2—3:

նրանանգի մեջ, որով Պրիենե քաղաքը ազատ է հայտարարվում հարկերից (չ.թ.ն. ծ. սաւտչեաւ չափուու տիկ Արտիշաւու ուն.):

Այս կապակցությամբ հետաքրքրական են նեղենիստական թագավորների համակեները: Նրանք այս կամ այն քաղաքի քաղաքացիների օժանդակությունը ապահովելու նպատակով տվյալ քաղաքը հայտարարում էին ապահովը (չչ.թ.ն.՝ չ.թ.ն.): Նրանք հարկերի ազատություն (չ.թ.ն.): Էին շնորհում ոչ միայն քաղաքներին, այլև սրբավայրերին: Այսպես, օրինակ, ի պատասխան աթիմբրացիների<sup>54</sup> դեսպանների դիմումի, Սելևկու 1-ինը և նրա որդի ու գահակից Անտիոքոսը (հետագայում թագավոր Անտիոքոս 1-ինը) ուղարկում են համակ պաշտոնյա Սոպատերին, որով հաղորդում են նրան Պլուտոնի տաճարի<sup>55</sup> անձեռնմխնելությունը (ծ.թ.ն.): և հարկերից ազատ լինելը (չ.թ.ն.): ճանաչելու մասին դեսպանների խնդրանքը և այն, որ քաղաքարել են աթիմբրացիների այդ խնդրանքը<sup>56</sup>:

Պտղումնու 2-րդ Ֆիլադելֆոսի համակը, ուղղված Միլետ քաղաքին (262/1 թ.), համարյա ամրողությամբ վերաբերվում է քաղաքի հարկման հարցին<sup>57</sup>: Էգեյան ծովում կրած անհաջողություններից հետո Պտղումնու 2-րդը բոլոր միջոցներով աշխատեց ապահովել իր՝ Եգիպտոսից դուրս գտնվող անդրծովյա տիրույթների լոյալությունը, սիրաշանել Փոքր Ասիայի հունական քաղաքները: Այս նպատակով նա պարգևում է Միլետ քաղաքին ինչ-որ հողակտոր: Այնուհետև նա հիշեցնում է Միլետի բնակիչներին, որ դեռևս իր հայրը ազատ է թողել նրանց խիստ և ծանր տուրքերից (գօրու ու շահ դրան ոչի շահ ըստն առ պունքուայտա):

<sup>53</sup> OGIS, 1, 13—15:

<sup>54</sup> Աթիմբրան ոչ մեծ միավորում էր, որը շուտագ, Անտիոքոս 1-ինի ժամանակ միավորից երկու փոքր քաղաքների հետ, կազմելով Նիսա քաղաքը (Strabo, XIV, 1, 46):

<sup>55</sup> Այս տաճարը գտնվում էր Աքարակա կոչված ոչ մեծ բնակավայրում, Նիսայից ոչ հեռու (Strabo, XIV, 1, 44):

<sup>56</sup> C. B. Welles, RC, 9.

<sup>57</sup> Ibid., 14.

<sup>58</sup> Ibid., 14, 5—6.

պարտադիր վճարում էին մյուս թագավորներին (Ալեառի ունի Լիսիմաքոսին, Սելևկոսին և Անտիոքոս 1-ինին): Այս համական առանձնապես հետաքրքրական է զամազան կարգի տուրքերի հիշատակումը: Այսպես, ուզմական սխալնատիկ հարկը, որը վերցվում էր քաղաքից, նշանակված է քառօ: Մերմինով, իսկ տարանցիկ առևտից գանձվող հարկը - ուշացնական:

Սի շաբք արժեքավոր փաստեր կան Անտիոքու 2-րդի Երիթրէ քաղաքին ուղղած նամակում (261 թ. հետո), որի մասին մենք արդեն նիշատակել ենք: Այդ նամակում նառանաշվում է, որ Ալեքսանդրի և Անտիգոնոսի ժամանակ քաղաքը ազատ էր տուրքերից: Ակներն է, որ նետագալուն Լիսիմաքոսը և Սեղմոնդ Անտիոքու քաղաքի վրա զանազան հարկեր դրեցին, ինչպես նաև տուրք, որը գանձվում էր գալլերի ներխուժումից հրանց պաշտպանելու պատրիկակով (ուն ու չնալու, ձեռնութեան ու առաջարկանու)՝<sup>59</sup> Անտիոքու 2-րդը, հավանաբար, Էրիթրէ քաղաքի դեպավանելերի խնդրանքից հետո, վերահսկուած քաղաքի նախկին իրավիճակը, որպեսզի ապահովի Էրիթրէ քաղաքի համակրանքը:

Հետաքրքիր երևոյթ է Ակատվում Աթամանիայի թագավորներ Թեոդորոսի և Ամինանդրոսի Տես քաղաքին ողηած համակում (205—201 թթ.): Աթամանները ('Անզրանու') ապրում էին Եպիրոսում: Նրանց թագավոր Ամինանդրոսը Անտիոքու 3-րդի դաշնակիցն էր Փիլիպոս 5-րդ Մակեդոնացու դեմ: Հավանաբար աթամանների թագավորը իրեն պարգև Անտիոքու 3-րդից ստացել էր փոքրասիական Տես քաղաքը: Եվ անս Տեսոսի քաղաքային խորհուրդը Աթամանիա ուղարկել էր իր դեսպաններին, որպեսզի խնդրեն իրենց քաղաքը հայտարարել սուրբ, անձեռնմխելի և ապահով (ιεράν, ἔσυλον καὶ ἀφορολογητον)<sup>60</sup>: Աթամանիայի թագավորներն իրենց պատասխան համակով հայտնում են, որ սի-

<sup>59</sup> Ibid., 15, 27–28.

<sup>60</sup> Ibid., 35, 5-8.

բով են ընդառաջում Տեսով բնակիչների խնդրանքին հեղեղ-  
ների նկատմամբ տածած սիրուց դրդված<sup>61</sup>: Բայց ավելի  
ուս, նրանք ի վիճակի չեն իրենց տիրապետությունը կեն-  
սագործել այնքան ենու լնկած քաղաքի նկատմամբ, և այդ  
համակով սուկ արձանագրում էին այն, ինչ իրականում ար-  
դեմ գործություն ուներ:

Նոր գաղութ հիմնելու նպատակով, Պերգամոնի թագավորության մեջ, Աստաղոսը, ինչպես երևում է իր մի նամակից, մի խումբ ռազմիկների պարգևում է, յորպաքանչյուրին երկու կարգի հոդ—վարեկանող և խաղողի այգի: Նամակում \*

<sup>61</sup> Ibid. 35, 9–10.

<sup>62</sup> Ե. թ. ա. 3-րդ դարի վերջում Տրալես քաղաքը վերանվանվեց Ալեքսանդր:

<sup>63</sup> C. B. Welles, RC, 41, 5.

<sup>64</sup> Ապոլլոնի «Տարակենյան» մականվաճ մասին ակտ C. B. Welles, RC, p. 192,

<sup>65</sup> C. B. Welles, RC, 47, 5-7.

<sup>66</sup> Ibid., 48, D, 38, 15.

ճշտությամբ որոշվում է յուրաքանչյուր ուազմիկ-կլերովիսին պարգևակած հողային տարածությունը: Տարբեր կարգի ուազմիկներ ստանում են տարբեր մեծության հողակտորներ: Ծշտությամբ որոշված են նաև հարկերի քանակը, որ կլերուխը պետք է վճարեր վարեամուղի՝ թերքի 1/20-րդը, իսկ խաղողի այգիներից՝ թերքի 1/10-րդը: Նամակում այնուհետև ասվում է հարկերից ազատելու մասն, բայց, դժբախտաբար, արձանագրությունը ալերան է թեկորային, որ հնարավոր չէ պարզել, թե ինչի՞ն է վերաբերում կարդացվող ՀԵՅ. Յ. Ք. բառը<sup>67</sup>:

Նոյն այդ Աստաղոսի մի որիշ նամակ դարձյալ վերաբերում է հարկերից մասնակի ազատելու հարցին: Այս անգամ մասնակի կերպով ապահով է հայտարարվում ոչ-հունական Ամլադա քաղաքը<sup>68</sup>: Այդ քաղաքը Եվմենիս 2-րդի օրով սահմանամերձ ամրացված կետ էր Գալատիայի կողմում, որտեղ հաստափած էր Պերգամյան թագավորի կայազորը: Երբ մ. թ. ա. 168 թվին գալատները ներխուժեցին Պերգամոնի թագավորության սահմանները, Ամլադան անցավ գալատների կողմը, բայց 162 թ. վերջիններս պարտություն կրեցին: Իր տարած հաղթանակից հետո Եվմենիս 2-րդը պատմեց նրանց, վերցնելով պատահները ու ուազմաստուգամբ, նրանց վրա տարեկան հարկ նշանակեց: Հավանաբար այս պայմանները շատ էին ծանր և փորդիկ քաղաքը ի վիճակի չէր վճարել նշանակված տորքը: Ռատի Աստաղոսը թերթացնում է հարկերը, միաժամանակ ազատ արձակում վերցրած պատահներին:

Երբեմն ապահով էին հայտարարվում ոչ թե իրենք, բայց ներքերը, այլ դրանցում գտնվող սրբավայրերը: Դրանով, ակներևաբար, շահագրգուված էին տվյալ քաղաքի բնակիչները, որոնք դիմում էին թագավորին, խնդրելով շնորհել իրենց տաճարին անձեռնմխելիության իրավունք և արահարկ հայտարարել այն: Այդ մասին մենք տեղեկանում ենք

<sup>67</sup> Ibid., 51.

<sup>68</sup> Ibid., 54.

2-րդ դարի հելլենիստական միապետություն մեկի նիսա քաղաքին ուղղված նամակից: Թագավորը (արձանագրությունը վճարված լինելու պատճառով նրա անունը չի վերականգնվում) հայտարարում է, որ քաղաքի հետ բարեկամական հարաբերությունները ուժեղացնելու նպատակով ինքը ևս հաստատում է նիսա քաղաքում գտնվող Պլոտոնի տաճարի նին իրավունքները՝ անձեռնմխելիություն և ապահով դրույթուն, որ շնորհել էին նախկին թագավոր իրեն լիովին իրավասությունը: Հավանաբար յուրաքանչյուր նոր թագավոր իրեն լիովին իրավասությունը նաև անշեղ կամ չնանաշեղ իրերի նախկին վիճակը: Այդ պատճառով ամեն անզամ քաղաքային համայնքը պարտավոր էր լինում հասուն դիմումով խնդրել նոր գահակալից հաստատել այն արտոնությունները, որ մինչ այդ վայելում էր քաղաքը:

Հարկերից ազատություն (ՀԵՅ. Յ. Ք.) ստանում էին ոչ միայն քաղաքները և նրանց քաղաքացիները, այլև երկրագործական շրջանների բնակիչները (ՀԵՅ. Յ. Ք.): Ամենայն հայւանականությամբ այդ մասին է խոսվում Աստաղու 3-րդի իր կառավարիչներից մեկին ուղղած նամակում, որտեղ հայտարարվում է Կարիական Հիերակոնեի բնակիչներին (ՀԵՅ. Յ. Ք.): Հնորհված մի շարք արտոնությունների մասին: Այսուղեւ հաստկանշական այն է, որ նամակը հասցեագրված է այդ շրջանի կառավարչին, հավանաբար, այն պատճառով, որ Հիերակոնեն պոլիս չէր և չուներ իր մոնիցիալ հաստատությունները<sup>70</sup>:

Հարկերից ազատելու հարցին է վերաբերվում նաև 2-րդ դարի վերջերին գահակալած Սելևկյան թագավորներից Անտիոքոսի (պարզ չէ ո՞րերորդի) նամակը, ուղղված սատրապության կառավարիչ Եվֆեմոսին, թագավորական մատյանից կատարված քաղվածքով, Բայսուկայելյում գտնվող Զևսի

<sup>69</sup> Ibid., 64.

<sup>70</sup> Ibid., 69.

տաճարին շնորհված արտոնությունների և նվերների վերաբերյալ<sup>71</sup>: Սելևկյանների տիրապետության սկզբնական շրջանում, երբ կենտրոնական իշխանությունը դեռևս բավական ուժող էր, թագավորը կամայականորեն բռնագրավում էր տաճարական նողերը և պարզում դրանք իր մերձափոքներին<sup>72</sup>: Այսպես, օրինակ, Բայսուկայլեյում գտնվող Զևսի տաճարը գրկվեց իր հողային տիրույթներից: Այդ տիրույթները Սելևկյան թագավորը (հայտնի չէ ո՞ր մեկը) պայմանական տիրույթի իրավունքով շնորհեց իրու նորություններից: Այդ տիրույթները Սելևկյան թագավորը (հայտնի չէ ո՞ր մեկը) պայմանական տիրույթի իրավունքով շնորհեց իրու նորություններից: Այդ տիրույթները Սելևկյան թագավորը (հայտնի չէ ո՞ր մեկը) պայմանական տիրույթի իրավունքով շնորհեց իրու նորություններից: Այդ տիրույթները Սելևկյան թագավորը (հայտնի չէ ո՞ր մեկը) պայմանական տիրույթի իրավունքով շնորհեց իրու նորություններից: Այդ տիրույթները Սելևկյան թագավորը (հայտնի չէ ո՞ր մեկը) պայմանական տիրույթի իրավունքով շնորհեց իրու նորություններից: Այդ տիրույթները Սելևկյան թագավորը (հայտնի չէ ո՞ր մեկը) պայմանական տիրույթի իրավունքով շնորհեց իրու նորություններից: Այդ տիրույթները Սելևկյան թագավորը (հայտնի չէ ո՞ր մեկը) պայմանական տիրույթի իրավունքով շնորհեց իրու նորություններից: Այդ տիրույթները Սելևկյան թագավորը (հայտնի չէ ո՞ր մեկը) պայմանական տիրույթի իրավունքով շնորհեց իրու նորություններից: Այդ տիրույթները Սելևկյան թագավորը (հայտնի չէ ո՞ր մեկը) պայմանական տիրույթի իրավունքով շնորհեց իրու նորություններից: Այդ տիրույթները Սելևկյան թագավորը (հայտնի չէ ո՞ր մեկը) պայմանական տիրույթի իրավունքով շնորհեց իրու նորություններից:

Ապահարկ դրության հասնելը մեծ հշանակություն ուներ քաղաքի համար, քանի որ այդ կարևոր քայլ էր ինքնավարություն ձեռք բերելու հանապարհին: Այսպես, Ապահարկը

<sup>71</sup> Ibid., 70.

<sup>72</sup> Թագավորի կողմից տաճարական հողերի բռնագրավման ժամանակակից յությունն է պահպանվել նաև հարինացու մոտ. «Ընկենու» (Տիգրան. — Ա. Կ.) զնոսա (Վահունեներին. — Ա. Կ.) ի քրմութենէն, և զգեղն յարրումիս առնու յորում պատկերը կանգնեցան» (Մ. Խուենացի, Բ. ԺԴ.):

<sup>73</sup> „Η τε πανάγιοις ἔρποροιν τι πρᾶττοι ἔστι” (Strabo, X, 5, 4).

գրում է, թե Ապահարկում կնքված պայմանագրով հետևյալն էր որոշված: «Այն քաղաքները, որոնք հարկատու էին Եվմենեսի հորը, Աստաղոսին, պարտավորեցրին (հոռմայեցիները. — Ա. Կ.) հարկ վճարել Եվմենեսին: Այն քաղաքները, որոնք համարկելում հարկատու էին Անտիոքոսին, ազատ հայտարարեցին հարկերից և բողեցին ինքնավար (առևլուս շնորհած չափությունուն չպահպանության մեջ): Անա թե ինչու քաղաքները միշտ աշխատել են ազատության հարկերից: Մեծապես իրավացի է Վ. Տառնը, երբ գրում է, որ «ժամանակի ընթացքում հարկումը գնալով ավելի ու ավելի դատում էր հպատակության ցուցանիշ, մինչդեռ հարկման բացակայությունը՝ ազատության ցուցանիշը»<sup>74</sup>:

Անոիկ քաղաքների ունեցած կարևորագույն արտոնություններից մեկն էլ ապաստանի իրավունքն էր (ձևուածական): Այս հետաքրքիր երևոյթի արմատները հասնում են մինչև հեռավոր անցյալի խորքերը, երբ սկզբնական շրջանում ամրացված, բայց դեռ ոչ մեծ բնակչակայրը հանդիանում էր բնական ապաստարան շրջակա բնակչության համար: Ժամանակի ընթացքում, արտադրողական ուժերի հետագա զարգացման և պոլիսային կարգերի առաջացման ու զարգացման հետանքով, շատ քաղաքներ, ինչպես նաև համամետնական սրբավայրեր, հպատարարվում են սուրբ և անձեռնմխելի (իջև չափությունուն): Դեռևս հոմերուան էպոսի մեջ զոհանեղանքը (Յալուշ) համարվում էր անձեռնմխելի ապաստարան, որտեղ՝ հաղածվող մարդը կարող էր ապաստանելով փրկել իր կյանքը<sup>75</sup>: Չեր կարելի սպասել այն մարդուն, որը սպաստան էր գտնում սրբավայրում, տաճարում: Հետագայում անձեռնմխելիության իրավունքից օգտվում էին Օլիմպիական համահունական խաղերի բոլոր մասնակիցներն ու հանդիականները տոնախմբության բոլոր օրերի ընթացքում: Անձեռնմխելի ապաստարաններ էին նաև համահունա-

<sup>74</sup> Appian., Syr., XLIV.

<sup>75</sup> B. Tark, Ազգած աշխ., էջ 77:

<sup>76</sup> Homer., Odys., 22, 333—335.

կան սրբավայրերը, ինչպես, օրինակ, Դեփյան Ապոլլոնի տաճարը: Ընդհանրապես տաճարի տերիտորիան համարվում էր արգելված վայր ռազմական գործողությունների համար: Մկրտչական շրջանում այն քաղաքը, որի տերիտորիայում գտնվում էր իշխան և իր տերիտորիան դարձնել սրբազն և անձեռնմխելի, հշանակում է՝ ռազմական գործողությունների համար արգելված վայր: Հետագայում, հելլենիստական ժամանակաշրջանում, այդ օրինակով զանազան քաղաքներ նոյնպես ձգուում էին դառնապ անձեռնմխելի բոլոր նոյների և հելլենիստական թագավորների համաձայնությամբ: «Մի շարք քաղաքներ «սրբազն և անձեռնմխելի» ճանաչելու շարժումը,—գրում է Վ. Տառելը,—պատերազմը սահմանափակելու լորջ փորձ էր»<sup>77</sup>: Զհամաձայնել նրա հետ չի կարելի: Մյուս կողմից, այս կամ այն տերիտորիան անձեռնմխելի ճանաչելը և դրան ապաստանի իրավունքը շնորհելը կարելվորագոյն պայման էր առևտրական գործարքների նորմայ կատարման համար, քանի որ պատերազմական գործողությունները միշտ էլ խանգարել են առևտրական հարաբերություններին:

Անձեռնմխելիության իրավունքը շնորհելու շատ փաստեր կան հելլենիստական միապետների քաղաքներին ուղած համակերպում: Անձեռնմխելիության, ապաստանի իրավունքի (չուն.ա) առաջին հիշատակումը այդ համակերպում վերաբերում է Պլուտոնի տաճարին, Պլուտոնիոնին: Սելիսու 1-ինը և նրա որդին Անտիոքոսը 281 թ. իրենց կառավարիչներից մակերտնացի Ստպատերին ուղած համակուլ հաղորդում են, թե ապաստանի իրավունք (չուն.ա) շնորհում են Նիսա քաղաքից ոչ հեռու, Աքրատայում գտնվող Պլուտոնի տաճարից<sup>78</sup>, աթիմբրացիների կողմից եկած դեպաների խնդրանքով<sup>79</sup>: Հետագայում, մ. թ. ա. 2-րդ դարում մի որիշ հելլենիս-

տական թագավոր Նիսա քաղաքին ուղած իր համակերպ դարձալ հաստատում է Պլուտոնի տաճարի այդ և որիշ արտոնությունները<sup>80</sup>:

Կու կղզոց ժամանած դեսպանները խնդրում են Բիթանիայի Զիելաս թագավորից չուն.ա շնորհել Ասկլեպիոնի հայտնի տաճարին՝ Ասկլեպեյոնին, որը գտնվում էր քաղաքի պարհապնդերից դուրս: Այսուղ դեռևս խոր չկա քաղաքին չուն.ա շնորհելու մասին: Իր պատաժան համարուն (240 թ.) Զիելասը հայտնում է Կոսի ժողովրդին ու քաղաքին խորհրդին (Յան.հ) այն մասին, որ ճանաչում է այդ տաճարը որպես անձեռնմխելի: Այդ համակում հետաքրքրական է նաև այն փաստը, որ Բիթանիայի թագավորը դարձալ նոյն դեսպանների խնդրանքով խոտանում է ապահովել Կոսի քաղաքացի ծովագնաց-առևտրականների կրաքը, որոնք կժամանեն Բիթանիայի թագավորի տիրապետության տակ և ողող տերիտորիան: Թագավորի այդպիսի վերաբերմունքը միանգամայն շահավետ էր առևտրականների համար, որոնց կամքը անվտանգության մեջ կիմներ և Կոսու և Բիթանիայում<sup>81</sup>: Կոսի քաղաքացին համայնքի այդ միևնույն դեսպանները հելլենիստական մյուս թագավորներից ևս, Մելիկյաններից, Պոտոմեոսաններից<sup>82</sup>, ձեռք բերեցին իրենց Ասկլեպեյոնի անձեռնմխելիության ճանաչումը: Այդ փոխադարձաբար շահավետ էր նաև վերոհիշյալ տերությունների առևտրականների համար, քանի որ վերջիններս, օգտվելով ապաստանի իրավունքից, կարող էին իրենց սպանքներով անարգել երևալ վաճառաշահ Կոս քաղաքուն:

Վերևում մենք արդեն խոսել ենք Աթամանիայի քաղավորներ Թեոդորոսի և Ամինանդրոսի Տեսու քաղաքին ուղած համակի մասին: Այս կապակցությամբ ուզում ենք ավելացնել, որ սրբազն, անձեռնմխելի և ապահարկ հայտարար-

<sup>77</sup> B. Tarh. Աշխած աշխ., էջ թ2:

<sup>78</sup> Հետմ. Strabo, XIV, 1, 44 (C. 650)

<sup>79</sup> C. B. Welles, RC, 9, 2-3 & 12.

<sup>80</sup> Ibid., 25:

<sup>81</sup> Ibid., 26, 27, 28:

ψημ ἐρ η μῆιαῖς τωνιαρρ, αὐλὶ Σκοπού ρωτηρήι αμρητῷ τε-  
ρητηρήιαι (καὶ τὴν πόλιν ὄμιλον καὶ τὴν γάρδαν)<sup>83</sup>:

Եթե որևէ քաղաք անձեռնմխելի էր ճանաչվում, ապա թագավորը չէր կարող բռնի ուժ գործադրել նրա վրա: Ռատի քաղաքը հայտարարել անձեռնմխելի և ապահարկ, փաստութեան նշանակում էր նրաժամկետ տվյալ քաղաքի վրա ուժեցած իրենց իշխանությունից: Եթե նկատի առնենք Տես քաղաքի և Աթամանինիայի հեռավորությունը և այդ երկրների կտրվածությունն իրարից, ապա մեզ համար պարզ կլինի, որ Աթամանիայի թագավորները փաստութեան ի վիճակի չէին Տես նկատնամք իրենց տիրակալության իրավունքը կենսագործելու: Ակներկ է, որ նրանց այդ հայտարարությունը սույն պրոպագանիֆատական նպատակ էր հետապնդում, հեղենիստական աշխարհը սիրաշահելու համար:

Տաճարի կամ քաղաքի այն տերիտորիան, որը հայտարարվում էր անձեռնմխելի, անկալիած, սահմանափակված էր և նրա սահմանները բոլոր դեպքերում խատիվ որոշված: Այսպես, Ասկլեպեյոնին հաջուկ մասին Պտղութեսու Յ-րդ Եվլեգեանի Կոսի քաղաքային համապնդին ողղած համակում հիշատակություն կա սահմանաքարերի մասին, որոնք սահմանապատում են անձեռնմխելի ճանաչված տերիտորիան (հայուս հյուշելի: ու երջու աւ տան ծուս ծրուս թեթևակա):<sup>85</sup> Մի այլ համակում ասված է, թե թագավորը ճանաչում է տաճարի տերիտորիայի անձեռնմխելիությունը այն սահմաններում, որ նշված են նախորդ թագավորների կողմից (աչ ու ուրիշությունունու ծրուս սովորություն)՝ Յաւալեան:

<sup>83</sup> Ibid., 35, 5-8.

<sup>84</sup> Ibid., 27, 10–12:

<sup>95</sup> Ibid., 64, 11-12.

Էր Օսկվիկնում: Բայց անձեռնմխելի ճանաչված տերիտորիայի սահմանները շատ անգամ են փոփոխության ենթարկվել: Այսպէս, Աղեքամօդի ժամանակ այն տարածվել էր մի տարիունի վրա, իսկ Մինրդատի ժամանակ՝ կոտրից արձակված մի հետընկեց, երևի ստադիոնից փոքր-ինչ ավելի, մինչդեռ Անսոնիոսը կրկնապատկեց այդ տարածությունը, անձեռնմխելի տերիտորիայից միացցելով նաև քաղաքի մի մասը: Սակայն այդ իրավունքը վճարակար դուրս եկավ և բաղադր չարագործելու վայր էր դառնում, այնպէս, որ Օսուտու Կեսարը չեղյալ արեց այդ իրավունքը»<sup>86</sup>:

Այս կամ այն քաղաքին շնորհված անձեռնմխելիության և ապաստանի իրավունքի ճանաչումը թագավորի կողմից ուներ ոչ միայն տնտեսական, այլ նաև քաղաքական կարևոր հաշ-նակություն: Այս նշանակող թագավորը ձգտում էր իր համար սոցիալական հենարան ստեղծել հանձինս տվյալ քաղաքի բնակչների: Այդ բանում համոզվելու համար քավական է բերել երկու օրինակ: Արագես, Պոլիբիոսը հաղորդում է, որ Սպարտակի թագավոր Նարիսը «ասես բաց արեց սրբազն ապաստարան երանց համար, որուն փախել էին իրենց հայ-րենի երկրից անօրենության և նենգության պատճառով, դրա-նով իսկ Սպարտակում կենտրոնացրեց չարագործ մարդկանց քաջություն»<sup>37</sup>: Այս հաղորդման վերջին մասը քացահայ-տուն է հետինակի դասակարգային դեմքը և դրսորուն երա քացանական վերաբերմունքը այդ ժամանակի Հռոմեական տեսի ունեցող սոցիալական բոլոր շարժումների նկատմամբ, ընդհանրապես, և պարտքերի մարման ու հողի վերաբաժանում ուղղությամբ (չյան ձևութեան և շին անձաւութեան) Նարիսի արմատական բարենորոգումների նկատմամբ, մասնավորա-պես: Բայց դրանից գործի էությունը չի փոխվում: Իրավա-գորոկ բոլոր մարդիկ, որոնք փախչում էին Սպարտա, Նարի-սի մոտ, ապաստան էին գտնում և հենարան դառնում Նարի-

<sup>84</sup> Strabo, XIV, 1, 23 (C. 641):

*in Polyb., XVI, 13, 2:*

սի իշխանության և նրա ձեռնարկած արմատական քարենությունների կիրառման գործում:

Համանման երևոյթ մեզ հայտնի է Հայաստանի 4-րդ դարի պատմությունից: Այդ Հայոց Արշակ 2-րդ թագավորի օրով էր, եթե նա կենտրոնախույս նախարարների դեմ մղած իր պալքարի ժամանակ փորձեց հենակել բնակչության ստորին, իրավազորկ խավերի վրա, վերջիններին ապատանի իրավունքը տպով իր նորակառուց Արշակավան քաղաքում, որը հայտարարվել էր անձեռնմխելի և այնուղ ապատանողները ազատվում էին ամեն տեսակի հետապնդումներից:

Հարկերից ազատելու և չունչ շնորհելու հարցը սերտորեն կապված է քաղաքում արքայական կայագորի առկայության հարցի հետ: Հասկանալի է, որ ոչ մի ազատության մասին խոռ անգամ չի կարող լինել, եթե խաղաղ ժամանակ ինքնաւար հայտարարված այս կամ այն քաղաքում հաւատառվում են թագավորական կայազորներ: Ե՛վ գրավոր սովորություն և վիմագրական հութերում համարյա միշտ չշրջադրություն (առանց կայազորի, կայազորից ազատ) և չնույտանիւթյուն (օթևան տրամադրելու պարտավորությունից ազատ) քառերին ողեկցում են չշրջանացություն (առանձ կայանարկ), չունչ (անձեռնմխելի) և չունչ (ազատ լինել) քառերը: Աղբյուրներում միայն հանդես գալու հանդերձ, իրարից խատորեն տարբերվում են չշրջադրություն և չնույտանիւթյուն (արձանագրություններում չնույտանիւթյուն) քառերը: Պոլիբիոսը գրում է, որ Թատոսի բնակիչները հաղորդեցին Փիլիպպոս 5-րդի զորահրամանատար Մետրոդրոսին այն մասին, որ կհանձնեն իրենց քաղաքը, եթե «խոտանում է նրանց ազատներ կայազորից, հարկերից, օթևան տրամադրելու պարտավորությունից և թուլատրի ապրելու սեփական օրենքներով»<sup>88</sup>:

\* Polyb., XV, 24, 2.

Քաղաքներին ուղած հելլենիստական թագավորների համականություն հանդիպում ու չուստանանալու<sup>89</sup> (տեղակարգական լինել օթևաններում) և չնույտանիւթյուն (օթևան տրամադրելու պարտավորությունից ազատ) քառերը: Քաղաքների համար ոչ պակաս ծանր էր թագավորի զորքերին օթևան տրամադրելը (չուստանանալ, չուստանալ) քաղաքի տերիստորիայում: Գավառային կառավարչին ողղված մի համակից (հայանարար Պոլումետոս 4-րդ Ֆիլոպատրոսի) իմանում ենք, որ Ալեքսանդրի ժամանակ Կիլիկիայի Սոլի քաղաքում զորքեր չեն տեղավորվել (ունեությունը չուստանանալու<sup>90</sup>). բայց արդեն 3-րդ դարի վերջին դրույժունը փոխվել էր: Թագավորի զորքերը տեսր էին գրադեցրել ոչ միայն քաղաքի պարիսպներից դորս, արվարձանում (τόπος ἔξω πόλεων), այլ նաև օթևանել էին քաղաքի այն մասում, որը գտնվում էր պարիսպների ներսում (τοῦτο καὶ τὸν εἰσοδεῖον τοῦ παρισπάντος): Դեռևս Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակ հունական քաղաքներում հաստատվել էին մակեդոնական կայազորներ (φύλακαι) և ամեն մի քաղաքային համայնք պարտավոր էր իր միջոցներով հոգալ կայազորի կարիքները<sup>91</sup>: Չորքերին քաղաքի բնակարաններում տեղավորվելը շատ էր ծննդ հասում քաղաքի վրա. մի հանգամանք, որը ստիպված էր ընդունել հունական թագավորությունը ինքը: Այսպես, Պոլումետոսներից մեկը<sup>92</sup>, որոնք ընդհանրապես զինվորական գաղութներ չեն հիմնել, այլ թույլ են տվել, որպեսզի գորքը ժամանակավոր զորանցներ կառուցի քաղաքի շրջակաքրություն կամ տեղավորվի ողղակի քաղաքում, հրահանգում է իր կառավարիչներից մեկին հոգ տանել քաղաքը ազատելու այդ ծանր պարտավորությունից:

Անփոփելով ասվածը, մենք կարող ենք հանգել հետևյալ եզրակացություններին: Ալեքսանդր Մակեդոնացու նվաճում-

<sup>88</sup> C. B. Welles, RC, 30, 7.

<sup>89</sup> Ibidem, 70, 13.

<sup>90</sup> W. Dittenberger, Sylloge Inscriptionum graecarum, ed. 3, 283.

<sup>91</sup> C. B. Welles, RC, 30, 2—5.

Աերից հետո Արևելքում նկատվում է քաղաքաշինության բուռ պրոցես, առաջանում են մեծ թվով նոր քաղաքներ: Նրանք առաջանում են հիմնականում երկու եղանակով. 1) Արևելքի հին քաղաքներին և մի շարք բնակավայրերին նեղենիստական միավետները շնորհում են հունական պոլիսի ստատուտ, միաժամանակ տարով նրանց դինաստիական կամ հունական նոր անուններ: 2) Իրենք՝ թագավորները կառուցում էին նոր քաղաքներ: Այդ քաղաքները նրանց անհրաժեշտ էին որպես վարչական, ուսումնական և տնտեսական բազաներ: Արևելքի նեղենիստական քաղաքները իրենց իրավական դրույթամբ արդեն խստրեն տարբերվուն էին հին հունական սովերեն քաղաք-պետություններից: Փոխհարաբերությունները հիշյալ քաղաքների և նեղենիստական միավետների միջև իրենց արտահայտությունն են գտել ինչպես գրավոր աղբյուրներում, այնպես էլ արձանագրություններում հանդիպող չեւնիզօք, չշուռզիօք, չժեւզօք, չաշնօք, և գործադրությունը և անուստանիւրությունը տերմիններում, որոնց բովանդակությունը փոխական էր թագավորական իշխանության ոժեղացումով կամ թուլացումով: Կենտրոնական իշխանության ոժեղացումով քաղաքների արտոնությունները սահմանափակվում էին: Մյուս կողմից, քաղաքներն ամեն կերպ ձգուում էին օգտվել թագավորական իշխանության թուլացումից, հնարավորին չափ ավելի ազատություն ձեռք բերելու համար: Այդ էլ հանդիսանում էր թագավորների և քաղաքների միջև գոյություն ունեցող խոլ պայքարի բովանդակությունը: Սակայն քանը չէր հանգու բացահայտ խզման: Նրանց միջև պառակտությ կանխալում էր նրանց դասակարգային, քաղաքական, հաճախ և տնտեսական շահերի ընդհանրության պատճառով:

## Գ. Ռ Ի Խ Ե Ր Ր Ո Ր Դ

ՔԱՂԱՔՆԵՐԻ ԱՐՄԱՉՅՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ Մ. Թ. Ա.  
2-ՐԴ ԴԱՐԻՑ-Մ. Թ. Յ-ՐԴ ԴԱՐԸ

Հայկական լեռնաշխարհում առաջին քաղաքներն առաջցել են դեռևս հայանայիկական, որպարտական ժամանակաշրջանում: Այդ շրջանից հայտնի են որպարտական պետության մայրաքաղաք Տուշպան (այժմ՝ Վան), Վանա լճի արևմելյան ափին, Արգիշտիհենիլին՝ որպարտացիների վարչական կենտրոնը հյուսիս-արևելքում, Ալրարատյան դաշտում և բազմաթիվ այլ քաղաքներ:

Որպարտական քաղաքները ուզմա-վարչական և պաշտամունքային կենտրոններ լինելով հանդերձ, ունեցել են նաև խոշոր տնտեսական նշանակություն: Այդ մասին են վկայությանիր բլուրի (Թեկչերայինի) և Արին-բերդի (Էրեբունի) պեղումները<sup>1</sup>: Որպարտական պետության վերջնական անկրտմից հետո (մ.թ.ա. 6-րդ դարի սկիզբը) աստիճանաբար իրենց նախկին նշանակությունը կորցնում են նաև որպարտական քաղաքները:

Ն. Ադոնցը և ակադ. Հ. Հ. Մանանյանը ենթադրում են, որ այդ ժամանակ Հայաստանում քաղաքները ընդհանրացեն գոյություն չեն ունեցել, այլ եղել են միայն գյուղեր<sup>2</sup>: Այդ քա-

<sup>1</sup> Բ. Բ. Պուտրովսկի, Իстория и культура Урарту, Ереван, 1944; Նույնի, Վանское царство, М., 1959; Ա. Ա. Մարտirosyan, Город Тейшебаини, Ереван, 1961.

<sup>2</sup> Հ. Ածոնց, Արմения в эпоху Юстиниана, СПб., 1908. Հ. Հ. Մանանյան, Բնական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա., Երևան, 1944, էջ 82:

Գի ասկացուցք նրանք տեսնում են Քսենոփոնի հաղորդում-ներում, որը Ակարագրել է 10 հազար հովս վարձկաների համանջջ Կունաքայի ճակատամարտից հետո (401—400թթ.): Խսկապես, Հայաստանի միջով հովսերի ողևորությունը նկարագրելիս, Քսենոփոնը չի հիշում և ոչ մի քաղաք, այլ միայն գյուղեր (չնորա!): Նոյնիսկ Հայաստանի սատրապի հստավայրը (Յաջման) գտնվում էր ոչ թե քաղաքում, այլ մեծ գյուղում (լոշակ չափու), Կենտրիտես գետի մոտ<sup>3</sup>: Ուստինասիրողները, սակայն, աշքաթող են արել այն, որ, մի կողմից, թշնամի երկրի միջով համանչելիս, ամենայն հավանականությամբ, իրենք հովսերը խոսափում էին քաղաքներից և խոշոր բնակավայրերից, որտեղ նրանք կարող էին դիմադրության հանդիպել: Մյուս կողմից չի կարելի մոռանալ շատ էական մի հանգամանք: Հին հովսերը քաղաք չին համարում այն բնակավայրը, որը շրջապատված չէր պարփակվության հանդիպել: Մյուս կողմից չի կարելի մոռանալ շատ էական մի հանգամանք: Գեղրենոսը միշնադարյան Հայաստանի խոշորագյուն քաղաքներից, առևտի հայտնի կենտրոն Արծնը համարում է չափուու: — գյուղաքաղաք<sup>4</sup>, հակառակ որ այդ քաղաքի բնակչության թիվը հաշվվում էր ավելի քան 100.000: Եվ այդ, ըստ երևութին, սուկ նրա համար, որ Արծնը չէր շրջափակված քաղաքային պարիսպներով: Այսուհետերձ, Հայաստանի սատրապի հստավայրը նկարագրելիս, Քսենոփոնը հշում է, որ տների մեծ մասի վրա կային աշտարակներ (ոճուու): Համենայն դեպք, եթե քաղաքների գյուղունը Արծնեանների տիրապետության տակ գտնվող Հայաստանու կասկածելի է, ապա քաղաքատիպ բնակավայրերի գյուղունը կարելի է համարել ավելի քան հավանական: Այս ենթադրությունը հստատվում է Արին-բերդի (Էրեբունի) պեղումների արդյունքներով, որտեղ վերջին տարիներս քաց-

<sup>3</sup> Xenoph., Anabasis, IV, 4.

<sup>4</sup> Georgius Cedrenus, Historiarum, t. II, Bonnae, 1839, p. 577.

վել են աքնանյան շրջանին վերաբերող պալատական կառուցներ:

Հայկական քարձրավանդակում Արմավիրի և մի շարք այլ քաղաքների (Արշամաշատ, Երվանդաշատ, Արտաշատ, Կարկաթոկերտ, Տիգրանակերտ և այլն) առաջացումն ու գարգացումը մ. թ. ա. 3-րդ—1-ին դդ. կապված էր մի կողմից անկախություն և ազատություն ձեռք բերելուց հետո երկրի ներսում արտադրողական ուժերի և, մոտ կողմից, Ալեքսանդրը Մակեդոնացու նվաճումներից հետո Արևելքում նկատված քաղաքային կյանքի աշխուժացման հետ: «Հայաստանի համար,—գրում է Ս. Երեմյանը,—դա հանդիսանում էր սորվատիրական մասնավոր սեփականության և ապրանքադրամային շրջանառության զարգացման ժամանակաշրջան, զյուղատնտեսությունից արհեստների անշատման և միջազգային ապրանքափոխանակության, միշագգային քարավանային առևտորի մեջ Հայաստանի ներգրավման ժամանակաշրջան, որը իր հերթին խթանում էր ապրանքային արտադրության զարգացմանը»<sup>5</sup>:

Աքնանյան տիրապետության անկումից հետո Հայաստանում առևելուցեցին բարենպատ պալմաններ արտադրողական ուժերի հետագա զարգացման համար: Հատկապես դրա մեջ է Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների առաջադիմական նշանակությունը. Հայաստանի համար: Աքնանյանների վերջնական տապալումից հետո, հայկական ցեղերով բնակեցված երկրները քաղաքական անկախություն ձեռք բերեցին: Մյուս կողմից, Մակեդոնացու ստեղծած միապետությունը, Արևմուտքն ու Արևելքը միավորելով մի իշխանության տակ, լայն հնարավորություն ստեղծեց միշագգային առևտի հետագա զարգացման համար, որի հիմնական մայրուղիները Արևելքում անցնում էին Հայաստանի միջով: Բնական է, որ քարավանային այդ առևտի հանգուցային կենտ-

<sup>5</sup> С. Т. Еремян, Развитие городов и городской жизни в древней Армении. ВДИ, 1953, № 3, стр. 11.

րոնը դառնալու էր երկրի վարչա-քաղաքական կենտրոնը: Այդպիսին հանդիսանում էր Արմավիրը, հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան մասում, Ազգարատյան դաշտում, որը դարձել էր Երվանդունիների պետության քաղաքական ու պաշտամունքային կենտրոնը: Երվանդունիների այս պետությունը մեևն էր այն պետական միավորումներից, որոնք Աղեքաններ Մակեդոնացու մասից հետո, օգտվելով դիադրուսների միջև ծագած երկարավորություններից, առաջացան պատմական Հայաստանի տերիտորիայի վրա<sup>6</sup>:

Արմավիր քաղաքի հիմնադրման ստուգ պատմությունը դեռևս մեզ անհայտ է: Անտիկ հետինականներից միայն աշխարհագետ Պտղոմեոս Կլավդիոսն է հիշատակում Արմավիրի մասին<sup>7</sup>:

Հայ մատենագիրներից առաջինը Մովսես Խորենացին է հիշատակում Արմավիր քաղաքի մասին, թե այն հիմնել է Հայկի սերնդից Արամայիսը՝ Արամանակի որդին. «Խոկ որդի նորա (Արամանեկայ—Ս. Կ.) Արամայիս շինէ իր տուն բնակութեան ի վերայ ոստոյ միոյ առ եզերք գետոյն, և ամուսնէ զնա յիր անոն Արմավիր»<sup>8</sup>: Աերեսին վերագրված մատյանում նույնական կարդում ենք. «Զկնի Արամանեկայ որդի նորա Արամայիս շինէ իր ի վերայ գետեզրն տուն բնակութեան, և անուանէ զանոն նորա ըստ անուան իրոյ Արամայիր»<sup>9</sup>:

Հայ պատմագիրների այս վկայությունները, սակայն, առասպեկտական են. ուրարտական սեպագիր արձանագրությունների տվյալների համաձայն այդ վայրում դեռևս ուրարտական շրջանում գոյություն է ունեցել բերդաքաղաք և կոչվել է Արգիշտիփինիլի: Այսուհեներձ այդ հաղորդումները նետաքրքիր են հրանով, որ քաղաքը իր անունը ստանում է

<sup>6</sup> С. Т. Еремян, К вопросу об этногенезе армян. „Вопросы истории”, 1957, № 7, стр. 107.

<sup>7</sup> Ртол., 5, 13, 8.

<sup>8</sup> Մովսես Խորենացի, Ա, ԺԲ:

<sup>9</sup> Պատմութիւն Աերեսի եպիկոպոսի ի Հերակլն, Ս -Պետ., 1879, Ա, 1:

սուսպելական հիմնադրից և, ինչպես իրավացի կերպով նշում է Կ. Վ. Տրելիքը, «հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արմավիրը, ըստ ավանդության, Հայկի թոռն էր, մենք հիմք ունենք եղուակացնելու, որ ժողովրդական հիշողությունը Արմավիրի հիմնադրումը կապում էր խորը հնույթան հետ...»<sup>10</sup>: Այդպիսի հնույթան մասին վկայում են Արմավիրում հայտնաբերված մ. թ. ա. 8-րդ դարի ուրարտական սեպագիր մի արձանագրության առաջին բառերը. «Արգիշտին, Մենուայի որդին, ասում է. հզոր ամրոց ես կառուցեցի, այն անվանեցի Արգիշտիփինիլի»: Այդ հաստատվում է նաև Արմավիրի բլուրի վրա գտնվող բերդի մնացորդներով, որոնք պատկանում են ուրարտական ժամանակաշրջանին: Արգիշտիփինիլին դառնում է ուրարտացիների վարչական կենտրոնը տերության հյուսիսային կեսում, ինչպես նաև կարևոր նենարան ուրարտացիների դեպի հյուսիս-արևելյան առաջնայացման համար<sup>11</sup>:

Ուրարտական մի այլ բերդի՝ Կարմիր-բլուրի պեղումների շնորհիվ բավականին ուսումնասիրված է ուրարտական քաղաքային կենտրոնի արտաքին տեսքը: Կարելի է վստահ ասել, որ Արգիշտիփինիլին շատ ընդհանուր բան ուներ Թեյշեբայինի հետ: Արմավիրում հայտնաբերված սեպագիր արձանագրությունները նշում են ամրությունների, տաճարների կառուցման, ազգիների մշակման մասին և այլն<sup>12</sup>: Արգիշտիփինիլիի—Արմավիր քաղաքը շրջափակված է եղել պայմանական պատճենի մասին պահպանվել է Խորենացու հետաքրքիր վկայությունը: Պատմելով Հայաստանի սուսպելական քաղաքու Արամի մղած պատերազմի մասին մարերի դեմ, որոնց առաջնորդում էր Նյուքար Մադեսը, պատմահայրը գրում է. «...յանկարծօրէն ի վերայ հասեալ Արամ յառաջ քան զծագել արեգական՝ սատակեաց զբազութիւն ամբոխիցն, և զնոյն ինքն նիւքարն զկոչեցեալն Մադէս ձերքակալ արա-

<sup>10</sup> Կ. В. Тревер, Очерки... стр. 104.

<sup>11</sup> Б. Б. Пиотровский, История и культура Урарту, стр. 74.

<sup>12</sup> Նույն սեպագիր, էջ 66:

րեալ ածէ յԱրմաիր, և անդ որեմն ի ծայրս աշտարակի պարսպին ցից վարեալ երկարի ընդ ճակատն, յորմն վարսել հրամայէ, ի տեսիլ անցառորաց և ամենայն եկեղոց անդր»<sup>13</sup>: ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագործության ինստիտուտի կողմից վերջին տարիներու Արմավիրի բլրում կատարված պեղումներն իրոք որ բացահայտել են քաղաքի հզոր պարհապնդերը՝ շարված սրբատաշ որձաքարով:

Դժվար է պատկերացնել, որ որպատական պետության անկումից հետո Արգիշտիխինիլին խապատ կորցրած լիներ իր հշանակությունը, քանի որ աղբյուրները նույն տեղում հիշատակում են Արմավիրի գոյության մասին: Արգիշտիխինիլին և Արմավիրի նույնության մասին վկայում են և Արգիշտի թագավորի սեպագիր արձանագրությունները, և նույնարեն արձանագրությունները, որոնք հայտնաբերվել են Արմավիրի բլրում:

Այն բանից հետո, եթիւ հայերը տապալեցին Աքեմենյան Պարսկաստանի լուծը, Արմավիրը դառնում է Երվանդունիների նորաստեղծ պետության քաղաքական կենտրոնը: Եվ քանի որ Հայաստանի միջով էին անցնում միջազգային առևտուի հիմնական մայրությունը, ապա բնական է, որ Արմավիրը դառնալու Էր նաև տարանցիկ առևտուի կենտրոն: Արմավիրի համար հասուն հշանակություն ուներ քարավանյան հյուսավայրին ճանապարհը, որը Արևելքի երկրները կապում էր Սև ծովի հետ: Հյուսիսի հետ Արմավիրը կապ էր պահպանում երկու հիմնական մայրությունով՝ Artaxata—Sebastopolis (Phasis) և Artaxata—Armastica—Sebastopolis: Արմավիրի հշանակությունը որպես տարանցիկ առևտուական կենտրոնի ավելի է քարձրանում այն բանից հետո, եթիւ Սելևկյանների թագավորության խոշորագույն հելլենիստական կենտրոններից մեկը՝ Սելևկիա քաղաքը Տիգրիսի վրա դառնում է իր ժամանակի միջազգային առևտուի կարևոր հանգույց<sup>14</sup>: Այլ կերպ չի կարելի հասկանալ Ստրաբոնի հաղոր-

դումն այն մասին, թե մի կողմից Բուապորյան թագավորության և Պոնտոսի, մյուս կողմից Հնդկաստանի և Պարթևական պետության վաճառականների միջև որպես միջնորդներ հանդիս են գալիս Կոլիսայան տարբեր ցեղերը և հայերը մարերի հետ<sup>15</sup>:

Արմավիրի, ինչպես նաև մի շարք որից քաղաքների առաջացումը Արաքսի հովտում պատահական չէ: Վաղ հելլենիստական շրջանում սկսվել էր հայկական տարբերի համայնքմբան պրոցեսը, որը բացել էր Այրարատյան դաշտի և ընդհանրապես Հայաստանի համար տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացման ժամանակաշրջանի: Միջազգային առևտուը և տիրող դասակարգի անող պահանջները խթանում էին արտադրողական ուժերի զարգացումը, աշխատանքի հասարակական քածանումը և ապրանքային արտադրության զարգացումը: Դրա պերճափոս վկայությունը ինտենսիվ քաղաքաշինությունն էր: Ահա թե ինչպես է բնութագրում Կ. Մարքսը առևտուի՝ քաղաքային կանքի զարգացման հետ ունեցած փոխադրամ կապը. «...եթիւ քաղաքային արդյունաբերությունն իրեւ այդպիսին անջատվում է հողագործականից, երա արդյունքները հենց այն գլխից երևան են գալիս իրեւ ապրանքներ, և որեմն նրանց վաճառքի համար առևտուի միջնորդության պահանջ է զգացվում: Ըստ այն առևտուի հենցնելը քաղաքի զարգացման վրա ու մյուս կողմից վերջինիս պայմանավորվածությունը առևտուով, պատեղ հասկանալի են հիմնարարականներ»<sup>16</sup>:

Ծուտով, Արաքս գետի հունը փոխվելու պատճառով, Երվանդունիներից վերջինը ստիպված էր իր հատակայրը Արմավիրից տեղափոխել նորակառուց Երվանդաշատ քաղաքը: Այդ մասին հանրամասն գրել է Մովսես Խորենացին:

<sup>13</sup> Καὶ τούτον τὸ τῆς Κασπίου παραλίας τῆς πλειστῆς ἔργον. οὗτος καὶ ἐνεπορεύοντο παρτγάλοις τὸν Ἰνδικὸν φόρτον καὶ τὸν Βαθυδάνιον πάρα τὸ Ἀρμενίων καὶ Μηδον ὀδιόδερον» (Strabo, XI, 5, 8, c. 506).

<sup>14</sup> Ա. Մարքս. Հ. 3, լ. 1, Երևան, 1947, էջ 319:

<sup>15</sup> Մովսես Խորենացի, Ա, ԺԴ:

<sup>16</sup> C. T. Еремян, Развитие городов и городской жизни..., ст. 12.

«Յաւուս սորայ (Երուանդայ.—Ա. Կ.) փոխին արքունիքն յԱրմաիրն աճուանեալ բլոյ. քանզի էր նեռացեալ գետն Երասին, և ի յերկարել ձմեռապնոյն, և ի դառնահու փշնանէ հիսիսոյ պաղացեալ ձուլեալ վտակն՝ ոչ ուստե՛ արքունուն բարական թագաւորականին գտանել տեղոյ: Ընդ որ նեղեալ Երուանդայ, ևա և ամրագունի ևս տեղոյ եղեալ ի խնդիր՝ փոխէ զարքունիս յարևմտսո կոյս, ի քարակոտոր մի բլոր, զորով պատ առեալ Երասիս,՝ ընդդէմ Ախուրեանն հոսի գետ: Դարասէ զբուրն, և ի ներքագոյն քան զարիսայն ընդ քազում տեղիս կտրեալ զքարիսն մինչև ի յատակս բլոյն հատասար գետոյն, մինչև դիմել ջորց գետոյն ի փորուածն, յըմպելեաց պատրաստութիւն: Զմիջնաբերդն ամրացցանել բարձր պարսպօք, և դրուն պղնձիս կանգնել ի միջոցի պարապին, և ելանելիս երկաթիս ի ներքուս ի վեր ցորուանն»<sup>17</sup>: Մայրաքաղաքը Երվանդաշատ փոխարեկուց հետո էլ Արմավիրը շարունակում էր մուալ Երվանդունիների Հայատանի պաշտամունքային կենտրոնը, որտեղ քրիստութեալ Երվանդ Վերջին թագավորի եղբայր Երվազն էր<sup>18</sup>:

Արտաշես 1-ինի կողմից Երվանդունիների տապալումից հետո, և հատկանի Արտաշեալանների նոր հատավայրի,

<sup>17</sup> Մովսես Խորենացի, Բ, 1թ:

<sup>18</sup> Հայունի է Մ. Խորենացու Հաղորդումը, թե Երվանդը կառուցելով իր քաղաքը, Արմավիրից այնտեղ փոխադրեց ամեն ինչ, բացի կուռքերից ինկարութեալ քաղաքից 40 ասպարեզ դեմք Հյուսիս, Ախուրյանի ափին կառուցեց մի փոքր քաղաք, Բաղարանը, որտեղ փոխադրեց Արմավիրում եղած բոլոր կուռքերը և իր հզրոր Երվազին նշանակեց քրիստոն (Մ. Խորենացի, Բ, հ): Մինչդեռ Հ. Մանանդյանը, «Հմենվելով Արմավիրի Հունարեն արձանադրությունների վրա, գտնում է, որ «Հակառակ Խորենացու ցուցման, Երվանդյանների մայրաքաղաքը Արմավիրից Երվանդաշատ փոխադրելուց հետո էլ իրեն Երվանդյանների մազավորության կրոնական կենտրոն մնում էր դարձյալ Արմավիրը...» (Հ. Հ. Մանանդյան, Արմավիրի Հունարեն արձանադրությունները Խոր լուսարանությամբ, Երևան, 1946, էջ 15) և որ անսեղ շիշուում էր իրեն զերազույն բուրմ և թազավոր Երվանդ Վերջինի Եղբայր Միթրասը (Խոյն տեղում, էջ 29): Խոկ արձանադրության այս Միթրասը, Հ. Մանանդյանի ենթագրությամբ, Խորենացու մոտ Հիշատակված Երվազն է, Երմանդի Եղբայրը (Խոյն տեղում, էջ 19):

Արտաշատի առաջացման կապակցությամբ, Երվանդաշատը, նիշտ է, կորցրեց իր նախկին փառքը, բայց դեռևս պահպանում էր նշանակությունը մինչև մ. թ. 4-րդ դարի կեսերը և ապրում էր լիարյուն կյանքով: Փալսոս Բուզանդը Ակարագույով Հայատանի ավերումը և ամայացումը Սասանյան Շապուհ 2-րդ Երկարակյացի կողմից 364—367 թթ., հաղորդում է, որ Սասանյան թագավորը կործանեց հայկական ուր քաղաք՝ Տիգրանակերտ, Վաղարշապատ, Արտաշատ, Երվանդաշատ, Զարեհավան, Զարիշատ, Վան և Նախիչևնա: Այս կապակցությամբ հայ մատենագիրը Երվանդաշատը բնութագրում է որպես «քաղաքն մեծ»<sup>19</sup>:

Մովսես Խորենացու մի շաբք վկայություններ թույլ են տալիս մեզ ենթադրելու, որ հնագույն ժամանակներում, դեռևս Արտաշեալան թագավորության հաստատումից առաջ, Արմավիրից բացի Հայատանում գոյություն ունենալու որիշ խոշոր բնակավայրեր ևս, ինչպես Աշտիշատը, Ամի-Կամախը, Երիզան, Բագահատիճը, Թիլը, որոնք նույնպես միաժամանակ եղել են պաշտամունքային կենտրոններ<sup>20</sup>: Նրանցից ոչ մեկը Խորենացու մոտ չի անվանվում քաղաք, այլ սուկ գյուղ կամ ամրոց: Շատ հավանական է, որ այդ կենտրոններից մեկը, Աշտիշատը, մի ժամանակ եղել է քաղաք, քանի որ ինըը՝ Աշտիշատ անունը հշանակում է «զոհերի քաղաք»<sup>21</sup>: Հայ մատենագրի ապրած ժամանակաշրջանում այդ բնակավայրերը ևս ըստ երևութիւն կորցնելով իրենց քաղաքային բնույթը, վեր էին ածվել գյուղերի: Մենք ոչինչ չգիտենք ոչ այդ բնակավայրերի առաջացման ժամանակի, ոչ էլ դրանց հիմնադրիների մասին: Անկալած է, սակայն, որ դրանք առաջացել են հեռավոր ժամանակներում:

<sup>19</sup> Փալսոս Բուզանդ, Գ, ՍԵ:

<sup>20</sup> Մովսես Խորենացի, Բ, ԺԲ—ԺԴ:

<sup>21</sup> Հը. Աճառյանի «Արմատական բառարան»-ում (Հատ. 4, էջ 285) կարդում հնք.—ԾԱՏ—«քաղաք», արմատ առանձին անգործածական, որ գունդում է քազմաթիվ տեղանունների ծայրին. ինչպես՝ Արտաշատ, Երուանդաշատ, Զարիշատ, Վասակաշատ, Վարդանաւշատ և այլն:

Երվանդյանների դիմաստիան, որի ձեռքին էր գտնվում իշխանությունը Հայաստանում Կյուրոս Մեծի ժամանակից, (Ա. թ. ա. 6-րդ դար)<sup>22</sup> մինչև մ. թ. ա. 3-րդ դարի վերջը կամ 2-րդ դարի սկիզբը, տապալվեց Արտաշեսի (հուն.՝ Ἀρταξίας) կողմից, որի մասին վկայում են Ստրաբոն ու Խորենացին<sup>23</sup>: Իշխանությունը Մեծ Հայքում անցնում է Արտաշեայաններին: Այդ կարևորագույն ժամանակաշրջան է հայ ժողովրդի պատմության մեջ: Հենց այդ ժամանակ էր, որ Մագնեսիայի մոտ Անտիոքու Յ-րդի կրած պարտությունից հետո (190 թ.) դիմաստիայի հիմնադիր Արտաշես 1-ինը, որը Ստրաբոնի վկայությամբ, մինչ այդ հանդիսանում էր Սելևկյանների ստրատեգությանը Մեծ Հայքում<sup>24</sup>, իրեն հայտարարեց Սելևկյաններից անկախ կառավարիչ: Ինչպես հաղորդում է դարձալ Ստրաբոնը, Արտաշես 1-ինի օրինակին հետևեց նաև Զարեհը (հուն. Հարιձոր:), Սելևկյանների ստրատեգությանը Հայաստանի մի այլ մասում՝ Ծոփքուն (Ծագուն): Քաղաքական անկախության ձեռք բերումից հետո սկսվում է պետական այս երկու միավորությունից բոլոն վերելքի շրջանը: Առանձնապես ուժողանում է Մեծ Հայքի թագավորությունը, որն սկսում է լուրջ դեր խաղալ Փոքր Ասիայի պետությունների միջազգային հարաբերությունների հարցերում<sup>25</sup>:

Մեծ Հայքի առաջին թագավորին հաջողվեց միավորել հայկական ցեղերով քնակեցված շրջանները, բացի Ծոփքից, որն իր անկախությունը պահպանեց մինչև Տիգրան 2-րդի կողմից նվաճվելը, և Փոքր Հայքից, որը չհաջողվեց Հայաստանին միացնել ո՞չ Արտաշեայաններին, ո՞չ էլ Արշակունի-

<sup>22</sup> Հմմտ. *Xenoph.*, Anabas., III, 5, 17.

<sup>23</sup> Strabo, XI, 14, 15 (C. 531): Մովսես Խորենացի, Բ, Էջ—ԿԲ:

<sup>24</sup> Հին Հայության տրամադրությունը տերմինի մասին տե՛ս Գ. Ա. Տիգրայան, Մովսես Խորենացու «Հայոց Պատմության» և Ստրաբոնի «Աշխարհագրության» մի քանի տվյալներ Հայաստանի ն. մ. թ. 3—2-րդ դարերի պատմության մասին: Բանքեր Մատենադարանի, Ա, 1962, երևան, էջ 21—23:

<sup>25</sup> Հմմտ. *Polyb.*, XXVI, 6.

ներին: Պատմական այս կարևոր իրադարձությունների մասին աղբյուրներում պահպանվել են ոչ թիվ վկայություններ: «Պատմում են թե,—գրում է Ստրաբոնը,—Հայաստանը հայաստան կորքը, անց Արտաշեսի և Զարեհի ձեռքով, որոնք հայաստան Անտիոքու Մեծի ստրատեգներն էին, իսկ հետագայում, նրա պարտությունից հետո, թագավորեցին այս Ծոփքի, Ակիսենտիսի և Օդրոմանտիսի<sup>26</sup> և մի քանի այլ գալակատների վրա, ուս էլ՝ Արտաշատի շրջակալքում: Երկուսն էլ անցին շրջակա ազգերից հողեր գրավելով. Մարերից՝ Կասպիանեն, Փալմիրիսը և Բասորոպեդան, Խրենենից՝ Պարիադրեն լեռան ստորոտները և Խորզեննեն և Գուգարքը, որ ընկած է Կորի մյուս կողմը, Խալիբներից և Մոսինոկներից՝ Կարենիտիսը և Դերբանեն, որոնք Փոքր Հայքի սահմանակից են, կամ էլ նրա մասն են կազմում, Կատանեներից՝ Ալիլիսնեն և Անտիոքալրուսի շրջանը, Ասորիներից՝ Տարոնիտիսը<sup>27</sup>, այնպես, որ հիմա բոլորը միալեզու դարձան»<sup>28</sup>: Ստրաբոնի այս վկայությունը պարզ կերպով ցուց է տալիս, որ դեռևս հայուրդ դարերում սկսած հայկական տարրերի

<sup>26</sup> Հ. Աստուրյանը գտնում է, որ *Acisene=Հանձիթ* (Հ. Աստուրյան, Քաղաքական վերաբերություններ ընդմեջ Հայաստանի և Հոգդամ, Վենեսելի, 1912, էջ 19): Ակազ. Հ. Անայանը առաջարկում է՝ ‘Անտրոնց, ուղղել ‘Անթոնյոց իսկ Ոնքրանտէս ուղղել ‘Օքրաննէտէս, վկայակոչելով տշխարժագիր Պաղստես կրավզիոսին, որը Հայաստանի գավառներից մեկը կոչում է ‘Օքրաննէս (տե՛ս Օտար աղբյուրներ հայերի ժամանակն, Ստրաբոն, բաղեց և թարգմանեց Հ. Անայան, Երևան, 1940, էջ 57):

<sup>27</sup> Ն. Ազնացը իրավացի կերպով մերժում է այդ ընթերցվածքը՝ պահպանի նկարագրությունից երևում է, որ այս 20թանը հայերի ձեռքին էր արգելն հույների նահանջի ժամանակ 400 թ.: Ավելի ձիշտ է կարգալ Տաքարէտէս=Տմորիքք (Խ. Ածոնց, Արմենիա և առաջնային, ԱՊԾ, 1908, էջ 395, ժանոթ, 2): Նույն կարծիքին է նաև Հ. Աստուրյանը (տե՛ս Հ. Աստուրյան, նշան՝ աշխարհագրությունը և աշխարհագումը (տե՛ս Ա. Տ. Տիգրայան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», Երևան, 1963, էջ 53)).

<sup>28</sup> Strabo, XI, 14, 5 (C. 528):

համախմբման և հայ ժողովրդի կազմակիրման պրոցեսը Արտաշես 1-ինի ժամանակ թևակլիմել էր իր եռուն շրջանը:

Չափազանց կարևոր է Ստրաբոն «միավեզու դարձան» արտահայտությունը: Այն բացատրելու համար նորից դիմենք Ստրաբոնին: Խոսելով Հայաստանին հարևան Աղվանքում ապրող 26 ցեղերի մասին, որոնցից ամեն մեկն ուներ իր լեզուն, նա չի օգտագործում «ցեղ» կամ «ժողովուրդ», և կամ «թագավորություն» հշանակող որևէ բառ, այլ ուղղակի գրում է: «...նախապես ամեն մի լեզուն ուներ իր թագավորը, իսկ լեզուները քանակեցն էին»<sup>28</sup>: Կասկածից վեր է, որ այս դեպքում Ստրաբոնի մոտ «լեզու» (γλώσσα) տերմինը հոմանիշ է էթնիկական միավորի հասկացողության:

Նկատենք, որ նույնպիսի առողջությունը է օգտագործում նաև «խօսք» բառը Մովսես Խորենացին իր մատյանի հետևյալ հատվածներում:

«Քանզի այս Բագարատ նախաձեռն ընծայ ըստ կամաց մատոյց զինքն Վաղարշակայ յառաջ բան զպատերազմունն Արշակաց ընդ Մակեդոնացիսն, և սա ի դրան արքունի: Խոչ ի ծարս հայերէն խօսից կողմնակալ, իշխան բիրոց և հագարաց յարևմտից կուաէ»<sup>28</sup>: «Եթ յարևելից կողմանէ, զեզերը հայկական խօսից, կողմնակալս բիրաւորս զերկուս ի ցեղից տանց նահապետութեանց, զՄիսակեանսդ և որ ի Կադմեայ տանէն...»<sup>28</sup>:

Աղյանքի ցեղերին վերաբերող Ստրաբոնի վերոհիշյալ հաղորդման, ինչպես նաև Խորենացու վկայությունների ուշադիր քննարկումից հետո դժվար չէ եղարկացնել, թե «միավեզու դարձան» ասելով նույն աշխարհագետը հասկանում է այն, որ բոլորը արդեն դարձան մի ժողովուրդ: Հետևաբար կարելի է վստահ ասել, որ հայ ժողովրդի կազմակիրման երկարամաւ պրոցեսն արդեն իր ավարտին էր հասել Արտաշեսի և Զարենի թագավորության ժամանակ:

<sup>28</sup> *Strabo, XI, 4, 6* (C. 503): *84* *u K. B. Тревер, Очерки по истории и культуры Кавказской Албании, М.-Л., 1959, էջ 59.*

<sup>28</sup> *Г. Г. Խորենացի, Բ, Գ.*

<sup>28</sup> *Г. Г. Խորենացի, Բ, Հ:*

Անմիտաժեց ենք համարում նշել նաև, որ Մեծ Հայքի և Ծոփքի սահմանների ընդարձակման ընթացքը նկարագրելիս՝ Ստրաբոնը ոչ միայն չի տարածատում հայկական ցեղերով բնակչությամբ մարզերի միավորման ուղղությամբ Արտաշեսի և Զարենի ունեցած հաջողությունները, այլ ընդհակառակը, որանք դիտում է որպես մի միասնական պատմական երեւույթ: Նկատի ունենալով այս կարևոր հանգամանքը, մենք հակած ենք ենթադրելու, որ Մեծ Հայքի թագավոր Արտաշեսի և Ծոփքի թագավոր Զարենի հարաբերությունները եղել են դաշնակցային և նրանք գործել են վոխադարձ համաձայնությամբ՝ հավանաբար մինչև վերջինիս մահը (շորշ 163 թ.), որից հետո Արտաշեսը փորձում է իր արդեն ընդարձակված թագավորությանը միացնել նաև Ծոփաց երկիրը:

Ա. Ի. Բոլտունովայի կարծիքով, չի կարելի հայկական նողերի միավորումը վերագրել միայն Արտաշեսին: «Զի կարելի վստան լինել,—գրում է նա,—որ Ստրաբոնի թվարկած բոլոր մարզերը... միավորված լինեն Արտաշիսի և Զարիադրիսի օրոք: Ըստ երևույթին, այդ մարզերի մի մասի միացումը պետք է վերագրել նրանց հետնորդներին»<sup>29</sup>: Դժվար է, սակայն, համաձայնվել հեղինակի հետ, քանի որ աղբյուրներում այդ մասին ոչ մի ակնարկ չկա: Ընդհակառակը, Ստրաբոնի պատմած հաստատվում է հայկական ալյանտության տվյալներով, որոնք պահպանվել են Խորենացու մոտ: Պատմահայրը Արտաշեսին ներկայացնում է որպես մած աշխարհակալ: Դրանից բացի, միայն Արտաշեսի ժամանակ միջազգային քաղաքական իրադրությունը Մերձավոր Արևելքում եղել է հատկապես բարենպատ հայկական հողերի միավորման համար:

Հայկական հողերի միավորումը մի տիրակալի իշխանության տակ այդ ժամանակաշրջանում նպաստում էր տնտե-

<sup>29</sup> *А. И. Болтунова, Греческие надписи Армавира, Արմֆանի տպեկագիր, 1942, № 1-2, էջ 49:*

շական և մշակութային կապերի ամրապնդմանը երկիր ձեր-  
սում և առևտրական հարաբերությունների հետագա զարգաց-  
մանը հարեան երկրների հետ: Այս էլ, իր հերթին, խօսնում  
էր հայկական լեռնաշխարհում մի շարք նոր քաղաքների ա-  
ռաջանալու: Այդ քաղաքներից ամենակարևորը Արտաշատն  
էր, Արաքսի ձախ ափին, Ալրարատյան դաշտուն, քաղաք,  
որը շրջ չորս դար պահպանեց իր շքեղությունը և կարե-  
վորությունը որպես քաղաքական և տնտեսական կենտրոն ոչ  
միայն Արտաշեայանների թագավորության, այլև Արշակուն-  
յաց Հայաստանի: Դժբախտաբար մեր տրամադրության տակ  
դեռ չկան հնագիտական հյութեր Արտաշատի հիմնադրման  
և հետագա զարգացման վերաբերյալ: Այս խոշոր կենտրոնի  
առաջացման մասին մեր ուսեցած բոլոր տեղեկությունները  
հունա-հումետական և հայկական մատենագրական տվյալ-  
ներն են, որոնք, դժբախտաբար, զերծ չեն առասպեկտային-  
թյունից:

Արտաշատի կառուցման մասին առաջին տեղեկությունները տալիս է Ստրաբոնը: «Հայաստանի քաղաքներն են, — գրում է նա, — Արտաշատը (որ կոչվում է նաև Արտարիացատ, որն հիմնել է Հանճիքալը թագավորի Արտաշեսի — Ս. Կ.) համար) և Արքատ, երկուսն էլ Արարի վրա, Արքատը Ասորպատենեի սահմանների մոտ, իսկ Արտաշատը՝ Արարի դաշտի մոտ, լավ համարնակեցված<sup>29</sup> (ժամանակակիցած՝ շ. ա. 2), որը և երկրի մայրաքաղաքն է: Այն շնորհած է գետաթերթի կազմած թերակղու վրա, որա պարիսպը շորջանակի պատում է գետը՝ բացի պարանոցից, իսկ պարանոցը փակված է փոսով և պատճեշով»<sup>30</sup>: Հանճարյան ույսը կարդում ենք Պյոտարքոսի մոտ. «Պատմում են թե, — գրում է Պյոտարքոսը, — կարթագենացի Հանճիքալը հոռմանեցիներից Անտիոքոսի կրած պարտությունից հետո զեաց հաջ Արտա-

<sup>29m</sup> Այս բառի նշանակության մտածին տե՛ս սույն աշխատության վեցին դրույթը:

<sup>30</sup> Strabo, XI, 14, 6 (529):

շնիս և նու և հրահանգիչ ու խորհրդատու դարձավ նրան օգտագետ ձեռնարկելերում: Բացի այդ, նկատեղով երկրում չօգտագործված և անտեսված հարմարագույն և խիստ հաճելի մի լայր, նա այդ տեղում որվագծեց քաղաքի հաստակագիծ: Հանճերավը տարավ պիտուղ Արտաշեսին և ցույց տալով հաստակագիծը, համոզեց նրան այդ վայրում քաղաք հիմնել: Թագավորը սիրով համաձայնեց և խնդրեց, որ նա իր վրա մերժեի այդ գործի ղեկավարությունը: Այսպիսով կառուցվեց մեծ ու շատ գեղեցիկ քաղաք, որն անվանվեց թագավորի անունով և հոչակեց Հայաստանի մայրաքաղաք»<sup>31</sup>:

Արտաշատի հիմնադրման վերաբերյալ Ստրաբոնի և Պլուտարքոսի հաղորդումներին կարևոր լրացում է Մովսես Խորենացու ցուցմունքն այն մասին, որ «եթենապ Արտաշիսի ի տեղին, որ խառնին Երասխ և Մեծամօր, և Բամեալ ընդ բնութիւն, շինէ քաղաք յիր անոնք անուանեալ Արտաշատ»<sup>32</sup>: Պատմահայրը ոչինչ չգիտի կարթագենցի զորավարի մասնակցության մասին Արտաշեպանների մայրաքաղաքի հիմնադրման և կառուցման զործում: Աշխատանքներիվ նույն տվյալները լրացնում են Ստրաբոնի հաղորդումը և ունեն կարևոր նշանակություն քաղաքի տեղադրումը ճիշտ որոշելու համար: Այս տվյալների հիման վրա ակադ. Հ. Հ. Մանանյանը հիմնադրման մասին պատմում է Խոր-Վիրապի վանքի շրջակաբառում<sup>33</sup>, ժամանակավոր Արտաշատից ոչ հեռու, որտեղ, ինչպես վկայում է Ազգաթանգեղողը, Գրիգոր Լուսավորիչը բանտարկվել էր Տրդատ թագավորի հրամանով<sup>34</sup>:

Զնամած Արտաշատի կառուցմանը Հանճիբալի մասնակցության մասին Ստորագրությունը և Պլոտաքրության հաղորդումների լեգենդարին բնույթին, դրանք մեզ համար ունեն խոչոր նշանակություն, քանի որ վկասում են, թե քաղաքը կառուցմած

<sup>31</sup> *Plut.*, Lucul., XXXI.

22 Undeux banchangs,  $\beta$ , hisp.

<sup>22</sup> Я. А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1954, стр. 52.

34 Ազարանիզենու, դր. 20:

Հր որոշակի նախագծով<sup>34</sup>։ Եվ այդ լիովին համանական է, եթե այդ վկայությունները համեմատենք Մովսես Խորնացու մի այլ ցուցմունքի հետ։ Պատմահայրը, Ակարագրելով Ծամիրամի կողմից Վաճ քաղաքի կառուցումը, ի միջի այլոց նշում է, որ «շինէ և ընտիր ընտիր և քազում ի մէջ քաղաքին ապարան ի պէս պէս քարանց և ի գունից զարդարեալս, կրկնալարկս և եռալարկս. և գեղեցիկ գունիք և ընդարձակ փողոցիք գլուխան քաղաքին որոշենով»<sup>35</sup>։

Գ. Խ. Սարգսյանը ենթադրում է, որ «Արտաշատի նախագծնան որպես տիպար կարող էր ծառայել հելլենիստական քաղաքները, որոնք ևս ունեին միասնական նախագիծ, վաղոց արդեն անհետացել էին երկրի երեսից»<sup>36</sup>։ Այդ լրիվ նախանական է։ Չի կարելի սակայն չնշել, որ այդպիսի տիպար կարող էր ծառայել նաև Արմավիր քաղաքը, որքանով որ այն դեռևս գոյություն ուներ և մինչև Արտաշատի կառուցումը հավանաբար ծառայում էր որպես հենց իր՝ Արտաշեսի նըստավայրը։

Հ. Հ. Մանանդյանը Արտաշատի կառուցումը Այրարտառյան դաշտում համարում է «Արտաշես Ա-ի կարևորագույն գործերից մեկը։ Այս դաշտն այնուհետև դառնալ Հայաստանի քաղաքական ու կուլտուրական միավորում կենտրոնը»<sup>37</sup>։ Արտաշատը շոտով դառնում է միջազգային առևտիքի խոշոր կենտրոն և քարավանային ու ռազմական ուղիների հատուն կենտրոն։ Դրա լավագույն վկայությունն են tablula Peutingeriana անոնով հայտնի մ. թ. 4-րդ դարի հոգնական քարտեզի տվյալները։ Այս քարտեզում, ինչպես ցուց է տալիս Հ. Հ. Մանանդյանը, նշված են Հայաստանի միջով անցնող մինչ գլխավոր ճանապարհներ, որոնք հատվում էին Արտաշատում։ 1) Արտաշատ—Սատոալ, 2) Արտաշատ—Տիգրանակերտ,

<sup>34</sup> Գ. Խ. Սարգսյան, Տիգրանակերտ, Մ. 1960, էջ 42։

<sup>35</sup> Մովսես Խորենացի, Ա, ժ. 2։

<sup>36</sup> Գ. Խ. Սարգսյան, Տիգրանակերտ, Մ., 1960, էջ 42։

<sup>37</sup> Հ. Հ. Մանանդյան, Տիգրան երկրորդը և Հռոմը, Երևան, 1940, էջ 24։

3) Արտաշատ—Մերաստոպոլիս, 4) Արտաշատ—Հանադան և 5) Արտաշատ—Արմատիլիա<sup>38</sup>։

Արտաշատն անկանած, գեղեցիկ քաղաք էր և վաճառաշաբի։ Պլոտարքոսն այն անվանում է «Հայաստանի Կարթագենը»<sup>39</sup>։ Այս համեմատության մեջ, անպայման, Հռոմի բոլոր թշնամիների դեմ Պլոտարքոսի տաճած ատելությունը վերջին դերը չի խաղում։ Հովն բարոյախոսը, որպես հեղեղական մշակույթի արտահայտիչ<sup>40</sup>, խիստ բացառական վերաբերմունք ուներ նաև Լոկրոսի հակառակորդ Տիգրանի հանդես, որը դեռևս մ. թ. ա. 83-ին վերջին հարվածը հասցըրեց Սելևկյանների միապետությանը և մեծ թվով հովների բռնի գաղթեցրեց Հայաստան։ Բացի այդ, հետագայում ևս Արտաշատը մեկ անգամ չէ, որ անախորժություններ է պատճեռել հոգմայեցիներին։ Հայանական է, որ դրա համար Պլոտարքոսը հիշատակում է Հաննիբալի և Կարթագենի մասին։

Հաննիբալի Հայաստան գալու և նոր մայրաքաղաքի կառուցմանը մասնակցելու մասին վերտիշյալ վկայությունները արդեն վաղոց ի վեր նշված են որպես ոչ պատմական<sup>41</sup>, քանի որ քաղաքը կառուցվել էր 176—169 թթ., իսկ կարթագենացի գործավարը դեռևս շատ առաջ, 183 թվին, Բիթանիայի թագավոր Պրոսիփասի պալատում հերենապահությամբ վերջ տվեց Արևելքի հելլենիստական միապետների արքունիքում վարած իր թափառական կյանքին։ Բոլոր ուսումնափրոդները անտիկ հետինակաների վերտիշյալ հաղորդումներում տեսակ են միայն վկայություն Արտաշատի հզորության ու գեղեցկության մասին, ինչպես նաև այն մասին, որ Արտաշեսյանների մայրաքաղաքը դարձել էր Մեծ Հայքի քաղաքական,

<sup>38</sup> Հ. Հ. Մանանդյան, Հայաստանի պլիավոր ճանապարհները ըստ Պլոտինեկերյան քարտեզի, Երևան, 1936, էջ 11։

<sup>39</sup> Plut., Lucull., XXXII.

<sup>40</sup> Հմմատ. Ի. Ա. Տրօնսկայ, История античной литературы, М.-Л., 1947, էջ 242—243։

<sup>41</sup> Հմմատ. Տ. Մոմուշեն, История Рима, т. V, М., 1949, 367, 1. Հ. Մանանդյան, Տիգրան երկրորդ..., էջ 22։

տատեսական և մշակութային կյանքի կարևորագույն կենտրոնը: Նրանք ուշադրություն չեն դարձել այդ հաղորդումների քաղաքական կողմի վրա: Համաձայն Պլոտարքոսի պատմության, Լուկովոսի լեզենները արշավանքի ժամանակ հրաժարվեցին առաջ շարժել դեպի Արտաշատ: Հոռմայեցի գորավարը ամեն կերպ աշխատեց համոզել նրանց շարունակելու արշավանքը, «մինչև որ վերցնելով Հայաստանի Կարթագենը, չեն ոչնչացնի գործը ամենաշշամի մարդու, ակնարկելով Հանճիբալին»<sup>42</sup>:

Արտաշատի կառուցման գործում Հանճիբալի մասնակցության մասին գրուցը, ինչպես նաև քաղաքը «Հայաստանի Կարթագեն» անվանելը պիտի համարել ապացուց այն քանի, որ Արտաշատը կարևոր հենակետ էր Հոռմի Էքսավանիայի դեմ մնվող պայքարում և, հետևաբար, որպես «Հայաստանի Կարթագեն», ոչ թե կանոնի պետք է կործանվեր: Եվ այդ քանը ամենաանխիճ կերպով Լուկովոսից շուրջ 120 տարի հետո իրագործեց հոռմեական գորավար Դոմիտիոս Կորրուլոնը՝ մ. թ. 58—59-ին: Տակիսոսը վկացում է, որ «Արտաշատան հրդեմնվեց, քար ու քանդ արվեց և հավասարեցվեց բոլին»<sup>43</sup>: Սակայն, վերջին հաշվով, հոռմայեցիներին չհաջողվեց Արտաշատը վերացնել երկրի երեսից, ինչպես մի ժամանակ Կարթագենը, քանի որ Հոռանդեայի մոտ հոռմայեցիների դեմ հայ-պարթևական միացյալ ուժերի տարած փալուն հաղթանակից հետո, հոռմեական լեզենները ստիպված եղան ամոլավը կերպով լծի տակով անցնել (մ. թ. 62-ին)<sup>44</sup>:

<sup>42</sup> «Καίτοι πολλὰ προσελιπάρει Λούκουλλος ἀξιῶν αὐτούς ρυχροθυμίαν ἐμβάλλεσθαι ταῖς φυγαῖς, ἄχρι οὐ τὴν ἐν Ἀρμενίοις Καργγέδνα χαθόντες ἀνδρὸς ἐγκίστου, τὸν Ἀγνίβαν λέγων, ἔργον ἀνατρέψωσιν» (*Plut.*, *Lucul.*, XXXII).

<sup>43</sup> «Artaxatis ignis inmissus, deletaque et solo aequata sunt» (*Tacitus*, *Annales*, XIII, 41).

<sup>44</sup> Հայ-պարթևական զորքերի Հոռմի զեմ մզած այս պատերազմի մասին մանրամասն զրել է Կ. Վ. Տրեվեր, *Очерки...*, էջ 212—219:

Հայաստանի դեմ Հոռմի բազմամյա էքսպանսիոն քաղաքականության ձախողություն հետո մ. թ. 50—60-ական թվականներին, Ներոն կայսրը (54—68 թթ.) փորձեց փրկել կայսության հեղինակությունը Արևելքում: Նա համաձայնվեց այն քանին, որ պարթևական թագավոր Վաղարշի նորայր Արշակունի Տրդատը թագավորելով Հայաստանում, պայմանով, որ «կայսեր արձանի մոտ դնի թագավորական նշանը և այն ես վերցնի միայն Ներոնի ձեռքից»<sup>45</sup>: Այս պայմանները կատարելու համար Տրդատը պետք է ուղևորվեր Հոռմ: Նրա ուղևորությունը իր կեռջ և որդիների, շքախմբի և հեծյալների երեք հազարանոց գնդի հետ, և նրան ցուց տրված շքեղ ընդունելությունը մանրամասն նկարագրել են հոռմայեցի հեղինակները<sup>46</sup>: «Այս ամենը ցուց է տալիս,—գրում է Ն. Ադոնցը,—թե ինչքան էին բարձր գնահատում հոռմայեցիները իրենց ինքնասիրությունը շոյող արտաքին ձևը, որով պարուրված էր նրանց Հայաստանում կրած պարտությունը»<sup>47</sup>: Դին Կասփորը հաղորդում է, որ Ներոնը Տրդատին պարգևեց «բազմաթիվ նվերներ» 50 միլիոն դինար ընդհանուր արժողությամբ և, բացի այդ, նորապատկ թագավորը «Արտաշատը վերաշինելու թույլտվություն ստացավ»<sup>48</sup>: Դրա հետ միասին կայսրը հայոց թագավորի տրամադրության տակ դրեց մեծ թվով կառուցդ վարպետներ:

Հայ Էոթիան, այդ հարուստ նվերները ասես հանդիսանում էին յորատեսակ կոնսորիության, որը վճարում էին հոռմայեցիները հայոց թագավորին<sup>49</sup>: Ինչպես այս միջոց-

<sup>45</sup> *Tacit.*, *Annaal.*, XV, 28.

<sup>46</sup> *Հմատ.* *Cass. Dio*, LXIII, 6.

<sup>47</sup> *H. Адонц*, Армения в эпоху Юстиниана, էջ 430—431:

<sup>48</sup> «...δῶρα τε παντοδαπά πεντακισχιλίων ρυριδῶν ἀξια, ὡς φασιν, ἔλαζε, καὶ Ἀρτάξατα ἀνοικοδομῆσαι ἐπετράπη» (*Cass. Dio*, LXIII, 6).

<sup>49</sup> Այս կապակցությամբ Կ. Վ. Տրեվերը հետաքրքիր հարց է տալիս, «Արդյո՞ք այդ նվերները այն նպաստը չեր, որ Հոռմը վճարում էր Հայաստանին հյուսիսային սահմանների ամրացման համար, մինչև 217 թ.» (Կ. Վ. Տրեվեր, *Очерки...*, էջ 199, ծան. 8):

ները, այնպէս էլ շինարար վարպետները ծառայելու հիմ կորրուպնի կողմից ավերված հայկական քաղաքների վերականգնանանը: Սակայն չի կարելի գերազանահատել այդ վարպետների դերը, ինչպէս այդ անում է ակադ. Հ. Հ. Մանանդյանը, ասելով, որ «Արտաշատը... նորից կառուցվեց իտալական վարպետների և բանվորների ձեռքով, Ներոնի կողմից բաց թողնված միջոցներով (66 թ.) և վերանվանվեց Ներոնիա»<sup>50</sup>: Չէ՞ որ նախապէս ոչ միայն Արտաշատը, այլև Հայաստանի մի շարք որիշ քաղաքներ ևս կառուցված էին տեղական վարպետների ձեռքով, որոնք նոշակված էին շինարարական գործում ունեցած իրենց ընդունակություններով: Դեռևս Ստրաբոնը նշում էր, որ «Գորդիացիները (Տիգրան 2-րդին ենթակա Կորդոբի բնակիչները.—Ս. Կ.) համարվում էին աչքի ընկնող ճարտարապետներ և պաշտպանական գործերի մեջ փորձառու: Դրա համար էլ Տիգրանն օգտագործում էր նրանց նման գործերում»<sup>51</sup>:

Արտաշատի առաջացման և հետագա երկարատև զարգացման պատճառը Հ. Հ. Մանանդյանը տեսնում է քացանապէս այն բանում, որ «մայրաքաղաք Արտաշատը... ընկած էր միջազգային առևտրական շարժման ճանապարհին»<sup>52</sup>: Հ. Հ. Մանանդյանը հավատարիմ իր ընդհանոր կոնցեպցիային, գտնում է, թե Հայաստանի քաղաքների կյանքը կախված էր միայն ու միայն միջազգային տարանցիկ առևտրին նրանց ունեցած մասնակցության աստիճանից: Դրա կարծիքով, հիմ հայկական քաղաքները եղել են զուտ առևտրական կենտրոններ, և նրանց ծաղկումը հանդիսացել է Հայաստանի միջով անցնող քարավանային ուղիների վրայով կատարվող առևտրի աշխատացման հետևանքը: Մեր նպատակը բնակ էլ չէ նենամացնել մեծ հայագետի ներդրումը հիմ Հայաստանի քաղաքների առաջացման պատմությունն ուսումնասիրելու գործում: Սակայն անհրաժեշտ ենք համարում

<sup>50</sup> Յ. Ա. Մանանդյան, Օ տօրցու և քաղաքացիությունը, էջ 117:

<sup>51</sup> Strabo, XVI, 1, 24 (C. 747).

<sup>52</sup> Յ. Ա. Մանանդյան, նշված աշխ., էջ 59:

մատնանշել, որ Հ. Հ. Մանանդյանը բավականաշահ ուշադրություն չի դարձրել հայկական հասարակության ընդհանուր սոցիալ-տնտեսական զարգացման վրա, երկրի համայնքաբան և երկրի ներսում արտադրողական ուժերի հետագա զարգացման հետևանքով հայ ժողովրդի կազմավորման հարցի վրա:

Դժբախտաբար, ցարդ հիմ Արտաշատի շրջանում հնագիտական պեղումներ չեն կատարվել: Խոկ այդպիսի պեղումներն, անկասկած, կտավին արժեքավոր նյութ, որն անհրաժեշտ է վերատեղադրության համար ինչպէս քաղաքի արտաքին տեսքի, այնպէս էլ նրա ներքին սոցիալ-տնտեսական կյանքի առավել լրիվ պատկերը: Այսուհետեւ, Արտաշատի մասին մեզ հասած մատենագրական վկացությունների համադրումով մեզ հնարավոր է թվում ընդհանոր գծերով տալ քաղաքի արտաքին պատկերը:

Վերևում մեջ բերվեց Ստրաբոնի վկացությունը, որում նա խոսում է Հայաստանի իրեն հայտնի քաղաքների մասին: Հատկանշական է, որ նա մակրամասն գրում է միայն Արտաշատի մասին: Դրա ասելով, Արտաշատ քաղաքը լավ էր կառուցված ու բնակեցված (օսաւուրքն աչկած): Երբ Պլոտարքով Արտաշատն անվանու է «Հայաստանի Կարթագեն», ապա նա Հայաստանի նկատմամբ հոումայեցիների թշնամական վերաբերություններն արդարացնելու ձգտման հետ միասին, պատշաճն է հաստոցում Հայաստանի մայրաքաղաքի գեղեցկության և հարատության: Կողմանկի ապացուցն այն բանի, որ Արտաշատը խոշոր քաղաք էր, զարգացած քաղաքային կյանքով, կարելի է տեսնել հոումեական երգիծաբան Յովենալի ստեղծագործությունների մեջ: Խարազանելով Հոռոմի քաղաքացիների բարքերի անկումը և նկարագրելով Հոռոմում հայ պատանի Զալալի արկածները, որն ընկել էր հոումեական այլասերված շրջանակներում, Յովենալը նշում է. «Այսպէս են նրանք Արտաշատու տանում մայրաքաղաքային բարքերը»<sup>53</sup>: Խոկ մայրաքաղաքի բարքերը կարելի էր տանել

<sup>53</sup> Յովենալ, 2-րդ Սատիրա, տող 170:

միայն խոշոր և հարուստ քաղաքները, ինչպիսին էր, անկանոն, Արտաշատը:

Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ Արտաշատը մի քանի դարերի ընթացքում<sup>54</sup> հանդիսացել է Ազգության Արտաշեականների, իսկ հետագայում հայ Արշակունիների մայրաքաղաքը, ապա չի կարելի կասկածել այն բանում, որ քաղաքն իրոք լավ էր կառուցված ու բնակեցված: Տեղանքը, ինչպես վկայում են մեր աղբյուրները, բնությունից ամրացված էր: Զնացած դրան, գետի առաջ, որը համարյա շրջապատում էր Արտաշատը, բարձրացվել էին քաղաքային պարիսպներ, որոնք ավելի ևս ուժեղացնում էին քաղաքի պաշտպանությունը:

Մայրաքաղաքի հենց կենտրոնում, հավանաբար այն ըլի վրա, որի մասին հիշատակում է Մովսես Խորենացին, պետք է որ բարձրանալիս լիներ արքունի պալատը: Ինչքանով որ այդ ժամանակի հելլենիստական քաղաքը չէր կարող առանց թատրոնի մնալ, բացառված չէ, որ Արտաշատը ևս ուներ իր թատրոնը, որի մասին անողջակի ցուցունք կա Պլոտարքոսի մոտ<sup>55</sup>: Քանի որ Արտաշատն ընկած էր «միջազգային առևտրական շարժման ուղու վրա և անմիջական առևտրական կապեր ուներ Մարտատանի այն խոշոր առևտրական կենտրոնների մետ, որ հիմնել էին Սելևկյանները»<sup>56</sup>, հավանական է, որ քաղաքում կառուցված էին քարվան-արայներ և առևտրական հրապարակներ: Տաճարների առկայությունը Արտաշատում կատարած չի հարուցում, քանի որ Մովսես Խորենացին հաղորդում է, որ Արտաշեաը «կանգնէ; ի նմա մեհեան, և փոխէ; ի Բագարանէ զպատկերն Արտեմիդայ և զամենայն կուս հայրենին. քայլ զԱպոդոնին պատկերն արտա-

<sup>54</sup> Մինչև հոռմայեցների կողմից մ.թ. 163-ին Հայաստանի կենտրոնը Կայու ունեւ -Վազգարշապատ փոխպրեկուր:

<sup>55</sup> *Plut.*, Crass., XXXIII. Այս վերջին հանդամանքը մանրամասն ուսումնասիրել է Գ. Գոյանը, հայկական թատրոնի 2000-ամյակին հրվիրքած իր աշխատության մեջ (Ղ. Գօյն, 2000 լեռ արմանակական թատրոն, թ. I, մ. 1952).

<sup>56</sup> Я. А. Манандян, О торговле и городах Армении..., стр. 52.

բոյ քաղաքին կանգնէ հուպ ի ճանապարհն»<sup>57</sup>: Արտաշեսի այս միջոցառումից հետո, անկախած, Արտաշատը դարձավ նաև Հայաստանի պաշտամունքային կենտրոններից մեկը: Մինչ այդ երկրի պաշտամունքային կենտրոնը Արմավիրն էր, որը սկզբու զիշելով իր վարչա-տնտեսական կենտրոնի դիրքերը, այժմ արդեն կորցնում էր իր նշանակությունը նաև որպես կրոնական կենտրոնի: Ահա յու ինչո՞ւ, մեր կարծիքով, նոյնիսկ Ստրաբոնը, որն անձամբ եղել է Հայաստանում<sup>58</sup>, ոչինչ չգիտի Արմավիրի մասին:

Արտաշատի վերելքը շարունակվում է մինչև հայ Արշակունիների վերջնական անկումը, մինչև 5-րդ դարը, երբ Հայաստանը գրկվում է իր քաղաքական անկախությունից: Արտաշատի ծաղկումն ու զարգացումը ուղղագծով չի ընթացել: Կորրուպոնի կողմից 58/59 թթ. հիմնահատակ եղած քաղաքը նորից կառուցվեց Ներոնի կողմից բաց թողնված միջոցներով: Արտաշատը նորից վթարվեց հոռմավեցիների կողմից 163 թ.: Արտաշատին ծանր հարված հասցրեց Սասեկան Շապուհ 2-րդը, որի մասին վկայում է Փալմառո Բուզանդը: Նկարագրելով Շապուհի կողմից 363—367 թթ. Հայաստանի քաղաքների անհնա ավերումը, ավերված քաղաքների թվում հիշում է հան Արտաշատը: Զնայած այդ ավերմանը, Բյուզանդիայի և Սասեկան Պարսկաստանի միջև Հայաստանի բաժանման ժամանակ (387 թ.) Արտաշատը նշվում է որպես Արևելքի և Արևմտքի միջև կատարվող առևտորի փոխանակման երեք կետերից (Մծբին, Կալլինիկոս, Արտաշատ) մեկը<sup>59</sup>: Սա չի՝ վկայում արդյոք այն մասին, որ այդ ժամանակ ևս Արտաշատը պահպանում էր իր նշանակությունը որպես տարանցիկ առևտորի կենտրոն: Արտաշատի անկումը միայն սասեկան քագավորի ավերիչ արշավանքների արդյունքը չեղած: Նրա անկումն արագացրեց

57 Առկան Խորենացի, թ. հը:

<sup>58</sup> *Idem. Strabo, II, 5, 11 (C. 117).*

<sup>59</sup> Я. А. Манандян, նշանակ աշխ., էջ 108.

նաև երկրի քաղաքական կենտրոնի փոխադրումը նաև Վա-  
ղարշապատ, ապա Դվին:<sup>60</sup>

Մինչև այստեղ մենք շարադրեցինք քաղաքաշինու-  
թյան լնդիանուր պրոցեսը Մեծ Հայքում նախքան Տիգր-  
ան 2-րդի գահակալությունը: Տիգրան 2-րդի և հայ Արշա-  
կունիների ժամանակի քաղաքաշինության հարցին անցնելուց  
առաջ, երբ հայկական բոլոր հողերը, բացի Փոքր Հայքից<sup>61</sup>,  
միացվել էին մի միանալիան պետության մեջ, մեզ համար  
անհրաժեշտ է, հնարավորության սահմաններում, հետևել  
նոյնպես քաղաքաշինության միաժամանակյա պրոցեսին  
Հայաստանի մոտ մարզերում ևս, հատկապես Փոքր Հայ-  
քում և Ծոփքում:

Փոքր Հայքը Եփրատ գետով բաժանված էր Մեծ Հայքից  
և հնագույն ժամանակներից բնակեցված հայկական ցեղերով:  
Ծոփքում Զարեհի և Արաքսի հովտում՝ Արտաշատի թագա-  
վորությունների առաջացումից դեռ վաղ, Փոքր Հայքը Արե-  
մենական տերության վիտասկների վրա ձեռք էր բերել իր  
քաղաքական անկախությունը:

Այդ շրջանի Փոքր Հայքի քաղաքների մասին սկզբան-  
բյուրները ոչինչ չեն հաղորդում: Այդ երկրի քաղաքական  
պատմությունը ևս վաս է լուսաբնված: Հպատակ է, որ Ար-  
տաշեա 1-ինի ժամանակ (189- 160 թթ.): Փոքր Հայքում տի-  
րում էր Միհրդատը, որը Պոլիբոսի մոտ անվանված է  
ոչոքը: Եղի; 'Արքունիք' (Հայաստանի սատրապ): Այս-  
տեղ ենթադրվում է Փոքր Հայքը, քանի որ հետագա շարա-

<sup>60</sup> Դվինի վերելքն արդեն վերաբերվում է Հայաստանի ֆեոդալական  
շրջանին և այստեղ չի բննարկվում:

<sup>61</sup> Փոքր Հայքը երբեք շմիացվեց Մեծ Հայքին, քանի որ դեռ մինչև Տիգ-  
րան 2-րդը Միհրդատ Պոնտացին այն միացրեց իր թագավորությանը, իսկ  
նրա պարտությունից հետո այդ երկիրը անցավ Հռոմի տիրապետության  
տակ:

դրամնի ընթացքում հիշատակվում է 'Արտէ:ա; օ տի; ուեւ-  
ուց: 'Ազւունիչ չըշօվ'<sup>62</sup>: Վերոհիշյալ Միհրդատը եղել  
էր Պոնտոսի Փատնակ թագավորի (190—169 թթ.) դաշնա-  
կիցը: Այն հանգանանքը, որ Պոլիբոսի վերաբերյալ վկայու-  
թյան մեջ Միհրդատը հիշվում է որպես սատրապ, բոլով է  
տախի ենթադրություն անելու, որ նա եղել է սեղնկաններին  
նպատակ սատրապ, քանի որ տվյալ ժամանակ սատրապու-  
թյունների էր բաժանված միայն նրանց տերությունը: Նրա  
նպատակությունը սեղնկաններից իրեն սատրապի կրում էր  
համարյա անվանական բնույթ, որքանով որ Փոքր Հայքի  
կառավարողները հանդիսանում էին տեղական դինաստինք:  
Այսպիսի եգրակացությունը անմիջականորեն բխում է  
Ստրաբոնի հետևյալ հաղորդումից: «Փոքր Հայքը բավական  
բարեկեր երկիր է: Ծոփքի հման այստեղ էլ իշխել են բնիկ  
դինաստիները, որոնք մոտ հայերի մերժ բարեկամ էին, մերժ  
նրանցից անկախ: Նրանց տիրության տակ էին նաև տիբա-  
րենները և խաղացները, այնպես որ նրանց իշխանությունը  
տարածվում էր մինչև Տրափիզոն»<sup>63</sup>:

Փոքր Հայքի սատրապ-դինաստի նատավարի մասին  
աղյուրները ոչ մի տեղեկություն չեն տալիս: Պլուտարքոսն,  
օրինակ, Ակարագրելով Լոկլուսի արշավանքը Հայաստան,  
խոսում է Փոքր Հայքի բերդերի և քաղաքների մասին, սա-  
կայն, դժբախտաբար, դրանցից ոչ մեկի անունը չի տալիս<sup>64</sup>:  
Աղյուրներից մեզ հայտնի են Փոքր Հայքի միայն երկու քա-  
ղաքների անունները—Մելիտենև և Նիկոպոլիս: Առաջինը  
երեք անգամ հիշատակված է Ստրաբոնի մոտ<sup>65</sup> Կապպա-  
դովկիայի կապակցությամբ, այնպես որ մեր պատկերացումը  
այդ ժամանակվա Մելիտենեի մասին ավելի քան աղոտ է:  
Ինչ վերաբերում է Նիկոպոլիսին, ապա նրա մասին հիշա-

<sup>62</sup> Polyb., XXVI, 6, 1—12.

<sup>63</sup> Strabo, XII, 3, 28 (C. 555).

<sup>64</sup> «Եվ նա...գրավեց Փոքր Հայքը և տիրեց բերդերին ու քաղաք-  
ներին (Plut., Lucul., XIX, 2).

<sup>65</sup> Strabo, XI, 12, 2 (C. 521); XI, 14, 2 (C. 527); XII, 2, 1 (C. 535)

տակում են Ստրաբոնը, Ապահանոսը և Դիոն Կաստոսը: Այս քաղաքը, որը հիմնված էր Գնեռու Պոմպեոսի կողմից ի նշանավորումն Միհրդատ Եվպատորի դեմ տարած հաղթանակի, գտնվում էր Լիկոս գետի (Գալլ-գետ) ափին: Այստեղ, այժմյան Պյուրիկի մոտ, անցրած դարի 40-ական թվականներին հայտնաբերվել են արձանագրություններ, որոնց վրա կարդացվում է Նիքոպոլիս անունը<sup>66</sup>: Ստրաբոնի վկայությամբ, Միհրդատը «գրավելով Անգոլիստեն ջրառատ լեռը Դաստեյրայի մոտ (արան մոտիկ է Ենիրատը, որ բաժանում է Ակիլիստենն Փոքր Հայքից), որոշ ժամանակ մնաց այստեղ, մինչև որ պաշարվելով ատիպվեց փախչել լեռների վրայով Կոլխիդա և այստեղից՝ Բուպոր: Իսկ Պոմպեոսը նույն վայրի մոտ՝ Փոքր Հայքում հիմնեց Նիկոպոլիս քաղաքը, որը հիմա էլ գոյություն ունի և լավ է բնակեցված»<sup>67</sup>: Ապահանոսի մոտ կարդում ենք, որ «Պոմպեոսը ...այն վայրում, որտեղ հայլենց Միհրդատին, հիմնեց քաղաք, որն ի նշանավորումն իր հաղթության կոչվեց Նիկոպոլիս: Քաղաքն այդ գտնվում է այսպէս կոչված Փոքր Հայքում»<sup>68</sup>: Դիոն Կաստոսը նույնական հավաստում է, որ Պոմպեոսը «հիմնեց քաղաք նույն այդ վայրում, որտեղ հաղթանակ տարավ և այն տվեց իր վիրավոր ու տարիքավոր զինվորներին: Վերջիններին հետ այստեղ բնակվեցին նաև շատ փափառողներ հարևան տեղերից: Նրանք մինչև այժմ էլ կան և կոչվում են նիկոպոլիսեցիներ»<sup>69</sup>: Նիկոպոլիսը, ինչպես վկայում է Պրոկոպիոսը, դեռևս գոյություն ուներ Հուատինիանոսի ժամանակ և շրջափակված էր պարիսպով, իսկ Հուատինիանոս կայսրը վերանորոգեց այդ պարիսպները, որ տուժել էին ժամանակից և փլչելու մոտ էին: Հաս Երևույթին, իր գոյության հենց սկզբից Նիկոպոլիսը բարեկարգ էր, քանի որ Ստրաբոնը այն բնութագրում է որպես «լավ բնակեցված» (οἰκεῖται καλῶς): Դիոն

<sup>66</sup> J. Taylor, Journal of a tour in Armenia, JRGS, 1868, № 38.

<sup>67</sup> Strabo, XII, 3, 28 (C. 555).

<sup>68</sup> Appian., Mithr., 105.

<sup>69</sup> Cass. Dio, XXXVI, 50.

Կաստոսի վկայությունն այն մասին, թե Պոմպեոսի վետերանների հետ «այստեղ բնակվեցին նաև շատ ցանկացողներ հարևան տեղերից», միայն ուժեղացնում է այդ ենթադրությունը: Նիկոպոլիսի համեմատաբար արագ աճը պայմանավորված էր նրանով, որ քաղաքը գտնվում էր Սեբաստիա-Սատաղ ուղղակի ճանապարհի վրա:

Այն քանից հետո, եթե Սրտաշեն 1-ինը, միավորելով Այրարատյան դաշտավայրին հարևան մարզերը, դարձավ Հայաստանի մեծագույն մասի տիրակալը, փորձեց իր ռագավորությանը միացնել նաև Փոքր Հայքն ու Ծոփքը, դրանով իսկ ավարտելով հայկական ցեղերով բնակեցված բոլոր մարզերի միավորումը: Սական նրա այս մտադրությունը անհաջողության մատնվեց, որովհետև Պոնտոսի թագավոր Փաննակը խանգարեց նրան, օգնելով Փոքր Հայքի սատրապ Միհրդատին<sup>70</sup>, մինչդեռ Կապանդովիշայի թագավոր Արիարաք 5-րդը (163—130 թթ.) ամեն կերպ օգնում էր Ծոփքի թագավոր Մերուժանին, Զարեհի որդուն<sup>71</sup>: Մ. թ. ա. 2-րդ դարի վերջին Փոքր Հայքը դադարեց գոյություն ունենալուց որպես ինքնուրույն պետություն այն քանից հետո, եթե Պոնտոսի թագավոր Միհրդատ Եվպատորը, օգտվելով միշագային քաղաքական բարենպատ պայմաններից, այն միացրեց իր թագավորությանը (շորջ 115 թ.):

\* \* \*

Ծոփքը մեկն էր հայկական այն պետական միավորումներից, որոնք առաջացել էին հին Հայաստանի տերիտորիայի վրա այն քանից հետո, եթե Աքեմենյանների թագավորությունը դադարեց գոյություն ունենալուց: Ծոփքը նույնպես, ինչպես և Մեծ Հայքն ու Փոքր Հայքը, վերջնական կերպով չեր նվաճվել մակեդոնացիների կողմից, ո՞չ Ալեքսանդրի, ո՞չ Էլ Սելլիյանների ժամանակ: Այս երեք մարզերը, այն է՝ հա-

<sup>70</sup> Polyb., XXVI, 6, 11.

<sup>71</sup> Diodor., XXXI, 22.

մարյա ամբողջ պատմական Հայաստանը, պահպանել էին իրենց Աերքին ինքնուրունությունը, տեղական դինաստների իշխանության տակ, ընդհուպ մինչև Անտիոքոս 3-րդի արեւվելյան արշավանքը, որից հետո կարճ ժամանակով միայն, մինչև Մագնեսիայի ճակատամարտը, Հայաստանը եւթարկվեց Սելևկյաններին: Հայաստանի հպատակությունը արտահայտվում էր տարեկան հարկ վճարելով և պատերազմի ժամանակ օգնական զորքեր տալով: Հայաստանում քաղաքների առաջացման ընթանուր պրոցեսի ուսունափրությունը առավել ևս համոզում է այն բանում, որ Հայաստանը չէր նվաճվել Սելևկյանների կողմից: Հայաստանում չի հանդիպում և ոչ մի քաղաք, որը կառուցված լիներ Սկեքսանդր Մակեդոնացու կամ նրա հետնորդների կողմից, այն դեպքում, եթե նրանք ձգտում էին ծավալուն քաղաքաշինության միջոցով իրենց համար սոցիալ-տնտեսական ամուր հենարան ստեղծել նվաճված երկրներում:

Քաղաքային կյանքը Ծոփքում ավելի շուտ է զարգացել, քան Հայաստանի մյուս մասերում: Այս հանգամանքը կարելի է բացատրել այն բանով, որ նախ Ծոփքը ավելի մոտ էր գտնվում հելլենիստական աշխարհին, երկրորդ՝ որ Ծոփքի միջով անցնում էր Փոքր Սահայի ծովակինյա քաղաքները Արևելքին միացնող «արքունի ճանապարհը»<sup>72</sup>: Պատահական չէ, որ հայկական առաջին դրամները հատել են Ծոփքի թագավորները:

Ծոփքի քաղաքական պատմությունը ևս, մինչև Տիգրան 2-րդի կողմից նրա միացումը Մեծ Հայքի թագավորությանը, մեզ վատ է հայտնի: Այս երկրի մասին առաջին տեղեկությունները հանդիպում են Պոլիբոսի մոտ, որի վկայությունը անհրաժեշտ ենք համարում մեջ բերել լրիվ: «Քսերբեսի թագավորության ժամանակ Արմոշատ քաղաքում, որը գրւելը էր այսպէս կոչված Գեղեցիկ դաշտում, Եփրատի և Տիգրիսի միջև, Անտիոքոս թագավորը քաղաքը պաշարումով վերցնելու մտադրությամբ բանակել էր նրա մոտ: Տեսնելով

<sup>72</sup> Ա. Ա. Մահանյան, նշված աշխ., էջ 31.

թագավորի պատրաստությունները, Քսերբեսը նախ փորձեց փախուստի միջոցով փրկվել, բայց թիշ ժամանակ անց նա զցաց, վախենալով,որ մայրաքաղաքը թշնամու ձեռքն ընկնելու դեպքում ինքը կարող է կորցնել ամբողջ թագավորությունը: Ուստի դեսպաններ ուղարկելով Անտիոքոսի մոտ հայտնեց, որ ցանկանում է բանակցության մեջ մտնել նրա հետ: Անտիոքոսի հավատարիմ ընկերները խորհուրդ չեն տալիս նրան ձեռքից բաց թողնել պատանուն, այլ համոզում են, որ քաղաքն առնելով իշխանությունը հանձնի Միհրդատին, որը նրա քեռորդին էր: Բայց թագավորը չսեց նրանցից ոչ մեկին, իր մոտ կանչեց պատանուն, հաշովեց նրա հետ և նովիսիկ զիցեց նրան տորոքի մեծագույն մասը, որը պարտավոր էր իրեն վճարել հայրը: Այնուհետև նա ստանալով Քսերբեսից 300 տաղանդ և 1000 ձի և 1000 ջորի լճասարքով, վերադարձեց նրան ամբողջ իշխանությունը և ամունացրեց նրան իր Անտիոքի քրոջ հետ»<sup>73</sup>:

Պոլիբիոսի այս վկայությունը վերաբերվում է Անտիոքոս 3-րդի արևելյան արշավանքի ժամանակին (212 մ. թ. ա.)<sup>74</sup> Այս հատվածում հիշատակված Արմոշատ քաղաքը ուրիշ աղբյուրներից հայտնի է որպես Արշամաշատ, որի հիմնադրումը սովորաբար վերագրվում է Ծոփքի թագավոր Արշամին ('Ացանց'): Արշամի մասին հաղորդում է մ. թ. 2-րդ դարի հոյն հետինակ Պոլիբեսուրը:

Ծորչ 240 թվին Սելևկյանների արքունիքում ծայր է առնում գահակալական կոփ, մահացած Անտիոքոս 2-րդի երկու որդիների՝ արդեն թագավոր հոչակված Սելևկոս 3-րդ Կալինիկոսի և սրբ դեմ ապատամբած Անտիոքոս Հինդարաբասի:

<sup>73</sup> Polyb., VII, 25, 1–6.

<sup>74</sup> Հ. Հ. Մանանդյանը ևս (Քննական տեսությունն..., հ. Ա, էջ 109) ընդունում է, որ «Քսերբեսի զիմ սազմի ելնող Սելևկյան այս թագավորը Անտիոքոս Գ-ն էր»: Սակայն և. Բարելոնը (E. Babelon, Les rois de Syrie, d'Arménie et de Commagène, p. CXCI–CXCVII): հակառակ բյուզանդական պատմիչ Հոգհաննես Անտիոքոսու ուղակի ցուցմունքին (K. Müller, Fragmenta historicorum graecorum, IV, էջ 557), հագնական է համարում, որ Քսերբեսի զիմ արշաված թագավորը ոչ թե Անտիոքոս 3-րդն էր, այլ Անտիոքոս 4-րդ եպիփանեսը (175–164):

միջև: Վերջինս, ինչպես պատմում է Պոլիկենոսը, ճակատամարտում պարտություն կրելոց հետո, Միջազնութիւն վրայով անցնում է Արմենիա (հավանաբար Ծոփք) և ապաստան գտնում թագավոր Արշամի ('Արծիշուն') մոտ<sup>74</sup>: Անենայն հավանականությամբ, այդ տարիներին է, որ օգտվելով Սելևկյանների թագավորությունում հետզհետեւ խորացող քաղաքական ճգնաժամից, վերոհիշյալ Արշամը, որը մինչ այդ իշխանն էր Ծոփքի, հրաժարվեց Սելևկյանների հապատակությունից և իրեն հայտարարեց անկախ թագավոր: Կարևորագոյն այս իրադարձության արտացոլում մենք տեսնում ենք այն փաստի մեջ, որ իշխալ Արշամը հատկ է դրամ՝ «թագավորի Արշամի» (Բառձևուն 'Արշամա) վարտառությամբ<sup>75</sup>։ Այս ժամանակ էլ Արշամը, հետևելով հեղլինիատական թագավորների օրինակին, իր համար կառուցել է թագավորական Արշամաշատ քաղաքը: Պոլիբիոսի հայորդանան համաձայն, Արշամի հաջորդ Քսերքսեսը ևս համարվել է թագավոր, քանի որ հոյն մատենագիրը, ինչպես տեսանք, խուելով այդ մասին, օգտագործում է «Քսերքսեսի թագավորության ժամանակ» (թասիւնուն Եզրէս) բառերը:

Արշամաշատի տեղադրության մասին ցուցմունքներ կան Պոլիբիոսի և Դիֆինոս Ավագի մոտ<sup>76</sup>: Նրանք հաղորդում են, որ Արշամաշատ քաղաքը գտնվում էր Եփրատ-Արածանիի մոտերքը: Առավել որոշակի է Պոլիբիոսի Վկայությունը, թե 'Արքաւու... չեւու ործ շո Կու ու ունի չակարքն ու մեծ Ենքածու ու Տիգրանու': Սակայն այս վկայությունները անբավարար գտնվեցին Արշամաշատի ճշգրիտ տեղադրումը որոշելու համար: Ինչպես նշում է Հ. Հ. Մանանյանը<sup>77</sup>, գերմանացի գիտնականներ Հ. Հոփմանը, Վ. Տոմաշեկը և Յ. Մարկվարտը ենթադրում են, որ Արշամաշատը գտնվում էր Եփրատ-Արածանի գետի ձախ ափին, այժման Յարիմջի գյուղի մոտ, կամ

<sup>74</sup> *Polyaen.*, IV, 16.

<sup>74</sup> և *E. Babelon*, նույն տեղում:

<sup>75</sup> *Polyb.*, VIII, 25, 1.

<sup>76</sup> Յ. Ա. Մանանյան, նշված աշխ., էջ 32—33:

դիչ ավելի հարավ, Խարաբա գյուղի մոտ: Ն. Աղբանցը գտնում է, որ հին Արշամաշատը ընկած էր «Խարբերդի դաշտուն Գելջեկի և Արածանիի միջն, որտեղ ...գտնվում է Շամուշի գյուղը, ...որի անոնը հիշեցնում է հին Շամշատը»<sup>78</sup>: Արշամաշատը Շամշատի (Շեմշատ) հետ նույնացնում է նաև Միշենկոն Պոլիբիոսի «Պատմության» իր թագմանության ծանոթագրություններում<sup>79</sup>: Հ. Հ. Մանանյանը, սակայն, լիուվին իրավացի է, եթե նկատում է, որ «Արշամաշատի տեղադրությունը ճիշտ որոշելու համար անհրաժեշտ է, անկասկած, տեղագրական և հնագիտական հետազոտություններ կատարել Խարբերդի և Բայրի միջև ընկած շրջանում»<sup>80</sup>:

Հ. Արմենը, ի հետուկ Պոլիբիոսի վկայության, թե Արշամաշատը գտնվում էր «այսպես կոչված Գեղեցիկ դաշտուն», առանց լորջ հիմքեր ունենալու պահում է, թե Անելուրու Յ-րդի արշավանքի ժամանակ Ծոփքի թագավոր: «Քսերքսեսը ապաստանեցավ անմատչելի լեռներու ապահովությանը» և փակվեց Արշամաշատ քաղաքում<sup>81</sup>: Հայտ երևութին, Արշամաշատի դիրքը ուզմա-վարչական տևալենսից անհաջող էր, և այդ պատճառով շուտով անկում ապրեց: Ծիշտ է, այդ հաստատելու համար մենք ունենք միայն կողմնակի տվյալներ: Այսպես, օրինակ, Պոլիբիոսի վերոհիշեցած հատվածից կարելի է եղալ կացնել, որ այդ ժամանակ Արշամաշատը Ծոփքի մայրաքաղաքն էր, իսկ Ստրաբոնը, որ անձանք եկել էր Հայաստան և լավ գտնելու Հայկական բարձրավագանդակի աշխարհագրությունը<sup>82</sup>, ոչինչ չգիտի Արշա-

<sup>77</sup> Հ. Աֆոնց, նշված աշխ., էջ 35:

<sup>78</sup> *Полибий*. Всебо́дая история, перев. Ф. Мищенко, т. II. М., 1895, էջ 170:

<sup>79</sup> Յ. Ա. Մանանյան, նույն տեղում:

<sup>80</sup> Հրանք Թ. Արմեն, Մեծ Տիգրան, Կահիրե, 1957, էջ 7:

<sup>81</sup> ա Այդ ժամանի ինքը, Ստրաբոնը, որը, ինչպես Հայտնի է, ծնվել էր Հայաստանի սահմանակից պոնտական Ամասիա քաղաքում, պարձենալով զրում է: «Մենք շրջել ենք գետի արևմուտք Հայաստանից» (Եպի. Յօքը ու նույն մենք առն Եպի. Արքունիք): մինչև Սարդինիայի դիմաց գտնվող Տունենիայի վայրերը, իսկ զետի Հարավ նվազինյան Պոնտոսից մինչև Եթովպիայի սահմանները» (Strabo, II 5, 11. C. 117).

մաշատի մասին: Նրա պատմելով, Ծոփքի թագավորանիստ քաղաքը (Յանչեսու) Կարկաթիակերտուն էր<sup>81</sup>: Ակներն է, որ Պոլիբոսից մինչև Ստրաբոն ընկած ժամանակաշրջանում Ծոփքի վարչական կենտրոնն Արշամաշատից փոխադրվել էր Կարկաթիակերտ: Բացի այդ, մենք տեսանք, որ Սևափոքուն 3-րդի արշավանքի ժամանակ թագավոր Քսերքսեսը, իրեն զգալով վտանգից զերծ, հավանաբար քաղաքի ուսղմագիտական անհաջող տեղադրության պատճեռով, «Ասխ փորձեց փախուստի միջոցով փրկվել...»: Եվ, վերջասկս, Տակիտոսը, նկարագրելով Կորրուլոնի արշավանքը Հայաստան, արդեն Արշամաշատն անվանում է ոչ թե քաղաք, այլ ամրոց (castellum)<sup>82</sup>:

Խնչպես նոր Աշեղինք, Ստրաբոնի ժամանակ Ծոփքի թագավորանիստը արդեն ոչ թե Արշամաշատն էր, ոչև Կարկաթիակերտը կամ Արկաթիակերտը: Այս քաղաքի մասին տեղեկությունները ավելի են անորոշ քան Արշամաշատի մասին: Հայկական աղբյուրները ոչ մի անգամ շեն հիշատակում այդ քաղաքը: Ստրաբոնը ցույց չի տալիս նրա գտնված տեղը, իսկ Պիլնիտու Ավագը հաղորդում է միայն, թե Կարկաթիակերտը գտնվում է Տիգրիսի մոտիկ<sup>83</sup>: Անոս այն ամենը, ինչ գիտենք այս քաղաքի մասին: Չենայած աղբյուրների հնագույթյան, գիտնականները փորձել են որոշել Կարկաթիակերտի գտնված վայրը: Կ. Լեման-Հառապուր «Կարկաթիակերտ» անունը համարում է Խարբերդ անվան հնագույն ձևը և այդ պատճեռով այն տեղադրում է այժմյան Խարբերդի վայրում: Ն. Աղոնցի կարծիքով «Կարկաթիակերտը, հավանաբար, ...գտնվում էր Մարտիրոպոլիսի տեղում»<sup>84</sup>: Իսկ Հ. Մանանդյանը գտնում է, որ այդ երկու կարծիքներն են սույն կուանումներ են: Նա ավելի հավանական է համարում

Յ. Մարկվարտի ենթադրությունն այն մասին, որ Կարկաթիակերտը գտնվում էր իին հայկական տերոց Անգեղի տեղում<sup>85</sup>: Սակայն մեր աղբյուրների այժմյան վիճակը մեզ հնարավորություն չի տալիս որևէ որոշակի բան ասելու:

\* \* \*

Աղբյուրներում համեմատաբար ավելի լազ է սկրտացության համարական պատճեռունը, քաղաքաշինության պրոցեսը և քաղաքային կյանքի զարգացումը մ. թ. ա. առաջին դարում, հատկապես Տիգրան 2-րդի (95—55 թ.) գահակալության տարիներին: Այդ լինվ բացարեկի է: Այդ ժամանակաշրջանում էր, որ վերջնականացելու ավարտվեց երկրի արտադրողական ուժերի հետագա զարգացման և հայկական հողերի միավորման հիման վրա հայ ժողովրդի կազմավորման պրոցեսը: «Հայաստանը սուանձին մասերի միաձուլումը միասնական պետության կազմուն,— նշում է Ս. Շենմյանը,— նշանակալից չափով հանդիսանում էր առևտրական կապերի հետագա զարգացման արդյունք»<sup>86</sup>:

Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումներն Արևելքուն և այդ հիման վրա Մելկյան տերության ստեղծումը նպաստում էր արքեստների, ինչպես նաև Արևելքի տարբեր մարզերի միջև քարավանային առևտրի զարգացմանը: Բայց Մագենսիայի ճակատամարտից հետո Մելկյան պետության սկսած արագ քայլայումը խանգարում էր առևտրական հարաբերություններին Առաջավոր Արևելքում: Տիգրան 2-րդը մեկն էր այն վեհապետներից, որոնք ձգտում էին իրենց հետ-

<sup>81</sup> H. Ածոնց, Աշված աշխ., Էջ 31:

<sup>82</sup> Յ. Ա. Մանանդյան, Աշված աշխ., Էջ 34:

<sup>83</sup> С. Т. Еремян, Развитие городов и городской жизни в древней Армении, ВДИ, 1953, № 3, Էջ 14.

ըր վերցնել միջազգային առևտրի հակողությունը։ Առևտրից գանձվող տուրքը կազմում էր թագավորական եկամտի մի պատկառելի մասը։ Ուստի նա հոգ է տանում Փոքր և Սուածով Ասիայի միջով անցնող առևտրական ուղիների զարգացման ու քարեկարգման համար։ Դրանով էլ, նշանակալից չափով, բացատրվում է Տիգրան 2-րդի նվաճողական քաղաքանությունը և այն աշակցությունը, որ նրան ցույց տվեցին նեղենիստական քաղաքների, հատկապես Անտիոքի առևտրականները և վաշխառուները, խոշոր ստրկատերները, արեւատանցների տերերը<sup>87</sup>։

Ի դեպ նշենք, որ Վ. Տառնի «Հելենիստական քաղաքակրթություն» ուսումնասիրության մեջ, ի միջի այլոց, խոսվում է այն մասին, որ «Տիգրան 2-րդը ժողովրդականություն չէր վայելում նախկինում Սելևկյաններին ենթակա քաղաքների բնակչության շրջանում»<sup>88</sup>։ Մեզ հասած սկզբնադրյունների ուսումնասիրությունը թույլ չի տալիս համաձայնվելու Վ. Տառնի հետ։ Բավական է նշել, որ երրայնեցի մտածենագիր Հովսեանու Փլավիոսի գրչի տակ Տիգրանը, թեպետև իր արշավանքների ժամանակ մեծ թվով հրեաների գերեվարելով տարել էր Հայաստան, պատկերված է մեղմարյուղ և մարդկային<sup>89</sup>։ Ուստի և լիովին իրավացի է Հյանդ Արմենը ենթադրելով, որ Տիգրան 2-րդը այդքան հեշտապես իր տիրացավ Սելևկյանների տիրույթներին, հատկապես նրանց մայրաքաղաքին, շնորհիվ այն բանի, որ Անսիորի, նեղենիստական այդ խոշորագույն կենտրոնի ստրկատիրական վերնախավի շահները պահանջում էին այնպիսի ոժեղ մրապետի տիրապետությունը, որը ի վիճակի լիներ ապահովելու նրան առևտրի ապահովությունը և ազատությունը<sup>90</sup>։

<sup>87</sup> Հմտ. Օчерки истории СССР, Первобытно-общинный строй и древнейшие государства на территории СССР, М., 1956, էջ 451.

<sup>88</sup> B. Tarh, Эллинистическая цивилизация, М., 1949, стр. 61.

<sup>89</sup> a Jos. Flav., Antiq. Jud., XII, 419—421.

<sup>90</sup> Հմտ. Հրանի Ք. Արմեն, նշանակած աշխարհ, էջ 9:

Տիգրան 2-րդի գահակալության առաջին տասնամյակները նշանակություն աշխատ քաղաքաշինությամբ և քաղաքային կյանքի աննախընթաց զարգացմամբ Հայաստանում։ Հին Հայաստանի տեղանունների մեջ հանդիպում են մի շարք անուններ, որոնք կապված են Տիգրանի հետ (Տիգրանակերտ Աղձնիքում, Տիգրանակերտ Ուտիքում, Տիգրանակերտ Արցախում, Տիգրանավան Գողթնում)։ Տիգրանի անունը կրող քաղաքներից խոշորագույնը եղել է Տիգրանակերտը Աղձնիքում։

Արևանակրոպական պատմաբանների իդեալիստական ըմբռնումները խանգարել են նրանց նիշու վերլուծելու և լուսարանելու Տիգրան 2-րդի թագավորության ժամանակ հայկական քաղաքների, հատկապես Տիգրանակերտի առաջացման պրոցեսը։ Նրանք Տիգրանակերտի կառուցմը վերագրում են բացառապես Տիգրան 2-րդի քմահանությին։ Այսպես, Թեոդոր Մեմոնը գրում է, որ Տիգրանակերտը «մեկն էր այն քաղաքներից, որոնք ավելի վկայում են ժողովուրդների ոչնչության, քան վեհապետի մեծության մասին. քաղաքներ, որոնք առևտել են մերձակիրատյան երկրներում հողից էին անում միապետի ամեն մի փոփոխման ժամանակ նոր սուլթանի հրամագական խոսքով»<sup>91</sup>։ Հիմնականում նոյն տեսակետի վրա է նաև Թ. Ռեյնաքը. «Նոր Սալմանասարին սպական էր նոր Նինվեն... Նոր թագավորանիստը—Տիգրանի քաղաքը»—դուրս էր եկել հողի տակից կարծես մոգական գավազանի շարժումով»<sup>92</sup>։

Հայ երևոյթին, այն նոյն սոցիալ-տնտեսական պայմանները, որոնք հետագայում, մ.թ. 3-րդ դարի վերջին և 4-րդ դարի սկզբին հանգեցրին Հռոմեական կայսրության քաղաքական և վարչական կենտրոնի տեղափոխմանը Արևելքը, Կոստանդնուպոլիս, ստիպեցին Տիգրան 2-րդին նոր մայրաքաղաքը կառուցել արդեն իր ընդարձակ միապետու-

<sup>90</sup> T. Mommsen, История Рима, т. III, М., 1941, էջ 44.

<sup>91</sup> Th. Reinach, Mithridate Eupator, París, 1890, էջ 345.

թյան կենտրոնում, քանի որ հին մայրաքաղաքը, Արտաշատը, նոր պարմաններում մնում էր կենտրոնից հեռու, բնության արևելյան ծայրամասում: Նոր մայրաքաղաքի դիրքը տերության համարյա կենտրոնում հնարավորություն կտար ավելի մոտիկից կառավարելու և վերահսկելու հավաճած երկրները<sup>92</sup>:

Ակադ. Հ. Մանանդյանը խիստ քննադատության ենթարկելով հանդերձ Թ. Մոնզենի և Թ. Ռեյնաքի տեսակետը, ինքը իր հերթին գերազանակառում է Տիգրանի գործումնելույունը և իդեալականացնում նրա անձնափորությունը: «Այս քաղաքը—(Տիգրանակերտը.—Ս. Կ.),—գրում է Հ. Մանանդյանը,—համաձայն Տիգրանի ծրագրի, լինելու էր նրա պետության լուսատու կենտրոնը և հետզինեւ հեղաշրջելու և նորոգելու էր նրա հայրենի երկրի հետամնաց հահապետական կյանքը: Տիգրանակերտը... նպատելու էր նաև առևտի ու արդյունագործության զարգացմանը Հայաստանում և օժանդակելու էր նովակես հելլենիստական քաղաքակրթության և հելլենիստական արվեստի ու գիտության տարածմանը»<sup>93</sup>: Մի այլ տեղ Հ. Մանանդյանը հուսելով Կիլիկիայի և Կապադովկիայի հելլենականացած քաղաքների բնակչության մասին, որը բոնի կերպով Տիգրան 2-րդի կողմից տեղահանվեց և բնակեցվեց Հայաստան, իրավացի կերպով նկատում է, որ տեղահանվածները բնակեցվեցին «ոչ միայն Տիգրանակերտում, այլ նաև Արտաշատում և Հայաստանի մյուս քաղաքներում ու առևտրական կենտրոններում և... խաղում էին գերակշռող դեր երկրի առևտրա և արդյունագործության մեջ»<sup>94</sup>:

<sup>92</sup> Հ. Աստուրյանը նշում է, որ հունական աղբյուրները «Տիգրանակերտը երբեք մայրաքաղաք չեն անուաներ, իրենց համար հայոց մայրաքաղաք դեռևս միշտ Արտաշատն է» (Հ. Աստուրյան, նշվ. աշխ., էջ 43): Այդ, հավանարար, միայն այն պատճառով, որ Տիգրանի թագավորությունը այդ ընդարձակ տերիտորիայի վրա երկար չտևեց և հայոց թագավորը ժամանակ չընեցավ իր մայրաքաղաքը այնտեղ փոխարկելու:

<sup>93</sup> Հ. Հ. Մանանդյան, Տիգրան երկրորդը..., էջ 114.

<sup>94</sup> յ. Ա. Մանանդյան, Проблема общественного строя доаршакидской Армении, Исторические Записки, 1945, № 15, էջ 11.

Այսուղի դժվար չէ հետևցնել, որ միայն Տիգրանակերտը չէ, որ Տիգրանի ծրագրով, դառնալու էր «նրա պետության լուսատու կենտրոնը»:

Տիգրանակերտի տեղադրության հարցը ուսումնասիրողների ամենամածանությունն է առաջացրել, քանի որ աղբյուրների վկայությունները այդ մտան տարբերվում են իրարից<sup>95</sup>: Կ. Լեման-Հատապետը Տիգրանակերտը տեղադրում է Աղձնիքում, այժմյան Ֆարլիխնի տեղը<sup>96</sup>: Նրա հետ համաձայն են Հ. Մանանդյանը և Գ. Խ. Սարգսյանը<sup>97</sup>, իսկ Հ. Արմենը անդադար ապահովով այդ հարցին, համաձայն չէ այդ տեսակետի հետ, բայց և միաժամանակ ի վիճակի չէ իր տեսակետը առաջարկելու: Հարցի լուծումը նաև վերապահում է հնագետի բահին<sup>98</sup>:

Հպատականի նոր մայրաքաղաքի հիմնադրման վերաբերյալ վկայություններ են պահպանվել Ստրաբոնի, Պլոտարքոսի և Ապրիանոսի մտությունները: Այդ տվյալների հիման վրա Թ. Մոնզենն ու Թ. Ռեյնաքը ենթադրել են, որ Տիգրանակերտը եղել է մեծ քաղաք արևելյան տիպի, Բարելոնի և Նինվեի հման: Հ. Մանանդյանը սակայն, իրավացիորեն նշում է, որ Տիգրանի քաղաքն ուներ ավելի համեստ չափեր, քանի որ Լուլուլոսի գորահրամանատարներից Սեբատիլիոսին հաջողվեց Տիգրանակերտը պաշարել ոչ մեծաթիվ զորքով<sup>100</sup>:

Կարելի է ենթադրել, որ Տիգրանակերտը կառուցված եր ոչ թե ամայի վայրում, այլ այնտեղ, որ մինչ այդ գոյությունը ուներ ինչ-որ բնակչայր, գույք սրբավայր, քանի որ, Ապրիանոսի վկայությամբ, քաղաքը կառուցվել էր «այն

<sup>95</sup> Այդ մասին տե՛ս Հ. Հ. Մանանդյան, հշված աշխ., էջ 64—66:

<sup>96</sup> C. F. Lehmann-Haupt, Armenien einst und jetzt. Bd. I, Berlin, 1910, էջ 381—429:

<sup>97</sup> Հ. Հ. Մանանդյան, նույն տեղում:

<sup>98</sup> Հայոց Արմեն, Մեծն Տիգրան, էջ 235—240:

<sup>99</sup> Strabo, XI, 14, 15; XII, 2, 9: Plut., Lucull., XXV—XXVI; Appian., Mithr., 67; 84.

<sup>100</sup> Appian., Mithr., 84.

վայրում, որտեղ նա (Տիգրանը.—Ս. Կ.) առաջին անգամ հագավ Հայաստանի թագը»: Թ. Ռեյնաքը ենթադրում է, որ Տիգրանակերտը հիմնվել էր 77 թ.<sup>101</sup>, Տիգրանի նվաճողական արշավանքներից հետո: Այդպիսի կարծիքը հաստատվում է Ստրաբոնի կողմից, որը գրում է. «Այնքան ոժեղացավ (Տիգրանը), որ Օլիբերիայի մոտ քաղաք կառուցեց, ... որտեղ հավաքեց իր կողմից ավերված հելլենական տասներկու քաղաքների բնակիչներին»<sup>102</sup>:

Նոր քաղաքներ կառուցելու դեպքում թագավորները սովորաբար վերաբենակեցնում էին այնտեղ իրենց հագատակ այլ քաղաքների բնակիչներին: Խական Տիգրան 2-րդը չգեաց և չէր էլ կարող գնալ այդ ուղիղով, քանի որ նա շահագրքոված էր ոչ միայն իրեն ենթակա հին քաղաքների պահպանությամբ, այլև նրանց հետագա ջնիւարձակմամբ ու զարգացմամբ: Եվ իրոք, Հայոց թագավորը ի վիճակի էր կենագործելու իր այդ մտադրությունը, քանի որ գահականության առաջին շրջանում նրա ջնիւարձակ նվաճումները նրան լայն հնարավորություններ էին ընձեռում նվաճված քաղաքների բնակիչների բոնի Հայաստան տեղափոխելու համար: Այդպիսի բոնի տեղահանումների հավաստի վկայությունները կան Ստրաբոնի, Պլուտարքոսի և Ապպիանոսի մոտ: Ինչպես տեսանք, Ստրաբոնը գրում է, որ նա Տիգրանակերտում բնակեցրեց իր կողմից ավերված հելլենական 12 քաղաքների բնակիչներին: Այսուհետև խոսելով Կապպադովիական Մածար (Մաշաք) քաղաքի բնակիչների տեղահանուման մասին, Ստրաբոնը նշում է. «Վաս վերաբերվեց Հայ Տիգրանը բնակչությանը, երբ արշավեց Կապպադովիակա: Բոլորին նա տեղահան անելով փոխադրեց Միջագետը և Տիգրանակերտը մեծ մասամբ նրանցով բնակեցրեց»<sup>103</sup>: Նույնը հաստատում է Ապպիանոսը, ասելով, որ Տիգրանը «գերեվարելով Կապպադովիական, այնտեղից Հայաստան քշեց 30 քոր

<sup>101</sup> Th. Reinach, նշված աշխ., էջ 346:

<sup>102</sup> Strabo, XI, 14, 15 (C. 532).

<sup>103</sup> Strabo, XI, 14, 15 (C. 532): XII, 2, 9 (C. 539).

մարդ և որիշների հետ նրանց բնակեցրեց այն վայրում, որտեղ նա առաջին անգամ հագավ Հայաստանի թագը...»<sup>104</sup>: Պլուտարքոսը մատնանշում է, որ Տիգրանը գաղթեցրեց ոչ միայն կապպադովիակացիներին, այլև որիշ երկրների բնակիչներին ևս: Նա գրում է. «Այսուեղ (Տիգրանակերտում.—Ս. Կ.) ապրում էին քազմարթիվ հովտեր, ասորիներ, կորդինեներ և կապպադովիացիներ: Սրբան ավերեց նրանց քաղաքները, իսկ բնակիչներին իր հետ բերեց ու ստիպեց բնակվել այստեղ»<sup>105</sup>: Այս տեղափոխաված օտարերկրացիների մեծ մասին Տիգրանը բնակեցրեց ոչ միայն Տիգրանակերտում, այլև Արտաշատում, Արմավիրում, Երվանդաշատում և մյուս քաղաքներում<sup>106</sup>: Տիգրանի նվաճակն էր այդ գաղթականների միջոցով նպաստել Հայաստանում քաղաքային կյանքի զարգացմանը: Հայկական քաղաքներում բնակեցված այս օտարականների ճաշող մեծամասնությունը, ըստ երևույթին, շարունակում էր գրադարձ այն արհեստով, ինչ իր նայունի քաղաքում:

Տիգրանի քաղաքը մի քանի տարվա ընթացքում անեշան մի բնակվայրից վերածվեց առաջին մեծության քաղաքի, որքանով որ հետազոտությունները այն համեմատում են Բաբելոնի և Նինվեի հետ: Տիգրանակերտի ապշեցուցիչ արագ աճը վկայում է այն մասին, որ քաղաքն ապրում էր բուն կանքով և, հասկանալի է, ոչ միայն օտարերկրացի վերաբնակիչների շնորհիվ: Ինը՝ հայոց թագավորը՝ իր ազնվականության հետ միասին խոշոր միջոցներ ներդրեց քաղաքի շինարարության համար: Առաջին ներթին նա մտածեց նոր հատա-

<sup>104</sup> Appian., Mithr., 67.

<sup>105</sup> Plut., Lucull., XXVI.

<sup>106</sup> Я. А. Маннոնян. О торговле и городах Армении..., էջ 70; С. Т. Еремян. Разметне города и городской жизнин в древней Армении, ВДИ, 1953, №3, էջ 14; Г. Х. Саркисян, նշված աշխ., էջ 63; Հ. Արմենն, անկառակած, սիրալում է. ենթագրելով, որ բոլոր այդ տեղագործութներին Տիգրանը բնակեցրեց նոր մտարադարում (հմմտ. Հրանդ Ք. Արմեն, Մեծն Տիգրան, էջ 173—175):

վայրի պաշտպանունակության մասին: Ապահանոսի նկարագրած քաղաքային պարիսպները այնքան հզոր դուրս եկան, որ նոյնիսկ Տիգրանակերտի մոտ Լոկոլլոսի տարած հաղթանակից հետո, պաշտոված քաղաքը դեռ երկար ժամանակ հաջողությամբ դիմադրում էր հոռմայեցիներին: Միայն հունական, փոքրախական և ասորական վերաբնակիչների ապատամբությունը և վարձկան զորքերի դավաճանությունը հնարավորություն տվեցին թշնամուն գրավել քաղաքը: Քաղաքի կառուցմանը գործուն մասնակցություն են քերել նաև հնասարակ մարդիկ և ազնվականությունը: «Ամեն մի հնասարակ մարդ և ազնվական ( ունտես և անսատ ) թագավորի նկատմամբ ունեցած հարգանքից, իրաք հետ մըրցում էին քաղաքի ընդարձակման ու բարեկարգման համար»<sup>107</sup>: Տիգրանակերտի ընդհանուր նկարագրությունը տվել է Ասպիհանոսը: Նրա խոսքերով, Տիգրանը «քաղաքը շրջապատեց 50 կանգուն բարձրություն ունեցող պարիսպով, որի հաստության մեջ շինել էին ձիերի քաղմաթիվ ախոռներ: Քաղաքի արվարձանում նա կառուցեց պալատ, ընդարձակ գրուազիներով, որատեղերով և լճերով»<sup>108</sup>, որոնք դեռևս Տիգրանակերտի կառուցումից առաջ էլ հատկանշական էին ոչ միայն Արևելքի, այլ նաև Հայաստանի խոշորագույն քաղաքների ( Արմավիր, Երվանդաշատ, Արտաշատ ) համար<sup>109</sup>: Ապահանոսի վկայությունից հետևում է, որ թագավորի պալատը կառուցված էր քաղաքային պարսպից դուրս և չէր ամրացված: Պիտուարքոսը պատմում է, որ Տիգրանակերտը խո-

<sup>107</sup> *Plut., Lucul.*, XXVI.

<sup>108</sup> *Apprian., Mithr.*, 84.

<sup>109</sup> Քրա վկայությունը Երվանդակերտի նկարագրությունն է Մ. Խորենացու մոտ. «Քաղաքը է ինձ ասել և յաղագո գեղեցիկ դաստակերտին Երուանդակերտի, զոր յօրինեաց նոյն ինքն Երուանդ գեղեցիկ և չքնաղ յօրինուածվը: Քանզի զմիջոց հովտին մեծի նու մարդկութեամբ և պայծառ շինուածվը, լուսաւոր որպէս ական բիբ. իսկ շորէ զբովն զայլ բոլորակութիւն ական» ( Մովսես Խորենացի, Բ, ԽԲ ).

շոր քաղաք էր, բարգավաճ, գեղեցիկ կառուցներով, որ այնտեղ Տիգրանը կառուցել էր թատրոն<sup>110</sup>:

Տիգրանակերտի հետագա նակատագրի մասին քիչ բան է հայտնի: Այսուամենայնիվ, չի կարելի համաձայնվել Հ. Սատուրյանի հետ, թե Տիգրանակերտը ավերվելով վերածվեց գյուղի<sup>111</sup>: Զնայած աղբյուրների սակավության, կարելի է ենթադրել, որ քաղաքը Լոկոլլոսի կողմից ավերվելուց հետո վերաշինվել է և դիտվում էր որպես խոշոր և ամրացված քաղաքներից մեկը: Երբ մ. թ. 58-ին Արտաշատը ավերելուց հետո Կորբուլոնը շարժվեց Տիգրանակերտի վրա, վախեցած քաղաքացիները հայտարարեցին, թե «քաղաքի պարիսպները բաց են»<sup>112</sup>: Ծիշու է, հետագա դարերի գրականությունից Տիգրանակերտի անունը անհետանում է, սակայն մեր տրամադրության տակ կա կարևորագույն ապացուց այն բանի, որ քաղաքը գրություն է ունեցել ընդհուպ մինչև մ. թ. 3—4-րդ դարերը: Դա Տիգրանակերտի հունարեն արձանագրությունն է, որը հայտնաբերել է Կ. Լեման-Հաուպտը 1890 թ.: Այն իսկական վկայագիր է, որը խոշոր հշանակություն ունի Արշակունիների օրոք քաղաքի սոցիալ-տնտեսական կյանքի պատմությունն ուսումնասիրելու համար: Զնայած ուսումնասիրողների միջև Տիգրանակերտի արձանագրության թվագրման գործում եղած տարածայնություններին<sup>113</sup>, նա վկայում

<sup>110</sup> *PlatL., Luc* XXV; XXVI; XXIX.

<sup>111</sup> Հ. Ասուույշան, նշվ. աշխ., էջ 59:

<sup>112</sup> *Tacit., Annal.*, XIV, 24.

<sup>113</sup> Կ. Լեման-Հաուպտը արձանագրությունը վերագրում է 369—377 թթ. ( տե՛ս *Eine griechische Inschrift aus der Spätzeit Tigranakertas*, *Klio*, VII, 1908 ). Նրա հետ համաձայն է Կ. Վ. Տրեֆերը ( տե՛ս «Օչեր-կի...» էջ 285 ) և Լ. Ելնիցիկին ( տե՛ս «Օ датировке Тигранакертской надписи, Физико-математический институт им. А. Н. Тихонова, № 2 (13), 1961, бр. 1, էջ 207; Յ. Մարկիսարը ( տե՛ս Südarmenien und die Tigrisquellen, Wien, 1930, էջ 134—135 ) և նրան հետեւ լուսաւոր որպէս ական բիբ. իսկ շորէ զբովն զայլ բոլորակութիւն ական» ( Մովսես Խորենացի, Բ, ԽԲ ). Մարզայան տեսությունը հայ ժողովրդի պատմության, հ. 2, մ. 1, Երևան 1957, էջ 120—122 ) և Գ. Մարգարյանը ( տե՛ս «Տիգրանակերտ, էջ 85» հետագրում են, որ արձանագրությունը վերաբերվում է 298—303 թթ. »

Է այն մասին, որ քաղաքն այդ ժամանակ ևս լավ ամրացված էր և լուրջ դիմադրություն էր ցույց տվել թագավորին: Դըժքախտաբար արձանագրության բեկորայնությունը հնարավորություն չի տալիս հաստատելու թագավորի ինքնությունը: Դրա հետ մեկտեղ Մովսես Խորենացին և Փափառու Բուզանդը վկայում են, որ Տիգրանակերտը պաշարել էր Շապուհ 2-րդը 363—367 թթ. իր ավերիշ արշավանքների ընթացքում, որի ժամանակ էլ քաղաքը կործանվեց<sup>114</sup>:

Մ. թ. 163-ին հոռմայեցիները, որոնց կայագործները օկուպացրել էին Հայաստանի կարևորագույն կետերը, մայրաքաղաքը Արտաշատից փոխադրեցին Վաղարշապատ, որը անտիկ հնույնակների մոտ կոչվում է նաև Կչւնի ունիւս — Նոր քաղաք: Վաղարշապատի առաջացման մասին գրավոր աղբյուրներից բացի, մեր տրամադրության տակ կան նաև հնագիտական որոշ նշութեր և ոչ մեծ թվով արձանագրություններ: Թ. Մովսեսը հենվելով Դիտն Կասպիսի մի հատվածի վրա, որը պահպանվել է Սուիդասի մոտ Մաքրուս քափտակ, ենթադրում է, որ Վաղարշապատը կառուցվել է 163 թ. հոռմայեցի հրամանաւար Ստատիոն Պրիսկոսի կողմից, որը հաղթել էր հայ-պարթևական զորքերին և ավերել Արտաշատը, հոռմայեցիների դեմ մայրաքաղաքի բնակչության ապատամբությունից հետո<sup>115</sup>:

Մի կողմից Վաղարշապատում պատահականորեն հայտնաբերված լատիներեն երկու արձանագրությունները, որոնք թվագրվում են 175 և 185 թթ., հնամ ենթադրությունը դարձնում են ճշմարտանման: Մյուս կողմից, սակայն, Մ. Խորենացու վկայությունը և հին Վաղարշապատի շրջանում ոչ ծավալուն հետափուզական պեղումների արդյունքները<sup>116</sup>, ընդհակառակը, մեզ իրավունք են տալիս ասելու, որ այդ տեղում դեռևս հոռմայեցիների գալուց շատ վաղ առաջացել էր

<sup>114</sup> Մովսես Խորենացի, Գ, հջ: Փափառու Բուզանդ, Գ, իջ:

<sup>115</sup> Т. МОММЗЕИН, История Рима, т. V, № 1949. № 287, факсим. 1:

<sup>116</sup> Տ. Ա. Քալանքար, Հին Վաղարշապատի պեղումները, Երևան, 1925, էջ 71:

մեծ բնակչավայր, իսկ հոռմեական նվաճողները միայն կառուցել են այնուեղ ամրություններ և երկրի վարչա-քաղաքական կենտրոնը Արտաշատից տեղափոխել Վաղարշապատ: Կ. Վ. Տրեվերը մայրաքաղաքի փոխադրումը դիտում է որպես Արտաշատից բնակչությունը պատճելու նպատակով հոռմայեցիների ձեռնարկած միջոցառությունը<sup>117</sup>: Նա ենթադրում է, որ հոռմայեցիների շինարարական աշխատանքները Վաղարշապատում տարվում էին «պարտադիր կարգով ...տեղական բնակչության ուժերով, որը պարտավոր էր նաև շինանույթը պատրաստել և տաշել ամրությունների քարերը»<sup>118</sup>: Այստեղից Կ. Վ. Տրեվերը եզրակացնում է, որ բնակչության հիշյալ ապատամբությունը ուղղված էր հոռմայեցիների այդ քաղաքականության դեմ: Այդպիսի ենթադրությունը ավելի քան կասկածելի է, քանի որ ապրուտամբությունը տեղի էր ունեցել նախ քան 163 թվականը, նախ քան հոռմայեցիները կալեին իրենց շինարարական աշխատանքները Վաղարշապատում, երկրի վարչա-քաղաքական կենտրոնը այնուեղ փոխադրելուց հետո:

Մ. Խորենացին հաղորդում է, որ Վաղարշապատ քաղաքը կառուցել է Վաղարշ թագավորը (մ. թ. 117—140/3): «Սա պատեաց պարսպան և զիզօր աւանն Վարդգեսի, որ ի վերայ Քասպիս գետոյ... լորում և Տիգրան Միջին յարշակունաց նասոյց զիասարակ առաջնոյ գերութեանն Հրէից, որ եղել քաղաքական վաճառոք: Այժմ այս Վաղարշ պատեաց պարսպան և զիզօր պատուարա, և անուանեաց Վաղարշապատ, որ և Նոր քաղաքը»<sup>119</sup>: Ճնազած այս պատության առավելական կենսին, Վաղարշ թագավորի խոշոր դերը քաղաքի կառուցման գործում, ակներև է, քանի որ այդ բնակչավայրը նախապես եղել էր ավան, իսկ Վաղարշը այն պատեաց պարսպան, այն է վերածեց քաղաքի: Ճնագիտական

<sup>117</sup> К. В. Тревер, Очерки..., էջ 251:

<sup>118</sup> Նույն տեղում, էջ 229:

<sup>119</sup> Մովսես Խորենացի, Բ, կե:

հետազոտվածությունները Վաղարշապատում հայտնաբերել են մեծ դամբանադաշտ, որի կողմէն ենիման վրա կարելի է ասել, որ մայրաքաղաքը Վաղարշապատ փոխադրելուց դեռ շատ առաջ, քաղաքը քազմազան է եղել և առևտրական կապեր ունեցել Հայաստանի մյուս քաղաքների հետ<sup>120</sup>: Հ. Մանանդյանը ենթադրում է, որ «Վաղարշապատ քաղաքը, որը նախկինում կոչվելիս է եղել «քաղաքն Արտիմետայ», իսկ հետագայում «աւանն Վարդգէսի», կարող էր նորից բնակեցվել և վերակառուցվել որպես քաղաք... Վաղարշ թագավորի կողմից, ...որ դեռևս Երվանդունիների ժամանակ գոյություն ունեցած Վարդգեսավանը, որը հետագայում կոչվեց Վաղարշապատ, հավանաբար, արդեն այդ հին ժամանակ եղել էր ոչ մեծ քաղաք և առևտրական կենտրոնավայր, և Երվանդաշատի ու Արմավիրի նման պատճ էր պարապով»<sup>121</sup>:

Հնայած, որ Վաղարշապատը 163 թվից մինչև հայ Արշակունիների վերջնական անկումը (428 թ.) հանդիսանում էր երկրի քաղաքական կենտրոնը, հին մայրաքաղաք Արտաշատը մնում էր ներանուական Հայաստանի կրոնական կենտրոնը, մինչև քրիստոնեության պետական կրոն հայտարարվելը, որից հետո Վաղարշապատը դառնում է նաև քրիստոնեական Հայաստանի կրոնական կենտրոնը: Հայկական թագավորության վերացումից հետո Վաղարշապատը մնում է սուկ որպես կրոնական կենտրոն:

Վաղարշապատի կառուցմանը նախորդել է Արածանիի ավին Մծուրն քաղաքի շինությունը, որի մասին այն գիտենք միայն, որ հիմնվել է վերոհիշյալ Վաղարշի նախորդ Սահատրուկի կողմից երկրորդ դարի սկզբին և արդեն 4-րդ դարի կեսերին ավերված է եղել<sup>121</sup>»:

<sup>120</sup> Տի՛ս Ա. Քալանքար, Եշված աշխ.:

<sup>121</sup> Ա. Ա. Մահանձն. Օ տօրցօլ և գործաքանությունները, էջ 116:

<sup>121</sup> Հ. Համբարձում. Փակասոս Բուզանդ, Դ, ԺԴ: Մծուրն քաղաքի ժամանական տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսությունները, հ. Բ, մ. 1, էջ 16—17:

Քաղաքաշինության ասպարեզում հայ Արշակունիների վերջին ակտը եղել է Արշակավանի հիմնադրումը, որը 4-րդ դարի կեսերին ներքաղաքական պայմանների և դրակարգային պայքարի սրման արդյունք էր: Արշակ 2-րդի գահակալության ժամանակ (350—367/8 թթ.) Հայաստանում ավելի և ուժեղանում են կենտրոնախույս ուժերը, որոնց մղած երկրատու պայքարը կենտրոնական իշխանության դեմ հաճուեցրեց հայկական թագավորության անկմանը և երկրի քաղաքական անկախության վերացմանը: Արշակունյաց պետության բարձրագույն պաշտոնականը, նախարարները, աստիճանաբար վերածվել էին խոշոր ֆեոդալ-հողատերերի, և արդեն մ. թ. 4-րդ դարի կեսերին նրանց պայքարը կենտրոնական իշխանության դեմ ստանում է բացահայտ բնույթ: Սահանյան Պարսկաստանի կողմից հրահրվող այդ նախարարների դեմ պայքարելիս Արշակ 2-րդը փորձեց հենվել քաղաքների վրա, իսկ քաղաքային բնակչությունն, անկաւած, պաշտպանում էր թագավորին: Այդ բանի անողջակի ապացուցք կարելի է համարել ազն փաստը, որ կենտրոնախույս նախարարներին գլխավորող Մերուժան Արծրունին պարսկական զորքերի օգնությամբ ավելց Հայաստանի համարյա բոլոր քաղաքները:

Արշակավանի հիմնադրման մասին պատմում են Փալստու Բուզանդն ու Մովսես Խորենացին: Եթե մեր երկու մատենագիրների վկայությունները քաղաքի հիմնադրման վերաբերյալ համընկենում են, ապա Արշակավանի կործանումը նկարագրելիս նրանց պատմածները տարբերվում են իրարից: Աշակավանը կառուցվել էր Արշակ 2-րդի կողմից Մասիսի հարավային ստորոտում, Կոգովիտ գավառում, ինչպես ներթարում է Հ. Մանանդյանը, Արտաշատից Պարսկաստան տանող մեծ ճանապարհին մոտիկ<sup>122</sup>: Փակստու Բուզանդը հաղորդում է, որ «շինեաց իր արքայն դաստակերտ ի հովիտըն անուանեալ ի Կոգ գաւառի... իսկ տեղին աւանանայր,

<sup>122</sup> Հ. Հ. Մանանդյան, Քննական տեսություն Հայ ժաղովրդի պատմության, հ. 2-րդ, մ. 1, էջ 161:

հետազոտությունները Վաղարշապատում հայտնաբերել են մեծ դամբանադաշտ, որի նկուղերի հիման վրա կարելի է ասել, որ մայրաքաղաքը Վաղարշապատ փոխադրելոց դեռ շատ առաջ, քաղաքը բազմազան է եղել և առևտրական կապեր ունեցել Հայաստանի մյուս քաղաքների հետ<sup>120</sup>: Հ. Մանանդյանը ներադրում է, որ «Վաղարշապատ քաղաքը, որը համեմատում կոչվելիս է եղել «քաղաքն Արտիհմելայ», իսկ հետագայում «աւան Վարդգեսի», կարող էր նորից բնակեցվել և վերակառուցվել որպես քաղաք... Վաղարշ թագավորի կողմից, ...որ դեռևս Երվանդունիների ժամանակ գոյություն ունեցած Վարդգեսավանը, որը հետագայում կոչվեց Վաղարշապատ, հավանաբար, արդեն այդ հին ժամանակ եղել էր ոչ մեծ քաղաք և առևտրական կենտրոնավայր, և Երվանդաշատի ու Արմավիրի հման պատճ էր պարագով»<sup>121</sup>:

Զնայած, որ Վաղարշապատը 163 թվից մինչև հայ Արշակունիների վերջնական անկումը (428 թ.) հանդիսանում էր երկրի քաղաքական կենտրոնը, ինձ մայրաքաղաք Արտաշատը մնում էր հեթանոսական Հայաստանի կրոնական կենտրոնը, մինչև քրիստոնեության պետական կրոն հայտարարվելը, որից հետո Վաղարշապատը դառնում է հայ քրիստոնեական Հայաստանի կրոնական կենտրոնը: Հայկական թագավորության վերացումից հետո Վաղարշապատը մնում է սույն որպես կրոնական կենտրոն:

Վաղարշապատի կառուցմանը նախորդել է Արածանիի ավին Մծորն քաղաքի շինությունը, որի մասին այն գիտենք միայն, որ հիմնվել է վերոհիշյալ Վաղարշի նախորդ Սանատորուկի կողմից երկրորդ դարի սկզբին և արդեն 4-րդ դարի կեսերին ավելված է եղել<sup>121 ա</sup>:

<sup>120</sup> Sh' u ll. Քալանքար, նշված աշխառ.

<sup>121</sup> Я. А. Манандян. О торговле и городах Армении..., т. 1, 116.

<sup>121</sup> *μεταποίησις*, Φωλιανοὶ Ρειριδηῖ, ή, δήτι *έργοντος φωλιαροῦ μεταποίησις μεταποίησις* τη<sup>τη</sup> ς. Σωτηρίανη<sup>η</sup>αν, Θύνηακαν τη<sup>τη</sup>αποθήσιν..., ζ. β., μ. 1, έξ 16—17:

Քաղաքաշինության ասպարեզում հայ Արշակունիների վերջին ակտը եղել է Արշակավանի հիմնադրումը, որը 4-րդ դարի կեսերին Անրքաղաքական պայմանների և դասակարգային պայքարի սրման արդյունք էր: Արշակ 2-րդի գահակալության ժամանակ (350—367/8 թթ.) Հայաստանում ավելի ևս ուժեղանում են կենտրոնախույս ուժերը, որոնց մղած երկարատև պայքարը կենտրոնական իշխանության դեմ հաճգեցրեց հայկական թագավորության անկմանը և երկրի քաղաքական անկախության վերացմանը: Արշակոնյաց պետության բարձրագույն պաշտոնյաները, նախարարները, աստիճանաբար վերածվել էին խոշոր ֆեոդալ-նողատերերի, և արդեն մ.թ. 4-րդ դարի կեսերին նրանց պայքարը կենտրոնական իշխանության դեմ ստանում է բացահայտ բնույթ: Սասանյան Պարսկաստանի կողմից նրահրվող այդ նախարարների դեմ պայքարելիս Արշակ 2-րդը փորձեց հենվել քաղաքների վրա, իսկ քաղաքային բնակչությունն, անկակած, պաշտպանում էր թագավորին: Այդ քամի անուղղակի առաջընթաց կարելի է համարել այն փաստը, որ կենտրոնախույս նախարարներին գլխավորող Մերուժան Արծրունին պարսկական զորքերի օգնությամբ ավելեց Հայաստանի համարյա բոլոր քաղաքները:

Արշակավանի հիմնադրման մասին պատմում են Փալ-  
ստոս Բուզանդն ու Մովսես Խորենացին: Եթե մեր երկու մա-  
տենագիրների վկայությունները քաղաքի հիմնադրման վե-  
րաբերյալ համընկնում են, ապա Արշակավանի կործանումը  
Ալարագրելիս ճրանց պատմածները տարբերվում են իրա-  
րից: Աշակավանը կառուցվել էր Արշակ 2-րդի կողմից Մա-  
սիսի հարավային ստորոտում, Կոգովիտ գավառում, ինչպես  
ենթադրում է Հ. Մանանդյանը, Արտաշատից Պարսկաստան  
տանող մեծ ճանապարհին մոտիկ<sup>122</sup>: Փալստոս Բուզանդը  
հաղորդում է, որ «չինեաց հիր արքայն դաստակերտ ի հովի-  
տըն անուանեալ ի Կոդ գաւառի... իսկ տեղին առանձնայր,

<sup>122</sup> Հ. Հ. Մանավելյան, Քննական տեսություն հայ ժաղովրդի պատմության, է. 2-րդ, մ. 1, էջ 161:

բաղարանայր. մեծացաւ բազմացաւ և ելից զհովիտն ամենայն: Ապա տայր հրաման աղքան Արշակ դնել անոն դաստիակերտին յիրակից անոնն Արշական: և շինեցին ևս անդ ապարան արքունի»<sup>123</sup>: Հայ մատենագիրները սովորաբար փառարանում են հայ թագավորներին այն բանի համար, որ նրանք կառուցել են այս կամ այն բաղաքը: Այս դեպքում, սակայն, նրանք խիստ կերպով դատապարտում են Արշակին: «Պատմահայրը, օրինակ, Արշակավանի հիմնադրումը համարում է նոյնիսկ թագավորի «գործ անմտութեան»<sup>124</sup>: Այդ բացատրվում է նրանով, որ իրենք մատենագիրները եղել են աշխարհիկ և եկեղեցական ֆեռապների դասակարգի գաղափարափոսները, և թագավորի կողմից ձեռնարկված ամեն մի միջոցառում ողղված եկեղեցու կամ համարաբական իրավունքների սահմանափակմանը, նրանց մոտ անբավականություն էր առաջացնում:

Նոր բաղաքի հիմնելուց հետո թագավորի առաջ կանգնում էր կարևորագույն հարց—ինչպես բնակեցնել նորակառուց բաղաքը: Արտաշեանների ժամանակ այդ հարցը լուծվում էր նոր երկրներ նվաճելու և այնուելից բաղարային բնակչությունը բոլոր կերպով նոր բաղաքներ քշելու միջոցով: Բայց ինչքանով որ արդեն մ.թ. 4-րդ դարում Հայաստանի թագավորներն ի վիճակի չեն նվաճողական արշավանքներ ձեռնարկելու, ապա ստիպված են որիշ, նոր աղբյուրներ որունելու: Իրավացի է Գ. Սարգսյանը, երբ գրում է: «Արշակ 2-րդը սկսեց բնակիչներ հավաքել երկրի ներսում: Նոր բաղաքներ բնակեցնելու այս եղանակը, որը կիրառվում էր հենում, նվաճված երկրների բնակիչներին տեղափոխելու հետ միասին, արտաքին նվաճումներից վաղուց հրաժարված 4-րդ դարի Հայաստանի համար մնում էր միակ հնարավորը»<sup>125</sup>:

Տիգրանակերտ բաղաքին վերաբերող վիմագրական:

<sup>123</sup> Փալսոս Բուզանդ, Գ, ԺԲ:

<sup>124</sup> Մովսես Խորենացի, Գ, ԻԵ:

<sup>125</sup> Г. X. Саркисян. Տիգրանակերտ, էջ 109:

նյութերը և մատենագրական տվյալները մանրամասն վերլուծելուց հետո, Գ. Խ. Սարգսյանը անդրադառնալով Արշակավանի մասին պահպանված վկացություններին, հշում է, որ Արշակի կառուցած քաղաքում ատեղծվել էին կազմակերպական ավանդիսի ձևեր, որոնք կարող էին ապահովել մի կողմից բաղաքի հպատակությունը թագավորական իշխանության, մյուս կողմից արշակավանցիներին շնորհված իրավունքների և արտօնություններին կենսագործումը: Այս պահանջները բավարարող կազմակերպությունը դարերի ընթացքում ատեղծված և 4-րդ դարի Հայաստանում գոյություն ունեցող բաղաքային համայնքն էր (πατεσία) ինչպիսին և հիմնադրվել էր Արշակավանում<sup>125ա</sup>:

Մեր աղբյուրները միտումնավոր կերպով Արշակավանը անվանում են «ժողով մարդկան մեղատրաց»: Որովհետև այն բանից հետո, երբ թագավորը «ես հրաման, որ որ անկենալ անդր բնակեսցէ, մի լիցի ի Վերայ նորայ իրաւունք դատաստանի բանզի աւանդառոք և պարտականք և ծառայք և վնասակարք և գողք և սպանող և կնամանք, և այլք պասպիսիք փախուցեալք անդր անկանչն»<sup>126</sup>:

Արշակավանի հնագետն հիմնադրման, այնպես էլ կործանման ճշգրիտ թվականը մեզ հայտնի չէ, քանի որ աղբյուրներում այդ մասին ցուցում չկա: Բայց անուղղակի տվյալների հիման վրա հնարավոր է որշակի ասել, որ բաղաքը հիմնադրվել էր Ներսես կաթողիկոսի Բրոգանդիա գնալոց (353 թ.) ոչ առաջ և կործանվել է ոչ ուշ, քան 364 թ., երբ «համարաբացն Հայոց ժողովեալ՝ դիմեցին ի վերայ ձեռակերտին Արշակավանի և հարին զնաւ սրով սուսերի յանձն մինչև ցկին, բայց ի տղայոց ստնիացաց: բազգի դառնացեալք էին իրաքանչիր ի վերայ ծառայքից իրոց և յանցաւրաց»<sup>127</sup>:

<sup>125ա</sup> Նույն տեղում, էջ 109—110:

<sup>126</sup> Մովսես Խորենացի, Գ, ԻԵ: Հմմտ. նաև Փալսոս Բուզանդ, Գ, ԺԲ:

<sup>127</sup> Մովսես Խորենացի, նոյն տեղում ինչ վերաբերում է Փալսոս Բուզանդի (Գ, ԺԲ) այն վկացության, թե «մատենեաց տէր ...զԱրշակավանն ի ձեռու հարուածոցն», ապա այն պատմական արժեքը չի ներկայացնում:

Վերսում շարտարված բոլոր փաստերը վկայում են բուռն քաղաքաշինության մասին Հայաստանում, սկսած վերջին Երվանդունիների ժամանակից մինչև հայ Արշակունիների թագավորության անկումը։ Դա, անկանոնած, վկայում է առևտորի, արհեստուների և ճարտարապետության զարգացման բարձր աստիճանի մասին, երկրի արտադրողական ուժերի զարգացման նշանակալից աստիճանի, հասարակություն ներսում աշխատանքի հնարակախճան բաժանման խորացման մասին։

Անտիկ հեղինակների տվյալները հնարավորությունն են տախի պարզորոշ կերպով նետնելու քաղաքաշինության պրոցեսին հելլենիստական աշխարհում և առանձնացնել այդ պրոցեսի երկու տարրեր շրջաններ։ 1) Քաղաքների տարերային առաջացման շրջան, 2) Խուգավորի կամ տիրակալի կողմից կիրառվող քաղաքաշինության շրջան<sup>128</sup>։ Պիտի նշել, որ Հայաստանում քաղաքների տարերային առաջացման փուլը թույլ է արտահայտված։ Հին Հայուսունում քաղաքների հիմնադրման պատմությունը ցուց է տախի, որ Զաղաքաշինության գործը մեծ չափով գտնվում էր թագավորի ձեռքում։ Քաղաքի շինարարության գործում Հայաստանի ազատ բնակչության մասնակցության մասին միակ ակնարկը Պլոտարքոսի խոսքերն են այն մասին, թե «ամեն մի հաստրակ մարդ և դիմաստ, թագավորի Ըկառումամբ ունեցած հարգանքից, իրար հետ մրցում էին քաղաքի ընդարձակման ու բարեկարգման համար»<sup>129</sup>։

Ի՞նչ նպատակներ էին հետապնդում Հայաստանի թագավորները նոր քաղաքներ կառուցելով։ Այս հարցի մասնաւոր պատասխանը բխում է քաղաքաշինության մասին մեր ամբողջ շարտարանքից։ 1) Քաղաքներ կառուցելիս թագավորի գլխավոր նպատակն էր համախմբել տիրող դասակարգը, որը հիմնադրում էր թագավորական իշխանության հիմնական

հիմնարանը։ 2) Թագավորները ձգտում էին զարկ տալ Հայաստանում առևտորի ու արհեստուների զարգացմանը և այն պատճառով, որ առևտուրը հնկայական եկամուտ էր բերուի արքունի գանձարանին, իսկ արհեստուների զարգացումը խթանում էր առևտորի հետագա զարգացմանը։ 3) Քաղաքներ կառուցելով, Արտաշեսյան թագավորները ձգտում էին աշխատավորել հելլենիստական մշակույթը, որն իր հերթին պետք է որ ծառայեր ամբողջ հնկայական հասարակության մշակութային առաջընթացին, դրանով իսկ համեմիսանոր գաղափարական զենք Հռոմի եքսպանսիայի դեմ պայքարության<sup>130</sup>։

<sup>128</sup> Հմմատ. Դ. Խ. Սարգսյան, Տիգրանակերտ, էջ 73։

<sup>129</sup> Г. Խ. Սարգսյան, Կազմակերպություն, էջ 47 և հաջո.

<sup>129</sup> Plut., Lucul., XXVI.

ՔԱՂԱՔ-ՏԱԾԱՐՆԵՐԸ ԵՎ ՔՐՄՈՒԹՅԱՆ ԻԵՐԸ  
ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Արևելի մի շաբաթ երկրներին (Բաքեն, Փոքր Ասիա, Աստրիք և այլն) հնում հասուն է եղել քաղաքի յուրահատուկ ձև՝ տաճարային քաղաքները: Դրանցում քաղաքը, երաքնակշությունը այնչափ սերտորնն է եղել կապված քաղաքում գտնվող տաճարի, սրբավայրի հետ, որ դրանք մի միասնություն են կազմել թե՛ տնտեսական և թե՛ քաղաքական ու վարչական առումով: Նման տաճար-քաղաքներում, հասկանալի է, որ իր մեծ դերն է խաղացել քրմությունը, պայմանավորելով իրենով դրանց ընդհանուր նկարագիրը, և, միևնույն ժամանակ, այդ քաղաքների և, երանց կողքին, տաճարների գարգացման ցանցի վրա է եղել հիմնված այն հնկայական նշանակությունը, որ ունեցել է քրմությունը հիշյալ երկրների կյանքի բոլոր բնագավառներում:

Առկա աղբյուրները թույլ են տալիս եզրակացնելու, որ նման միավորներ գոյություն են ունեցել և իրենց աշքի ընկանող դերն են խաղացել նաև հին Հայաստանում: Դրանցից կարևորագույնն է եղել հենց պետության մայրաքաղաքը՝ Արմավիրը:

Գրավոր աղբյուրներում Արմավիրի մասին տվյալներն ընդհանրապես շատ են սույն և միատիպ, իսկ տեղեկություններ երա, որպես քաղաքի, առաջացման մասին խսպան քացակայում են: Մատենագրության մեջ, սակայն, արտացոլված է այդ պրոցեսի արդյունքը: Եվ այդ արդյունքի հիման վրա,

հետադարձ եղանակով, կարելի է վերարտադրել, ընդհանուր գծերով, այդ քաղաքի առաջացման ընթացքը:

Մովսես Խորենացին մի անգամ չէ, որ հիշատակում է Արմավիրը իրոն պաշտամունքային կենտրոն: Այսպես, երանակութածների համաձայն, Արտաշեսը, որը պատմահոր մոտ կիսապատմական-կիսաստասպելական անձնավորություն է, իր հաղթական արշավանքներից հետո արևոտքից գերեվարեց ու բերեց Հայաստան Ապոլոնի, Արտեմիսի և Հերակլեսի պղնձաձոյլ ոսկեզօծ արձանները, «զի կանգնեցնեն յԱրմավիր: Զոր առեալ քրմապետացն, որ էին յազգէ Վահունեաց, զԱպոլոնին և զԱրտեմիդայն կանգնեցին յԱրմավիր»<sup>1</sup>, հավանաբար այն նույն մեհյանում, որ Հայաստանի մի որիշ կիսավեգներար թագավոր Վաղարշակը կառուցել էր Արմավիրում<sup>2</sup>, որում «անդրիս հաստատէ արեգական և լուսնի և իրոց նախնեաց»<sup>3</sup>: Մի այլ տեղ Մ. Խորենացին հաղորդում է, թե «Արայեանն Արայ մեռանի ընդ Շամիրամայ ի պատերազմի, թողով արու զաւակ ամենահարուս և շատահանճար լիր և ի բան զԱնուշանն, որ Սու անուանիր, քանզի ձօնեալ էր ըստ պաշտամանց ի սօսիսն Արամենակայ, որ յԱրմավիր, զորոց զաղարթուցն սօսաին, ըստ հանդարս և կամ սաստիկ շնչալոյ օդոյն ևեթուս շարժումն, սովորեցան ի հմայս աշխարհիս հայկազնց, և այս քազում ժամանակական»<sup>4</sup>:

Վերոհիշյալ վկայությունները ստիպում են մեզ ենթադրել, որ Երվանդունիների մայրաքաղաք Արմավիրը սկզբից և եթ ունեցել է շեշտված կրոնական բնույթ: Արմավիրի, որպես քաղաքի, առաջացման ընդհանուր պրոցեսի պատկերը, հավանաբար, չէր տարբերվում Արևելքում հիմն քաղաքների առաջացման ընդհանուր պրոցեսից, որտեղ երանք առաջ-

<sup>1</sup> Մովսես Խորենացի, Բ, ԺԲ:

<sup>2</sup> Հմետ. Կ. Բ. Տրեబեր, Օչերքի..., էջ 104—105:

<sup>3</sup> Մովսես Խորենացի, Բ, Հ:

<sup>4</sup> Մովսես Խորենացի, Ա, Ի:

նույն էին «իբրև քաղաքներ, որոնք կառուցվում էին տաճարի շորջը, սերտ կերպով կապված էին տաճարի տերիտորիայով, այդ տաճարի տնտեսության հետ»<sup>5</sup>:

3-րդ—2-րդ դդ. սահմանագլխին Արմավիրի սրբավայրի գլխավոր քուրմը<sup>6</sup> կանգնած է եղել նաև արմավիրցիների քաղաքին համայնքի գլուխ<sup>7</sup>: «Եթե նոյն անձնափորությունը կարող էր միաժամանակ կանգնած լինել քաղաքի գլուխ և լինել գլխավոր քուրմ, ապա այդ, հավանաբար, վկայում է Արմավիրում աշնայի քաղաքացիական-տաճարային համայնքի գոյության մասին, որպիսին գոյություն են ունեցել Փոքր Սափայում, Պաղեստինում, Բաքերուսում»<sup>8</sup>:

Արմավիրի հետ միաժամանակ նոյն ճանապարհով առաջացել են նաև մի շարք այլ կենտրոններ, ինչպիսիք են Երիզան, Աշտիշատը, Անի-Կամախը<sup>9</sup>:

Նախաքրիտնեական Հայաստանում քրմական դասի քաղաքական ու տնտեսական կշռի մասին մի շարք վկայություններ են պահպանվել Ազգաթանգեղոսի, Մովսես Խորենացու և Հովհան Մատիկոնյանի մոտ, ինչպես նաև մեզ հասած Արմավիրի և Գառնիի հունարքներ արձանագրություններում: Այդ առնչությամբ որոշակի մի ակնարկություն կա նաև Պլոտարքոսի գրքին պատկանող Լուկովոսի կենսագրության մեջ: Ավելի շատ են Հայաստանին անմիջական հարևանության մեջ գտնվող Երկրների քրմական դասին վերաբերող տվյալները, որոնց հեղինակը հիմնականում Ստրաբոն է:

Այսպես, խուելով Կապպադովիայի Կոմանս տաճարային քաղաքի մասին, Ստրաբոնը վկայում է, որ «քաղաքի բնակիչները կատառնացիներ են, որոնք, իբր ենթարկվում են թագավորին, բայց առավել հնագանդ են քրմին... Ընդհանրապես, թագավորից հետո քուրմը երկրորդ անձնավո-

րությունն է Կապպադովիայում. մեծ մասամբ նոյնիսկ թագավորներն ու քուրմը պատկանում են մինույն տոհմին»<sup>10</sup>: Նման իրավիճակ է պատկերում դարձալ Ստրաբոնը, խուելով պոնտական Կոմանս քաղաքի մասին, որտեղ քուրմ «համարվում էր իր կարևորությամբ երկրորդ դեմքը թագավորից հետո»<sup>11</sup>: Նոյն դրույթունն էր տիրոս նաև Աղվանքում, որտեղ «քրմական պարուսանությունները կատարում են թագավորից հետո ամենահարգված դեմքը»<sup>12</sup>:

Անկառած, Հայաստանում և նոյնային սերտ փոխարքերություններուն կար թագավորի և քրմակեանի միջև, ինչ վերոհիշյալ երկրներուն: Դա ամենի քան պարզ երևում է Մովսես Խորենացու մի շարք վկայություններից: Այսպես, «Արայիան Արայ մեռանի ընդ Շամիրանայ ի պատերազմին, թողով արու զարկ ամենահարուստ և շատահանձար յիր և բան զԱնուշառան, որ Սոս անուանից քանզի ձօնեալ էր ըստ պաշտամանց ի սօսիս Արանանեկայ, որ յԱրմափր»<sup>13</sup>: Մի այլ տեղ Խորենացին հաղորդում է, որ Երվանդը «մենեան շինեալ, զեղքայր յիր զԵրուազ քրմակեան կացուցանէր»<sup>14</sup>: Այնուհետև, պատմելով նոյն Երվանդի շախչախման մասին Արտաշեսի կողմից, պատմահայրը դարձալ վկայում է, որ Արտաշեսի սպարապետ Ամրատ Բագրատոնին թագավորի կարգադրությամբ կործանում է քրմակեան Երվանդի Երվանդի եղբորը, և նրա փոխարեն «ի վերայ բագնացն կացուցանէ զընտանի Արտաշիսի...»<sup>15</sup>: Հետագա դեպքերի ընթացքը շարադրելիս, Խորենացին պատմում է նաև, որ Արտաշես թագավորը իր որդի Մածանին «կարգէ քրմակեան ի յԱնի դիցն Արամազդայ»<sup>16</sup>: Խուելով Վահունի քրմերի մասին, որոնք իրենց համարում էին Վահագնի սե-

<sup>5</sup> Н. Пигуловская, Города Ирана в раннем средневековье, М.-Л., 1956, էջ 17.

<sup>6</sup> Հ. Մանսնդյան, Արմավիրի Հունարեն արձանագրությունները....

<sup>7</sup> Г. Х. Саркисян, Тигранакерт, էջ 40.

<sup>8</sup> Անդ, էջ 41.

<sup>9</sup> Մովսես Խորենացի, Բ, ԺԴ.

<sup>10</sup> Strabo, XII, 2, 3, (C. 535).

<sup>11</sup> Strabo, XII, 3, 32, (C. 557).

<sup>12</sup> Strabo, XI, 4, 7, (C. 503).

<sup>13</sup> Մովսես Խորենացի, Ա, Ի,

<sup>14</sup> Մովսես Խորենացի, Բ, Ի,

<sup>15</sup> Մովսես Խորենացի, Բ, ԽԸ,

<sup>16</sup> Մովսես Խորենացի, Բ, ՍԴ.

րընդից, Խորենացին հաղորդում է, որ Վաղարշակ թագավորը նրանց է հանձնում քրմությունը «և կարգէ ընդ առաջին հայարարութիւնսն...»<sup>17</sup>:

Մեր այն ենթադրության օգտին, թե Հայաստանի քրմապետները նույնպես սերում էին թագավորական տիրմից կամ նոյնին իրենք թագավորներն էին լինում, խոսում է նաև Տակիտոսի վկայությունը այն մասին, որ հայ Արշակոնների հարատուրյան հիմնադիր Տրդառ 1-ինը (մ.թ. 62—80 թթ.) միաժամանակ նաև քուրմ էր: Այսպես, հոռմայեցի մատենագիրը պատմում է, որ բանակցությունների ընթացքում, ի պատասխան կայսր Ներոնի պահանջին, որի համաձայն Հայաստանի գամի պարթևական թեկնածու Տրդառը պետք է Հռոմ ներկայանար արքայական թագը նրա ձեռքից ստանալու համար, պարթևական թագավոր Վաղարշը, Տրդառի ավագ եղբարը, գրում է Ներոնին. «Տրդառը չէր հրաժարվի Հռոմ գալու թագն ընդունելուց, եթե նրան չարգելին քրմական պաշտոնի պարտականությունները»<sup>18</sup>: Գրավոր ալբյուրների այս բոլոր տվյալները վկայում են նին Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքում քրմական դասի ունեցած մեծ նշանակության մասին:

Փոքր Ասիայում և Հայաստանում հայտնաբերված վիմագրական հյուրթ մեզ իրավունք է տալիս պնդելու, որ քըրմերը նելկենիստական միապետությունների պետական գործերում խաղում էին նշանակալից դեր: Նշենք երկու օրինակ, մենք Փոքր Ասիայից, մյուս՝ Հայաստանից: Այսպես, Պեր-

<sup>17</sup> Մովսես Խորենացի, Բ, Ը,

<sup>18</sup> «Non recusaturum Tertidatem accipiendo diademati in urbem venire, nisi sacerdotii religione attineretur» (*Tacit.*, *Annal.*, XV, 24). Այս առթիվ Կ. Վ. Տրեբերը գրում է. «Տակիտոսի այս խոսքերից երեքում է, որ մ.թ. 1-ին դ. Հայաստանում գենես շարունակվում էր պահանջել արքայի և քրմի գունդցիանների միակցությունը (որը պարզվում է նաև հայերեն համապատասխան տերմինների-«արքայ» և «արքապետ»—մոտիկությամբ), մի երկույթ, որը Ֆ. Ենգելու նշել էր Հունաստանի գերարեցալ» (Կ. Վ. Տրեբեր. Օչերք... էջ 62—63):

գամոնի թագավորներ Եվմենես 2-րդը և նրա հաջորդ Աստալու 2-րդը մ.թ. ա. 163—156 թթ. աշխատվ գործարար համակագրություն էին վարում Պետիոններում գտնվող Կյուբեկի տաճարի քրմապետի, Աստիսի հետ: Վիմական արձանագրությունների ձևով մեզ են հասել վերոհիշյալ թագավորների 7 նամակ, ողղված Աստիսին, որոնց բովանդակությունը վկայում է այն մասին, որ երկու կողմերը բնարկում են սկսական կարևորագույն նշանակություն ունեցող գործեր<sup>19</sup>: Մագնեսիայի ճակատամարտից (մ.թ. ա. 190 թ.) և նրան հաջորդած Ասպամեյայի պայմանագրից հետո Սելևկանները դարձեցին փոքրախական գործերում որևէ կարևոր դեր խաղացուց: Նրանց տեղը փորձում են գրավել Հռոմի նախկին դաշնակիցներ՝ Պերգամոնի թագավորներ Եվմենես 2-րդը և նրա գահակից ու հաջորդ Աստալու 2-րդը: Սակայն այդ ևս ձեռնուու չէր Հռոմին, որը օժանդակություն էր ցուց տալիս Պերգամոնի նախառակրթներին: Այսպես, Հռոմի ծերակույտը, ի ներում Եվմենեսի շահերին, Փոյտիայում հաստատված և Պերգամոնի թշնամացած գալլական ցեղերին շնորհեց ինքնակարություն նրանց նախկին տոհմական սահմաններում: Այնուամենայնիվ Պերգամոնի թագավորները չէին հրաժարվու Գալատիան ենթարկելու իրենց մոտերություններից և Եվմենես 2-րդը Կյուբեկի տաճարի քուրմ Աստիսի օգնությամբ, Հռոմի սենատից գաղտնի, շարունակում էր թշնամական գործունեությունը Գալատիայի դեմ: Ակներեւորեն Պերգամոնի տերերը մեծ հանգնեություն էին ամուս: Եթե ամենազդը Հռոմը տեղեկանար այդ գաղտնի բանակցությունների մասին, ապա պարզ է, որ շնորհակալություն չէր հայտնելու նրանց: Այս հանգամանքը մեզ համոզում է այն մեծ վատահության մասին, որ վայելում էր քուրմ Աստիսը Պերգամոնի թագավորների մոտ, որոնք միասնաբար էին բնարկում պետական կարևորագույն գործեր:

<sup>19</sup> C. B. Welles, RC, 55—61.

Մի որիշ վկայագիր այն մասին, թե քուրմը գտնվում էր թագավորի հետ համարյա հավասար աստիճանում (ևս իրեն անվանում է „թշուլեն<sup>20</sup>“), մեզ հասել է Արմավիրից: Խոսքը վերաբերում է Արմավիրում հայտնաբերված № 4 հունարեն արձանագրության, (երկորդ քարի առաջին արձանագրությունը), որը Հ. Հ. Մանանդյանը դիտում է որպես Արմավիրի տաճարի քրմագետ Միթրաստ համակը Երրոնտես թագավորին: Արձանագրության մեջ հատկանշական այն է, որ Միթրասն իրեն անվանում է թագավոր, ինչպես և Երրոնտեսին, հանգամանք, որը վկայում է ոչ միայն նրա բարձր, տոհմիկ ծագման մասին, այն այն մասին, որ ևս թագավորի կողքին և նրա հետ միասին կարևոր դեր էր խաղում պետական գործերում<sup>21</sup>: Ս. Ի. Բոլտունովան<sup>22</sup> այդ արձանագրությունը մեկնարանում է որպես «հեղեղենիստական համակի սովորական ձև»: Դրանում ևս անպայման իրավացի է, քանի որ դա իր ձևով շատ հնան է թագավորությունի այն թագմաթիվ համակերին, որոնք հայտնաբերվել են հեղեղենիստական Արևելքի երկրներում: Սակայն չի կարելի համաձայնվել տվյալ արձանագրության 1—2 տողերի նրա առաջարկած ընթերցման հետ, որտեղ ևս կարդում է Օ ՎԱԾԻԱԵՒ ԱՐ[ΤԱԵԽԱ] ո երկրորդ տողի ՄԱՁՕԵԻՐՈՆ և երրորդ տողի ՄԻԹՐԱՏ բառերը համարում է Արտաքսիափ անոնը կամ տիտղոսը: Իր եզրակացությունները պատճառաբանում է նրանով, որ «այդ ժամանակաշրջանում (Մեծ Հայքում Արտաշեսի թագավոր հոչակվելուց հետո—Ս. Կ.) Արտաքսիափ իշխանություններ... դեռևս աննշան էր, և հայկական ոչ բոլոր իշխանները, որոնք Արտաքսիափ հնան, իրենք իրենց անվանում էին «թագավորներ»—թշուլեն, ենթակա էին իրեն...: Նման պայմաններում նրա դիմումը ինչ-որ Երրոնտի, որպես թագավորի, հավասար հավասարին, ամեն տեսակի բարեմաղթություն-

<sup>20</sup> Հմմտ. Հ. Հ. Մանանդյան, Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ, Երևան, 1946:

<sup>21</sup> A. I. Болтунова, Греческие надписи Армавира, Արմֆանի Տեղեկագիր, 1942, № 1—2:

ներով, դառնում է լրիվ հասկանալի»<sup>23</sup>: Դեռևս Հ. Հ. Մանանդյանն իր ժամանակին իրավացի կերպով նշել է այդպիսի վերծանումն ոչ միշտ լինելը և առաջարկել է այդ տողերը կարդալ ՎԱԾԻԱԵՒ ԱՐՄԱՁՕԵԻՐՈՆ ՄԻԹՐԱՏ<sup>24</sup>:

Ս. Ի. Բոլտունովայի առաջարկած վերծանումը և մեկնարանությունը մենք համարում ենք ոչ ճիշտ երկու պատճառով. 1) Քարի վրա արձանագրությունը գրալում է մոտավորացեան քառանկյուն տարածություն և առաջին սողում վերջին ԱՐ տառերից հետո տողը ևս Յ տառով լրացնելը և ԱՐΤԱՅԻԱԾ կարդալը այն դարձնում է շատ երկար և շատ է դորս բերում քառանկյան սահմաններից: Բացի այդ, քարի վրա ԱՐ տառերից հետո չի նկատվում և ոչ մի վկանվածք կամ շարդիք, իսկ ենթադրել այնուել կրճատում, հապալում, բոլորովին ամսիս է, քանի որ արձանագրության մեջ կրճատել թագավորի անունը ամփուլլատրեկի կիմերի: Այստեղ սողադրը ակներն է, այնպես, որ քանի շարունակությունը մենք պարտավոր ենք կարդալ հաջորդ երկրորդ սողում, որով կատացի ԱՐՄԱՁՕԵԻՐՈՆ: Նկատենք, որ հենց նույն այս արձանագրության մեջ երեք անգամ ևս (6, 7 և 8 տողերում) բառերի վերջին կեսը փոխադրված է հաջորդ սողերին (ԵԳ-ΓΟՆԱ ՄԱՐԱ-ՆՈՆ, ՎԱԾԻԱԵ-ԱՆ): 2) Արտաքսիափ-Արտաքսիափ ոչ մի կերպ չէր կարող հասուկ ուղերձով «ամեն տեսակ բարիք» մաղթել Երվանդին, քանի որ ինքը վերջինիս մահացու թշնամին էր և վերջին հաշվով կործանեց սրան<sup>25</sup>:

<sup>22</sup> А. И. Болтунова, նշված աշխ., էջ 50—51:

<sup>23</sup> Հ. Հ. Մանանդյան, նշված աշխ., էջ 19: Հ. Հ. Մանանդյանը ԱՐՄԱՁՕԵԻՐՈՆ բառի ձառար առաջարկում է կարգալ Բ, սակայն Գ. Խ. Արգոյանը ցույց է տալիս, որ բարիք վրա պարզ երևում է ձառար և առաջարկում՝ փորագրողի թույլ տված սխալ տեսնելով այսուհետեւ (հմտ. Կ. Բ. Տրեար, նշվ. աշխ., էջ 136), վերականգնել Կ տառը և կարգալ՝ Արյառաջարան, հիմք ունենալով Պաղոմեսոսի մոտ (Վ, 12, 5) տեղ գտած Արյառաջարագրությունը:

<sup>24</sup> Մովսես Խորենացի, Բ, ԽԶ: Հմմտ. հան Strabo, XI, 14:

Հիմնվելով Ս. Ի. Բոլտոնվայի այս կասկածելի վերծանման վրա, Ա. Գ. Բոկշամինը ենթադրում է, որ այս արձանագրության մեջ հիշատակված Երրոնը հանդիսանում էր Կոլխիդայի թագավոր, որի հետ Արտաքսիաը «մտավ քաղաքական սերտ հարաբերության մեջ»<sup>25</sup>: Արձանագրության վերծանման շուրջ այս դիտողություններից հետո Բոկշամինը ենթադրությունը դառնում է անհիմն:

Մեզ թվում է, թե շատ է անորոշ Կ. Վ. Տրեվերի հայտնած ենթադրությունը: Իր արժեքավոր աշխատության մեջ նա գրում է. «Թեպետ № 4 արձանագրության թերատության պատճառով չի հաջողվում որոշել դրա ընթերցումը և տալ իմաստավորված թարգմանությունը, այնուամենայնիվ լիովին թույլատրելի է ենթադրել, որ տվյալ դեպքում դարձյալ գուշակության նպատակով կարող էր բերված լինել հատված ինչ որ ողերծից, որը մտնում էր այդ ժամանակներում հանրածանոթ գրական որևէ մի ստեղծագործության մեջ, որում ի միջի այլոց, հանդիպում է նախագուշակում բարեհաջող թագավորության մասին և քաջառողջության մալթանք»<sup>26</sup>:

Այսպիսի աղոտ և անորոշ պատկերացումը, մեր կարծիքով, հետևանքն է այն բանի, որ Կ. Վ. Տրեվերը Արմավիրի բոլոր արձանագրություններում ցանկանում է տեսնել սովոր Արմավիրի մեջյանի պատգամախոտի գուշակումը:

Այս արձանագրությունը հասկանալուն որոշ չափով կարող է օգնել նրա համեմատումը 1945 թ. Գառնիում հայտնաբերված և մի շարք անգամներ սովորական գիտնականների կողմից մեկնաբանված Տրդատ թագավորի արձանագրության հետ<sup>27</sup>: Այս կապակցությամբ հետաքրքիր է Արմավիրի № 4

<sup>25</sup> Ա. Գ. Եօքանին, Պարֆիա և Ռим, գ. 1, Լ., 1960, էջ 224:

<sup>26</sup> Կ. Վ. Տրեվեր, նշված աշխ., էջ 137:

<sup>27</sup> Ս. Լիսիցյան, «Ա. Հայաստան» թերթ, 23—9—1945 և «Կոմունիստ» թերթ 30—9—1945: Հ. Մանանյան, Գառնիի հունարենարձանագրությունը և Գառնիի հունարենական տաճարի կառուցման ժամանակը, Երևան, 1946: Ա. Ա. Աբրահամյան, Գառնիի հունարենարձանագրությունը և Գառնիի հունարենական տաճարի կառուցման ժամանակը, Երևան, 1946:

արձանագրության մեջ հիշատակված ՄΙΘՐԱԾ անունը համարել Գառնիի արձանագրության ՀԱԼԻՕԾ անվան հետ: Ինչպես հայտնի է, Միթրաս անվան տակ պաշտված աստվածությունը նույնացվել է Սարդոն-Արևի հետ (ՀԱԼԻՕԾ հշանակում է «արև»): Այս բանի փայլուն ապացուցք մենք գտնում ենք Կոմագենեի Անտիոքու թագավորի Նեմրուտ-դաղի հայտնի հուշարձանում, որտեղ միևնույն աստվածությունը կոչված է ΑΠΟΛΛΩΝ ՄΙΘΡΑԾ ՀԱԼԻՕԾ ΕΡΜΗΣ<sup>28</sup>: Մյուս կողմից, հայկական Տիր (այստեղից էլ Տրդատ անունը) աստվածը նմանապես նույնացվել է Սարդոնի հետ:

Գառնիի արձանագրությունն սկսվում է թագավորի տիտղոսով, որի առաջին բառը պահպանվել է անվանս, իսկ երկրորդը՝ վերևույն վնասված լինելով հանդերձ, կարդացվում է առանց մեծ դժվարության: Ուստի բոլոր հրատարակողները ճիշտ կերպով այն կարդացել են՝ ՀԱԼԻՕԾ ՏԻՐԻԴԱՏԻՑ: Սակայն, ճիշտ ընթերցելով հանդերձ, նրանք, մեզ թվում է, չեն կարդացել ճիշտ մեկնաբանել ՀԱԼԻՕԾ բառը: Ստ. Լիսիցյանը այն թարգմանել է պարզաբան «արև»<sup>29</sup>: Հ. Մանանյանը արձանագրության իր առաջին ընթերցման ժամանակ ՀԱԼԻՕԾ բառը հնարավոր էր համարել նույնացնել լատինական Aelius անձնանվան հետ, ենթադրելով, որ Տրդատը (իր կարծիքով դա Տրդատ Յ-րդն է) այս անունը կարող էր ստացած լինել Հռոմում եղած ժամանակ<sup>30</sup>: Ա. Արրա-

ձանագրությունը, «Եջմիածին», 1947, ժարա-ապրիլ: յ. Ա. Մանանյան, Նորմա զամետ օրենքության համար և այլական առաջարկությունների մասին, ՀԱՀ ԳԱԱ ԳԱ 1951, թ. 4: Բ. Խ. Առաքելյան, Գառնի I, Երևան, 1951: Կ. Վ. Տրեվեր, նշված աշխ. էջ 174—211: Գ. Սարգսյան Գառնիի հունարենարձանագրությունը և արձանագրությունը և Մ. Խորենացին, ՊԲՀ, 1863, թ. 3, էջ 229—234: Ս. Կրկյաց առաջարկության մասին, ՊԲՀ, 1965, թ. 3, էջ 235—238:

<sup>28</sup> Տե՛ս K. Humann und O. Pachstein, Reisen in Kleinasiien und Nordsyrien, Berlin, 1890, էջ 273:

<sup>29</sup> «Սովորական Հայաստան» թերթ, 23 սեպտեմբերի, 1945:

<sup>30</sup> Հ. Մանանյան, Գառնիի հունարենարձանագրությունը, էջ 5—16:

համյանն այն թարգմանել է որպես թագավորի անվան ածական՝ «արեգակնախալլ»<sup>31</sup>: Կ. Վ. Տրեվերը այն համարում է ուղղակի արձանագրության սկզբում դրված աստծո հիշատակում<sup>32</sup>, իսկ Գ. Սարգսյանը ՀԱԼԻՕԾ -ի հիշատակումը հնարավոր է համարում «կապել թագավորի և դինաստիայի այն պաշտամունքի հետ, որն ընդունված էր հին Հայաստանում հարևան հեղենիստական երկրների օրինակով»<sup>33</sup>: Ստ. Լիսիցյանը, Ս. Արքահամյանը, Կ. Տրեվերը, Բ. Առաքելյանը<sup>34</sup>, Գ. Սարգսյանը իրավամբ գտնում են, որ այս արձանագրությունը վերաբերում է Տրդատ Ա-ին: Այսպիսի ելակետը հեշտացնում է ՀԱԼԻՕԾ բարի բացատրությունը: 1951 թ. Հ. Մանանդյանը կրկին անդրադառնալով Գառնիի արձանագրությանը, որոշ չափով վերանայեց իր տեսակետը առաջին տողի վերաբերյալ, առանց սակայն հրաժարվելու իր այն կարծիքից, որ արձանագրությունը պատկանում է Տրդատ Յ-րին: Նա հրաժարվեց ՀԱԼԻՕԾ բարը հովումնական Aelius անվան հետ նույնացնելոց: Վերջին հետազոտությունները մի հետաքրքիր փաստ են պարզել այն մասին, թե Տրդատն ունեցել է Տիրան-Տրդատ երկակի անունը<sup>35</sup>: Մրանից Հ. Մանանդյանը հետևեցնում է, որ արձանագրության ՀԱԼԻՕԾ բարը Տիրան անվան հովումնական թարգմանությունն է<sup>36</sup>: Հ. Մանանդյանը այս հետաքրքիր և միանգամայն ընդունելի եզրակացությունն անելով հարցը լուծված է համարում: Մենք կարծում ենք, որ նրա այս հնարքությունը բանալի է Արմավիրի՝ վերևում մեր քննարկած արձանա-

<sup>31</sup> Ս. Արքահամյան, Գառնիի հունարեն արձանագրությունը, էջ 67.

<sup>32</sup> Կ. Վ. Տրեվեր, Օчерки..., էջ 203.

<sup>33</sup> Գ. Սարգսյան, Գառնիի հունարեն արձանագրության շուրջը, էջ 48, ժան. 2: Նույնի, Հեղենիստական գարաշըանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան, 1966, էջ 58—59:

<sup>34</sup> Ե. Ի. Առաքելյան, Գառնի, 1, էջ 64 և հաջ.:

<sup>35</sup> Կ. Մելիք-Օհանջանյան, Տիրան-Տրդատի վեպը բար Փավստոս Բուղանդի, «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ, 1947, Առ. 6 և 7:

<sup>36</sup> Ա. Ա. Մանոհյան, Новые заметки о греческой надписи и языческом храме Гарни, «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ, 1951, № 4, էջ 13:

գրության ընձեռած տվյալներով ՀԱԼԻՕԾ բարի առեղծվածը լուծելու համար: Արմավիրի արձանագրության մեջ քրմապետ-թագավորը կոչվում է ՄԻԹՐԱԾ այն Է՝ արևի աստվածության անունով, իսկ Գառնիի արձանագրության մեջ Տրդատ թագավորը, որը, ինչպես տեսանք Տալիստոսի վկայությունից, միաժամանակ քորում էր, ինչեւ անվանում է ՀԱԼԻՕԾ ՏԻՐԴԱԹԻ: Մնում է ենթադրել, որ ՀԱԼԻՕԾ դա նրա տիտղոսն է կամ համելյալ անունը իրեւ քորի, իսկ ՏԻՐԴԱԹԻ նրա անձնական թագավորական անունը:

Վերևում հիշատակված վիմագրական նույնի տվյալները և Խորենացու վկայությունները մեզ հիմքեր են տպիս պահպանությունը և հարևան մյուս երկրներում<sup>37</sup>, երկրորդ դեմքըն էր թագավորից հետո, երրենն քրմապետի պարտականությունները նոյնիկ միահյուսվում էին թագավորի պարտականություններին և մինևոյն անձը հանդիսանում էր միաժամանակ թագավոր և քրմապետ, ինչպես այդ պարզվում է Գառնիի հունարեն արձանագրությունից:

Ինչի՞ վրա էր հիմնված եղել քրմերի պարձ դիրքը հին Հայաստանի հասարակության մեջ: Հայարակական հարաբերությունների հիմքում միշտ ընկած են տնտեսական հարաբերությունները տարբեր դասակարգերի միջև: Հայաստանում քրմերի բարձ դիրքը և հեղինակությունը հիմնված էր բացի գաղափարական հշանակությունից, նաև տաճարների և տաճարային տնտեսությունների տնտեսական հզորության վրա<sup>38</sup>: Մեր ուսումնասիրած ժամանակաշրջանում տաճարների հարաբերությունը բաղկացած էր նողային ընդարձակ տիրություններից և այդ նողերի վրա բնակեցված և դրանց վրա աշխատող շահագործվող տաճարային սորուկ-

<sup>37</sup> Strabo, XII, 2, 3 (C. 535); XI, 4, 7 (C. 503); XII, 3, 32 (C. 557):

<sup>38</sup> Հայաստանի տաճարային տնտեսությունների մասին առկա՝ Ա. Գ. Պերսիանյան, Храмовые объединения Малой Азии и Армении. М. 1959.

Հայաստանում տաճարների տևականական հզորությունը և դրա հետ միասին հրանց քաղաքական ազդեցուրյունը, հայվանաբար, ամելով սկսեց հասնել թագավորական իշխանության համար վատանգավոր չափերի: Հատ երկուոցին տաճարների և հրանց սպասարկողների, քրմերի հետագա հզորացումը կանխելով նպատակով Երվանդը երկրի կրոնական կենտրոնը Արմավիրից փոխադրում է ոչ թե իր նոր կառուցած Երվանդաշատ մայրաքաղաքը, այլ Բագարան: «Բայց Երվանդ շինեալ զբաղաքն իր,—գրում է Խորենացին, —և փոխեալ անդ զամենալու ինչ յԱրմարայ ուրոյն ի կողն. զոր ոչ օգուտ իր համարեալ յիւր փոխել ի քաղաքն, զի մի ի գալն և ի զոհել անդ աշխարհի, ոչ զգուշութեամբ պահեսցի քաղաքն. այլ հեռագոյն ի հման իրը քառասուն ասպարագ զիմիստով՝ հման իր քաղաքին շինեալ քառար փոր ի մե-

<sup>29</sup> Անվես Խարենացի, Բ., ԽՀ

40 Նորին անեղություն

բայ գետոյն Ախորենայ, և անուանեաց Բագարան, այսինքն թէ ի նմա յօրինեալ է զկազմութիւն բագնացն. և փոխեաց անդր զամենայն զկուոսն որ յԱրմահիր: Եւ մեմեանս շինեալ, զեղբայր իւր զերուազ քրմասեան կացուցանելո»<sup>41</sup>:

Վերևում մենք նշեցինք, որ քրմավետին պատկանող հողերի վրա ապրելիս և աշխատելիս են եղել ոչ թե ազգայ մարդիկ, այլ ծառանձեր, որոնց, որպես սեփականություն, տերը կարող էր տեղափոխել և բնակեցնել այս կամ այն վայրը: Սյապիսի վիճակ էր տիրում նաև Հայաստանի հարեւան երկրներում, հատկապես Կապաղովկիայի Կոմանա և Մորիմենա տաճարային քաղաքներում, ինչպես նաև Պուտական Կոմանայում: Այդ մասին մեզ ընդարձակ տեղեկություններ է հաղորդում ականատես Սորարոնը: Սյապես, Կապաղովկիայի Կոմանա քաղաքի մասին, որտեղ գտնվում էր Մադիցում հայտնի տաճարը, նա գրում է. «...քրութ տերն է տաճարի և տաճարային ծառանձերի (ծ ծ ո՞ Ծ' լըօթ հյուծ էստ ու տօն լըօթօննան), որոնք մեր այնտեղ կատարած այցելության ժամանակ ամենի քան վեց հազար էին, կանոք և տղամարդիկ միասին: Տաճարին կից կա ընդարձակ հողամաս, որի եկամտութերից օգտվում է քրութ»<sup>42</sup>:

Սորիմենա քաղաքի մասին Ստրաբոնը գրում է, թե այս-  
տեղ «գտնվում է Վենայան Զևսի տաճարը, որն ունի մոտա-  
վորապես երեք հազար տաճարային ծառաների համար քևա-  
կատեղի (իշրջան) ոչուռիան չշու դրչչլիան ցշճոն ւ»  
և բարեքեր տաճարային հողամաս, որը քրմին տպին է տա-  
րեկան 15 տաղանդի եկամուտ»<sup>43</sup>: Մոտավորապես հուշա-  
պատկերն է Ակարու Ստրաբոնը, խոսելով Պոնտական Կո-  
մանա քաղաքի մասին»<sup>44</sup>:

Մի այլ տեղ Ստրաբոնը խոսելով Զելէ քաղաքի մասին, որը գտնվում էր իր ծննդավայր Ամասիա քաղաքի մոտ, նշում

<sup>41</sup> Մովսես Խորենացի, Բ, ի.

<sup>42</sup> *Strabo*, XII. 2, 3 (C. 535).

<sup>43</sup> Strabo, XII, 2, 5 (C. 537).

<sup>44</sup> Strabo, XII, 3, 32 (C. 557).

է, թե այնտեղ կառուցվել է Անահիտ դիցություն տաճարը, որին մնացարում են նաև հայերը, թե տաճարային ծառամերի թիվը և քրմերի վայելած հարգանքը և պատիվը թագավորի կողմից նույնափակին է, ինչպահին ինքը նկարագրել է հայերի մոտ Անահիտի պաշտամունքի մասին խոսելիս: Այսուհետև նա ավելացնում է, թե պարսից արքաները «հնում Զելեն համարում էին ոչ թե բաղաք, այլ պարտկական աստվածների պրավագյուղ: Քուրմը տերն էր ամեն ինչից: Այն բնակեցված էր բազմաթիվ տաճարային ծառամերով և բուրմը շատ հարուստ էր: Սրբավայրի շրջապատում կար ոչ քիչ սրբազն հող, որը պատկանում էր քրիստոն»<sup>45</sup>:

Նմանօրինակ դրույթուն էր տիրում նաև Հայկական լուսաշխարհից հյուսիս-արևելք ընկած երկրներուն: Այսպես, խոսելով Աղվանքում բնակվող ցեղերի մասին, Ստրաբոնը դարձյալ գրում է, թե «նրանք իբրև աստվածների պաշտում են Արևը, Զևսին և Լուսինը, բոլորից առավել Լուսինը: Արա տաճարը գտնվում է Իրերիայից ոչ հեռու: Քրմական պարտավորությունները կատարում է ամենահեղինակավոր անձը թագավորից հետո: Նա կանգնած է սրբազն հողի գլուխ, որը ընդարձակ է և լավ բնակեցված, ինչպես նաև գլխավորում է տաճարային ծառամերին»<sup>46</sup>:

Իրերիայի բնակչության չորս դասի (τέτταρα γένη) բաժանված լինելով մասին Ստրաբոնի հայտնի հաղորդումից<sup>47</sup> պարզվում է, որ Իրերիայում ևս քրմական դասը խոշոր դեր է ունեցել երկրի քաղաքական կյանքում: Ստրաբոնի ժամանակ եթե այդպիսին էր դրույթունը Հայաստանին սահմանակից երկրներում, ապա ոչ մի հիմք չունենք կասկածելու Հայաստանում և համամատ հարաբերությունների գոյության մասին:

<sup>45</sup> Strabo, XII, 3, 37 (C. 559). Տաճարային հողերի վրա աշխատող անմիջական արտագրողների մասին մանրամասն տե՛ս A. G. Периканян, Храмовые объединения Малой Азии и Армении, М., 1959, գլուխ երրորդ:

<sup>46</sup> Strabo, XI, 4, 7 (C. 503).

<sup>47</sup> Strabo, XI, 3, 6.

Սկզբնադրյուրների վկայություններից կարելի է նետեցնել, թե ինչպես Փոքր Ասիայի երկրներում, այնպես էլ նին Հայաստանում, որոշակի համերաշխություն կար թագավորական իշխանության և քրմական դասի միջև: Դրա յուրատեսակ արտահայտությունը մենք տեսնում ենք Սորիսեան քաղաքում գտնվող Զևսի տաճարի քրմի մասին Ստրաբոնի այն հաղորդման մեջ, թե «այս քուրմը ցլյան է (διά βίον), ինչպես և Կոմանայի քուրմը»<sup>48</sup>: Հետևաբար, ինչպես ցլյան էր թագավորի իշխանությունը, այնպես էլ ցլյան էր քրմական պաշտոնը: Հավանական է, որ թագավորը իրավունք է ունեցել խախտելու այդ կարգը և զրկելու քրմերին իրենց պաշտոնից: Համենայն դեպք, մեզ հայտնի է Խորենաց մատյանում եղած մի վկայություն, որի համաձայն Տիգրան թագավորը «ցասուցեալ ընդ Վահունիսն, եթէ ընդէր յիրեանց սեպականին իշխեցին կամքել զպատկերն Հերակլի, զառաքեալն ի նորին հօրէ ընկենու զնոսա ի քրմունեն, և զգնդն յարքունիս առնու, յորում պատկերքն կանգնեցան»<sup>49</sup>:

Սակայն թագավորները, շահագրգուված լինելով քրնության օժանդակությունը վայելելու խնդրով, ընդհանուր առմամբ խիստ բարյացակամ քաղաքականություն էին տանում նրա նկատմամբ: Դրա կարևոր արտահայտություններից մեկն այն առան նվիրատվություններն էին, որոնք ստանում էին տաճարները: Քրմերի ձեռքում և տաճարներում ժամանակի ընթացքում կոտսակվում էր մեծ հարատություն տաճարներին կատարված ինչպես հողային, այնպես և նորութական նվիրատվությունների միջոցով<sup>50</sup>:

<sup>48</sup> Strabo, XII, 2, 5 (C. 537).

<sup>49</sup> Մովսես Խորենացի, Բ, ԺԴ:

<sup>50</sup> Տաճարների հարստությունը Հաճախ գայթակղեցնում էր թագավորներին և նրանք փորձում էին այդ գանձերը կողոպտելով լցնել իրենց դատարկված արքունիք զանձարանը (հմտ. Diodor., XXVIII, 3; XXIX, 5; Strabo, XVI, որտեղ խօսվում է էլեմայիսում խոշոր տաճարի գանձերը հափշտակելու ուզությամբ Անտիոքոս IV-ի կատարած անհաջող փորձի մասին, որի համար էլ թագավորը հատուցեց իր կյանքով):

Հողային նվիրատվություններ կարող էր անել նա, ով սեփականատերն էր այդ հողերի և իրավունք ուներ ազատորեն, ըստ իր հայեցողության, տնօրինել դրանք: Իսկ այդպիսի անձնավորությունն բոլորից առաջ հանդիսանում էր ինքը՝ թագավորը: Դրա պատճառով էլ տաճարներին (ինչպես և առանձին մարդկանց) նվիրատվություններ անում էին թագավորները: Այդպիսի փաստեր արձանագրված են Փոքր Սսիայի հելլենիստական թագավորների՝ քաղաքներին ողղված համակենտրոն: Այսպես, Պերգամոնի թագավորներից մեկը (հավանաբար Աստուալու 2-րդը) իշխու քաղաքին հղած իր համակրու հիշատակում է անասունների և հողային որոշ տարածության նվիրաբերման մասին Աթենաս դիցություն: Այստեղ հետաքրքրական է նշել, որ անասունների հետ միասին, դրանք խնամելու համար, թագավորն ուղարկում է նաև հոտաղներին (Յունական):<sup>51</sup> որոնք տաճարի տնօնկության մեջ, հավանաբար, դառնալու էին տաճարային ծառաներ, հիերոդումներ: Մ. թ. ա. երկրորդ դարի վերջներին թագավորած Անտիոքոսներից մելին վերագրվող մի այլ համակ, ողղված բարձրաստիճան պաշտոնյաներից մեկին, վերաբերում է Բայոնկայկեյում գտնվող Զևսի տաճարին (Διός Βα: τοναίκης) արված նվիրատվություններին: Այդ համակում հաղորդվում է այն մասին, որ թագավորը ետ է յերադունում տաճարին այն հողերը, որ Աթենայան թագավորները իրենց տիրապետության առաջին շրջանում վերցրել են տաճարից և պարգևել իրու ծառեա մակենացի ծառայող Դեմետրիսին:<sup>52</sup> Հելլենիստական աշխարհի թագավորները տաճարներին և դրանց սպասարկություններին, քրմերին, նվիրում էին ոչ միայն հողային տիրույթներ, այլև որից ունեցվածք, շարժական և անշարժ: Այսպես, հելլենիստական թագավորի (հավանաբար Աստուալու 1-ինի) համակը քրմական պաշտոնի հաստատման պայմանների մասին, ողղված մի պաշտոնյակի, հավաստում է, թե քուրմը պետք է իր նվիրատվությունը նվիրատվությունների և գիտարկ ինչպես նաև արիեւատանցների եկամուտը, որոնք թագավորը նվիրել է տաճարին:<sup>53</sup>

Հելլենիստական թագավորի կողմից սրբատեղներին արված հողային նվիրատվությունների մասին անժամեալի վկայություններ կան Կոմմագենեի Նեմրուդ լեռան հողունի մեծ արձանագրությունում, որտեղ այդ ոչ մեծ թագավորության գահակալ Անտիոքու 1-ինը պատմում է աստվածների, հերոս հայսենների և իրեն՝ թագավորի պաշտամունքի կազմակերպման մասին: Այդ սրբավայրը սպասարկելու համար հաստատված էին քրմեր և տաճարային ստրուկներ (ιερόδωλοι): Սրբավայրը տնօնեապես ապահովելու համար թագավորը տաճարին նվիրել էր «քավարար քանակությամբ նողեր և դրանից ստացվող կայուն եկամուտ» (χώραν τε ἵκανήν καὶ πρόσδους ἐξ αὐτῆς ἀκενήτους):<sup>54</sup>

Այս կապակցությամբ չի կարելի ուշադրություն չդարձնել մի ուրիշ համակի վրա ևս, որը հասցեագրել է Աթենկու 1-ինը Միթևա քաղաքին, որով հաղորդում է Դիդիմեան Սպուրնի տաճարին իր ողարկած թանկարժեք նվերների մասին: Նամակին կցված է հետաքրքիր ցուցակ, որում մանրամասն թվարկված են Աթենկու ողարկած նվերները Սպուրնի տաճարին. զանազան ունենալու արծողությամբ, 10 տաղանդ անուշանու յուղ, 1000 ոչխար, 12 գլուխ խոշոր եղշերավոր անասուն (βοῦς) և այլն<sup>55</sup>:

Կարծում ենք, որ այս համակեների և Արմավիրի № 3 հունարեն արձանագրության համադրումը որոշ չափով հնարավորություն կտա պարզելու վերջինիս բնույթը: Ա. Ի. Բրի-

<sup>51</sup> «...λαμπενέτω τῶν θυσμάνων γέρα τὸ δέρμα καὶ κολεὸν καὶ τῶν ἑρατεῖτων ὡν ἀνατέθητα τὴν πρόσοδον» (C. B. Welles, RC, 24).

<sup>52</sup> K. Humann und O. Puchstein. Reisen in Kleinasien und Nordsyrien, Berlin, 1890, էջ 265.

<sup>53</sup> C. B. Welles, RC, 5.

<sup>54</sup> C. B. Welles, RC, 62.

<sup>55</sup> C. B. Welles, RC, 70.

Առանձին հետևյալ կերպ է ընթերցում այդ արձանագրությունը.

τέτταρες  
ίπποι τὸ ζεῦγος  
Εὖθυγχροί [δύο]  
πινάκιον ἐ[ν]  
Πηγλαρύδο[ς]

և այն համարում է Արմավիրի տաճարին արված նվիրաբերությունների թվարկում և թարգմանում է հետևյալ կերպ. «Չորս ձի, կառք, որ նվիրաբերել է Եվթիքարմիդեաը և ոչ մուծ մի պատկեր, որը նվիրաբերել է Պելամիդեաը»<sup>56</sup>: Խակ Կ. Վ. Տրելվերը, հիմնվելով ակադ. Յա. Ի. Սմիռնովի այս արձանագրության մասին թողած ձեռագիր մեկնարանությունների վրա, առաջարկում է կարդալ՝

τέτταρες  
ίπποι τὸ ζεῦγος  
εύθυ Χάραι,  
πινάκιον εῖ(μι)  
Πηγλαρύδο(ս)

և տախու է հետևյալ, առաջինից բոլորովին տարրեր թարգմանությունը. «Չորս ձի (և) կառք (նվիրված) Հարմային, տախտակն եմ Պելամիդեախ»<sup>57</sup>: Ակադ. Յա. Ի. Սմիռնովը և նրան հետևելով Կ. Վ. Տրելվերը ենթադրում են, որ այս արձանագրությունը ևս, Արմավիրի մյուս արձանագրությունների նման, նվիրաբերական բնույթ ունի կամ թե հատված է գրական ինչ-որ երկից<sup>58</sup>:

Այնուամենայնիվ, ավելի ընդունելի ենք համարում Ա. Ի. Բոլտոնովայի՝ արձանագրության բառերը իրենց ուղիղ հմաստով վերցնելը: Օրինական հարց է ծագում. ինչո՞ւ ար-

<sup>56</sup> А. И. Болтунова, նշված աշխ., էջ 42:

<sup>57</sup> К. В. Тревер, նշված աշխ., էջ 132:

<sup>58</sup> նույն տեղում, էջ 132 և 156:

ձանագրության բառերի մեջ փաստել խորհրդանշական կամ փոխարերական իմաստ, ինչպես այդ ամուս են Յա. Ի. Սմիռնովը և Կ. Վ. Տրելվերը, այն ժամանակ, եթե այդ նույն բառերը ուղիղ իմաստով վերցնելը լիովին բանական է և չի հակասում պատմական իրականությանը: Տվյալ արձանագրության ընթանուր իմաստը հետևյալն է. ինչ-որ Եվթիքարմիդես նվիրաբերում է տաճարին չորս ձի և կառք, իսկ ոմն Պելամիդես՝ ունակություն:

Այս ոչ մեծ արձանագրության առաջին մասի բնույթի վերաբերյալ կարելի է երեք ենթադրություն անել: Առաջինը բխում է դարձայլ Ստրաբոնի մեզ հայտնի այն վկացությունից, թե Հայաստանը հնուց ի վեր հարուստ է եղել ձիաբուծության համար արոտավայրերով (ուսութուուց):<sup>59</sup>

Այնուհետև նա հաղորդում է, որ Հայաստանի սատրապը ամեն տարի պարսից արքային ողարկում է 20000 մորմեկ՝ Միթրական տոների համար (ուս Միթրաւուու): Վերևում մենք նկատեցինք, որ Արմավիրի № 4 արձանագրության մեջ որպես Արմավիրի տաճարի քրմապեսի մականուն կամ տիտղոս հիշատակվում է ՄԻԹՐԱԾ անունը: Ամենայն հավանականությամբ Արմավիրի տաճարը նվիրված էր Միթրաս-Միթրին և դրանուն Միթրի պաշտամունքը մեծ տեղ էր գրավում: Ուստի լիովին բնական է ենթադրել, որ արձանագրության մեջ հիշատակված չորս ձիերը նվիրել են տաճարին, Միթրի տոնակատարությանը զոհաբերելու համար: Սակայն, այս դեպքում անբացարձելի է մնան ձիերի հետ կառքի նվիրաբերությունը: Ուստի բացառված չէ նաև երկրորդ ենթադրությունը, որ չորս ձիերը և կառքը նվիրաբերված են տաճարային տնտեսության մեջ օգտագործելու համար: Հնարավոր է նաև մի երրորդ ենթադրություն, որ այս փոքր արձանագրությունը եղել է տաճարային տնտեսության ունեցվածքի գույքագրության ցուցակի մի հատված: Այնուամենայնիվ, այս դեպքում ևս Եվթիքարմիդեաը և Պելամիդեաը մնում են թվարկված

<sup>59</sup> Strabo, XI, 13, 7 (C. 525): XI, 14, 9 (C. 530): Հմմտ. նաև Xenoph., Anab., IV, 5,24.

իրերի նվիրաբերողները: Ինչ վերաբերում է արձանագրության երկրորդ մասում հիշատակված ունակութափ բառին, ապա այս դեպքում առավել ընդունելի է այդ բառի նշանակությունը ոչ թէ որպես տախտակ (Կ. Տրեվեր) կամ ոչ մեծ նկար (Ա. Բոլտոնովա), այլ որպես մատուցարան, պնակ:

Հին պատմության մասնագետներին հայտնի են աստվածներին պնակներ նվիրաբերելու բազմաթիվ դեպքեր: Մենք կամամահակվենք մեզ ավելի մոտիկ երկու օրինակ բերելով մին նունական Միրմելիոն (Պանտիկապեյոնի մոտ) քաղաքավայրի վերջին պեղումների նրբագեցից: Այստեղ դեռևս 1958 թ. պեղումների ընթացքում հայտնաբերվել է մ.թ.ա. 5-րդ դարի վերջին պատկանող սևաներկ պնակի խոշոր մի քելոր, որի վրա կա Կյուբեկ դիցունուն արված հետևյալ նվիրաբերումը. (ձ) ներդրեած է Մշտի (Ենթադրում է աստվածների կամ Փոյտիկական Մոր) ծ(նրու) «Նվիրեց (աստվածների կամ փոյտիկական) Մորը Ա(վեր)»: Այս գրաֆիտուից անմիջապես ներք խզմզված են ևս Կ1 տառերը, որոնք, Վ. Ֆ. Գայդուկիսի կարծիքով, հնարավոր է, որ իրենցից ներկայացնում են դիցունուն նվիրաբերության անող անձնավորության անվան առաջին տառերը<sup>60</sup>: Նոյն տիպի գրաֆիտուով մի պնակ հայտնաբերվելուց մեր կողմից Միրմելիոնում 1961 թ. 136 քառակուսու պեղումների ժամանակ: 4-րդ դարին պատկանող սևաներկ այդ պնակի արտաքին երեսին գրված են հետևյալ խորերը. ‘Արաւու ձնեթիկուս’ Հերակլոս (Ըπα(ράκον)) Հերակլոսը նվիրեց արքուն Սպարտուի ժամանակ»: Այս նյութերի համադրումից հետո մեզ խստ հավանական է թվում, որ Արմավիրի արձանագրության մեջ խոսում է ուն Պելամիդեան մասին, որը մի պնակ է նվիրաբերել տաճարին կամ աստծոն:

<sup>60</sup> В. Ф. Гайдуковиц, К. Михайловский, Мирмекий в свете советско-польских исследований, 1956—1958 гг., сб. статей в честь проф. М. И. Артамонова, Исследования по археологии СССР, Л. 1961, էջ 135—136:

Փոքր Ասիայում ևս, ինչպես Արևելքի մյուս երկրներում, տաճարների ունեին հողային ընդարձակ տիրույթներ: Խոսելով Կապաղադրվկիայի Կոմանա քաղաքում գտնվող Մա դիցունու տաճարի մասին, Ստրաբոնը գրում է, որ տաճարին կից կա մեծ հողակոտոր<sup>61</sup>: Այնուհետև նոյն աշխարհագետը մատնանշում է, որ Վենապան Զևս տաճարին առընթեր Մորիմենա քաղաքում «կա... բարեկեր սրբազն հողամաս»<sup>62</sup>, իսկ Աղվաներում բորմը «կանգնած է ընդարձակ և լավ բնակեցված սրբազն հողի գլուխ»<sup>63</sup>: Անկանկա նոյն դրույթունը պետք է եղած լիներ Հայաստանում: Ազաթանգեղուի մի շարք վկայությունները խոսում են մեր այս ենթադրույթան օգտին: Ազաթանգեղուը շարադրում է Հայաստանի պատմությունը Տրդատ 3-րդ Մեծի թագավորության տարիներին, Հայաստանում քրիստոնության պաշտոնական կրոն հայտարարվելը, ինչպես նաև Գրիգոր Լուսավորչի գործունեությունն ու քարոզը: Իր պատմության սկզբուն Ազաթանգեղուը հայորդում է, որ Սասանյան Պարսկաստանի դեմ տարած հայթանակից հետո Տրդատ Մեծի հայրը, Հայաստանի Խոսրով թագավորը, վերադարձակ հարուստ ավարտուի, որի մեկ հինգերորդ մասը պարգևնեց քրմերին<sup>64</sup>: Դարձյալ Ազաթանգեղուը վկայում է, որ Հայաստանում քրիստոնությունները պաշտոնական կրոն հայտարարվելուց հետո, Տրդատ Մեծը Գրիգոր Լուսավորչի հետ համատեղ սկսեցին հազարել հեթանուններին և կործանել երկրում գտնվող հիւթանուական տաճարները: Շարունակելով, հայ մատենագիրը վկայում է, որ Արտաշատում գտնվող Անահիտ դիցունու<sup>65</sup>

<sup>61</sup> Strabo, XII, 2, 3 (C. 535).

<sup>62</sup> Strabo, XII, 2, 5 (C. 537).

<sup>63</sup> Strabo, XI, 4, 7 (C. 507).

<sup>64</sup> Ազաթանգեղու, Ա (22):

<sup>65</sup> Մարտրոնը մատնանշում է, թէ «Հայերը առանձնապես պատվում էին Անահիտի տաճարները, որի պատճին նրանք այդպիսիները կառուցեն; Էին այլ վայրերում և Հատկապես Ակիլիսեներում: Այստեղ նրանք նվիրաբերում էին ստրկուհիները (Strabo, XI, 14, 16, C. 532):

տաճարը կործանելոց հետո Տրդատ թագավորը և Գրիգոր Լուսավորիչը հերանուական տաճարին պատկանող ունեցվածքը նվիրեցին եկեղեցուն — «Եւ զգաստակերտուն և զայսաստրոս քրոմքն հանդերձ և նոցին գտնուվըն և սահմանօքն ի ծառադրին նովիրեցին եկեղեցոյ ապաւարութեան»<sup>66</sup>: Այսուհետև Ագարանգեղոսը վկայում է Հայաստանի հեթանոսական մյուս տաճարների ունեցվածքի բունագրավման մասին հօգուն քրիստոնեական եկեղեցու:

Այս հարցի կատակեցությանը հետաքրքիր փաստեր կան նաև Հովհան Մամիկոնյանի «Պատմոթիւն Տարօնոյ» աշխատության մեջ: Նա հաղորդում է, որ Մեծ Հայրում, Աշտիշատի հերանուական տաճարին պատկանում էին 7 զուուկուա, Մեղտի, Բրնի, Տուրի, Խորճի, Կեղը և Բուզու<sup>67</sup>:

Մեզ հետաքրքրող հարցի մասին Ագարանգեղոսի հաղորդման արժանահավաստությունը հաստատվում է Փալմոսո Բուզանդի տվյալներով: Վերջինս Պապ թագավորին (367—380 թթ.) մեղադրելիս, ի միջի այլոց խոսում է այդ թագավորի ձեռնարկած բարենորդությունների մասին: Այդ բարենորդություններից մեկն էլ այն էր, որ թագավորը բունագրավում էր մի մասը եկեղեցապատկան այն հողերի, որ Տրդատ Մեծը վերցրել էր հերանուական տաճարներից և պարզել քրիստոնեական եկեղեցու պասավորներին<sup>68</sup>: Վերջապես, մենք ունենք պատմանոր այն վկայությունը, թե Տիգրան թագավորը «ցասուցանել ընդ Վահունիս, ... ընկենո զնոսա՝ ի քրմութենէն, և զգոն խրբունիս առնու...»<sup>69</sup>:

Ավելորդ չենք համարում այս վկայությունների կողքին մի անգամ և հիշատակել մ. թ. ա. 2-րդ դարի վերջերին գահակալած Անտիոքոսներից մեկի նամակն այն մասին, որ

թագավորը նա է վերադարձնում Բայսուկակեյում գտնվող Զևսի տաճարին նրա հողային նախկին տիրույթները: Այս դեպքում անկասկած է, որ Սելիմիան թագավորները իրենց տիրապետության սկզբնական շրջանում այդ տաճարից վերցրել էին նշանակալից հողային տարածությունները<sup>70</sup>: Այս բոլորից դժվար չէ կոսիել, որ թագավորական իշխանության փոխհարաբերությունը բրնձնային մետք ոչ բոլոր դեպքերում էր բարեկամական:

Այսպիսին էր իրադրությունը ոչ միայն Հայաստանի պաշտամոնքային կենտրոնի՝ Արմավիրի տաճարում, այլ նաև երկրի մյուս մասերում և քաղաքներում: Եփրատի վերին ձախ հոսանքում, Եկեղեց գալաքում, մի ամբողջ շրջան է հայտնի, որը այսուղե գտնվող Անահիտ դիցուիու տաճարի անոնցով հայերը կոչել են Անահիտական, հովուերը՝՝ Դաշտածոց չափ և համարվում էր «սրբազն երկիր»: Դյուտարքուս հաղորդում է, որ այդ երկրի ընդարձակ արոտավայրերում արածում էին հասուկ գոյսի կովեր, որոնք նվիրաթերիստ էին աստվածունեն<sup>71</sup>: Ս. Տրեմյանը նշում է, որ «տաճարային այդ տիրույթները առավել կայուն և պահպանողական էին և մի շաբթ դեպքերում առաջացել են նախահական շրջանում»<sup>72</sup>:

Վերևում նշեցինք, որ Արտաշեսյանների մայրաքաղաք Արտաշատը ևս, ինչ աշխարհի բոլոր մեծ քաղաքների ներան, ուներ իր հովանավոր դիցուիուն՝ Անահիտին, որի պատվին քաղաքում կառուցվել էր տաճար: Անկասկած, իրենց հովանավոր աստվածներին նվիրված տաճարներ կային նաև Հայաստանի այնպիսի քաղաքներում, ինչպիսիք են Երվանդացատը, Բագարանը, Բագարանը, Տիգրանակերտը և այլն:

<sup>66</sup> Ազարանգեղոս, մ.թ., (781):

<sup>67</sup> Plut., Lucul., XXIX, 2—8.

<sup>68</sup> Սովոր Բուզանդ, ե, Աւ.

<sup>69</sup> Մովսես Խորենացի, Բ, ԺԴ:

<sup>70</sup> C. B. Welles, RC, 70.

<sup>71</sup> Plut., Lucul., XXIX, 2—8.

<sup>72</sup> С. Т. Еремян, Основные черты общественного строя Армении в эллинистический период, ՀԱՅԱ ԳԱ ԵՂԵԿԱԳՐ, 1948. № 11, էջ 56; С. Т. Еремян, О рабстве и рабовладении в древней Армении, ВДИ, 1950, № 1, էջ 25:

Ակզբաղբյուրների ուսումնասիրությունը ավելի քան պարզ կերպով ցուց է տալիս, որ քրմավետի իրավասությունները չեն սահմանափակվում միայն պաշտամունքային արարողությունների կատարումով և տաճարային տնտեսությունների վերահսկողությամբ:

Ամենայն հավանականությամբ, հեթանոսական Հայութանում քրմավետներն ունեցել են նաև մի իրավունք, որպիսին մենք չենք հանդիպում նեղենիստական արևելքի մոտ երկրներում: Այդ՝ հայոց արքային թագադրելու իրավունքը էր: Իսկ սա ուներ բացառիկ կարևորություն, քանի որ առաջ թագադրումից արարողության թագավորական իշխանությունը ապօրինի կամարձվեր: Հայանարար այս հանգամանքը նկատի ունի Խորենացին, երբ անդրադառնալով Երվանդի գահակալությանը, գրում է. «Եւ ի մեռանելու Սահատրեկոյ՝ միաբանեալ թագաւորեցուին զնա, առանց արանց յազգէն Բագրատունեաց լինել թագադիր»<sup>73</sup>: Թագադրման արարողությունն, անկանած, տեղի էր ունենում հայտնի սրբավարձերում: Այդպիսի սրբավարձերից մեկում, հավանարար, թագադրիլել էր Տիգրան 2-րդը, որտեղ նետագայում նա կառուցեց իր բայրը՝ Տիգրանակերտը<sup>74</sup>:

Սղբուրներից հայտնի է, որ հայոց թագավորին թագադրելու իրավունքը վերապահված էր Բագրատունյաց տոհմին: Բագրատունի անկան առաջին բաղկացուիչ մսաք —«քագ»—ինքնին հուշում է այն մասին, որ Բագրատունիները սկզբանական շրջանում պատկանելիս են եղել քրմական դասին<sup>75</sup>: Հենց այս հանգամանքն էլ մեզ հանգեցրել է վերո-

<sup>73</sup> Մովսես Խորենացի, Բ, Էլ:

<sup>74</sup> Հմմտ. Arrian, Mithr., 67.

<sup>75</sup> Իրավացիք է Ա. Մ. Գարագաշյանը, երբ գրում է. «Հստ մեզ թագավոր պատկեն առ հայու ու միայն վաղեմի սովորություն էր.... այլև թերեւս կրոնական արարողություն, և Բագրատունիք իրք զվահունիս էին թերեւս քրթմական ցեղ ի մեջ Հայոց: Առ այս արդարն շունենք պատմական պատուց, բայց այսպիս ենթադրելու բավական պատճառ կուտա մեզ Բագրատունի անկան առաջին բառը բազ, որ հնդկորոպական լեզվաց շատերուն

թերյալ ենթադրության, թե հայոց թագավորին թագադրում էր քրմավետը:

Հրեաների մոտ ևս քրմավետն ունեցել է թագավորին թագադրելու իրավասություն: Այսպես, Աստվածաշնչի մեջ կարդրում ենք, որ քահանայապետ Սամվելը թագավոր է օծում Սափուղին<sup>76</sup>:

Արևելքի երկրներում քրմական դասի ձեռքին է եղել նաև դատական իշխանությունը: Դեռ ավելին: Երբեմն քրմավետ դատավորը հանդիսացել է նաև երկրի գերագույն իշխանավորը և աշխարհազորի առաջնորդը: Դրա լավագույն օրինակը մենք տեսնում ենք իշխանացիների մոտ: Աստվածաշնչի մեջ կա մի ամբողջ գիրք, որտեղ նկարագրվում է պատմական այն ժամանակաշրջանը, երբ հրեաները դեռ թագավոր չունենի և երկրի գերագույն իշխանությունը գտնվում էր քահանայապետ-դատավորի ձեռքին, որը միաժամանակ պատերազմի ընթացքում հանդիսանում էր հրեաների ուղղմական առաջնորդը<sup>77</sup>:

Ըստ երևույթին, հեթանոսական Հայաստանում ևս քրմավետի ձեռքին է եղել դատավորական իշխանությունը, որը հետագայում ժառանգաբար անցել է կաթողիկոսին: Ինչպիս վկայում է պատմահայրը, հայկական եկեղեցու գլուխ կանանած կաթողիկոսը միևնույն ժամանակ վարում էր «Մեծ դատավարության գործակալությունը»: Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հայտարարվելուց հետո, ինչպիս հաղորդում է Ագաթանգեղոսը, Տրդատ թագավորը և Գրիգոր Լուսավորիչը «զդատակերտուն և զապասարուն քրիստոն հանդերձ և նոցին գետնուվքն և սահմանօքն ի ծառոյութիւն»

մեջ կա և կնշանակեն դիբ կամ աստված: Ուստի մարթ է կարծել թե Բագրատունիք այսպիս կոչված էին իրը նվիրական անձինք որպես զվահունիս, որ քուրմ էին շեղոյ և որոց անվան առաջին բառը, վահ՝ բագ բառին ուրիշ ձևն է և մինույն նշանակությունն ունի» (Ա. Մ. Գարագաշյան, Քննական պատմություն Հայոց, մ. Ա, Թիֆլիս, 1895, էջ 178):

<sup>76</sup> Ա գիրք թագաւորաց, 9, մել:

<sup>77</sup> Գիրք դատավորաց, Բ, 16—19, դ, 10, դ, 4—24, մել—մԶ:

Առիթեցին եկելեցոյն սպասարութեան»<sup>78</sup>: Կասկած չի կարող լինել, որ նորաստեղծ քրիստոնեական եկեղեցին Հայաստանում հեթանոսական տաճարներից ժառանգեց ոչ միայն նրանց շարժական և անշարժ ունեցվածքը, այլև քրմների մինչ այդ վայելած բոլոր արտոնությունները, այդ թվում նաև դաստական իշխանությունը:

<sup>78</sup> Ազարանգեղոս, ՏՌ, (781),

<sup>79</sup> Արձանագրության հրատարակությունը տես W. Ramsay, The social basis of Roman power in Asia Minor, Aberdeen, 1941, p. 105—106.

<sup>80</sup> *Изм. А. Г. Периканян, Храмовые объединения..., § 160.*

<sup>81</sup> *Strabo*, XII, 3, 3 (C, 535).

Բոլոր հիմքերն ունենք ենթադրելու, որ քրիստո Հայատանում ևս ունեցել են զինվորական իշխանություն: Այդ ենթադրության լավագույն հիմքը ենթանուության վերացման և քրիստոնեության տարածման ամբողջ պատմությունն է: Մեր հիմնական աղբյուրը, Ագաթանգեղոսը, վկայում է, որ քրիստոնեությունը միասնականից, խաղաղ ճանապարհով չէ, որ մտայ Հայատան, այլ Տրդատ թագավորի և Գրիգոր Լուսավորչի կողմից բռնությամբ հրով ու սրբ տարածվեց: Նոր վարդապետության դեմ պարզաբերիս, ենթանուության զինավոր հենարանները տաճարներն են, որոնք մեծ մասամբ ամրացված թերդեր են և ունեն ճանուկ զինվորական միավորներ: Տրդատ թագավորն ու Լուսիվորիչը ստիպված են մեծաթիվ զորքով արշավել այդ տաճարային կենտրոնների դեմ և արտօնայի մարտերից հետո մրացն գրամել դրանք:

Հայաստանի տաճարային մի շաբթ կենտրոնների մասին խոսելիս, հայ մատենագիրները դրանք համարում են Շուշիկ ամրություններ: Բերենք մի քանի օրինակ: Մովսես Խորենացին Երվանդաշատի մոտ կառուցված քաղաքը, որտեղ Երվանդ փոխադրեց Արմավիրուս եղած բոլոր կուրքերը և այսուղ մեհյաններ շինելով իր Երվազ եղրորը քրմասկեռ հշանակեց, անվանում է «ամորի Բագարան»<sup>82</sup>: Ազաթանձուի վկայությամբ Տրդաս թագավորը ու Գրիգոր Լուսավորիչը Եկեղյաց գալատի Անի-Կամախում գտնվող Արտազդի տաճարը ավելելոց հետո «զատանն ամրականան հանդերձ ի ծառայությին եկեղեցւոյ նոյնիրկին»<sup>83</sup>: Մովսես Խորենացին ևս այս Անին Շուշնական անվանում է ամրոց<sup>84</sup>: Երկար ավանը ևս, որտեղ գտնվում էր Անահիտ դիցուհու տաճարը, շրջապատված էր բարձր պարիսպներով և ցուց տվեց ուժուշ դիմադրություն Տրդատի և Լուսավորչի գորբերին<sup>85</sup>:

<sup>82</sup> Unqubu konrēnagh, F., kl:

83 Ազարանգեղոս, 785:

<sup>84</sup> Մովսես Խորենացի, թ. ԺԲ.

<sup>85</sup> Ազարանգեղոս, 786,

Հովհան Մամիկոնյանի «Պատմոթիւն Տարօնոյ» մատյանում հիշատակվում են մի շաբթ պատերազմներ, որ մղել է Տարռուս գտնվող Գիշանեկի տաճարային կազմակերպությունը թագավորական գորքերի դեմ: Նրա հաղորդման համաձայն, տաճարին պատկանող ավաններից դորս բարիած գորքերը բաղկացած էին աղեղնակորներից, պարսավորներից և տեգավորներից<sup>86</sup>: Հայկական մատենագրության մեջ պահպանված են ոչ թիշ տեղեկություններ այն մասին, որ Հայաստանում նորաստեղծ քրիստոնեական եկեղեցու տուաշին ականավոր գործիչները միաժամանակ առնչություն նմ ունեցել զինվորական ծառայության հետ: Այսպէս, Փափառութեանի վկասությամբ, Գրիգոր Լուսավորչի թոռները, Պապը և Աթանագինեաը զրադվում էին ուազմական գործով<sup>87</sup>: Դարձագ Փափառուի պատմությունից մեզ հայտնի է, որ Ներսես կաթողիկոսը, նախքան հայկական եկեղեցու քահանայապես նշանակվելը, եղել էր զինվորակամ<sup>88</sup>: Այս առջնությամբ առավել հետաքրքրական է Փափառուի այն հուղորդումը, թե Զավեն եպիսկոպոսը ոչ միայն մտցրեց հագուրականության ուազմական պատրաստականության հարցը, այլև առաջարկում էր նոգետրականներին կրել ուազմական համագօնաստ<sup>89</sup>: Այս փատերի մեջ Հ. Հ. Մահանյանը նույնական է տեսնելու Եվրոպայի միջնադարյան ասպետական քարքերի ընտօրինակումը Հայաստանում<sup>90</sup>, իսկ Ս. Գ. Փերիխանյանը Փոքր Ասիայի և Հայաստանի տաճարային տանիստություններին նվիրված իր ուսումնափրության մեջ վերօնիշյալ փատերի կապակցությամբ իրավացիորեն գրում է, որ «քրիստոնեության սկզբնական շրջանում հայ հոգեորսության ներկայացուցիչների ուազմական հակումները գուցե

<sup>86</sup> Յովհան Մամիկոնյան, Պատմոթիւն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 110—112:

<sup>87</sup> Փափառու Բուգանդ, Դ, ԺԹ:

<sup>88</sup> Փափառու Բուգանդ, Դ, Դ:

<sup>89</sup> Փափառու Բուգանդ, Դ, Բ:

<sup>90</sup> Հ. Մահանյան, Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, էջ 145—147:

անհրաժեշտ է բացատրել որպես վերապրուկ հրա նախորդերի՝ հայկական քրմական պահանջմերի»<sup>91</sup>:

Ամբողջ շարադրվածից ավելի քան պարզ է, որ նեյսուական Հայաստանում և Սուաջալոր Ասիայի մյուս երկրներում քրմական դասը խոշոր դեր է ունեցել երկրի և ներքին տնտեսական, և մշակութային-պաշտամունքային կամքու: Քրմերի գործունեալությունը, սակայն, չի սահմանափակվել աղքանով: Նրանք գործուն մասնակցություն են ունեցել հաւաքանական, միջավետական հարաբերություններին: Այս տեսակետից առանձնապես հետաքրքրի են երկու փաստ, մեկը մատենագրությունից, մյուսը վիճական արձանագրություններից:

Նկարագրելով Իբերիայի (Վրաստան) հասարակակարգը, Սուարունը գրում է. «Չորս դասի (γένη) մարդիկ են քնակեցնում երկիրը: Դրանցից մեկը ամենակարևորն է, որին և թագավոր են ընտրում (καθιστάσι). ծագումով (համարի՛ թագավորին) ամենամոտիկ և տարիքով ավագագուց ամենին, իսկ նրանցից երկրորդը վարում է դասական գործունը և առաջնորդում է զորքը: Երկրորդը՝ քրմերի դասն է, որին հանձնված է հարեւանների հետ հարաբերություններ վարելու գործը: Երրորդ (դասը) ուազմիկներն են և երկրագործները: Չորրորդ դասը ծողովորդն է (τό τῶν ἵσων), որոնք հաւադանում են արքունի ստրուկներ (βασιλεῖς ծանօթ) և արտադրություն են այն ամենը, ինչ անհրաժեշտ է ապրելու համար»<sup>92</sup>:

Սուարունի ամենահատեկի այս հաղորդման մեջ նրա վկասությունը Իբերիայի քրմական դասի մասին չի կարելի, անշուշտ, համականալ այն տառացի իմաստով, որ երկրի ար-

<sup>91</sup> A. Г. Периканян, Храмовые общеединения.... էջ 80—81:

<sup>92</sup> Strabo, XI, 3, 6: Περιποληνηφαν զանում է, որ Սուարունի այս վկայության աղբյուրը Պոբդոնիսոն է, ուստի և այն արացուում է մ.թ. թ. 2-րդ դարի կեսերի Իբերիայի հաստակական և քաղաքական կարգերը (տե՛ս Ա. И. Болтухова, Возникновение классового общества и государственной власти в Иберии, ВДИ, 1956, № 2, стр. 38).

տաքին հարաբերությունների հարցերը գտնվում էին բացառ-ձական քրմերի ձևոքին: Արտաքին քաղաքականության հարցերը, անկասկած, բոլոր դեպքերում պետք է որ լուծեր ինքը, երկրի գերագույն տերը համարվող թագավորը, իր իսկ հայեցալության համաձայն: Սորաբոնի վկալության իմաստն այն է, որ թագավորը քրմերին էր հանձնարարում արտաքին հարաբերությունների նախին հոգալը:

Մյուս փաստը, որի մասին ակնարկեցինք, վիմական ար-ձանագրությունների այն ամբողջ կոլումներս է, որը հայտ-նաբերվել է Գալատիայի խոշորագույն տաճարային կենտրոն Պեսինուսում: Այդ արձանագրություններում պահպանվում է այն համակարգությունը, որ ժամանակի բարդ պայմաններում ունեցել են Պերգամոնի թագավորները Կյուրելեի տա-ճարի քրմապես Աստիսի հետ: Ներկա գրքում մի այլ առի-թով մենք մանրամասն անդրադարձել ենք այդ արձանագրու-թյուններին, որոնց վերլուծությունը հույսերու մեջ հանդիցը ել է այն եզրակացության, թե քրմապետները հշանակալից դեր են խաղացել հելլենիստական տերությունների միջպետական հարաբերություններում:

Այսպիսով, մենք ջանացինք ցույց տալ, որ, ինչպես գույգ կոմանա քաղաքները և Մորիմենան հարկան երկրներում, այնպես էլ Հայաստանում մի շարք հնագույն քաղաքներ (Արմավիր, Աշոտիշատ, Բագարան) ստացածել են իրեն կրո-նական կենտրոններ: Քրմապետները բոլոր դեպքերում ունե-ցել են մեծ հեղինակություն և համարվել են թագավորի մեր-ձափորագույն մարդիկը, միաժամանակ իրենց պաշտոնը վա-րելով ցմահ: Հայաստանում ևս, ինչպես և հելլենիստական մյուս երկրներում, թագավորները տաճարներին և դրանց սպասարկող քրմերին նվիրել են հողային ընդարձակ տի-րույթներ, դրանց վրա աշխատող անմիջական արտադրողնե-րի հոծ զանգվածով, որը և կազմում էր քրմական դասի տրն-տեսական և քաղաքական հզորության գլխավոր աղբյուրը:

## ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

### ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ, ԱՌԵՎՏՐԻՆ

Հայաստանի քաղաքների հշանակությունը որպես քա-րավանային առևտրական հանգույցների և նրանց խաղացած դերը այդ առևտրում, արդեն մանրամասն ուսումնասիրել է ակադ. Հ. Հ. Մանանդյանը<sup>1</sup>: Ինչ վերաբերում է հին, հայու-քիստոնեական Հայաստանի քաղաքներում արհեառների գարգարման հարցին, ապա այն դեռևս անքավարար է ուսումնասիրված: Չնայած հին Հայաստանի տնտեսական կյանքում արհեառների և տարանցիկ առևտրի խաղացած հշանակալից դերին, ապշեցուցիչ է այն փաստը, որ մեր հին մատենագիրները ոչ մի անգամ չեն հիշատակում ինչպես այդ առևտրի, այնպես էլ բնակչության այն խավի մասին, որն զբաղվում էր առևտրով և արհեառագործությամբ: Առևտրա-կաններն ու արհեառավորները չեն հիշատակվում հայկական աղբյուրների նույնիսկ այն վկայություններում, որտեղ թվար-կը վաճառական էր հին Հայաստանի բնակչության բոլոր խավերն ու դասերը: Հ. Հ. Մանանդյանը հայ մատենագիրների այս լուու-յումը հակված էր բացատրելու երկու պատճառով. 1) քա-ղաքային հասարակ մարդիկ և արհեառավորությունը շինա-կանների հետ միասին կազմում էին ուսմիկների դասը և ուսմիկ տերմինը իր մեջ ընդգրկում է նաև առևտրականներին և արհեառավորներին. 2) այդ ժամանակաշրջանում Հայա-

<sup>1</sup> Յ. Ա. Մահոնյան, Օ տօրությունների հարցերը գտնվում էին բացառ-ձական քրմերի ձևոքին: Արտաքին քաղաքականության հարցերը, անկասկած, բոլոր դեպքերում պետք է որ լուծեր ինքը, երկրի գերագույն տերը համարվող թագավորը, իր իսկ հայեցալության համաձայն: Սորաբոնի վկալության իմաստն այն է, որ թագավորը քրմերին էր հանձնարարում արտաքին հարաբերությունների նախին հոգալը:

տանի առևտրական կյանքում տիրապետող դիրք էին գրավում և և անական տարրերը,—հրեաներ և սիրիացիներ, որոնց բռնի գաղթեցրել էին Տիգրան 2-րդը և նրա հաջորդ Արտավագդը<sup>2</sup>: Մեզ թվում է, սակայն, որ հայկական աղբյուրների հմանօրինակ լուսաբառը բացատրել միմիայն այդ երկու պատճառներով դևոն բավարար չէ: Չի կարելի ենթադրել, որ Տիգրան 2-րդը և նրա որդի Արտավագդը նվաճված երկրներից Հայաստան թերեցին միմիայն առևտրականներին և արհեստավորներին: Չի կարելի բանն այնպես պատկերացնել, որ իր Հայաստանը իրենցից ներկայացնում էր մի երկիր, որտեղ չկային ոչ տեղական արհեստավորներ, ոչ Էլ առևտրականներ<sup>3</sup>: Միանգամայն իրավացի է Գ. Սարգսյանը, երբ առևտրի և առևտրականների մասին հայ մատենագիրների պահպանած տարօրինակ լուսության գլխավոր պատճառը համարում է այն, որ արդեն 5—6 դարերում, երբ գրվել են մեր հիմնական աղբյուրները, քաղաքները և քաղաքային կյանքը Հայաստանում, հատկապես Շապուհ 2-րդի սկիզբից արշավանքներից հետո, որոնց հաջորդեց պետականության վերացումը, գտնվում էին ոժեղ անկման շրջանում և արդեն ի վիճակի չէին հաղալու այն նշանակալից դերը, ինչ նախկինում<sup>4</sup>:

Հին Հայաստանում արհեստների և առևտրի զարգացման հարցի պարզաբանման համար մենք դարձալ ատիպահ կիհնենք դիմելու անտիկ հետինակեներին: Հայաստանով կատարվող առևտրի մասին առաջին տեղեկությունները գտնում ենք Հերոդոտոսի մոտ<sup>5</sup>: Հոյն պատմահայրը հանգամանորեն նկարագրում է կոր լաստանավերով Եփրատի հոսանքն ի վար հայկական գինու Բարեղոն փոխադրելը: Հե-

<sup>2</sup> Հ. Հ. Մահանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 215:

<sup>3</sup> Ա. Արքահամբան, Հայ ժողովրդի պատմության պերիոդիցիալի հարցի շուրջը, ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, 1947, Խ 2:

<sup>4</sup> Գ. Խ. Կարևոսյան, Տիգրանակերտ, էջ 18—19:

<sup>5</sup> Herod., I, 194.

րոդուտոսի այս վկայությունը մանրամասն տումնափրեկ է Հ. Մանանդյանը և այն հարցը, թե ում է նկատի ունեցել պատմիչը, հայ թե՝ ասորեատանցի առևտրականներին, արդեն նա ճիշտ կերպով լուծել է այն իմաստով, որ Հերոդոտոսը խոսում է ասորեատանցիների մասին<sup>6</sup>: Ուստի, մեզ համար անհականավի է, թե ինչո՞ւ Զ. Մ. Ղասարյանը կարծում է, թե այդ առևտրականները անպայման հայեր էին<sup>7</sup>: Նոյն պիսի սխալ է կատարում նաև Հրանդ Արմենը<sup>8</sup>:

Ստրաբոնից մենք քաղում ենք առաջին վկայությունները նախարշակունյաց Հայաստանի առևտրի մասին. «Կոմանան, —գրում է նա, —քազմամարդ քաղաք է և հանդիսանում է Հայաստանից եկողների հայտնի վաճառատեղին»<sup>9</sup>: Ի դեռ Շենքը, որ ակադ. Հ. Անաղյանը այս հատվածը թարգմանել է փոքր ինչ տարբեր: Նրա թարգմանությամբ՝ Կոմանան եղել է հայկական ապրանքների վաճառատեղին: Այս մեկնարանությունը, սակայն, մեզ թվում է թիշ համոզիչ<sup>10</sup>: Մի այլ աղիթով հուն աշխարհագետը, խուելով Ազովյան և Կասպից ծովերի միջև թափառող ցեղերի մասին, վկայում է, որ նրանք «տիրում էին կասպերի ծովափի գրեթե մեծագույն մասին, այնպես, որ ողտերով հնդկական և բարելական ապրանքների առևտոր էին անում, ընդունելով դրանք հայերից ու մարերից»<sup>11</sup>: Սա այն ամենն է, ինչ հաղորդում է Ստրաբոն տարանցիկ առևտրին հայերի ունեցած մասնակ-

<sup>6</sup> Յ. Ա. Մահանդյան, Օ տօրցու և գործու Արմենին.. стр. 10—11.  
<sup>7</sup> Հ. Մահանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. 1, Երևան, 1944, էջ 58—59:

<sup>8</sup> Զ. Մ. Ղասարյան, Թիշերայինիի գինու կարասները, Պատմա-բանակիրական հանդես, 1959, Խ 4, էջ 219:

<sup>9</sup> Հ. Հանդ Ք. Արմեն, Մեծն Տիգրան, Գանձիրե, 1957, էջ 95:

<sup>10</sup> «Τὰ ρέν σύν Κόρανα εύανδρεῖ παι τοτειν ἐπαπόριον τοῖς ἀπὸ τῆς Δράσεως ὀξιόλογον» (Strabo, XII, 3, 36, C. 559).

<sup>11</sup> Strabo, XI, 5, 8 (C. 506). Հ. Աճառյանի թարգմանությունը  
այստեղ ևս սրբագրելի է:

ցության մասին: Այնուամենայնիվ, այս վկայությունները մեզ համար շատ հետաքրքրական են, քանի որ հաստատում են Հայաստանի տնտեսական կյանքում Հերոդոտոսից մինչև Ստրաբոն ընկած ժամանակաշրջանում տեղի ունեցած լորջ տեղաշարժերը: Եթե Հերոդոտոսի ժամանակ Հայաստանի և Բարեկանի միջև կատարվող առևտորի միջնորդները ասորեստանցի առևտրականներն էին, ապա Ստրաբոնի ժամանակ «Հայաստանից եկողները» այն է՝ հայերն իրենք անմիջականորեն էին գրադպուտ արտաքին առևտորվ: Նշանակում է, որ քաղաքական անկախություն ձեռք բերելուց և հայկական պետականության կազմավորումից հետո երկրի տնտեսական կյանքում լորջ տեղաշարժեր էին կատարվել: Հետևաբար, հին Հայաստանում առևտորի զարգացման մասին ասվածները մեզ հաճացեցնում են որոշակի հետևողացած այն մասին, թե Արտաշեանների ժամանակ թեկուզ և «չէր առաջացել առանձնապես շերտավորված կամ զորելացած հայ առևտրական դասը»<sup>12</sup>, այնուամենայնիվ անկանած է, որ ոչ հելլենիստական և հոոմեական շրջանում իրենք հայերը ևս նշանակալից դեր էին խաղում Մերձավոր Արևելքի առևտրական կյանքում:

Կանկած չկա, որ հայ առևտրականները գրադպուտ էին ոչ միայն տարանցիկ առևտորվ: Նրանք գրադպուտ էին նաև իրենց հայրենական արտադրության ապրանքների առևտորվ: Բնական հարց է առաջանում. իսկ ի՞նչ ապրանքներով առևտոր էին անում հրամք: Այս հարցի պատասխանը սերտուն առնչվում է հին Հայաստանում գյուղատնտեսության և արհեստների զարգացման հարցին:

Հայկական բարձրավագներակը դեռ հնագույն ժամանակներում հայտնի է եղել որպես զարգացած խաղողագործության երկիր: Խաղողի ագիների մասին հաճախ է խոպում ուրարտական արձանագրություններում: «Վաճի թագավորությունում խաղողագործությունը լայնորեն տարածված էր,—

<sup>12</sup> Հ. Մանանյան, Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 221.

գրում է Բ. Բ. Պիոտրովսկին, —և ուներ բազմադարյան զարգացում, քանի որ Հայկական լեռնաշխարհը հանդիսանում է մեկն այն վայրերից, որտեղ աճեցվում էր խաղողի վազը: Նույնիսկ փորձեր են կատարվել խաղողի հայամայրենիքը Հայաստանում փնտրելու: Այնուհետև Բ. Բ. Պիոտրովսկին մատնանշում է, որ Կարմիր բլուրի պեղումները «ուղեցին մեծ քամակությամբ խաղողի վազի ածովս և կրիզներ, որոնք վկայում են աճեցվող տեսակների բազմազանության մասին»<sup>13</sup>: Դեռևս Հերոդոտուը նշում է, որ ասորեստանցի առևտրականները իրենց կյոր հավակներով նիրար գետի հոսանքն ի վար Հայաստանից արտահանելիս են եղել գիշավորապես գիմի կավել կարասների մեջ<sup>14</sup>:

Մենք արդեն նշեցինք, որ Հ. Մանանյանը մանրամասն քննության ենթակելով Հերոդոտուի այս վկայությունը<sup>15</sup>, հիմնականում ճիշտ կերպով նշում է, որ այդ ժամանակ Հայկական լեռնաշխարհի և Բարեկանի միջև կատարվող առևտորի միջնորդները եղել են ոչ թե հայերը, այլ ասորեստանցիները: Շարունակության մեջ, սակայն, նա ճիշտ չի մեկնաբանում շատ էական նշանակություն ունեցող թիւնու գույշուն... օշանակությունուն պլանու արտահայտությունը, այն թարգմանելով «զիսուկ լեցուն արմավենու տականներ»: Հարգելի ակադեմիկոսը ոչ ճիշտ է հասկացել թիւնու բառը և այն թարգմանել է «տակառ»: Այսուղեա նրան շփոթեցրել է գույշունու ածականը: Բաց անելով, սակայն, հունարեն լավագույն բառարաններից «Thesaurus Linguae graecae»-ն, տեսնում ենք, որ թիւնու հիմնականում նշանակում է կավել աման, փարչ նաև կարսա: Հետագայում ապակյա սափորիկները ևս կոչվել են չիւ թիւնորը թիւնու բառի փոքրացուցիչն է: Հունական Մեծ Հանրագիտարանը ևս, վկայակուշելով մեր քննարկած հատվածը

<sup>13</sup> Բ. Բ. Պիոտրովսկի, Վանսկое царство, М., 1959, стр. 143.

<sup>14</sup> Herod., I, 194.

<sup>15</sup> Հ. Հ. Մանանյան, Քննական տեսություն Հայ ժողովրդի պատմության, հ. 1, էջ 58—60:

Հերոդոտոսից, նշում է, որ Յանչ նշանակում է թթված կավա մեծ անոթ, որը հնում օգտագործել են գինի և այլ մեղուկներ պահելու համար<sup>16</sup>: Ինչպես այս բառարաններում բերված օրինակների, այնպես էլ մեր ձեռքի տակ եղած բոլոր բառարանների տվյալների հիման վրա եզրակացնում ենք, որ Յանչ բառը երբեք չէր կարող նշանակել տական, այլ բացառապես կավե անոթ:

Ինչ վերաբերում է ջունչուս; ածականին, ապա այն այստեղ նշանակում է ոչ թե «արմավենուց», այլ «կարմիր», ինչպիսի նշանակությամբ այն հաճախ օգտագործել են Հոմերոսը (ջունչուս):<sup>17</sup> և Քենոփիոնը (ջունչուս):<sup>18</sup> Հետեւարար, Հերոդոտոսը խոսում է ոչ թե արմավենուց պատրաստած տականների, այլ կարմիր կարասների մասին: Ուստի գտնում ենք, որ Զ. Ս. Ղասարյանը անպայման իրավացի է, երբ քննադատում է Հերոդոտոսի վկայության նմանօրինակ մեկնարանումը և առաջարկում է իր ավելի ճիշտ թարգմանությունը, թե նավակները «քարձված էին լինում հատկապես գինով՝ կավե կարմիր անոթների մեջ»:<sup>19</sup>:

Վերոհիշյալ տեքստը վերցրած է Տեսպեր-ի հրատարակությունից: Ուրիշ ձեռագրի վրա հիմնված Հերոդոտոսի մի այլ հրատարակության մեջ (Fridericus Palm, Lipsiae, 1839) կա ոչ մեծ մի տարբերություն, —պակասում է ջունչուս; բայի վերջին չ-ը, այնպես, որ տվյալ բառը դրված է ոչ թե հոգնակի հայցական հոլովով և վերաբերում է ունու բառին (Յանչ ջունչուս....ունու ունու): Այս դեպքում ևս ջունչուս բառը ավելի շուտ կարող է նշանակել «կարմիր» բան թե արմավե, բայի որ չի կարելի ենթադրել, որ Հայաստանում, որտեղ արմավը չի ել համովագում,

<sup>16</sup> Μεγάλη 'Էլետուսի' 'Եղուակառածեա'. Էնք. „Պուբլիուս“: Դ. VII, Էջ 273:

<sup>17</sup> Homer., Ilias, X, 133; Odys., XIV, 500.

<sup>18</sup> Xenoph., Anab., I, 2, 16; Cyrop., 7, 1, 2.

<sup>19</sup> Զ. Ս. Ղասարյան, նշանակ աշխ., Էջ 219:

արմավից գինի պատրաստեին: Ակներն է, որ այդ գինին պատրաստում էին Հայաստանում մշակվող լավագույն խաղողից, որի առան բերքի մասին մի անգամ չէ, որ վկայում է Ստրաբոնը<sup>20</sup>:

Խաղողագործությամբ գրավվում էին ոչ միայն հայկական գյուղերում, այլ նաև տարբեր քաղաքներում, որտեղ կային դրա համար բարենպատ կիրայական պայմաններ: Այս մասին, որ հին Հայաստանի խոշոր քաղաքներից մեկում, Վաղարշապատում, անցելում էր խաղողը և կային գինու հնձաններ, մենք գիտենք Ագաթանգեղոսի վկայությունից: Մատենագիրը պատմում է, թե Հոփիսիմեն և մյուս կույսերը համեմուլ Վաղարշապատ, քաղաքի արվարձանում «մտացէին ի հնձանայարկս այգեստանոյն»<sup>21</sup>: Ասովածաշնչի հայերն ու թարգմանիչներին ևս (5-րդ դարի սկիզբ) հայտնի էր «հնձանահար» տերմինը<sup>22</sup>:

1957 թ. Գառնիի ամրոցի տարածքի պեղումների ժամանակ հայտնաբերվել է մ. թ. 3-րդ դարին վերաբերող հնձան, որը շատ բանով հնան է Ագաթանգեղոսի նկարագրած հրճաններին<sup>23</sup>:

Հայաստանից Եփրատ գետի վրայով կարասների մեջ գինու փոխադրումը, որը նկարագրում է Հերոդոտոսը, մեզ իրավունք է տալիս պնդելու, թե Հայաստանում դեռ շատ լայնուց զարգացել էր կավագործությունը, քանի որ ասորեստանյան առևտուականները այդ գինին վաճառում էին անոթի ներ միասին: Կավե մեծ կարասները օգտագործվում էին ոչ միայն գինի փոխադրելու, այլ նաև մեծ քանակությամբ այն պահեատելու համար: Հիշատակենք Կարմիր բլորի պեղումների ընթացքում հայտնաբերված տեղական արտադրության ։

<sup>20</sup> «Եν ուն ուն էլ Պրառνից ուն չորտիոն պարտիոն ունս փիւսն փատ... նուր շնութի ուն ուն էլ Պրառնից ուն էլ Արմանաք» (Strabo, II, 1, 14, C. 73; Հմմտ. նաև Strabo, XI, 7, 2, C. 508):

<sup>21</sup> Ազարանգեղոս, ԺԳ (150):

<sup>22</sup> Խայի, 47, 1:

<sup>23</sup> Թ. Ն. Առամելյան, Գ. Ա. Կարախանյան, Գառնի, III, Երևան, 1962,

կարասները, որոնց տարրությունը համար հասնում է 800-ից մինչև 1200 լիտրի<sup>24</sup>: Հետագա դարերի ընթացքում կավագրությունը Հայաստանում հասնում է զարգացման բարձր աստիճանի, դառնապավ արմեստի գլխավոր ճյուղերից մեկը և ձեռք է բերում համաշխարհային համբավ: Ապացուց՝ Դվինի և Ամբի պեղումների առաջ հղութերը:

Հին Հայաստանում շատ է զարգացած եղել հաև ձիարությունը, որի մասին վկայում են Քսենոփոններ<sup>25</sup> ու հետագայում՝ Ստրաբոն: Հատկապես արժեքավոր է վերջինիս հաղորդումն այն մասին, թե Հայաստանը դեռ հնում շատ էր հարուստ ձիարութական արտուներով («πόλεσις»)<sup>26</sup>: Շարունակելով, նա գրում է, որ Աքեմենյանների տիրապետության շրջանում Հայաստանի սատրապը պարսից արքային ողարկում էր տարեկան 20.000 մորուկ Մինրական տոների համար (ուժ: Ա. Թօրոսունէ):

Ակերաների Մակեդոնացու արշավանքներից հետո, երբ Աքեմենյանների տապալումով Հայաստանը դարձավ անկախ երկիր, Հայաստանի սատրապ Օրոնտաս-Երվանդը, անկանած, դադարեց այդպիսի ծանր տուրք վճարելուց, որով այդ ամենը մնում էր արդեն երկիր ներսում: Պիտի ենթադրել, որ այդ ձիերի մի մասը արտահանվում էր և վաճառվում Հայաստանին հարևան, մինչև իսկ հեռավոր երկրներում: Աստվածաշնչում կա հետաքրքիր վկայություն այն մասին, որ Հայաստանից բերված ձիերը վաճառվում էին փյունիկան վաճառաշահ քաղաքներում<sup>27</sup>: Այդ ձիերի լավագույն մասն, անկանած, ծառայում էր կազմակերպելու համար հոչշախտոր հայկական այրուճին, որի մասին վկայում են ինչպես հայկական աղբյուրները, այնպես էլ ամսով հեղինակները<sup>28</sup>:

<sup>24</sup> Б. Б. Пиотровский, Ванское царство, М., 1959, № 143.

<sup>25</sup> Xenoph., Anab., IV, 5,24.

<sup>26</sup> Strabo, XI, 13, 7 (C. 525); XI, 14, 9, (C. 530).

<sup>27</sup> «Եւ ի տանէ թորումայ ձիովք և հեծելովք և շորտովք լցին զվաճառութոյ» (Եղեկիչ, Իէ, 14),

<sup>28</sup> Strabo, XI, 14, 9 (C. 530).

Մետաղյա իրերի արտադրանքն ու առևտուրը Հայաստանում դժվար է կասկածի տակ առնել, չնայած որ աղբյուրներում այդ մասին չկան ողղակի տվյալներ: Սակայն ԱՌաբրոնը և հայ մատենագիրները, ինչպես նաև հնագիտական պեղումների հյութերը վկայում են Հայաստանի հարուստ համբերի մասին: Սպերի (Ըստ: թշ: Հ. Վ.) ուկու հանքերի համբավը հասել էր Ակերաների Մակեդոնացուն, որը, ինչպես հայորդում է Ստրաբոնը, այն հվաճելու համար գործ ուղարկեց այնուղի Մենոնի գլխավորությամբ, բայց վերջինս սպանվեց բնակիչների կողմից: «Կաև նաև ուրիշ հանքեր, —շարունակում է Ստրաբոնը, —ինչպես սանդիքս կոչվածը, որ կոչվում է նաև հայկական ներկ և նաման է ծիրանի խեցու (չչ. Հ. Վ.)»<sup>29</sup>: Հայ մատենագիրները ևս իրենց ներքին հաղորդում են Հայաստանում արդյունահանվող մետաղների և դրանցից պատրաստված զանազան իրերի մասին: Այսպես, Փալստոս Բուզանդը վկայում է, որ Ծշտունիքի լեռներում արդյունահանում էին երկաթահանք և կապարահանք<sup>30</sup>: Տայքում արդյունահանվող ուկու մասին հաղորդում է Ղազար Փարացին<sup>31</sup>: Բ. Ն. Առաքելյանը նշում է, որ «մետաղագործությունն էր տալիս երկրագործների և արմեստավորների ամենակարևոր գործիքները, զինվորների գենեքերը, կենցաղային շատ իրեր և պերճանքի բազմազան առարկաներ: Հայաստանը հնագույն մետաղագործության երկիր է և մետաղագործական արհեստները անցել էին զարգացման մի ուղի, որն հազարավոր տարիներով էր հաշվվում»<sup>32</sup>: Հայ պատմիչների մոտ հանդիպում են տարրեր անվանումներ, տարրեր մետաղահանքներում աշխատողների համար, օրինակ՝ երկաթահանք կամ երկաթահանք, կապարահանք, պղնձահանք և այլն<sup>33</sup>:

<sup>29</sup> Strabo, XI, 14, 9 (c. 529).

<sup>30</sup> Փալստոս Բուզանդ, Գ, Ժ:

<sup>31</sup> Ղազար Փարացի, Գ, ԿԵ,

<sup>32</sup> Բ. Ն. Առաքելյան, Հայաստանի քաղաքներն ու արհեստները 9—

<sup>33</sup> 13 դդ., Երևան, 1958, № 132:

<sup>34</sup> Փալստոս Բուզանդ, Գ, Ժ:

Հին Հայաստանում մետաղագործության զարգացած լինելու փայլուն ցուցանիշներ են Գառնիի պեղումների ընթացքում հայտնաբերված երկաթյա զանազան գործիքները և այլ առարկաները, որոնք արտադրվել են հենց տեղում: Ի դեպ, Գառնիի ամրոցի շինարարության տեխնիկայի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ երկաթը օգտագործել են նաև որպես շինաելութ, քարերը պարսպի վրա և պուներին ամրացնելու համար:

Հին Հայաստանի քաղաքներում ծանոթ էին նաև ապակյա իրերի պատրաստմանը, որոնք վաճառվում էին շուկայում<sup>34</sup>, սակայն, դրանց երկրից դուրս արտահանման մասին մենք ոչինչ չգիտենք: Հայաստանի մի շարք դեղաբույսեր, ներկեր և քարեր հոչարկած էին երկրի սահմաններից շատ հեռու: Դրանք, հավանաբար, առևտորի միջոցով հասել էին հեռավոր Հոռոմ, քանի որ Պիհնիոս Ավագին հայտնի էին Հայաստանում աճող adamantis և lasurpitium կոչվող դեղաբույսերը, հայկական orobitis ներկը, armenepium քարը, ալտեռ-ը և սրաքարը<sup>35</sup>:

Հնայած, որ արհեստներն ու առևտորը Հայաստանում հասել էին զարգացման համեմատաբար բարձր աստիճանի, չի կարելի բանն այնպես պատկերացնել, որ իր նրանք գերհիտող դիրք էին գրավում երկրի տնտեսության մեջ: Սորաբոնի հալորդած տեղեկություններից, որոնք մանրամասն քննարկեցներ, դժվար չեն եզրակացնել, որ գյուղատնտեսական արտադրանքը շարունակում էր տիրապետող դիրք ունենալ ոչ միայն գյուղերում, այլև Հայաստանի բոլոր քաղաքներում և, շնայած արհեստների համեմատաբար զարգացման բարձր աստիճանին, Հայաստանի արտադրության հիմնական պրոֆիլը մնում էր գյուղատնտեսական մթերքների արտադրությունը: Հայկական պետության բարգավաճումը կախված էր, առաջին հերթին, հողագործության զարգացումից:

<sup>34</sup> Ազգաբանգեղոս, ԺԴ (150), Ա. Քալանրար, Հին Վաղարշապատի պեղումները, Երևան, 1935, էջ 58:

<sup>35</sup> Plin, XIX, 15, 2; XXIV, 102, 2; XXXIII, 27, 1; XXXV, 28, 1; 52, 2; XXXVI, 47, 1.

Գ. Ռ. Խ. Վ. Վ. Ե. Շ. Ե. Ռ. Ո. Ռ. Դ.

## ՄԻՆՈՑԿԻՍՊՈՍԸ ՀԵԼԵՆԻՍՏԱԿԱՆ ՓՈՔՐ ԱՍԻԱՅՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումներից հետո Առաջավոր Արևելքի երկրներում ատեղծված հեղենիստական միապետություններում աննախընթաց թափ է ստանում քաղաքաշինությունը: Նոր քաղաքներ հիմնադրելու հարցը հեղենիստական թագավորների ստաց դժվարին խնդիր էր դնում,—այդ քաղաքները ապահովել անհրաժեշտ բնակչությամբ: Այս խնդիրը նրանք լուծում էին գլխավորապես վերաբնակեցման, սինոլիխամոսի (συναπισμός) միջոցով, որը հեղենիստական ժամանակաշրջանի ամենահետաքրքրական երևույթներից մեկն է: Սինոլիխամոսը (բառացի նշանակում է՝ համատեղ բնակվել) հեղենիստական շրջանում առաջացած նոր երևույթ չէր: Այն հայտնի է եղել հույներին դեռևս շատ հին ժամանակներում: Այսպես, աթենացիները հավաստիացնում են, թե դասական Հունաստանի խոշորագույն կենտրոնը, Աթենքը, առաջացել է մի քանի փոքր համայնքների մի մեծ համայնքի մեջ կամավոր սկզբունքներով միանալու միջոցով: Այս սինոլիխամոսը տեղի էր ունեցել առանց կենտրոնական իշխանության միջամտության, տարերաբնորնեն, բնական միաձուլման հետևանքով:

Աթենքի որպես քաղաք կազմավորված ու զարգացման պարագան բացառություն չէր: Սորաբոնը վկայում է, որ որիշ բնակավայրեր ևս առաջացել են տարերաբնի սինոլիխամոսի միջոցով: «Պերպոնեսի համարյա բոլոր մյուս վա-

բերը,—գրուն է նա,—բացի մի քամիսից, որ պղեսը (Հոմեռոսը—Ս. Կ.) համարում է ոչ թե քաղաքներ, այլ քնակավայրեր (շըրա). Կազմվել են բազմաթիվ դեմոսներից, որոնցից մետագալուս սինոյկիսմոսի միջոցով առաջացան հայտնի քաղաքներ: Այսպէս, օրինակ, Մանտինեան Արկադիայում կազմվել է Արգույան հինգ դեմոսների սինոյկիսմոսից, իսկ Տեգեան՝ ինն...»<sup>1</sup>:

Սինոյկիսմոսը տարածված երևույթ էր հատկապես հելլենիստական ժամանակաշրջանում: Բայց այն որ ակասես տարբերվում էր մինչ-հելլենիստական, դասական շրջանի սինոյկիսմոսից: Եթե նախկինում սինոյկիսմոսը տեղի էր ունենում տարբերապերեն, ապա հելլենիզմի շրջանում այն կիրառում էին իրենք՝ միապետները: Ծիշու է, Ստրաբոնը ասում է նաև, որ հնում երբեմն սինոյկիսմոսն անց է կացրել այս կամ այն գործիչները: Այդ գործիչները, սակայն, ավելի շուտ առասպեկտական անձնավորություններ են, քան պատմական<sup>2</sup>:

Հելլենիստական թագավորները լայնորեն կիրառում էին սինոյկիսմոսը որպես քաղաքներ հիմնելու և քաղաքային կյանքին զարկ տալու միջոց: Նրանք նախընտրում էին իրենց տիրապետության տակ ունենալ մի քանի խոշոր քաղաքներ, քան մեծ թվով փոքրեր. քաղաքներ, որոնք հանդիսանային իրենց համար ոչ միայն սոցիալ-տնտեսական, ուգմական և քաղաքական հենարան, այլև նպատեին իրականացնելու տնտեսական վերահսկողությունը ագրարային լայնարձակ այն տերիտորիայի (շըրա), որի վարչական կենտրոնն էր տվյալ քաղաքը:

<sup>1</sup> Strabo, VIII, 3, 2 (C. 336—337). Հմմա. նաև Strabo, VIII, 3, 15 (C. 344).

<sup>2</sup> Հմմա. թեկուղ Strabo, VIII, 7, 1, (C. 383), որտեղ ասված է, թե դորեացիների առասպեկտական նախահայր Դորոսը մի համայնքի մեջ միացրեց (ըստուշաց) Պատնասոսի շրջակա բնակիչներին: Նաև Strabo, X, 4, 8 (C. 476), որտեղ ասված է. «...իբր Հռազդամանթոսը առաջինն էր, որ կրեակ կզգում քարքերը մեկմացրեց օրենքների միջոցով, քաղաքներ հիմնադրելով (ըստուշաց ու ուշաց) և պետական հաստատություններով»:

Սինոյկիսմոսի, այն է փոքր քաղաքներից մի մեծ քաղաք հիմնելու միջոցով թագավորները մետապետում էին հիմնականում տնտեսական նպատակներ: Փոքր քաղաքներն իրենց սահմանափակ հորժական միջոցներով և փոքրաթիվ քնակչությամբ հաճախ ստիպված էին լինում ուրիշներից փոխառություններ անել, ծանրաբեռնել իրենց սեփական քաղաքներին հարկադիր փոխառություններով և լիտորիականներով: Նման քաղաքները տառապում էին խրոնիկական տնտեսական և ֆինանսական ճգնաժամով և ամբողջությամբ վերցրած ի վիճակի չեին թագավորների համար կայտն տնտեսական բազա ապահովել<sup>3</sup>:

Հելլենիստական ժամանակաշրջանում տեղի ունեցած քաղաքների միաձուլման քազմաթիվ դեպքերից մենք կասմանափակվենք սուկ մի քանչիսի, անենարնորշների քննությամբ, որոնցում ավելի հստակ կերպով է քացահայտվում սինոյկիսմոսի պրոցեսն ու նպատակը:

Բնակչության բռնի և զանգվածային գաղթեցման և նրա նոր քաղաքում վերաբնակեցման միջոցով կատարվող սինոյկիսմոսը կիրառվում էր դեռևս Ալեքսանդր Մակեդոնացու կենդանության ժամանակ: Դիոդորոս Սիկիիացին հաղորդում է, որ երիտասարդ միապետը ձեռնարկում էր «քաղաքների սինոյկիսմոսներ և քնակչության տեղափոխումներ Սսիայից Եվրոպա և հակառակ...»<sup>4</sup>: Ինչպես էլ չբացատրել Ալեքսանդրի նպատակը սինոյկիսմոսը կիրառելիս, այն, անկանած, տեղի էր ունենում բռնի ուժի միջոցով:

Բուն Հունատանում բնակչության բռնագաղթի անմիջական նպատակն էր նոր քաղաքի հիմնադրումը կամ էլ հնի, եղածի ընդարձակումը: Ալեքսանդր Մակեդոնացին և նրա հետնորդները սինոյկիսմոսը և քնակչության զանգվածային տեղափոխումը նույնական կիրառում էին Արեւելքի ժողովուրդներին և հունամակեդոնանան գաղութարար-

<sup>3</sup> M. I. Rostovtzenff. SEHHW, 4, 155.

<sup>4</sup> Diodor, XVIII, 4, 4.

Աերին միաձուելու նպատակով, երկրում հաջողակ համամշտություն, համերաշխություն ձեռք բերելու նպատակով, «կյանքն ու բարքերը, կենցաղը և ամուսնությունը միախառնելու նպատակով»<sup>5</sup>:

Հելլենիատական ժամանակաշրջանի ամենավաղ մինոյի համուներից մեկը, որ անց էր կացնում, բայց չկարողացավ մինչև վերջ հասցեել Անտիգոնոսը, հանդիսանում է փոքրասիական երկու ոչ մեծ քաղաքների, Տեռի և Լեքերոսի սինոլիամուը: Այդ մասին համագամանալից վկայություններ են պահպանվել Փոքր Ասիայում հայտնաբերված երկու արձանագրություններում: Դրանք Անտիգոնոս Միականու երկու համակ-հրահանգներն են, ողղված Տեռու քաղաքին: Ա. Բ. Ռանովիչի հաշվությունով այդ երկու արձանագրությունների ընթանոր ծավալը հասնում է մոտավորապես 1/4 տպագրական մատուի: Ս. Բ. Welles-ը իրավացիորեն այդ արձանագրությունների թվականը որոշում է 306 թվի, եթե Անտիգոնոսը, առաջինը դիադրոսներից, իրեն հայտարարեց թագավոր, և 302 թվի միջև, եթե Տեռու քաղաքը գրավվեց Կասանդրոսի կողմից<sup>6</sup>, որով Անտիգոնոսին շնաշողվեց մինչև վերջ կենսագործել իր ձեռնարկած այդ սինոլիամուը:

Անտիգոնոսի այդ հրահանգ-համակներից առաջինը վերաբերում է այդ սինոլիամուի հետ կապված հետույալ հարցերին: 1) Լեքերոսի բնակիչների տեղափոխումը Տեռու, 2) փոխադրվողներին բնակարանով և հողակտորով ապահովությունը, 3) պարտքերի մարտում, 4) հացահատիկի վաճառք վերաբանիչներին, 5) քաղաքացիական իրավունքի, այն Էնոր քաղաքի օրենսդրության հարցը: Երկրորդ հրահանգ-համակը վերաբերում է սինոլիամուի կիրառման ընթացքում ձեռնարկվելիք ֆինանսական և կազմակերպչական միջոցառումներին: Վերոհիշյալ հրահանգների տվյալներով, այդ սինոլիամուը պատկերանում է ոչ որպես Անտիգոնոսի պատա-

հական քնարանուքը, այլ հանդիսանում է պլանավորված մի միջոցառում, որը պետք է կենսագործվեր երեք տարվա ընթացքում (չեւ չեւս գուտու):<sup>7</sup>

Սինոլիամուի վերաբերյալ հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Ստրաբոնը: Այսպէս, խոսկով նույն Անտիգոնոսի ձեռնարկած մի որիշ սինոլիամուի մասին, առ վկայում է, թե մշտական թշնամություն և պատերազմ կար փոքրասիական երկու հարկան քաղաքների, Կերրենայի և Ալեքսանդրիայի բնակիչների միջև: Անտիգոնոսը փորձեց լոծել այդ վեճը, բայց յորովին: Նա տեղափոխեց (տանօչւու) այդ երկու քաղաքների բնակիչներին իր նոր հիմնադրամ Անտիգոնույա քաղաքը<sup>8</sup>: Բայց Խասոսի մոտ 301 թ. հրա կրած պարտությունից հետո, հաղթանակ տարած կուպիցիայի անդամներից Լիփիմաքոսը վերանվանեց այդ քաղաքը Ալեքսանդրիայի: Ստրաբոնի օրոք այդ քաղաքը դեռևս գոյություն ուներ և կոչվում էր նոյնական Ալեքսանդրիա: Դրանում հիմնականում մնացել էին որիշների հետ միասին նաև Կերրենայի համակին բնակիչները (Կεչորունակ տառապետական առաջնորդ առաջնորդ): Ում է Ալքատի ունեցել Ստրաբոնը „ուն: ձևուս“ —որիշների—արտահայտությամբ: Այս հարցին պատահանում է Ստրաբոնի մի որիշ հաղորդումը: Դրանք՝ մոտակայքում գտնված քաղաքների համակին բնակիչներն են: «Այդ փոքր քաղաքները (Ստրաբոնը թվում է վեց ութիսը —Ս. Կ.) ինչպես նաև ամրացված մուս վայրերից (գոտինակ) շատերը միաձուվեցին Ալեքսանդրիային: Դրանց թվում են Կերրենան և Նեյյանդրիան: Ալեքսանդրիացիները տիրապետում են նաև այդ քաղաքների հողերին»<sup>9</sup>: Ինչ վերաբերում է Ալեքսանդրիայի քաղաքից վերաբանեցվածներին, ապա Ստրաբոնը հաղորդում է, որ հրանք շտուով, Լիփիմաքոսի թուլլությամբ վերադարձ իրենց քաղաքը: Այս կապակցությամբ Ա. Բ. Ռանովիչը

<sup>5</sup> C. B. Welles, RC, 3, 15.

<sup>6</sup> Strabo, XIII, 1, 33 (C. 597).

<sup>7</sup> Strabo, XIII, 1, 47 (C. 604).

<sup>5</sup> Plut., de fortuna Alexandri, I, 6.

<sup>6</sup> Հմամ. Diodor., XX, 105, 5.

իրավացիորեն հշում է, որ «սինոյկիամուս չէր հշանակում ևոր կենտրոն տեղափոխված քնակավայրերի ֆիզիկական ոչնչացում. դրանք սույն դեգրադացիա էին ապրում, կորցնելով իրենց քաղաքական ինքնուրույնությունը, և երբեմն վերածվում էին գյուղական վայրերի (չնույն)»<sup>10</sup>: Որ այս սինոյկիամուս վերջ չէր դրել Սկեպսիսի գյուղությանը որպես ինքնուրույն քաղաքի, ցույց է տալիս այն փաստը, որ հետագա դարերում մի շարք քաղաքական և մշակութային գործիքներ հիշատակվում են իրեն Սկեպսիսի քաղաքի բնիկներ, ինչպես օրինակ Տիգրան 2-րդի պատմագիր Մետրոդորոս Սկեպսացին: Մի այլ տեղ Ստրաբոնը խոսելով Սկեպսիսի քնակչության այդ նույն տեղափոխման մասին, օսպառությունությունը՝ Այս դեպքում օսպություն և օսպություն քայլերի հշանակության վիճակին գործ է ածում օսպությունություն արտահայտությունը<sup>11</sup>: Այս դեպքում օսպություն և օսպություն քայլերի հշանակության նույնությունն ակներև է: Ստրաբոնի հաղորդման մեջ առանձին հետաքրքրություն են ներկայացնում նրա խութերն այն մասին, որ ալեքսանդրիացիները տիրում են հիշյալ քաղաքներից տեղափոխված քնակիչների հողերին: Պիտի ենթադրել, որ յուրաքանչյուր վերաբռնակվողի, որը նախապես իր քաղաքում ուներ որոշակի հողակտոր, հնարավորություն էր տրվում հետագայում ևս իր ձեռքում պահելու այն: Վերաբռնակելուց հրաժարվելու դեպքում այդ հողակտորը, հավանաբար, բռնագրավվում էր թագավորի կողմից: Նման միջոցառումը ունաց ատիպում, մյուսներին խթանում էր վերաբռնակվելու նոր քաղաք:

Իր աշխատության մի այլ մասում Ստրաբոնը պատմում է ևս մի սինոյկիամուսի մասին, որը տեղի էր ունեցել վաղ-մելենիստական ժամանակաշրջանում նեղենիստական աշխարհի ծայրամասերից մեկում, Պաֆլագոնիայում: Այն անց էր կացրել ոչ թե նույն կամ մակեդոնացի տիրակալ, այլ

պարսկական արքունիքի շառավիղներից մեկը, Դարեն Կողմանոսի ազգական Ամաստրիսը, Պոնտական Հերակլեա քաղաքի տիրան Դիոնիսիոսի կինը: Այսուեղ հետաքրքիրն այն է, որ Ամաստրիս նոր քաղաքը կազմվում էր ոչ թե քաղաքների, այլ գյուղական վայրերի մի քաղաքային համակերպի մեջ միաձուլման միջոցով (չու տետարա չառու: ան):<sup>12</sup> Եթե քաղաքների միաձուլման ընթացքում տեղափոխվող քնակիչները հնարավոր է որ դժգոհնեն, ապա, ընդհակառակը, Ամաստրիսի ձեռնարկած սինոյկիամուսի դեպքում գործը համեմատաբար նեշու կիխներ, քանի որ նոր քաղաք կազմող գյուղական քնակավայրերը քաղաք դառնալուց հետո ստանում էին քաղաքային ինքնավարության իրավիճակ: Դրանով յսկ նախկին գյուղական վայրերի քնակիչները (չառու: դառնում էին քաղաքացիների և օգտվում այն նոյն արտոնություններից, ինչ ուրիշ քաղաքի քաղաքացիները: Հետևաբար, քնակիչներն իրենք անմիջականորեն շահագրգուված էին նպաստելու այդ սինոյկիամուսի կենսագործմանը:

Սելևկյանների մայրաքաղաքի, Անտիոքի հիմնադրման և հետագա բարգավաճման ժամանակ նկատվում է սինոյկիամուսի հետաքրքիր մի երևույթ, որի մասին հաղորդում է նոյնական Ստրաբոնը: Այս սինոյկիամուսի դեպքում միապետի ձեռնարկումը համընկնում է տվյալ շրջանի քնակիչների ձգտման հետ, որոնք տարերացնորեն աշակցում են սինոյկիամուսի կենսագործմանը: «Անտիոք քաղաքը, — գրում է Ստրաբոնը, — նոյնական չորս մասից է քաղկացած (տետրάկու:):

Առաջին մասը հիմնել է Նիկատորը և այնուեղ փոխադրել հարևան Անտիոքնեյա քաղաքի քնակիչներին: ...Երկրորդ մասը հիմնված է քնակչության կողմից, երրորդը՝ Սելևկոսի, Կաղինիկոսի որդու կողմից, չորրորդը՝ Անտիոքոս Եպիփանեսի»<sup>13</sup>:

<sup>10</sup> A. B. Ранович. Эллинизм и его историческое значение. М.—Л. 1950, էջ 99.

<sup>11</sup> Strabo, XIII, 1, 47 (C. 607).

<sup>12</sup> Str. ad. XII 3, 10 (C. 544)

<sup>13</sup> Strabo. XVI, 2, 4 (C. 750).

Հելլենիստական թագավորները միշտ չեւ, որ բռնություն էին գործադրում սինոլիթամուխ կենսագործման և նոր քաղաքները բնակեցնելու ժամանակ: Նրանք երբեմն ձգտում էին հյութական շահագրգուվածության միջոցով ապահովել բնակիչների համակրանքը, որպեսզի նրանցով բնակեցնեն այս կամ այն քաղաքը: Հենց այդպիսու էլ վարվեց, օրինակ, Անտիոքոս 3-րդ Լիսիմաքիա քաղաքի վերականգնման ժամանակ, երբ նա Սսիալից անցնում էր Եփրուա: «Նավելով Եփրուա անցնելիս,—գրում է Սպահանոսը,—նա շարժվեց Թրակիայի վրա և ուժով հպատակեցրեց իրեն ենթարկվել շշանկացող ցեղերին: Նա ամրացրեց Խերսոնեսը և բնակչությամբ լցրեց Լիսիմաքիան, որ հիմնել էր Լիսիմաքոսը..., որպեսզի իր համար հանդիսանար ամրացված կետ թրակիացիների դեմ: Խսկ թրակիացիները, երբ Լիսիմաքոսը մեռավ, կործանեցին այն: Եվ ահա Անտիոքոսը սկսեց բնակչությամբ լցնել այն, Լիսիմաքոսի տիրույթներն ապաստանած փախստականներին կոչելով, ստրկացված գերիներին եւ գնելով, նրանց թվին որդիշներին ավելացնելով, նրանց եզներ, ոչխարներ և երկրսպորտության համար երկաթյա գործիքներ տալով և ոչինչ աչքաթող չանելով, որպեսզի արագ կերպով կարողանար ամրացնել քաղաքը»: Այս բոլորը նա անում էր ոչ թե մարդասիրությունից դրդված, այլ որովհետև «այդ վայրը նրան թվում էր վերին աստիճանի կարևոր ամրություն ամրող Թրակիայի դեմ և հարմարագոյն պահեստավայր իր մնացած մտահղացումների համար»<sup>14</sup>:

Բերված օրինակներից պարզ է դառնում, որ սինոլիթամուք հանդիսանում էր հելլենիստական թագավորների քաղաքաշինական գործութեության գլխավոր օղակներից մեկը, որն անհրաժեշտ էր նրանց՝ նորակառուց քաղաքները բնակչությամբ ապահովելու համար:

Հայաստանում ևս նոր քաղաքներ կառուցելը հայ թագավորներին կանգնեցնում էր այդ քաղաքները անհրաժեշտ

<sup>14</sup> Appian., Syr., 1.

բնակչությամբ ապահովելու անհետաձգելի խնդրի առաջ: Պատմական հանգամանքների բերումով նրանք երկու կարգի հնարավորություններ ունեին այդ խնդրից լուծելու: 1) Հարվածան, երբեմն նոյնիսկ հեռավոր երկրներ արշավերով՝ այնտեղից բնակիչներին բռնի տեղափոխել Հայաստան և բնակեցնել նորակառուց քաղաքում: 2) Երկրի ներսում բնակիչներին նախկին բնակավայրերից տեղափոխել նոր քաղաքները:

Եթե քաղաքները բնակչությամբ ապահովելու վերոհիշյալ եղանակներից առաջինը բնորոշ էր հայկական թագավորության սկզբանական շրջանի համար (Երվանդութիւններ, Արտաշեպաններ), ապա երկրորդ եղանակը հատկանշական էր Արշակունյաց թագավորության ժամանակաշրջանի համար: Եվ դա ուներ իր օբյեկտիվ պատճառները: Արտաշեպանների ժամանակ Հայաստանի տիրակալների համար միջազգային բարենպատ պայմաններ ստեղծվեցին արտաքին նվաճումների միջոցով իրենց տերության սահմանները ընդարձակելու: Հոռոր ծանրագոյն հարված հասցնելով Սելևկյան տերությանը, նրան համարյա դորս էր մղել Փոքր Ասիայից, իսկ ինքը՝ Հոռոր, դեռևս հնարավորություն չուներ հաստատուն ուղերով կանգնելու այն երկրներում, որտեղից դորս էին մղվել Սելևկյանները: Դրանով իսկ հնարավորություն էր ստեղծվել Մերձավոր Արևելքի մի շարք երկրների տիրակալների համար փորձեր անել իրենց տիրույթներն ընդարձակելու ուղղությամբ: Ահա այդ շրջանում էր, որ Արտաշեպանները (Արտաշես, Տիգրան, մասամբ Արտավազը) օգտվելով հարմար առիթից, արշավանքներ են ձեռնարկում հարված երկրներ և, բնակիչներին գերեվարելով, բնակեցնում Հայաստանի նորակառուց քաղաքներում: Հետագայում արդեն Հայ Արշակունյանները սեղմած լինելով մի կողմից արդեն իր հզորության գագաթնակետին հասած Հոռմի և մյուս կողմից օր-օրի քարձացող Պարթևական (հետագայում Սասանյան) պետության միջև, ամրողովին հրաժարվեցին արտաքին նվաճումներից և, նոր քաղաքներ կառուցելիս,

նրանք ստիպված էին արդեն շարժման մեջ դնել երկրի ներքին հնարավորությունները: Դրանով էլ մասամբ պիտի բացարել այն հանգամանքը, որ Արշակունիները առանձնապես չփայլեցին որպես քաղաքաշինարարներ: Անուամենապես հիվ, Հայաստանում նորակառուց քաղաքները ազգաբնակչությամբ ապահովվելով վերոհիշյալ երկու եղանակներն ել չեն տարբերվում հելլենիստական Արևելքի մյուս երկրներում նոր քաղաքներ կառուցելիս թագավորների ձեռնարկած սինյկիամուներից:

Ուրիշ վայրերից մարդկանց նոր քաղաքներ փոխադրելը Հայաստանում կիրառվել է դեռևս առաջին Արտաշեպանների ժամանակ, հայկական պետականության կազմավորման առաջին իսկ շրջանում: Դիմենք սկզբնաղբյուրներին:

Ստրաբոնը նշում է, որ Արտաշեալ, իրեն Մեծ Հայքի թագավոր հոչակելուց հետո, հարևան մի շարք գավառներ միացնելով իր երկրին, ընդարձակեց իր տերության սահմանները<sup>15</sup>: Նորաստեղծ թագավորության համար անհրաժեշտ էր նորակառուց մայրաքաղաք: Արմավիրը այլևս չուներ իր հայսկին փայլը, իսկ նորաստեղծ Երվանդաշատը Արտաշեսի թշնամի Երվանդի ձեռակերտն էր, որը, հավասար, դեռևս չուներ հզոր տերության մայրաքաղաքին փայլ շքեղություն: Ուստի Արտաշեալ, հետևելով Փոքր Ասփայի հելլենիստական թագավորների օրինակին, կառուցում է մայրաքաղաք Արտաշատը: Այս միջոցառումն, անկասկած, կատեղծեր վարչա-տնտեսական ամուր հենարան երկրի ներսում, միաժամանակ, ինչպես նշում է Հրանդ Արմենը<sup>16</sup>, կրաքացներ հայոց թագավորի հելլինակությունը և՛ իր տերության սահմաններում, և՛ միջազգային ասպարեզում:

Մեր հիմնական աղբյուրները՝ Ստրաբոն, Պլուտարքու և Խորենացի, իրար հետ համեմաշխ են այն բանում, որ քաղաքը կառուցվել էր մինչ այդ շբանակեցված վայրում<sup>17</sup>: Հե-

<sup>15</sup> Strabo, XI, 14, 5 (C. 528).

<sup>16</sup> Հրանդ Արմեն, Մեծն Տիգրան, Գանձրե, 1957, էջ 20;

<sup>17</sup> Strabo, XI, 14, 5—6; Plut., Lucul., XXX: Մովսես Խորենացի, Բ. Խթ:

տաքրբական է, որ Ստրաբոնը քաղաքի բնակեցման մասին խուելիս օգտագործում է շարությունը՝ «լավ բնակեցված» արտահայտությունը: Բացառված չէ, որ Արտաշեսն այնուղի բնակեցրեց իր թագավորությանը միացրած նոր երկրների բնակիչների մի մասին: Պլուտարքու ոչինչ չի ասում այն մասին, թե Արտաշեսն ինչպես բնակեցրեց իր նոր մայրաքաղաքը: Բաց Մ. Խորենացին ունի մի շարք հետաքրքիր վկայություններ, որոնց հիման վրա կարելի է ինչ-որ եզրակացությունների համար: Ըստ Խորենացու, քաղաքը կառուցելուց հետո Արտաշեալ «կանգնէ ի համա մեհեան և փոխէ ի բագարանն զպատկերն Արտամիդրայ և զամենայն կուս հայրենին»<sup>18</sup>: Նշանակում է՝ այնողի բնակվեցին առաջին հերթին քրմերն ու տաճարների սպասավորները<sup>19</sup>: Ժարունակելով պատմահայրը հաղորդում է, որ Արտաշեալ «յարուցանէ ի քաղաքէն Երտանրայ զգերութիւն հրեիցն, որ փոխեալ էին անոյ Արմարայ, և նատուցանէ զեռսա յԱրտաշատ»<sup>20</sup>: Անախրոնիզմը Խորենացու սխալ ժամանակագրության հետևանքով, պատկերներն են: Հրեաներին Հայաստան է բերել Տիգրան 2-րդը Երվանդ Վերջինից և Արտաշեսից հետո, այսինքն՝ Երվանդաշատի և Արտաշատի կառուցումից հետո: Հետևաբար, հնարավոր է երկու ենթադրություններ: Կամ Արտաշատ փոխադրվածները հրեաներ չեն, կամ էլ նրանք փոխադրվել են ավելի ուշ, ասենք, Կորրուլոնի կողմից քաղաքն ավերվելուց հետո Տրդատ 1-ինի ձեռնությունը:

<sup>18</sup> Մովսես Խորենացի, Բ. Խթ:

<sup>19</sup> Խորենացու այս վկայությանը Հետաքրքիր մեկնաբանություն է տալիս Հրանդ Արմենը: «Հայ աստվածները Արտաշատ հաստատելով, —գրում է նա, —ինչպես նաև անոնց ի պատիվ պաշտամունքի տոնական օրեր նշանակելով, թագավորը վստա՞ն էր, որ Հայաստանի ամեն կողմերին ուխտավորներ, առետրականներ, մարդկներ, արկածախնդիրներ և բաղդ ու ոսկի որոնողներ պիտի գային իր քաղաքը և շատ շատեր հոն հաստատեին իրենց բնակությունը» (Հրանդ Արմեն, նշված աշխ., էջ 22):

<sup>20</sup> Մովսես Խորենացի, Բ. Խթ:

բոլ վերակառուցվելու կապակցությամբ: Այս վերջին ենթադրությունը մեզ ավելի հավանական է թվում, քանի որ մեծ թվով հրեաների գոյությունը Արտաշատում անժխտելի փաստ է<sup>21</sup>: Տվյալ դեպքում մեզ համար կարող է ոչ թե բնակիչների էթնիկական կազմը որոշելը, այլ հենց հրաց տեղափոխման փաստը ինքնին, որին զուգահեռ օրինակները մենք նշել ենք վերևում, հելլենիստական Փոքր Ասիայում տեղի ունեցող սինոլիխանությունների մասին խոսելիս: Խճապես Փոքր Ասիայի հելլենիստական երկրներում տեղի ունեցած սինոլիխանությունների ժամանակ վերաբնակվողները ստանում էին թագավորից որոշակի առանձնաշնորհումներ, այդպես էլ հալվանական է, որ Արտաշատ վերաբնակվողներին Արտաշեսը շնորհում էր զանազան արտոնություններ, հրաց դեպի նոր կառուցվող քաղաքը հրապորելու համար:

Այս ենթադրության օգտին խոսում են մատենագրական մի շարք կողմնակի վկայություններ: Մ. Խորենացին, օրինակ, վկայում է, որ Արտաշեսն իր քաղաքը արագ կառուցեց և այդ վերագրում է այն քանի, որ «ձեռնորու լինի նմա և Երասի փայտիք մայրից. վասն որոյ անաշխատ և երագ շինեալ...»<sup>22</sup>: Բացառված չէ, որ քաղաքի արագ կառուցման հիմնական խթանը համեմատային վերաբնակվողներին թագավորի շնորհած արտոնությունները, ասենք, վարելահող տրամադրել, հարկերից ազատել, և այլն: Ինչ վերաբերում է Արաքսի փայտով օգնելուն, ապա պիտի ենթադրել, որ թագավորը, որի սեփականությունն էին անտառները, թույ էր տվել վերաբնակվողներին նոր շենքերի և բնակարանների կառուցման ժամանակ անարգել օգտվել անտառանութից, որը փոխադրվում էր Արաքսի վրայով:

Արտաշատի դարեր հարատևած կենսունակությունը մենք հակիմ ենք բացատրելու հրա բնակիչների վայելած արտոնություններով, որոնց համար բնակիչները սիրում էին իրենց քաղաքը և ամեն գնոլ պաշտպանում այն: Բերենք

<sup>21</sup> Փախոս Բուզանդ, Դ, սե:

<sup>22</sup> Մովսես Խորենացի, Բ, հթ:

մեր այս ենթադրությանը հիմք տվող պատմական մի քանի փաստեր: Խոսելով Տիգրան 2-րդի դեմ նրա որդու, Տիգրան Կրտսերի քարձարացրած ապատամբության մասին, Դիոս Կաստորը<sup>23</sup> հաղորդում է, որ մինչ Պոմպեոսը զբաղված էր Միհրդատի դեմ Պոլառուսի կովկասով, պարթևների խագավոր Հրահատ 3-րդը Տիգրան Կրտսերի և սրան հարած խոռվար հայ նախարարների ողենցությամբ ներխուժել էր Հայուսուն և հասել մինչև մայրաքաղաք: Համկարծակի եկած Տիգրան 2-րդը ստիպված է լինում հեռանալ երկրի լեռնային շրջանները: Բայց Արտաշատի բնակչությունը մինչև վերջն էլ հավատարիմ մնալով իր խագավորին հաջող կերպով դիմադրում է քաղաքը պաշարողներին: Տակիտոսը վկայում է<sup>24</sup>, որ հոոմեական զորավար Կորրուլոնը հիմնահատակ կործանեց Արտաշատը, բայց չանցած մի տասնամյակ, այն նորից վերականգնեց որպես հայոց մայրաքաղաք: Վերջապես, մեր այս ենթադրության օգտին ցանկանում ենք նշել նաև հետևյալ փաստը: Եթե 2-րդ դարի 60-ական թվականներին հայերը, մասնավորապես Արտաշատի բնակչությունը, ապատամբեցին երկրում հաստատված հոոմեական կայազորների դեմ, հոոմեացի զորաբերամանատար Մարտիոս Վեռոսը, ապրստամբությունը նեշելոց հետո, երկրի քաղաքամայր հայուսարեց արդեն Կառն՝ ուժու: — Վաղարշապատը<sup>25</sup>: Կ. Վ. Տրելեկը ենթադրում է, որ հոոմայեցիները այդ քայլին դիմեցին շնչելու համար հայերի գիտակցությունից Արտաշատի, որպես հայկական ինքնուրուն թագավորության կենտրոնի մասին հիշողությունը<sup>26</sup>: Մեզ ավելի հայկանական է թվում այն, որ հոոմայեցիները Վաղարշապատը մայրաքաղաք հայուսարեցին Արտաշատի բնակիչներին պատժելու հայտարկով, քանի որ նրանք, իբրև մայրաքաղաքի բնակիչներ,

<sup>23</sup> Cass. Dio, XXXVI, 51, 2.

<sup>24</sup> Tacit., Annal., XIII, 41.

<sup>25</sup> Suidas. Μέρτιος ρωμηὶ πατὴ:

<sup>26</sup> K. B. Գրեշեր, Օպերկի..., էջ 232:

վայելում էին որոշ արտօնություններ, իսկ այժմ կզրկվեին դրանցից:

Արտաշեայանների թագավորությունը քանի դեռ պարփակված էր Մեծ Հայրի բնական սահմանների մեջ, ապա Արտաշատը մնում էր որպես երկրի միակ վարչա-տնտեսական և քաղաքական կենտրոնը և կարիք չէր գգացվում մի երկրորդ. գոգահետ կենտրոն ստեղծելու: Տիգրան 2-րդի նվաճումների հետևանքով հայկական թագավորությունը դուրս եկալ իր բնական աշխարհագրական սահմաններից և որոշ ժամանակ հասալ մինչև Կիլիկիա, Միջերկրական ծով և Պաղեստին: Այդ պայմաններում էլ ահա Տիգրան 2-րդի համար ակներև է դառնում, որ մայրաքաղաք Արտաշատը, մնալով իր նորաստեղծ լաղճաճավալ պետության հյուսիսարևելյան ծայրամասում, ի վիճակի չէր այդպիսի ընդարձակ տերության վարչա-տնտեսական կենտրոնին առաջարկվող դերը լրիվ կատարելու: Իր արշավանքների ընթացքում Տիգրան 2-րդը տիրացավ Աստրիքի մեծագույն քաղաքին, Սելևկյանների մայրաքաղաք Անտիոքին: Թե ինչպէ՞ս այդ տեղի ունեցավ, մեզ հասել են երկու երևորապես իրար հայաստղ վկայություններ՝ Յուստինոսի և Աստրաքոնի: Յուստինոսը նշում է, որ երբ «Աստրիքի (իմա Սելևկյան տերության—Ս. Կ.) և՝ թագավորները և՝ թագավորությունը ուժասպառ եղան համար կոհիվներում, ժողովուրդն ապավինեց դրսի օգնության և սկսեց իր համար փետրել օտարերկրյա թագավորներ: Արդ՝ ժողովրդի մի մասը կարծում էր, որ պետք է հրավիրել Միհրդատ Պոնտացուն, մի մասն էլ՝ Եգիպտոսից Պողոմեոսին.... Բոլորը, սակայն, համաճայնության եկան Հայաստանի Տիգրան թագավորի նկատմամբ...»<sup>27</sup>: Այստեղ պարզորշ կերպով ասված է, որ Տիգրանին հոմարական հրավիրեցին իրենք, Աստրիքի բնակիչները: Մինչդեռ Սատրապնը հաղորդում է, որ Տիգրանն Աստրիքը գրավել էր գենքի

ուժով<sup>28</sup>: Հ. Մանանդյանը<sup>29</sup> խոսելով այս հակասության մասին, միանգամայն հավանական է համարում Հ. Աստորյանի այն բացատրությունը, թե այս երկու վկայություններն ել կարող են ճիշտ լինել, որովհետև Տիգրանը, հրավիրված լինելով որոշ կուակցության կողմից, պետք է իրեն հպատակեցրած լինելոր գենքի ուժով մյուս կուակցությունը<sup>30</sup>: Իրապես, բացաւկած չէ, որ Տիգրանին կողմնակից են եղել միշտագային տարանցիկ առևտորի հետ կապված Անտիոք քաղաքի վաճառականները, քանի որ Աստրիքի միացումը Հայաստանին հրամար ուներ տնտեսական կարևոր հշանակություն, որովհետև Զեկմայի վրայով անցնող համաշխարհին գլխավոր ճանապարհը Հյուսիսային Միջագետքի գրավումից հետո, գտնվում էր Տիգրանի ձեռքում<sup>31</sup>:

Անտիոք քաղաքը նվաճելոց հետո հայոց արքան կարծես թե այսուել էր փոխադրելու իր տերության մայրաքաղաքը: Բայց այդպես չարեց: Անտիոքը ևս, Արտաշատի նման, աշխարհագրական տեսակետից չէր գտնվում տերության կենտրոնում: Այն ուներ մի այլ թերություն ևս, որ չուներ Արտաշատը.—ամբողջ բնակչությունը օտար էր, ոչ հայ, ուստի և Հայաստանից կորված լինելու պայմաններում այն երրեք չէր կարող հնարան դառնալ Տիգրանին:

Նոր մայրաքաղաքի հարցը լուծելու համար Տիգրան 2-րդի առաջ մնում էր մի ճանապարհ. այն է՝ հարմարագույն վայրում կառուցել մի նոր քաղաք և այն դարձնել իր տերության վարչա-տնտեսական ու մշակութային կենտրոնը: Այդպես էլ առ արեց, քանի որ դրա համար ճանապարհ ուներ անհրաժեշտ բոլոր միջոցները,—կառուցող վարպետներ,

<sup>28</sup> Strabo, XI, 14, 15 (C. 535).

<sup>29</sup> Հ. Հ. Մանանդյան, Տիգրան երկրորդը և Համբը, Երևան, 1940, էջ 51: Նույնի, Քննական տեսություն Հայ ժողովրդի պատմության, Երևան, 1944, հ. 1, էջ 153:

<sup>30</sup> Հ. Աստորյան, Քաղաքական վերաբերություններ ընդմեջ Հայաստանի և Համբաւ, Վենեսուելա, 1912, էջ 34, ծան. 3:

<sup>31</sup> Հ. Հ. Մանանդյան, նույն տեղում:

<sup>27</sup> Justin., XL. 1, 1—3.

դրամ և քաղաքային բնակչություն։ Այս բոլորը Տիգրան 2-րդը արդեն ձեռք էր բերել հափառ քաղաքի կառուցումն սկսելը իր արշավանքների ընթացքում։ Որպես շինարարական գործի վարպետներ Տիգրանն անպայման օգտագործեց նվաճված Կորդովի բնակչությունն, որոնց մասին Ստրաբոն ուղղակի վկայում է, որ «համարվում էին լավագույն ճարտարապետներ և պաշտողական գործիքների վարպետ շինողներ։ Ուստի, նրանց հենց այդպիսի գործերի համար էլ օգտագործում էր Տիգրանը»<sup>32</sup>։ Փող և այլ միջոցներ նա ձեռք էր բերել ոչ միայն Աստրիք, Կիլիկիա և Պաղեստին իր կատարած արշավանքների միջոցով, այլ նաև Միհրդաստ Եվպատոսի հետ համատեղ Կապադովկիայի վրա արշավելու ժամանակ, որի մասին Յուստինոսը հաղորդում է, որ երկու խագավորները «պարհանակորվել էին իրար հետ, որ քաղաքները և հողերը պատկանելու ևս Միհրդաստին, իսկ մարդիկ և ինչ որ հնարավոր է տանել՝ Տիգրանին»<sup>33</sup>։ Ունենալով իր ձեռքում այս բոլոր միջոցները, Տիգրանը ձեռնամուխ է լինում նոր մայրաքաղաքի կառուցմանը<sup>34</sup>։ Փորձենք պարզել, թե ի՞նչ եղանակով այն կառուցվեց։

Ե՛վ հայկական և օտար սկզբանդրյութերում Տիգրանակերտի կառուցման վերաբերյալ պահպանված վկայությունների մասնակիլիս քննարկումը մեզ բերում է այն եղբակացության, որ Տիգրանի նոր քաղաքը կառուցվել է հոյն եղանակով, ինչ Փոքր Ասիայի հելլենիստական քաղաքների գգալի մասը, այն է՝ սինոլիստոսի, այս ու այն բնակավայրի

<sup>32</sup> Strabo, XVI, 1, 24.

<sup>33</sup> Justin., XXXVIII, 3, 1—5.

